21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

2 (24)

ԵՐԵՎԱՆ

2009

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **2 (24), 2009**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян (координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян (главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Караугланян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրաչյա Արզումանյան
Հայկական պետականությունը և
ինքնիշխանության խաղերը 3

Արա Մարջանյան
Մեր ապագան՝ *NIC* աչքերով 26

Ռիչարդ Գիրագոսյան
Տարածաշրջանային զարգացումները և
Հայաստանի ազգային անվտանգությունը 64

Նվարդ Մելքոնյան
Քաղաքական միֆոլոգիան 2008-ի
ՀՀ նախագահական ընտրությունների
համատեքստում 94

Տիգրան Մարտիրոսյան
Քրդական գործոնը և տարածաշրջանային
անվտանգության խնդիրները 103

Հուշագիր հեղինակին 123

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐԸ

Հրաչյա Արզումանյան

Լայն շրջանառության մեջ մտնող տերմիններն ու գաղափարներն անխուսափելիորեն խեղաթյուրվում են: Դա նախնական իմաստների անխուսափելի լղոզման գործընթաց է, որը պահանջում է պարբերաբար վերականգնել դրանք, վերադառնալ համընդհանուր օգտագործման և մաս-մեդիական շրջանառության մեջ մտած հասկացությունների նախնական իմաստին: Հոդվածը նվիրված է վերջին ժամանակներս լայնորեն կիրառվող ինքնիշխանություն (սուվերենիտետ) հասկացության մի քանի ասպեկտների դիտարկմանը: Ընդ որում՝ հատուկ ուշադրություն է դարձվում այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են իրավաբանական և քաղաքական ինքնիշխանությունները, սուվերենը և ինքնիշխանության կրողները: Կասկածից վեր է, որ հետագայում անհրաժեշտ են այնպիսի աշխատություններ, որոնք խորապես կուսումնասիրեն այն հիմնախնդիրների համախումբը, որոնք կապված են հայկական իրականության և հայ քաղաքականության ու պետականության իրողությունների վերաբերյալ սույն հասկացությունների կիրառման հետ: Հոդվածի շրջանակներում չի դիտարկվում Սփյուռքի հետ կապված բարդ հիմնախնդիրների համախումբը:

1. Իրավաբանական և քաղաքական ինքնիշխանություն, ինքնիշխանություն հասկացության ծագումը. ինքնիշխանությունը՝ որպես քաղաքական սեփականություն

XVII դարավերջին ի հայտ եկած *souverainete* հասկացության՝ ֆրանսիացի իրավաբան Ժան Բոդենի մեկնաբանությունը, որն արտահայտում էր թագավորի կամ մեկ այլ ավատատիրական տիրակալի իշխանությունը միջին դարերում, երկու հիմնական մոտեցումների շուրջ ընթացող բազմադարյա դիսկուրսի առիթ հանդիսացավ: Դրանցից մեկը պտտվում է իրավական մեկնությունների և անմիջապես Բոդենի սահմանումների, մյուսը՝ քաղաքական, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական տարածությունում սույն հասկացության պրոյեկցիայի շուրջ: «Պետության մասին» ֆրանսերեն աշխատությունում Բոդենը *souverainete*-ը սահմանում է որպես «բացարձակ և մշտական իշխանություն պետության վրա»: Նույն աշխատության լատիներեն տարբերակում Բոդենը հայտարարում է պետության մեջ «քաղաքացիների և հպատակների հանդեպ

բարձրագույն և օրենքներից ազատ իշխանության» գոյության մասին [1, p. A75]:

Եվրոպական իրավաբանական մտքի հետագա բոլոր դիսկուրսները դարեր շարունակ, այսպես թե այնպես, պտտվում են այս սահմանումների մեկնությունների ու պարզաբանումների շուրջ: Ի՞նչ է նշանակում, օրինակ, բացարձակ և մշտական իշխանություն: Իսկ եթե իշխանությունը պետության մեջ, արտակարգ դրության հետ կապված, փոխանցվում է դիկտատորի՞ն, բայց որոշակի և սահմանափակ ժամկետով: Այդ դեպքում ո՞ւմ է պատկանում ինքնիշխանությունը, և կարելի՞ է արդյոք դիկտատորին ինքնիշխան անվանել: Կամ՝ ի՞նչ է նշանակում «օրենքից ազատ իշխանություն». ի՞նչ անել, այդ դեպքում, աստվածային օրենքի, ավանդույթների, «չձևակերպված» այլ, բայց, այնուամենայնիվ, ավելի քան իրական ու գործուն նորմերի հետ: Ինչպե՞ս են սույն սահմանումները հաշվի առնում միջազգային պարտավորությունները, որոնք սահմանափակում են ինքնիշխանության որոշ ասպեկտները, որը, հետևաբար, արդեն չի կարող դիտարկվել իբրև բացարձակ իշխանություն:

Նման հարցերը հետևանք են ինքնիշխանության իրավական սահմանմանը նորմի բնույթ տալու փորձերի, նորմ, որը ձևավորում և սահմանում է ժողովրդի պետական ու քաղաքական իրականությունը: Իրավաբանի ինքնիշխանությունը բխում է այն բանից, որ քաղաքական տարածությունը ձևավորվում է իդեալական և բացարձակությամբ միմյանց հավասար սուվերենների փոխգործակցությամբ, ինչն անխուսափելիորեն բերում է իրականությունից լրիվ կտրված պատկերի: Այնուամենայնիվ, ինքնիշխանության շուրջ իրավաբանների բանավեճերը կարևոր հետևանքներ ունեցան քաղաքական դաշտում՝ թույլ տալով ի հայտ բերել իշխանություն հասկացության և արտաքին աշխարհի կողմից դրա ճանաչման դիալեկտիկան, որն ընկած է քաղաքական ինքնիշխանության կառույցի հիմքում: Եթե մինչ այդ միջնադարում, իշխանությունն իր լեգիտիմությունը հիմնավորում էր սրբազան իրավունքով, «Երկնքի մանդատով», ապա նոր ժամանակներում՝ հետվեստֆալյան դարաշրջանում, իշխանությունն անբաժանելի էր այլ պետությունների կողմից նրա ճանաչման հետ կապված պրոբլեմատիկայից:

Քաղաքական ինքնիշխանության շուրջ բանավեճերում պարզորոշ առանձնանում էին «ճանաչման ինքնիշխանության» կողմնակիցները, այն դիտարկվում էր որպես միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների գործառույթ, երբ «պետությունը հանդիսանում և դառնում է միջազգային անձ միայն և բացառապես ճանաչման շնորհիվ» [2, p. 135-136]: Դրանց ընդդիմանում էին «փաստի ինքնիշխանության» կողմնակիցները, որը դիտարկվում էր որպես իր՝ պետության ատրիբուտ և գործառույթ, անկախ միջազգային հանրության կողմից դրա ճանաչման փաստից. «չճանաչումը չի կարող հիմք հանդիսանալ պետության տարածքային գերակայության խախտ-

ման համար» [2, p. 137-138; 3, p. 56]: Ինքնիշխանության առկայությունը կամ բացակայությունն այս դեպքում որոշվում է նրանով, թե ի վիճակի՞ է արդյոք դիտարկվող կազմավորումը պետական իշխանություն իրականացնել իր տարածքում, գործառել իբրև պետություն:

Վադիմ Ցիմբուրսկին, փորձելով ձևակերպել ինքնիշխանության քաղաքական ասպեկտները, առաջարկել է հետևյալ կառույցը. «X-ը իշխանություն է իրականացնում A-ի վրա (բացարձակապես միևնույն է, թե ինչի՞ վրա է այն հիմնված՝ իշխանության տակ գտնվողներն ընդունո՞ւմ են այդ, թե՞ հարկադրված են այդ անել), և Y-ը, որ իշխանություն է իրականացնում B-ի վրա, ճանաչում է իշխանությունը A-ի նկատմամբ X-ի իրավունքով»: Այստեղ «և» շաղկապը դեպի երկու կողմ ուղղված կազուալ սլաք է ներկայացնում: Ձևակերպումը թույլ է տալիս տարբերակում անցկացնել և միմյանց կապել ինքնիշխանության մեկնաբանության երկու մոտեցումները, երբ «փաստի ինքնիշխանությունը»՝ իշխանության իրական իրականացումը, որ արտաքին ճանաչման հիմքն է դնում, տարբերվում է «ճանաչման ինքնիշխանությունից», երբ իշխանությունը դառնում է միջազգային ատյանների կամ պետությունների կողմից նրա՝ իբրև այդպիսինի ճանաչման հետևանք: Բացի այդ, այս ձևակերպումը լեգիտիմ և հնարավոր է համարում ինչպես շարժումը փաստի ինքնիշխանությունից դեպի ճանաչման ինքնիշխանություն, այնպես էլ հակառակ ուղղությամբ: Սահմանվում են նաև բացասական տարբերակները, երբ իրապես իշխանությունն իրականացնելու անկարողությունը վերջ է դնում արտաքին ճանաչմանը կամ, ընդհակառակը, ճանաչման արձագանքը հանգեցնում է «անքակտելի» իրավունքների և դրանց հետ մեկտեղ՝ նաև իշխանության վերացմանը՝ որպես այդպիսին [4, p. 18]:

Քաղաքական դաշտի ձևավորմամբ և իշխանության ուղղորդմամբ զբաղվող պրակտիկ քաղաքական գործիչներն ըմբռնումով են օգտագործել իրավաբանական ինքնիշխանության իդեալական կառույցները քաղաքական նպատակների հասնելու համար: Հետվեստֆալյան խաղաղության դարաշրջանում իրավաբանական ինքնիշխանության հանգումը քաղաքական գործիքանու մակարդակի՝ միանգամայն թույլատրելի և ընդունելի էր ներկայանում: Աշխարհաքաղաքական հասկացություն դառնալով՝ այն սկսում է մեկնաբանվել որպես քաղաքական սեփականություն, «ինքնիշխանություն ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի հանդեպ»՝ վերածվելով տարածքի, բնակչության և այլ ռեսուրսների տիրապետման իրավունքի հավակնությունների գնահատման սանդղակի:

Քաղաքական գործիչներն ընդունում են ինքնիշխանության (ճանաչման և փաստի) երկու բաղադրիչ, որոնք միասին ձևավորում են իրական ինքնիշխանությունը քաղաքական տարածությունում: Պատմությունը մեզ ինչպես նոր պետությունների և, համապատասխանաբար, ինքնիշխանությունների

առաջացման, այնպես էլ իր տարածքների մի մասի նկատմամբ պետության ինքնիշխանության կորստի և անգամ պետությունների ու դրանց ինքնիշխանությունների լրիվ անհետացման օրինակներ է մատուցում: Ընդ որում՝ վերջին պարագայում սուվերենների՝ ինքնիշխանության կրողների կարծիքը հաշվի չէր առնվում: Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Պրուսիան XVIII դարում քայլ քայլի հետևից անեքսիայի ենթարկելով Լեհաստանի տարածքը՝ վերջնարդյունքում որոշում ընդունեցին լեհական պետության ոչնչացման մասին: XX դարասկզբին բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան պայմանավորվածություն ձեռք բերեցին հօգուտ Թուրքիայի և երրորդ երկրների Հայաստանի Առաջին հանրապետության տարածքի մի մասի անեքսիայի վերաբերյալ. գործընթաց, որն ավարտվեց Առաջին հանրապետության վերացմամբ: 1938թ. երեք եվրոպական տերությունների մյունխենյան համաձայնությամբ Չեխիայից խլվեց նրա տարածքի զգալի մասի՝ Սուդետների նկատմամբ ինքնիշխանությունը: Ավելի ուշ՝ 1939թ., Մոլոտով-Ռիբենտրոպի պակտը վճռեց Լեհաստանի ճակատագիրը ըստ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև «երկուստեք բարեկամական համաձայնության կարգի» և վերացրեց մերձբալթյան պետությունները:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ բոլոր նման դեպքերում, ճանաչման կամ չճանաչման, ինքնիշխանության առաջացման կամ վերացման հիմնախնդիրները դիտարկելիս, տեղին չէ խոսել իրավական փաստարկումների մասին: Պայմանագրերը, որոնց հիման վրա իրականացվել են նման քայլեր, կարող են գտնվել իրավական դաշտից դուրս, և անտեսել սա ու խոսել տվյալ պարագայում «ինքնիշխանության» կամ «լիակատար իշխանության և անկախության» մասին՝ տեղին չէ: Այո, Հայաստանից, Չեխոսլովակիայից, Լեհաստանից, Մերձբալթյան երկրներից խլվել է նրանց տարածքների մի մասի կամ ամբողջ տարածքի նկատմամբ ինքնիշխանությունը, ընդ որում՝ բոլոր դեպքերում քաղաքական սեփականության բաժանումը և համապատասխան իրավական ընթացակարգն իրականացվել է առանց նրանց մասնակցության: Սակայն հարց է ծագում. ո՞ւմ է պետք այն ինքնիշխանությունը, որը կարելի է խլել մի քանի ստորագրությամբ ու պայմանագրով:

Ճիշտ նույն կերպ էլ չի կարելի ապրիորի հարգանք պահանջել չճանաչված պետության ինքիշխանության հանդեպ: Սահմանը, որը այս կամ այն ուժերի կողմից (որոնք հավակնում են ինչ-որ կարգավիճակի քաղաքական դաշտում) պետության մի մասի «տարածքի վերահսկումը» բաժանում է նոր պետությունից, բավական պայմանական է և չի կարող անցկացվել միայն իրավական նորմերի հիման վրա: Իրապես գործող իշխանությունը պետք է ցույց տա պետության և պետական ինքնիշխանության վերաճելու իր ընդունակությունը, և այս գործընթացում իրավաբանական փաստարկները նշանակալի դեր չեն խաղացել ու չեն խաղալու:

Ակնհայտ է, որ իրավաբանը պետք է ցնցվի «չճանաչված» ինքնիշխանություն, «կիսաինքնիշխան պետություններ» տերմիններից՝ միանգամայն արդարացիորեն նշելով նմանատիպ սահմանումների մեթոդաբանական անհնարինության մասին: Սակայն գործող քաղաքական գործչի համար իրավական անկոռեկտությունը տվյալ պարագայում էական դեր չի խաղում: Նրա համար ինքնիշխանությունն առաջին հերթին ստեղծվող քաղաքական իրավիճակին համապատասխան անընդհատ վերաբաշխվող սեփականությունն է, իսկ իրավական սահմանումներն ու նորմերը՝ գործիքներ, որոնց օգնությամբ քաղաքական գործիչն իրականացնում է ցանկալի վերաբաժանումը կամ պաշտպանվում է դրանից: «Սահմանափակ», «կիսատ», «մասնակի» ինքնիշխանություններ արտահայտություններում փոխզիջում է մտնում քաղաքական իրականության բազմազանության ու փոփոխականության և իրավաբանական ինքնիշխանության աբստրակցիայի միջև, որը միայն քաղաքականի ոչ մեծ մասն է ընդգրկում:

Իրավաբանի համար իրավունքը նորմ է, որին պետք է հետևել: Քաղաքական հարթությունում նման ձևակերպումը նույնպես տեղին է, բայց այստեղ որպես նորմ հանդես է գալիս կամ միայն որոշ չափով քաղաքական իրականության հետ հարաբերակցվող կայուն իդեալը, կամ պատմական իներցիան: Սուվերենի կողմից քաղաքական իրավունքի կենսագործումը կատարվում է մոբիլիզացման և կոնյունկտուրայի մեխանիզմների միջոցով, և հիմնական հարցը քաղաքական սեփականության վերաբաժանում իրականացնելու նրա ընդունակության մեջ է կայանում: Ընդ որում՝ կարող են համարժեք և արդարացի համարվել ցանկացած շահ և փաստարկում՝ իրավաբանականից մինչև բարոյական ու կրոնական: Խոսքը կարող է վերաբերել նաև «սահմանները կլորացնելու» և «կենսատարածքն ընդլայնելու» սուվերենի մտադրությանը: Քաղաքական հարթությունում ինքնիշխանության այս կամ այն իրավունքը քաղաքական իրականություն է դառնում ոչ թե որովհետև «այդպես էլ պետք է լիներ», այլ քաղաքական սեփականության վերաբաժանման արդյունքում, ինչը թույլ է տալիս հասնել փաստի կամ ճանաչման ինքնիշխանության: Ընդ որում՝ միանգամայն հնարավոր ու թույլատրելի է ինչպես «փաստի» փոխարկումը «ճանաչման», այնպես էլ հակառակ գործընթացը: Քաղաքական գործչի համար իմաստազուրկ է այն պնդումը, թե ինքնիշխանությունը պետք է ծագի որպես իրականացվող պետական իշխանության իրականացման կամ սուվերենների միջազգային շրջանակում նրա ընդունման հետևանք: Նա գիտե, որ պատմության և ընթացիկ քաղաքական իրականության մեջ առկա են թե՛ առաջինը, թե՛ երկրորդը: Այստեղ վճռական դեր են խաղում տեղի և ժամանակի հանգամանքները, հավակնորդի՝ մոբիլիզացման և կոնյունկտուրայի մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու կարողությունը: Քաղաքական լե-

զուն իրավագիտականի փոխելու փորձերը դիտարկվող գործընթացներում անթույլատրելի են և վտանգավոր։

Քաղաքական ինքնիշխանության զուտ իրավաբանական ձևակերպումն անլուծելի խնդիր է դարձնում այնպիսի պետությունների գոյությունը, ինչպիսիք են Շվեյցարիան կամ ԱՄՆ-ը, որոնցում անհնար է հստակ տարբերակել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են տիրապետությունը *(верховенство)*, լիիշխանությունը և անկախությունը։ Երբ երկաթյա կանցլերը միավորում էր գերմանական իշխանությունները Երկրորդ ռեյխում՝ միևնույն ժամանակ պահպանելով նաև կառավարիչներին և, մասամբ, տեղի օրենսդրությունը, շատ իրավաբաններ գրում էին այն մասին, թե ռեյխի տիրույթներն իհարկե պետություններ են, բայց ինչ-որ... ոչ ինքնիշխան։ Սակայն դա խնդիր չէր Բիսմարկի համար, և նա զբաղվում էր միացյալ Գերմանիայի կերտմամբ՝ ուշադրության առնելով և նկատի ունենալով առանձին իշխանությունների ու դրանց՝ «սուվերենի» կարգավիճակը պահպանած իշխանների «անքակտելի, սուվերեն իրավունքները»։ Իրավաբանական հարթության և քաղաքական իրականության միջև փոխզիջման ակնառու օրինակ կարող է ծառայել ԽՍՀՄ քաղաքական-վարչական կառույցը, որտեղ գոյություն ունեին միութենական և ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու երկրամասեր և այլն, որ Կենտրոնի՝ որպես կարևոր և համակարգաստեղծ տարրի, կողմից միավորվում էին մեկ կայսերական ձևի մեջ։ Ակնհայտ է, որ տվյալ կառույցն արտացոլում էր 20-ական թթ. աշխարհաքաղաքական իրողությունները, և քիչ հավանական է, որ այն ժամանակ Խորհրդային Միությունը կարող էր կազմավորվել որևէ այլ ձևով։ Քաղաքական իրավիճակի փոփոխությունն ուղեկցվում էր այդ համակարգի էվոլյուցիայով, սուբյեկտների առաջացմամբ և անհետացմամբ, դրանց միջև քաղաքական սեփականության վերաբաշխմամբ։ Բավական է հիշել Արցախի հանձնումը Ադրբեջանական ԽՍՀ-ին, Անդրկովկասի ԽՖՍՀ, Կարելա-ֆիննական ԽՍՀ լուծարումը, Ղրիմի հանձնումը Ուկրաինական ԽՍՀ-ին և այլն։

2. Սուվերենների, ինքնիշխանությունների և ինքնիշխանությունից օգտվողների տեսակներն ու կարգավիճակները. ինքնիշխանության խաղեր

Այսպիսով, իրավաբանական աբստրակցիաները, հասկացություններն ու նորմերը գործիքանու դեր են կատարում, որոնք կիրառելով՝ քաղաքական գործիչն իմաստավորում, մեկնաբանում և գործում է քաղաքական հարթությունում։ Վերը դիտարկված «ինքնիշխանությանը» զուգահեռ՝ հիմնարար հասկացությունների թվին է պատկանում նաև «ինքնիշխանության իսկական կրող» հասկացությունը, որի շուրջ նույնպես երկար դարեր բանավեճեր են ընթացել։

«Ինքնիշխանության իսկական կրողի» պրոբլեմատիկան բացակայում է միապետության ժամանակ, երբ ինքնիշխանության սեփականատերը՝ սուվերենը, նաև դրա կիրառողն է: Խոսքը տվյալ պարագայում վերաբերում է բացարձակ միապետությանը, որտեղ սուվերեն արքային է պատկանում ամբողջ իշխանությունը: Կարևոր չէ, թե ինչ կերպ ստացված՝ Աստծո՞ւց, ժողովրդի՞ց [5]: Թե՞ միապետի և բոլորը բոլորի դեմ անվերջ պատերազմներից հոգնած և սուվերենի պաշտպանության դիմաց քաղաքական կամք դրսևորելուց հրաժարված մարդկանց միջև կնքված պայմանագրով [6, 7]:

Հենց մտածողներն ու ժողովուրդները հեռանում են բացարձակ միապետության պարադիգմից, հիմք է առաջանում այն բանավեճերի համար, որոնք XX դարում հանգեցրին երկու դոկտրինների ի հայտ գալուն. դրանք կրում են Հանս Կելզենի և Հուգո Կրաբեի անունները: Դոկտրինները ենթադրում են բոդենյան՝ «օրենքների հետ չկապված» ինքնիշխանության տարրալուծումը բարձրագույն օրենքում՝ սահմանադրությունում: Դրանցից մեկը ելնում է նրանից, որ սահմանադրության տիրապետությունը պետության մեջ հանում է ինքնիշխանության հարցը [8]: Մյուսը ենթադրում է իբրև սուվերեն դիտարկել հենց սահմանադրությունը [9]: Քաղաքական ինքնիշխանության աշխարհաքաղաքական բովանդակության և քաղաքական հարթության նման անտեսումը աբսուրդի է հանգեցնում: Պետության սահմանների ներսում գործող սահմանադրությունը կորցնում է ուժը դրա սահմաններից դուրս, որտեղ սկսվում է մեկ ուրիշի տիրապետությունը: Սակայն հարց է ծագում, թե ինչպես է տեղի ունենում այդ սահմանազատումը: Ո՞ր գործիքի օգնությամբ է և, գլխավորը՝ ո՞ւմ կողմից է անցկացվում սահմանը: Սահմանադրություններն ինքնին չեն «վիճում» հարթության հարցի շուրջ, պատերազմ չեն հայտարարում և խաղաղություն չեն կնքում՝ ընդունելով մեկը մյուսի՝ գերակա օրենք լինելու իրավունքը այս կամ այն տարածքում: Քաղաքական տեսակետից հարցը հետևյալ կերպ է հնչում. ո՞ւմ միջև են բաժանվում հողը, բնակչությունը, այլ ռեսուրսները, ո՞վ է իրականացնում տարածքի սահմանազատումը, որտեղ այնուհետև իրավաբանորեն գերակայում են այս կամ այն սահմանադրությունները:

Այս մոտեցման քննադատությամբ հանդես է գալիս Կառլ Շմիտը՝ առաջարկելով իր հանրահայտ բանաձևը. «Սուվերեն է նա, ով կայացնում է որոշում արտակարգ դրության մասին» [10, p. 15]: Այստեղ կարևոր են «արտակարգ դրություն» և «որոշում» տերմինները: Այսինքն՝ սուվերեն է նա, ով ստանձնում է պատասխանատվությունը և որոշում է կայացնում այն ժամանակ, երբ պետությանը օրենքներով չնախատեսված վտանգ է սպառնում: Շմիտը կարողանում է ցույց տալ, որ իրավաբանական հարթությունը չի կարող չպարունակել իրավական վակուում, ինչն անխուսափելի է դարձնում «բացառիկ դեպքի» հասկացության ներմուծումը. «Բացառիկ դեպքն այն դեպքն է, որը

նկարագրված չէ գործող իրավունքով, կարող է լավագույն դեպքում նկարագրված լինել որպես ծայրահեղ անհրաժեշտության դեպք, սպառնալիքներ պետության գոյությանը կամ նման ինչ-որ բան, բայց չի կարող նկարագրվել ըստ իր փաստական կազմի: Միայն այդ դեպքն է հրատապ դարձնում ինքնիշխանության սուբյեկտի մասին հարցը, այսինքն՝ ընդհանրապես ինքնիշխանության հարցը» [10, p. 16-17]: Արդյո՞ք սա «բացառիկ դեպք» է. հարց, որը չի հարաբերակցվում իրավական նորմի հետ և իր լուծումը ստանում է «անհատապես պատասխանատու» հրամանի միջոցով: Սա նշանակում է, որ ինչպես որոշումը, այնպես էլ հրամանը բացարձակապես անձնային են և չեն կարող հիմնավորվել իրավունքի, ինչ-որ մեկի հեղինակության և այլնի վրա արվող հղումներով: Ցանկացած նման հիմնավորում անխուսափելիորեն կհանգեցնի անհրաժեշտ հեղինակություն ունեցող ատյանի մասին հարցը «վատ *(дурной)»* անսահմանություն տեղափոխելուն:

Այսպիսով, սուվերեն է նա, «ում իրավասության տակ պետք է լինի դեպքը, որի համար ոչ մի իրավասություն նախատեսված չէ» [10, p. 22]: Եվ «իրավասության նախադրյալներն ու բովանդակությունն այստեղ անհրաժեշտ ձևով անսահմանափակ են» [10, p. 17]: Սուվերենը բացառիկ դեպքի և արտակարգ դրություն մտցնելու մասին որոշում է ընդունում որոշ կարգ ստեղծելու համար, և քաոսից կարգի այդ «տիրական» ծնունդը իրավունքի գործողության հնարավորության վճռորոշ նախադրյալ է դառնում: «Գոյություն չունի այնպիսի նորմ, որը կիրառվի քաոսի նկատմամբ: Պետք է կարգ ստեղծվի, որպեսզի իրավակարգն իմաստ ունենա»: Հայոց նորագույն պատմության մեջ սուվերենի վառ օրինակ են Գարեգին Նժդեհն ու նրա որոշումը Լեռնահայաստանի ստեղծման մասին, ինչը թույլ տվեց պահպանել Սյունիքը, որը հետագայում ընդգրկվեց Խորհրդային Հայաստանի կազմում:

Ակնհայտ է, որ Շմիտին կարելի է մեղադրել «ինքնիշխանություն» և «իրավասություններ» հասկացությունները խառնելու մեջ, բայց դա միանգամայն գիտակցված քայլ էր նրա կողմից, ով հայտարարում էր, թե հենց իր՝ ինքնիշխանության շուրջ վիճելն իմաստ չունի: Ինքնիշխանությունն անհրաժեշտ է դիտարկել որպես ստորոգելի (պրեդիկատ), գործառնություն, հատկություն, և հարցն այն է, թե ում պետք է վերագրել այն: Ավելին, նորագույն ժամանակներում և միջազգային հարաբերությունների առկա համակարգում սկզբունքայնորեն կարևոր է դառնում ինքնիշխանության կրողի՝ սուվերենի և նրանց միջև տարբերակման անցկացումը, ովքեր քաղաքական որոշումներ են կայացնում, այսինքն՝ ինքնիշխանությունից օգտվողներ են: Արդի աշխարհում այն անձինք, որ շատ հազվադեպ են որոշում կայացնում, ինչպես Սաուդյան Արաբիայի պարագայում է, նույնպես սուվերեն են: Սուվերենների և ինքնիշ-

խանությունից օգտվողների տարբերակումն ու «բաժանումը» նորագույն ժամանակներում էապես ընդլայնել է ընդգրկումը, որտեղ քաղաքականությունը ծավալում է ինքնիշխանության իր խաղերը, որոնք ներկայում մինչ այդ չտեսնված մասշտաբ ու թափ են ստացել:

Սուվերենի և ինքնիշխանությունից օգտվողի՝ որոշում ընդունողի տարբերակման խնդիրը նոր չէ, և դրա հետքերը մենք տեսնում ենք նույն միապետական պարադիգմի շրջանակներում: Կարելի է հիշատակել մանկահասակ միապետի ռեգենտի կամ, օրինակ, կարդինալ Ռիշելյեի դեպքը, որն աբսոլյուտիստական քաղաքականություն էր վարում թույլ Լյուդովիկոս XIII-ի օրոք: Սակայն հնում բոլոր նման դեպքերում խոսքը վերաբերում էր բացառություններին, այնինչ նորագույն ժամանակներում նման տարբերակումը դառնում է նորմ: Ներկայումս հստակ տարբերակում է մտցվում «ինքնիշխանությունից օգտվողների» և «իսկական սուվերենների» միջև, ընդ որում՝ երկուսի կարգավիճակն ու դրությունն առավել հաճախ ամրագրվում է սահմանադրությունում:

Սուվերենների (որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է ինքնիշխանության իր պատկերացումը) որոշ տիպաբանության կառուցումը հանգեցնում է հետևյալ պատկերին [11].

1. Ժողովուրդը՝ որպես քաղաքացիների հանրություն («Ժողովուրդ-1»): Այս դեպքում որպես սուվերեն հանդես է գալիս «քաղաքացիական հասարակությունը», և խոսում են «ժողովրդական ինքնիշխանության» մասին:
2. Ազգը և իր պետությունը («Ազգ»): Որպես սուվերեն հանդես է գալիս այն իրականությունը (ազգը), որը մեկ ամբողջի մեջ է շաղկապում երկրի բնակչությունը, տարածքը և իշխանության ինստիտուտները, երբ խոսում են «պետության ինքնիշխանության» մասին:
3. Ժողովուրդ, որ ձգտում է հասնել իր պետականության ստեղծմանը և իրականացնում է դրա ստեղծման իր իրավունքը («Ժողովուրդ-2»): Այս դեպքում սուվերենն անպայման հավակնում է այն տարածքներին, որոնք գտնվում են այլ պետության ինքնիշխանության տակ:

Անկախ այն բանից՝ դիտարկվում է փաստի՞, թե՞ ճանաչման ինքնիշխանությունը, այս կամ այն տեսակի սուվերենի և ինքնիշխանությունից օգտվողի փոխհարաբերությունները ստեղծում են մի հարթություն, որտեղ ընթանում են «ինքնիշխանության խաղերը»: Կարելի է առանձնացնել հարաբերությունների հետևյալ տեսակները.

1. Ինքնիշխանությունից օգտվողների վարած խաղերն ինքնավար են: Այս դեպքում կարելի է խոսել «քնած սուվերենի» մասին, ով ոչ մի կերպ չի միջամտում այն հարցում, թե ինչպես է ինքնիշխանությունից օգտվողը տնօրինում քաղաքական սեփականությունը:

2. Սուվերենի՝ օրենքով ձևակերպված պարբերական «արթնացումներ»: Խոսքը որոշ ժամանակով սուվերենի իրական «արթնացման» կամ այդ «արթնացման» «բեմադրման», նմանակման մասին է՝ նպատակ ունենալով հաստատել ինքնիշխանությունից օգտվողի՝ խաղ վարելու լիազորությունները կամ վերաբաշխելու օգտվողների լիազորությունները: Այս դեպքում կարելի է խոսել «նիրհող սուվերենի» մասին:
3. Սուվերենն իսկապես արթնանում է, ինչը կապված է արտակարգ իրավիճակի և դրության հետ, երբ խոսում են «առույգ սուվերենի» մասին: Նման արթնացում կարող են առաջ բերել.
   3.1 ինքնիշխանությունից օգտվողները՝ հանրաքվեի կամ մոբիլիզացիայի համապատասխան մեխանիզմների միջոցով,
   3.2 սոցիալական խումբը, քաղաքական ուժը, որը մինչ այդ ինքնիշխանությունից օգտվող չէր հանդիսանում:

Տվյալ պարագայում խոսքն ապստամբության, ժողովրդական շարժումների մասին է, որոնք հանգեցնում են իշխանափոխության հեղափոխական ճանապարհով և սուվերենի անունից հանդես գալու իրավունքի նվաճման:

Այսպիսով, վերը բերված դասակարգումը թույլ է տալիս խոսել երեք վիճակների մասին, որոնցում կարող է գտնվել սուվերենը՝ քնած, նիրհող, բայց պարբերաբար արթնացող և առույգ: Այս կամ այն վիճակում գտնվող սուվերենների և ինքնիշխանությունից օգտվողների փոխհարաբերությունները կարող են զարգանալ այդ թվում նաև հակամարտության սցենարների շրջանակներում: Արթնացած սուվերենը՝ հանձին քաղաքացիական հասարակության («Ժողովուրդ-1»), վկայակոչելով «ժողովրդական ինքնիշխանությունը», կարող է պահանջել փոխել հեղինակությունը կորցրած կառավարությանը՝ ինքնիշխանությունից օգտվողին: Վերջինը, պաշտպանվելով և պայքարելով իշխանությունը պահպանելու համար, կարող է օգտագործել «սահմանադրական կարգի պաշտպանության» կարգախոսը՝ դիմելով «պետական ինքնիշխանությանը»: Ժողովուրդը, բարձրացնելով «ազգային ինքնորոշման» և իր պետության կառուցման իրավունքի կարգախոսը («Ժողովուրդ-2»), պայքարի մեջ է մտնում պետական իշխանության հետ, որը պաշտպանում է «ազգի պետական ինքնիշխանությունն այն տարածքում, որտեղ ծավալվում է շարժումը սեցեսիայի համար: Այս դեպքում «ազգը» «ողջ ժողովրդի» անունից հանդես գալով և վկայակոչելով «պետական ինքնիշխանությունը», մտնում է պայքարի մեջ պետության տարածքային ամբողջականության համար: Ակնհայտ է, որ առկա պետության («ազգի») և «Ժողովուրդ-2»-ի տեսակետներից՝ «ազգի ինքնորոշման իրավունքի» մեկնաբանումները հստակորեն անտագոնիստական են: «Ազգի» և «պետական ինքնիշխանության» համար «ինքնորոշման

իրավունքն» արտահայտվում է պետության ամբողջականության համար պայքարում: Իսկ «Ժողովուրդ-2»-ը, ելնելով ազգային-ազատագրական պայքարի տրամաբանությունից, ձգտում է կառուցել իր պետությունը և դուրս գալ գոյություն ունեցող պետության կազմից՝ հենվելով, եթե կստացվի, արտաքին ճանաչման և արտասահմանյան աջակցության վրա, իսկ ստեղծվող քաղաքական իրականությունը դառնում է վերոնշյալ երկու մոտեցումների հակամարտության արդյունք:

3. Արտաքին և ներքին ինքնիշխանություն

Պետության («ազգի») ինքնիշխանությունը հանդես է գալիս ինչպես արտաքին ոտնձգությունների, այնպես էլ ներքին խռովությունների դեմ, իսկ սուվերենի և ինքնիշխանությունից օգտվողների տարբերակմանը տրվում է երկրորդական նշանակություն: Հենց դրա համար էլ այն այդքան ընդունված է ինքնիշխանությունից օգտվողների՝ կառավարությունների շրջանում՝ թույլ տալով նրանց խոսել և գործել ժողովրդի անունից: «Ժողովրդական» ինքնիշխանության համար սուվերենի և ինքնիշխանությունից օգտվողների տարբերակումը սկզբունքային է և հնարավորություն է ստեղծում նկատել և տարբերել այնպիսի ռեժիմներ, ինչպիսիք են «բոնատիրումը» («ուզուրպացիա»), «տիրանիան»՝ լեգիտիմացնելով հանգամանքներին և պատմական ժամանակին անհամարժեք դարձած օգտվողին փոխելու իրավունքն ու հնարավորությունը: Ընդսմին՝ իրավական դաշտում ամրագրվում է մի ընթացակարգ, որը թույլ է տալիս թարմացնել օգտվողին տրված իշխանության մանդատը կամ հետ վերցնել այն: Նոր ժամանակներում ձևավորված պրակտիկան և ինստիտուտները (սահմանադրություն, որ սահմանափակում է քաղաքացիների և պետական ինստիտուտների իրավունքները, խորհրդարանական դեմոկրատիա, կանոնավոր ընտրություններ, իշխանությունների բաժանում և այլն) ժողովրդական (դեմոկրատական) ինքնիշխանության և դրանից օգտվողների պարադիգմը վերածեցին ընդհանուր տրենդի: Միջազգային ասպարեզում նման օգտվողները հանդես են գալիս որպես վստահված անձինք, որ ունեն «իսկական սուվերենների» մանդատ, որոնց անունից նրանք տնօրինում են քաղաքական սեփականությունը՝ ինքնիշխանությունը:

Փաստը, որ ներկայումս ճանաչման ինքնիշխանությունը գերակայում է փաստի ինքնիշխանության նկատմամբ, ինչպես նաև սուվերենների և ինքնիշխանությունից օգտվողների տարբերակումը Արևմուտքին հնարավորություն տվեց մշակել տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս «վերցնել» և «տանել» քաղաքական սեփականությունը՝ ինքնիշխանությունը, սուվերենից: Քանի որ ճանաչման ինքնիշխանությունը կախված է արևմտյան դեմոկրատիաների կողմից նրա ճանաչումից, ապա վերջինները հնարավորություն են ստանում

ոչ միայն լուծել ինքնիշխանության առկայության կամ բացակայության, սուվերենն կոչվելու իրավունքի հարցերը, այլև որոշել, թե ով է նորաստեղծ ինքնիշխանության օգտվող հանդիսանում: Այլ խոսքերով՝ Արևմուտքը, հանձին «միջազգային հանրության», ոչ միայն քաղաքական սեփականության որոշ ծավալի սահմաններն առանձին քաղաքական ակտորի՝ սուվերենի տեսքով ձևակերպելու (նշանակում է՝ նաև որոշելու), այլև «նորաստեղծ ինքնիշխանությունը տնօրինելու հնարավորության (այսինքն՝ որոշակի չափով նաև ինքնիշխանությունից օգտվողներ դառնալու) իրավունք ստացավ:

Այսպիսով, առաջատար արևմտյան երկրներն ու ինստիտուտները հնարավորություն են ստանում համապատասխան «գնանշումների» և «վարկանիշային կազմակերպությունների միջոցով կառավարել ինչպես սեփականության ծավալները, այնպես էլ այն տնօրինելու իրավունքի օրինականությունը: Անհրաժեշտության դեպքում ինքնիշխանությունը կարող է վերցվել կամ «սառեցվել», իսկ օգտվողներից կարող է հետ վերցվել «պիտակը», որը փաստորեն փոխարինում է սուվերենի՝ քաղաքական սեփականությունը տնօրինելու մանդատին: Սուվերենի լիազորությունները կարող են հետ վերցվել, կամ նույնիսկ կարող է կասկածի տակ դրվել հենց սուվերենի կարգավիճակը՝ վերջինիս «սիմուլյակը», մուլյաժ հայտարարելով և «լիազորությունները» մեկ ուրիշին հանձնելով: Կարող են անվավեր, ապօրինի համարվել ինքնիշխանությունից օգտվողների կազմակերպած այս կամ այն ընտրությունների կամ հանրաքվեների արդյունքները, ինչի հետևանքով կեղծված է հայտարարվում սուվերենի մանդատը: Հաջորդ փուլում ինքնիշխանությունից օգտվելու մանդատը կարող է հանձնվել այդ դերի մեկ այլ հավակնորդի, որի լիազորությունները կհաստատվեն համապատասխան ընթացակարգով:

Վերն ասվածը, սակայն, չի նշանակում, թե կորած է համարվում նոր պետությունների ինքնիշխանության ողջ ծավալը, և մենք պետք է խոսենք նրանց ինքնիշխանության՝ որպես այդպիսինի, բացակայության մասին: Պատմությունը լի է նման սահմանափակ ինքնիշխանության և երիտասարդ ինքնիշխան պետության ու նրա «խնամակալների» միջև ակնհայտորեն անիրավահավասար հարաբերությունների օրինակներով, որոնք հետագայում, ժամանակի ընթացքում, փոխակերպվել են ավելի կայուն ինքնիշխանության, որը հենարան է գտնում պետության ներսում, այլ ոչ թե դրսում, և որը վկայակոչում է փաստի և ոչ թե ճանաչման ինքնիշխանությունը: «Արտաքին ուժերի խամաճիկի» և «ինքնիշխան կառավարչի» միջև սահմանը շարժական է և որոշվում է ասպարեզում գործող որոշակի խաղային պարտիայի ուժերի դասավորվածությամբ:

Նմանատիպ խաղի փորձի ականատեսն ենք մենք այսօր վերջին ժամանակներս ԼՂՀ՝ որպես սուվերենի, կարգավիճակի իրավաչափության շուրջ

ծավալվող բանավեճերի հետ կապված: «Միջազգային հանրությունն» այսօր ակտիվորեն փորձում է հետ կանչել սուվերեն կոչվելու ԼՂՀ «լիազորությունները»՝ անվավեր ճանաչելով այն հանրաքվեների արդյունքները, որոնք անբասիր են անցկացվել դեմոկրատական ընթացակարգերի տեսանկյունից: ԼՂՀ՝ որպես սուվերենի ինքնիշխանության «կասկածելիությունը», բնականաբար, հանգեցնում է արցախյան իշխանությունների՝ ինքնիշխանությունից օգտվողների կարգավիճակը մերժելու անհաջող փորձերի: Ընդ որում՝ մինչև վերջ այս գիծն անցկացնելու անհնարինությունը բացատրվում է ոչ այնքան միջազգային իրավունքի հակասականությամբ, որքան նրանով, որ ԼՂՀ սուվերենությունը, իրենց պետությունն ստեղծելու արցախահայության իրավունքը հիմնվում է, առաջին հերթին, փաստի ինքնիշխանության, ռազմական հաղթանակ տանելու և հաջող պետականակերտ գործունեությամբ զբաղվելու նրա կարողության վրա: Ներկայումս ուժի աշխարհաքաղաքական կենտրոնների և, առաջին հերթին, Արևմուտքի կողմից տարվում է քողարկված և հայ փորձագիտական հանրության ու քաղաքական շրջանակների կողմից մինչև վերջ չընկալված փաստի ինքնիշխանության, որին տիրապետում է ԼՂՀ-ն, նենգափոխում ճանաչման ինքնիշխանության՝ մաններելու ավելի լայն դաշտ ստանալու և հայկական կողմի վրա ճնշում բանեցնելու համար: Ընդ որում՝ ինքնիշխանության «լիազորությունները և սուվերենի «պիտակը» առաջին փուլում տրվում են Հայաստանի Հանրապետությանը՝ նպատակ ունենալով շուտափույթ հետ կանչել դրանք՝ Արցախը «տարածքի» և Հայաստանի Հանրապետության ու Ադրբեջանի միջև տարածքային վեճի առարկայի վերածելով, ինչը, իր հերթին, անխուսափելի կդարձնի միջազգային այն արբիտրաժը, որը որոշում կընդուներ այս կամ այն սուվերենին Արցախի պատկանելության մասին:

Ասվածի համատեքստում հասկանալի է դառնում, թե ինչու Հարավային Օսիան և Աբխազիան ճանաչելու՝ Ռուսաստանի նախաձեռնությունը որևէ շանս չունի ճանաչվելու արևմտյան դեմոկրատիաների կողմից: Բացի զուտ աշխարհաքաղաքական մարտահրավերից, որ նետվեց Արևմուտքին, այս քայլը հայտ է Ռուսաստանի կողմից՝ կրկին դառնալու բավականաչափ ուժ ունեցող կենտրոն, որն ունի ինքնիշխանության խաղերում ինքնուրույն խաղի իրավունք և հնարավորություն, իրավունք, որը վերջերս միայն Արևմուտքն ուներ: Ռուսաստանի հաջորդող քայլերը ցույց են տալիս, որ ձեռնարկված քայլը դժվար է կշռադատված անվանել: Մասնավորապես, կարելի է հիշել ռուսաստանյան բարձրագույն քաղաքական ղեկավարության հայտարարությունները «հարկադրված» ճանաչման մասին կամ փորձերը՝ խոսել «հետաձգված կարգավիճակի» վերաբերյալ [12]: Այսպիսով, չկա ըմբռնումն այն բանի, որ նման մակարդակի հակամարտություններում ինչ-որ բան «հետ կանչելն» անհնար է, և Ռուսաստանն այլ ելք չունի, բացի նաև ինքնուրույն «նորմավո-

րող» կենտրոն դառնալը՝ ջանքեր գործադրելով իր ուղեծրում նվազագույնը չճանաչված այլ պետությունների ներգրավման ուղղությամբ: Ընդ որում՝ տվյալ պարագայում մենք ավելի շուտ պետք է խոսենք նման ընտրությանն ու քաղաքականությանը իր՝ Ռուսաստանի ներքին անպատրաստության մասին, որի ընտրանին Արևմուտքի հետ այս կամ այն կերպ «պայմանավորվելու» փորձերը չի թողնում [13]:

Այսպիսով, իրական քաղաքականության վերլուծությունում, ինքնիշխանության խնդիրներին անդրադառնալիս, մենք պետք է ելնենք ավելի բարդ՝ ճանաչման ինքնիշխանության և փաստի ինքնիշխանության այս կամ այն ծավալի համակցության պատկերից, որը տարածվում է սուվերենների տարբեր տեսակների (քնած, նիրհող կամ առույգ) վրա: Ստացվող պատկերը պետք է գնահատվի միջազգային իրավունքի և նրա առաջնորդների՝ ուժի աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի ավելի լայն համատեքստի շրջանակներում: Եթե ինքնիշխանության պարզեցված մեկնաբանությունը, որ հղումը կատարում է իրավաբանական ինքնիշխանության վրա, կարող է օգտագործվել համաշխարհային քաղաքական համակարգի զարգացման հանգիստ, իներցիոն շրջանի համար, ապա այն անհամարժեք է դառնում նախորդ սուվերենների վերացման և նորերի առաջացման անցումային շրջանում: Այս դեպքում անհրաժեշտ է կիրառել վերլուծության ավելի բարդ ապարատ, որը համակցում է սուվերենների վերոնշյալ տեսակների դիտարկումը: Դա առավել ևս արդարացի է, եթե հաշվի ես առնում այն, որ Արևմուտքն ինքը նորածնունդ դարաշրջանը բնութագրում է որպես փոփոխությունների և «գլոբալ քաղաքական արթնացման» դարաշրջան, երբ ստեղծված քաղաքական կարգի «կոտրումը»՝ այն XXI դարի տնտեսական և սոցիալական իրականությանը համապատասխանեցնելու նպատակով, անխուսափելի է համարվում [14, 15]:

4. Ինքնիշխանության հետտոտալիտար կերպարը. ինքնիշխանությունը գունավոր հեղափոխություններում

ԽՍՀՄ փլուզումը և հետխորհրդային շրջանի սկիզբն իրենց հետ ինքնիշխանության նոր մեկնաբանումներ և բացատրություններ բերեցին՝ կապված, առաջին հերթին, ինքնիշխանության տոտալիտար մոդուսի վերանայման անհրաժեշտության հետ: Տոտալիտար հասարակություններում գտնվեց երկու «իսկական սուվերենների»՝ «ժողովրդի» և «ազգի» (պետության) միջև հակասությունները վերացնելու ինքնատիպ մեթոդ մեկ զանգվածային կուսակցության ստեղծման միջոցով՝ բաղկացած երկու բաղադրիչից. համաժողովրդական կուսակցությունից (ԽՄԿԿ, որը խորհրդային ժողովրդի ավանգարդն էր) և պետության քաղաքական համակարգի միջուկից (ԽՄԿԿ, որը քաղաքական համակարգի, պետական և հասարակական կազմակերպությունների միջուկն

էր)։ Կուսակցությունը դառնում է այն միջավայրն ու մեխանիզմը, որտեղ ժողովրդական ինքնիշխանությունը վերափոխվում է պետական ինքնիշխանության, որից օգտվում է բարձրագույն կուսակցական-տնտեսական նոմենկլատուրան [16]։

Աշխարհում բավական երկար են ընթացել բանավեճերն այն հարցի շուրջ, թե ինչպես բնութագրել հետխորհրդային շրջանը։ Ի վերջո, ի հայտ եկան անցումային շրջան հասկացությունը և այն տարբեր տիպաբանությունների բաժանելու փորձերը։ Ամենահայտնին և լայնորեն ընդունվածը դարձավ Թոմաս Կարազերսի *(Carothers Thomas)* դասակարգումը, որը հետխորհրդային շրջանում տարբերակում է.

ա) ավտորիտար ռեժիմները,

բ) ռեժիմներ, որոնք բնութագրվում են «տիրող իշխանության քաղաքականությամբ», որտեղ, «ժողովրդավարության հիմնական ինստիտուցիոնալ ձևերի» պայմաններում «մեկ քաղաքական խմբավորումը... գերակայում է համակարգում այնպես, որ տեսանելի ապագայում իշխանափոխության շատ թույլ հեռանկար կա», իսկ «պետության հիմնական ակտիվները... աստիճանաբար անցնում են իշխող խմբի ենթակայության տակ»,

գ) «թույլ պլյուրալիզմի» ռեժիմներ, որտեղ ինստիտուտների ֆորմալ ժողովրդավարությունը սպասարկում է օլիգարխիական խմբավորումների պայքարին [17]։

Ցիմբուրսկին առաջարկում է միավորել կառավարման առաջին երկու ձևերը «կրատոկրատիա» տերմինով, որը 90-ական թթ. սկզբներին առաջարկել էր ռուս պատմաբան և քաղաքագետ Անդրեյ Ֆուրսովը [18, 16]։ Խոսքը «իշխանություն ունեցող իշխանության», այսինքն՝ իշխանությանը տիրապետողների մասին է՝ ստեղծված կոնյունկտուրայից և վճռական պահին այն վերցնելու կարողությունից ելնելով։ Թեև իշխանության աղբյուր գործնականում ողջ հետխորհրդային տարածքում «ժողովուրդն» էր հայտարարվում, սակայն կրատոկրատիայի պայմաններում այն ատոմացվում էր և մխրճվում գոյատևման համար մղվող պայքարում։ Ընդ որում՝ պետական դիսկուրսով հատուկ նշանակություն են ձեռք բերում «դեմոկրատիայի», «մարդու իրավունքների» և այլ թեմաներ։ Սակայն եթե արևմտյան դեմոկրատիաների սահմանադրություններում սույն հասկացությունները որպես սահմանափակիչ են ծառայում պետության լիիշխանության և հիմք՝ քաղաքացիական հասարակության ձևավորման համար, ապա կրատոկրատական հասարակություններում հենց իշխանությունը և միայն իշխանությունն է դառնում այն ինստիտուտը, որն ապահովում է հասարակության ամենօրյա գործունեությունը, ինչը թույլ է տալիս նրան գոյություն ունենալ ընդունելի պայմաններում։ Հասարակությունում վերաց-

վում են բոլոր այլ սոցիալական կառույցներն ու մեխանիզմները, որոնք կարող էին ստանձնել այդ ծանրաբեռնվածության գոնե մի մասը: Դրանով իսկ տեղի է ունենում ինքնիշխանության բռնատիրում աբսոլյուտիստական հոբսական իմաստով, երբ քաղաքացիները, ժողովուրդը հրաժարվում են սուվերենի իրենց իրավունքից, քաղաքական կամքն իրագործելու իրավունքից՝ համեմատաբար հանգիստ և կայուն կյանքի դիմաց: Իշխանությունը սուվերեն լինելու իրավունքը փոխարինում է որպես բոլորը բոլորի դեմ «համընդհանուր պատերազմից» խուսափելու հնարավորության միջոց՝ օպերատիվ կերպով կտրելով բոլոր հնարավոր և պոտենցիալ այլընտրանքները, որոնք արագ վարկաբեկվում կամ ոչնչացվում են:

Կրատոկրատիայի քարոզչական ապահովման մեջ անգնահատելի դեր են կատարում քաոսի և ամենաթողության (որոնք գերագույն իշխանության ջլատման արդյունքն են) օրինակները, խմբավորումների և ավազակախմբերի, զինված շարժումների (որ գոյանում են պետական ինստիտուտներից դուրս կամ դրանցից վեր) ահաբեկչությունը: Կենտրոնական Ասիայի ժողովուրդների համար դա 1990-ականների Տաջիկստանի օրինակն է, Հարավային Կովկասի համար՝ Էլչիբեյի դարաշրջանի խռովությունն ու տեռորը, Զվիադ Գամսախուրդիայինը՝ Վրաստանում և Լևոն Տեր-Պետրոսյանինը՝ Հայաստանում, Ռուսաստանի համար դա ելցինյան տասնամյակն էր: Նման պայմաններում ցանկացած ակտիվություն, որ միտում ունի ինքնիշխանությունից օգտվողների փոփոխության, «միայնակների ամբոխի» մարդու կողմից ընկալվում է որպես արտաքին կամ ներքին ուժերի «ծայրահեղական» ագենտուրա, որը սպառնում է կայուն կեցությանը: Կրատոկրատիայի պայմաններում ինքնիշխանությունից օգտվողների փոփոխությունը տեղի է ունենում իրավիճակից կախված և, հաջող փոփոխության օրինակներ բերելով, անհնար է երաշխավորել, որ հաջորդ անգամ այն աղետով չի ավարտվի: Այլ խոսքերով՝ հետխորհրդային տարածքը և քաղաքական ընտրանիներին մանիպուլացնող՝ այնտեղ աշխատող մեխանիզմները հարկ է անկայուն համարել. դրանք կարող են հանգեցնել սոցիալական քաոսի:

Այս տեսակետից հետաքրքիր է թվում գունավոր հեղափոխությունների դիտարկումը քաղաքական ինքնիշխանության պրիզմայի միջով: Խոսքը, փաստորեն, Արևմուտքի կողմից միջազգային լեգիտիմացման նոր տեսակի փորձարկման մասին է, որը կոչված է ապահովելու նրա շահերն առնվազն հետխորհրդային տարածքում: Բոլոր գունավոր հեղափոխություններում կարելի է առանձնացնել երկու հիմնական գիծ:

Առաջինը մոբիլիզացված ամբոխի առաջացումն է, որը հայտարարում է ոչ բռնի իշխանափոխության ձգտման մասին, և որը հետագայում յուրացնում

է «ժողովրդի» կարգավիճակն ու հայտարարում սուվերենի և ինքնիշխանության իրագործման իր հավակնությունների մասին: Այս երևույթի իրական կարգավիճակը կարելի է տարբեր կերպ գնահատել: Մի շարք հետազոտողներ այն դիտարկում են որպես քաղաքացիական ընկերակցության, դասական եվրոպական հեղափոխությունների «սուվերեն ժողովրդի» սիմուլյակր (ինչ-որ բանի ներկայացում, որն իրականում գոյություն չունի), երբ ապստամբած ամբոխը պայքարով իրավունք է նվաճել կոչվելու քաղաքացի և ժողովուրդ [19]: Մեկ այլ մոտեցում հենվում է էթնոսի և «քաղաքականացված էթնիկության» հասկացության վրա, որը կարող է ստեղծվել ամենակարճ ժամկետում և առանց որևէ սոցիալական հիմքի, բացառապես թշնամու կերպարին դիմակայելու հիման վրա, թշնամու, որի դեմ պայքարի ելնելու համար նա ոտքի է կանգնում: Այս պարագայում խոսքը վերաբերում է գունավոր հեղափոխության շարժիչ ուժի ձևավորմանը՝ էթնիկ և քվազիէթնիկ հիմքի վրա, երբ պետք է խոսել «քվազիէթնոսի» և «հատուկ փոքր ժողովրդի» ստեղծման մասին [20]:

Երկրորդ հիմնական գիծն այն հանգամանքն է, որ հեղափոխության և այն կրողի՝ «նոր ժողովրդի» հաղթանակը շատ բանով որոշվում է առաջատար դեմոկրատիաների կողմից, որոնք իրենց հեղինակությամբ «հեղափոխականներին» տալիս են «արթնացած սուվերենի» կարգավիճակ, իսկ նրա առաջնորդները ճանաչվում են որպես ինքնիշխանության օրինական օգտվողներ: Սա նշանակում է, որ տվյալ դեպքում խոսքը բացառապես ճանաչման ինքնիշխանության մասին է, իսկ այն ռեժիմները, որոնք իշխանության են գալիս, գրեթե անմիջապես հենվում են լեգիտիմացման արտաքին կենտրոնների երաշխիքների վրա:

Վերը նշված տեսակետները հաստատելու համար կարելի է վկայակոչել Ջորջ Սորոսի գրքերը, որն «անուրանալի» դեր ունի գունավոր հեղափոխությունների գործում: «Գլոբալացման մասին» գրքում Սորոսն ընթերցողին առաջարկում է «ազգային ինքնիշխանություն» հասկացության ծագման հետևյալ մեկնությունը: Ֆրանսիացի ժողովուրդը, XVIII դարի վերջին պայքարի ելնելով հանուն համամարդկային բարձրագույն նպատակների՝ ազատության, հավասարության և եղբայրության, ցավոք, գնաց իր ինքնիշխանության հռչակման և ժամանակակից ազգային պետության ու նրա քաղաքացիների ստեղծման ճանապարհով: «Հենց այդ ժամանակներից ի վեր շարունակվում է ազգային պետության և ազատության, հավասարության ու եղբայրության ունիվերսալ սկզբունքների դիմակայությունը» [21, p. 204]: «Ամերիկյան գերազանցության օճառի պղպջակը» գրքում Սորոսը նույն իրադարձությունների մասին արդեն այլ կերպ է խոսում. «Ֆրանսիական հեղափոխության ժամանակ թագավորը գահընկեց արվեց, իսկ ինքնիշխանությունն անցավ ժողովր-

դին: Այդ ժամանակվանից ի վեր այն ժողովրդին էլ կպատկաներ, բայց գործնականում անցավ պետության ձեռքը՝ հանձին կառավարության»: Որպես հետևանք՝ պահանջվում է, «հաստատելով, որ ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին... թափանցել ազգային պետություն և պաշտպանել մարդկանց իրավունքները» [22, pp. 104, 103]: Սորոսն ընդունում է. «Չի կարելի ասել, թե ժողովրդի ինքնիշխանության հայեցակարգի հետ կապված՝ ամեն ինչ հեշտ ու հասարակ է: Ինչպե՞ս, օրինակ, որոշել, թե հատկապես ով է արժանի ինքնորոշման իրավունքի այն հասարակության մեջ, որտեղ կան էթնիկ փոքրամասնություններ կամ խմբեր, որոնք միավորված են տարբեր գաղափարներով»: Այնուամենայնիվ, եթե կառավարությունն ընդդիմանում է պետության գործերին արտաքին միջամտությանը, որ կատարվում է հանուն ժողովրդի բարօրության, «կառավարության այդ առարկություններն ուղղակիորեն մատնանշում են, որ այն խախտում է ժողովրդի ինքնիշխանությունը, հետևաբար՝ նրան պետք է վերաբերվել իբրև խախտում կատարողի» [22, p. 104, 136]:

Այսպիսով, Սորոսը բացահայտ պաշտպանում է «ժողովրդական ինքնիշխանությունը», որն իրավունք ունի և կարող է գերազանցություն վերցնել «պետության ինքնիշխանության» վրա: Ընդ որում՝ բարդ դեպքերում, երբ անհրաժեշտ է լուծել այն հարցը, թե ով պետք է կոնկրետ դեպքում անվանվի «ժողովուրդ»՝ դրանով իսկ ինքնիշխանության և ինքնորոշման «անքակտելի իրավունքներ» ձեռք բերելով, այդ ժամանակ հարցը լուծում են միջազգային դատավոր-ատյանները: Ակնհայտ է, որ նմանատիպ խաղերին որպես ինքնուրույն, սեփական պարտիայի և սեփական քայլերի իրավունք ունեցող խաղացող մասնակցությունը համապատասխան «քաշ» է պահանջում, որ ունեն միայն ուժի աշխարհաքաղաքական կենտրոնները: Այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ այսօրվա դրությամբ միայն Արևմուտքն է մոնոպոլ կարգով ինքնիշխանության խաղ վարում՝ մերժելով և հաշվի չառնելով դրանցում այլ կենտրոնների մասնակցության հայտերը:

5. Հայոց պետականությունը և ինքնիշխանությունը

Ինքնիշխանության խնդիրների տեսակետից հայկական պետականության վերլուծությունը բարդ ու ոչ սովորական խնդիր է: Դա ոչ վերջին հերթին կապված է այնպիսի հետազոտությունների հետ, որոնք պահանջում են իրավունքի, քաղաքագիտության, աշխարհաքաղաքականության, պատմության և մշակույթի ոլորտների հետազոտողների համատեղ ջանքերի ներգրավում: Բացի այդ, իր ուրույն տեղն ունի նաև հայ կյանքի բազմազանությունը, որը չի կարող հանգեցվել միայն ազգի և պետական ինքնիշխանության հասկացություններին և պահանջում է դիմել Հայոց աշխարհի ավելի բարդ պարադիգմին:

Հայ իրականության վերլուծության համար պահանջվում է առնվազն ողջ գործիքանու ընդգրկում, ինչը դիտարկվում է այս հոդվածում: Մասնավորապես, մենք ունենք ձևավորված երկու պետություն, որոնցից յուրաքանչյուրը, այս կամ այն ծավալով, վկայակոչում է ինչպես ճանաչման, այնպես էլ փաստի ինքնիշխանությանը: Եվ եթե Հայաստանի Հանրապետությունը հիմնականում հենվում է ճանաչման ինքնիշխանության վրա, ապա ԼՂՀ-ն ներկայումս, անկասկած, փաստի ինքնիշխանության վրա է հենվում: Իրերի նման դրությունը, մի կողմից, ընդլայնում է այն հարթությունը, որտեղ Հայոց աշխարհը կարող է որոնել իր խնդիրների լուծումը, մյուս կողմից՝ անխուսափելիորեն մեծացնում է ռիսկերի և սպառնալիքների քանակը՝ անհրաժեշտ դարձնելով փոխգործակցության առավել բարդ սխեմաների մշակումն ու քաղաքական պրակտիկայի վերածելը՝ հաշվի առնելով հայկական երկու պետություններից կազմված իրականության ուժեղ և թույլ կողմերը:

Հայ ընտրանու անպատրաստությունը, որը չի ցանկանում աշխատել բարդ քաղաքական իրականությունում, հանգեցնում է նրան, որ վերջինը ցանկանում է պարզեցնել այդ իրականությունը, հանգեցնել ավելի պարզ պարադիգմի: Ընդ որում՝ չկա ընկալումն այն բանի, որ նման անցումը հասարակ խնդիր չէ: Քաղաքականության և քաղաքական հարթության մեջ գոյություն չունեն պարզ ու ուղղագիծ ճանապարհներ և լուծումներ, ինչն արտացոլվում է ստրատեգիստների հայտնի ասույթում. ցանկացած բարդ խնդրի համար գոյություն ունի պարզ, հասարակ և ոչ ճիշտ լուծում: Հայ քաղաքական ընտրանու՝«ԼՂՀ» նախագիծը «փակելու» և մեկ պետության պարադիգմին վերադառնալու փորձերում, որից հեռացան 90-ականների սկզբին, բացակայում է այս խնդրի բարդության ընկալումը: ԼՂՀ կայացման գործընթացն արդեն երկրորդ սերունդն է՝ ծավալվում է և հասարակական, քաղաքական, գաղափարախոսական իներցիա ունի: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման արցախյան փուլի շուրջ է տեղի ունեցել Հայոց աշխարհի արդի քաղաքական ընտրանու կայացումը, և դրանից «հետ կանգնելու» և «հրաժարվելու» փորձերն անխուսափելիորեն կդնեն դրա համարժեքության և լեգիտիմության հարցը՝ արդիականացնելով ռոտացիայի խնդիրը: Ընտրանիների ռոտացիան ռիսկային քայլ է, որը տվյալ պարագայում բարդանում է կայուն կրատոկրատական գծերով, որոնք հատուկ են հայ հանրությանը:

Այսպիսով, հայ քաղաքական ընտրանու կողմից ԼՂՀ կայացման և զարգացման գործընթացն «արգելակելու» և վերջնականապես «կանգնեցնելու» որոշման ընդունումը քաղաքական պատմության մեջ անխուսափելիորեն կպահանջի ոչ պակաս բարդ և անգամ ավելի բարդ խնդիրների մշակում, քան եթե հետևեին երկու պետությունների ընտրված պարադիգմի հետագա զար-

գացման ճանապարհը: Նման քայլի ձեռնարկումը պահանջում է մանրակրկիտ հաշվարկել բոլոր հնարավոր հետևանքները: Ո՞րն է դրդապատճառը, ի՞նչ նպատակներից ու խնդիրներից ելնելով է տեղի ունենում նախագծից հրաժարումը, ո՞րն է այն առաջարկվող պարադիգմը, որին պետք է անցնի հայոց պետականությունը. հարցեր, որոնք դժվար թե հասարակ ու պարզ անվանես՝ հաշվի առնելով հայոց աշխարհի բարդությունն ու բազմազանությունը:

Առավել հոռետեսական պատասխանը, որն առնչվում է դրդապատճառին, կարող է լինել հայ ընտրանու չկայացածության, արդիականության՝ հայոց աշխարհին նետված մարտահրավերներին համարժեք պատասխան չգտնելու նրա անկարողության մասին եզրակացությունը: Գուցե մենք պետք է խոսենք հայ ընտրանու՝ պլատֆորմի բարդությունից (որը ներառում է հայկական երկու պետությունները) ներկա պահին գլուխ հանելու անկարողության, այն փակելու, պարզեցնելու ցանկության մասին: Զարգացման նման սցենարն անխուսափելիորեն կհանգեցնի Հայոց աշխարհի հետագա դեգրադացման՝ հայ ժողովրդին տեղակայելով այն ժողովուրդների շարքում, որոնք վերջնականապես ամփոփվել են իրենց պատմության մեջ և վերածննդի ու զարթոնքի ներուժ չունեն: Ի տարբերություն Հունաստանի, Իտալիայի, այլ հին ժողովուրդների, Հայոց աշխարհը, հաշվի առնելով նրա աշխարհաքաղաքական դիրքը, ոչ մի շանս չունի պահպանելու թեկուզև առերևույթ պետականությունը, և պատմության գիրկն անցնելը կդառնա վերջնական ու անշրջելի:

Այսպիսով, «ԼՂՀ» նախագծի ուղղագիծ «փակումը» ստեղծված պայմաններում հարկ է ճակատագրական համարել Հայոց աշխարհի համար: Եթե Հայոց աշխարհի ապագա պլատֆորմի շուրջ բանավեճերը հանգեցնեն նրան, որ այն պատրաստ է անցնել մեկ հայկական պետականության պարադիգմին, ապա մենք պետք է խոսենք սույն գործընթացը մի ինքնատիպ «կոնվերգենցիայի» շրջանակներում ծավալելու մասին, երբ երկու հայկական պետությունները էվոլյուցիա են ապրում՝ ապագայում և ոչ թե անցյալում հասնելով մի ինչ-որ կետի, որտեղ տեղի է ունենում հայկական պետությունների միաձուլումը՝ մի ինչ-որ նոր իրականության ստեղծմամբ, որի ուրվագծերը դեռ պետք է ձևավորվեն և իմաստ ստանան հայ ընտրանու կողմից: Մի բան անկասկած է, որ նոր իրականությունը և նոր հայկական պետականությունը, երկու հայկական պետությունների զարգացման և կոնվերգենցիայի արդյունք հանդիսանալով, կլինի ոչ թե «ԼՂՀ» կամ «Երրորդ հանրապետություն», այլ մի նոր իրականություն և կպահանջի արդեն նոր անուն, նոր «անվանում» և նոր քաղաքական ուժեր, որոնք պատրաստ կլինեն ստանձնել հայոց պետականության նոր ու այլընտրանքային ապագայի պատասխանատվությունը: Սակայն սույն պլատֆորմի տեսական հիմքերի մշակումը և, առավել ևս՝ գործնական իրա-

կանացումը կպահանջեն ամբողջ Հայ աշխարհի ջանքերի, ներուժի ու ռեսուրսների կենտրոնացում, և դա ապագայի գործն է: Այսօր անհրաժեշտ է փաստել, որ Հայոց աշխարհին երկու պետությունների շրջանակներում զարգանալու բավական երկար ճանապարհ է սպասվում:

Հունվար, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Bodin, Jean, On Sovereignty: Four Chapters From Six Books of the Commonwealth.* Cambridge, UK: Cambridge University Press, 1992.
2. *Оппенгейм Л.*, Международное право: Мир. Перевод с английского. Т. 1: Полут. 1/ Под ред.: *Крылов С.Б.* (Предисл.); Пер.: *Лаутерпахт Г.*, М.: Иностр. лит., 1948.
3. *Дмитриев Ю.А., Магомедов Ш.Б., Понамарев А.Г.,* Суверенитет в науке конституционного права, М., 1998.
4. *Цымбурский В. Л.,* Идея суверенитета в посттоталитарном контексте // Полис, М., 1993. № 1.
5. *Grotius, Hugo, Jean Barbeyrac,* The Rights of War and Peace, in Three Books: Wherein Are Explained, the Law of Nature and Nations, and the Principal Points Relating to Government. The Lawbook Exchange, Ltd., 2004.
6. *Hobbes, Thomas. Leviathan.* J.C.A. Gaskin edited with an Introduction and Notes, Oxford University Press, USA, 1998.
7. Гоббс Т., Соч.: в 2 т., М.: Мысль,1989, т. 1; М.: Мысль, 1991, т. 2.
8. *Kelsen, Hans,* Das Problem der Souveränität und die Theorie des Völkerrechts. Beitrag zu einer Reinen Rechtslehre (1st edition Tübingen 1920), 2nd reprint of the 2nd edition (Tübingen 1928), Aalen: Scientia Verlag, 1981.
9. *Krabbe, Hugo,* The modern idea of the state. George H. Sabine and Walter J. Shepard authorized translation with an introduction, New York: D. Appleton, 1922. January 15 2009 <http://www.archive.org/details/modernideaofstat00krabuoft>
10. *Шмитт Карл,* Политическая теология. Сборник. Заключительная статья и составление А.Филиппова, М.: КАНОН-пресс-Ц, 2000.
11. *Цымбурский В. Л.*, Игры суверенитета: новый возраст России // Русский журнал, М., 2008г., №2. January 15 2009 http://www.intelros.ru/pdf/rus_magazin/02_2008/25.pdf
12. *Косачев К. И.*, Азербайджану необходимо оценить все возможные последствия участия в проекте «Набукко» // Интервью агентству международной информации «Новости-Азербайджан», 12 декабря, 2008. January 15 2009 <http://www.newsazerbaijan.ru/exclusive/20081213/42625949.html>
13. *Кургинян С. Е.*, Политические элиты в современной России: актуальные вызовы. Выступление на круглом столе "Элиты в современной России", Центр консервативных исследований при социологическом факультете МГУ им. М.В. Ломоносова, 24 октября 2008 года.

14. *Brzezinski, Zbigniew,* “The global political awakening,” *The International Herald Tribune*, Tuesday, December 16, 2008. January 15 2009 <http://www.iht.com/articles/2008/12/16/opinion/YEbrzezinski.php
15. *Kissinger Henry,* “The chance for a new world order,” *The International Herald Tribune*, Monday, January 12, 2009. January 15 2009 <http://iht.com/articles/2009/01/12/opinion/edkissinger.php?page=2>
16. *Фурсов А. И.*, Взлет и падение перестройки // Социум, М., 1992, №№ 9–12; 1993, №№ 1–4; 1994, №№ 1–2.
17. *Carothers, Thoma,.* The End of the Transition Paradigm, *Journal of Democracy* Volume 13, Number 1, January 2002. January 15 2009 < http://muse.jhu.edu/demo/jod/13.1carothers.pdf >
18. *Фурсов А. И.,* Кратократия, или социальная природа обществ советского типа // Социум, М., 1991, №№ 8–12; 1993, №№ 1–8.
19. *Ремизов М. В.,* Неоколониальная революция: осмысление вызова // Стратегический журнал, М., 2005, №1. January 15 2009 http://www.apn.ru/userdata/files/szh_1/2.pdf
20. *Кара-Мурза С.Г.,* Революции на экспорт, М.: Эксмо, 2006.
21. *Сорос Дж.,* О глобализации // Пер. с англ. А.Башкирова, М.: «Эксмо», 2004.
22. *Сорос Дж.*, Мыльный пузырь американского превосходства. На что следует направить американскую мощь // Науч. ред. и пер. с англ. В. Ионова, М.: Альпина Бизнес Букс, 2004.

АРМЯНСКАЯ ГОСУДАРСТВЕННОСТЬ И ИГРЫ СУВЕРЕНИТЕТА

Рачья Арзуманян

Резюме

В статье рассматривается ряд аспектов понятий юридического и политического суверенитетов, с выделением в последнем «суверенитета признания» и «суверенитета факта», формирующих реальный суверенитет в политическом пространстве. Показывается, как отход от парадигмы абсолютной монархии, происходящий в рамках двух доктрин – Кельзена и Краббе, а также игнорирование закономерностей политического пространства приводит к абсурдным и нежизнеспособным выводам, критику которых осуществляет, в частности, Карл Шмитт.

Делается вывод, что при рассмотрении политического суверенитета принципиально важным становится проведение различия между истинным носителем суверенитета – сувереном, и пользователями суверенитета, классифи-

кация отношений между которыми позволяет выделить три состояния, в которых может находиться суверен: спящем, дремлющем, с периодическим пробуждением, и бодрствующем. Взаимоотношения между суверенами и пользователями суверенитета создают пространство, на котором протекают «игры суверенитета», разворачивающиеся в рамках тех или иных сценариев противоборства. Крах СССР и начало постсоветского периода принесли с собой новые трактовки и интерпретации суверенитета, связанные с необходимостью пересмотра тоталитарного модуса суверенитета.

В статье рассматривается тема преобладания в настоящее время суверенитета признания над суверенитетом факта, а также то, как различение суверенов и пользователей суверенитета позволяет Западу разрабатывать технологии, «уводящие» суверенитет от суверена. В частности, рассматриваются технологии цветных революций, интерпретирующиеся как форма нового типа международной легитимизации. Показывается, что развернувшиеся в последнее время дискуссии о правомерности статуса НКР как суверена вписываются в логику соответствующих технологий и игр суверенитета. Делается вывод, что анализ армянской государственности сквозь призму проблем суверенитета является актуальной и сложной задачей, требующей организации и проведения междисциплинарных исследований.

ՄԵՐ ԱՊԱԳԱՆ՝ *NIC* ԱՉՔԵՐՈՎ

Արա Մարջանյան

Ինչպիսի՞ն է աշխարհի և մեր ապագան ԱՄՆ հետախուզական հանրության ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկի՝ Հետախուզության ազգային խորհրդի *(ՀԱԽ-NIC)* փորձագետների աչքերով: Հոդվածում փորձ է արվում պատասխանել այս հարցին՝ ըստ *NIC* 2010, 2015, 2020 և 2025 ծրագրային աշխատությունների արդյունքների: Հայալեզու վերլուծական գրականության մեջ առաջին անգամ նշված աշխատությունները դիտարկվում են ՀԱԽ ձևավորման և բուն գործունեության տրամաբանության ներքո: Հնարավորինս ամբողջականորեն շարադրվում են այն հիմնական գործոնները և մարտահրավերները, որոնք՝ ըստ նշված աշխատությունների, կձևավորեն աշխարհի և մեր տարածաշրջանի ապագան: Այս տեսանկյունից ուրվագծվում են Հայաստանի առջև կանգնած որոշ մարտահրավերները:

Նախաբան

Յուրաքանչյուր ոք, ով ասում է «ես», հասցեագրվում է «ուրիշին»:
Էմանուել Լևինաս, «Ուրիշի հումանիզմը», 1973թ.

Մարդիկ միշտ էլ ձգտել են կանխատեսել ապագան, իսկ հնարավորության դեպքում՝ կանխել գալիք աղետները կամ պատրաստվել դրանց: Այստեղ կարևոր է իմանալ, թե ինչպիսին է տեսնում ձեր ապագան *«ուրիշը»*, հզոր *«ուրիշը»*՝ պոստմոդեռնիզմի դիսկուրսի այս եզրի ողջ իմաստով: Չէ՞ որ դա թույլ կտա բյուրեղացնել ձեր սպասումները ձեր իսկ ապագայից, հարմարվել կամ դիմակայել դրան: Ինչպես ասում են՝ *praemonitus praemunitus*[1]: Սա ճշմարիտ է «ես»-ի, անհատի համար: Բայց սա ճշմարիտ է նաև այն դեպքում, երբ խոսքն ազգի, ազգ-պետության, «մեր» մասին է: Վերջին դեպքում սա արդեն անհրաժեշտ է, մանավանդ եթե այդ *«ուրիշն»* արդի աշխարհի ամենահզոր տերության հետախուզական հանրության (ՀտՀ) ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկն է՝ ԱՄՆ Հետախուզության ազգային խորհուրդը (ՀԱԽ)[2]:

[1] Նախազգուշացված ես, ուրեմն՝ զինված:

[2] *National Intelligence Council (NIC)* - ԱՄՆ հետախուզական հանրությունը ներկայումս (2009թ. հունվար) ներառում է Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ, *CIA),* Պաշտպանության հետախուզական գործակալության *(DIA),* Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ, *NCA),* Ազգային աշխարհագրահեռազննական հետախուզական գործակալության *(NGIA),* Ազգային տեղադիտական վարչության *(NRO),* Պետական դեպարտամենտի հետախուզական և հետազոտությունների բյուրոյի (ՊԴ ՀՀԲ, *ŠD BIR),* օդուժի *(Air Force),* ցամաքային ռազմուժի *(Army),* ծովային ռազմուժի *(Navy),* ծովային հետևակի *(Marine Corps),* ափեզրի պաշտպանության *(Coast Guard)* հետախուզական համապատասխան ծառայությունների, Հետաքննությունների դաշնային բյուրոյի (ՀՖԲ, *FBI),* Սպիտակ տան Հայրենիքի անվտանգության դեպարտամենտի *(DHS)* և Թմրադեղերի վերահսկման ադմինիստրացիայի *(DEA),* Էներգետիկայի նախարարության *(DoE)* և Դաշնային գանձապետարանի համապատասխան ներկայացուցիչներին ու փորձագետներին: ՀտՀ-ն համադրվում է ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրենի (ԱՀՏ, *DNI)* կողմից: ՀԱԽ-ը անմիջականորեն հաշվետու է ԱՀՏ-ին:

Հակիրճ կարելի է ասել, որ ՀԱԽ հիմնական գործը ԱՄՆ նախագահին և ԱՄՆ իշխանական համակարգի բարձրագույն օղակներին, առաջին հերթին՝ ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրենին (ԱՀՏ, *Director of National Intelligence, DNI),* այսպես կոչված Ազգային հետախուզական գնահատականներ (ԱՀԳ, *National Intelligence Estimates, NIEs)* տրամադրելն է՝ այդ օղակներին հետաքրքրող տարբեր հարցերի շուրջ: ԱՀԳ-ները ոչ թե օպերատիվ զեկույցներ են՝ հիմնված ՀտՀ տարբեր կառույցներից ստացված ընթացիկ հետախուզական տեղեկատվության վրա, այլ տվյալ իրադրության սցենարային զարգացման հավանականության գնահատումներ են և պարունակում են դրանց զարգացման միտումների միջնաժամկետ և երկարաժամկետ նկարագիրն ու վերլուծությունը՝ հիմնված լայն տիրույթի տեղեկատվության վերլուծության վրա[1]:

Հոդվածում դիտարկվող ՀԱԽ 2010, 2015 և այլ նմանատիպ ծրագրերն ու դրանց վերջնական հաշվետվությունները՝ «Գլոբալ միտումները», ըստ էության, այս ԱՀԳ-ների ժառանգներն են՝ դրանց բնորոշ արժանիքներով և թերություններով:

Նյութի համարժեք ընկալման համար կարևոր է հիշել հետևյալը: Նախ, իրենց ընդհանրության մեջ ոչ ԱՀԳ-ները, ոչ էլ «Գլոբալ միտումները» ոչ մարգարեություններ են, ոչ էլ վերջնական ճշմարտություն, թեև երկուսի պատմության մեջ էլ կարելի է գտնել ճշգրիտ գնահատումների, նույնիսկ՝ իրական մարգարեությունների, բայց և աղաղակող սխալների ու բացթողումների օրինակներ[2]: Միևնույն ժամանակ, գլոբալ և տարածաշրջանային մասշտաբներով միջնաժամկետ ու երկարաժամկետ միտումների վերլուծության, զարգացման կանխատեսման տեսանկյունից դրանք, իրենց ամբողջության մեջ, միանգամայն համարժեք աղբյուր են հանդիսանում: Իսկ եթե հաշվի առնենք խնդրո առարկա նյութերի ծավալները, կանոնակարգված բնույթը, ներառված ինտելեկտուալ ու փորձագիտական ներուժը, անընդմեջ գործունեության տասնամյակների հարուստ փորձը, բուն ու հարակից նյութերի հասանելիության աստիճանը[3], ապա դժվար է գերագնահատել դրանց դերը:

[1] Օրինակ, ԱՄՆ ՀտՀ կողմից 1960-70-ականներին աշխարհի յուրաքանչյուր երկրում իրականացվող քաղաքական անկայունությունների և ճգնաժամերի մոդելավորման համար դիտարկվում էին ավելի քան 600 տարբեր պարամետրեր: Տե՛ս [1]:

[2] Ճշգրիտ գնահատումների արդի օրինակներ կարելի է գտնել ստորև: Ավելի վաղ անցյալից հիշատակենք, օրինակ, 1950թ. նոյեմբերի 15-ի ԽՍՀՄ գործելակերպին ու քաղաքականությանը նվիրված ԱՀԳ-ն *(NIE 3),* նույն թվականի դեկտեմբերի 5-ի ԽՍՀՄ մտադրություններին նվիրված ԱՀԳ-ն *(NIE 11),* 1967թ. հունիսի 1-ի զեկույցը ԽՍՀՄ-Իրան նավթագազային համագործակցության մասին *(RR IM 67-29)* կամ Աֆղանստան խորհրդային զորքերի ներխուժման հետևանքների գնահատումները *(NI IIM 79-10022J):* Բացթողումներից հիշենք, օրինակ, Վարշավյան պակտի երկրների ռազմուժի Հունգարիա ներխուժման հնարավորության գնահատականները՝ վաղ անցյալում և Իրաքի ԶՈԶ ծրագրերի մասին ԱՀԳ-ները՝ արդեն նոր դարի պատմությունից: Դեպքերի (բայց ոչ միտումների) հավանականության աղաղակող սխալ գնահատումներից հիշենք, օրինակ, հեղափոխությունը Իրանում, ԽՍՀՄ փլուզումը *(NIE 11-18-90)* կամ 1997-98թթ. Ասիական ֆինանսական ճգնաժամը (ՀԱԽ 2010, տե՛ս ստորև):

[3] Հիմնականում ԱՄՆ Տեղեկատվության ազատության մասին օրենքի (ՏԱՄՕ, *FOIA)* արդյունքում:

Սակայն հստակ պետք է գիտակցել նաև, որ ոչ ԱՀԳ-ները, ոչ էլ «Գլոբալ միտումները» վակուումի մեջ չեն ստեղծվում: Ճիշտ այնպես, ինչպես սառը պատերազմի իրողություններն իրենց անջնջելի դրոշմը դրեցին ԱՀԳ-ների բովանդակության, դրանց կազմման, մշակման և բերվող գնահատականների կիրառման վրա, այնպես էլ հետխորհրդային, գլոբալացման և «հրապարակայնության» մեր ժամանակներում ԱՄՆ իշխանական համակարգի քաղաքական կոնյունկտուրան, կորպորատիվ հակումները, *լոբբիստական* շահերն ու այլ տարատեսակ «արտաքին» ազդակներ անխուսափելիորեն ազդում են թե՛ արդի որոշ ԱՀԳ-ների[1], թե՛ ՀԱԽ 2010, 2015 և այլ ծրագրային արդյունքների վրա:

Նշենք նաև, որ ՀԱԽ 2010, 2015 և այլ ծրագրային գործընթացները էականորեն ԱՄՆ ՀտՀ գործունեության արդյունք են: Այն, որ «Գլոբալ միտումներն» ի սկզբանե նախատեսված էին բաց հրապարակումների համար, ստիպում է ենթադրել, որ դրանք «այսբերգի» վերին՝ տեսանելի հատվածն են միայն: Ուստի, այստեղ միանգամայն կիրառելի է այն եզրակացությունը, որն արել էինք մեր վաղ հոդվածներից մեկում, ուր քննարկվում էր XX դարի 90-ականների կեսերին ներմուծված և ներկայումս լայնորեն կիրառվող «ուժեղ», «թույլ» կամ «ձախողված» պետություն որակավորումների վարկանիշային աղյուսակներ կազմող և ԱՄՆ ՀտՀ հետ սերտորեն կապված «Քաղաքական անկայունությունների հանձնախումբ» կառույցի գործունեությունը. «*Բաց հրապարակումների փուլի ամենաակնառու առանձնահատկությունը, հենց ինքը՝ հրապարակայնությունը, դառնում է «ժողովրդավարության քարոզչության» ռազմավարության հատկանշական տարր՝ համահունչ «մոդելավորում – կանխատեսում –կանխարգելում» բանաձևին*» [1, էջ 95]:

1. ԱՄՆ ՀԱԽ ձևավորումը

Երբ բոլորը կմեռնեն, այնժամ, ու ոչ ավելի շուտ, կավարտվի մեծ խաղը:
Ռեդյարդ Քիփլինգ, Կիմ. Գլ. XII. 1897-1900թթ.

Միացյալ Նահանգների ՀԱԽ պաշտոնական ծնունդը թվագրվում է 1979 թվականով, թեև նրա ձևավորման ակունքները հասնում են 1947թ., երբ ընդունվեց ԱՄՆ Ազգային անվտանգության օրենքը *(National Security Act,* 1947) և նախագահ Հ.Թրումենի կողմից հիմնվեց Կենտրոնական հետախուզության տնօրենի պաշտոնը *(Director of Central Intelligence, DCI),* պետական տարբեր գործակալությունների տրամադրության տակ եղած ազգային հետախուզական տեղե-

[1] Հիշենք միայն իրաքյան ենթադրյալ ԶՈԶ ծրագրերի մասին ԱՀԳ-ների հետ կապված պատմությունները, որոնք ավարտվեցին ԱՄՆ ներխուժումով Իրաք:

կատվության համադրման, տարածման և գնահատման լիազորություններով[1]: Այդ ժամանակ ազգային հետախուզական վերլուծական գնահատումները կազմվում էին ԿՀՎ ներքո՝ Հետազոտությունների և գնահատումների բաժնում (ՀԳԲ, *Office of Research and Estimates, ORE)* և կրում էին *«ORE»* (ՀԳԲ) դասիչը:

1950թ. ԿՀՎ նորանշանակ տնօրեն Ու.Սմիթը ամրապնդում է Կենտրոնական հետախուզության տնօրենի «ինտեգրալ օղակի» այս դերակատարումը՝ վերջինիս համար հիմնելով Ազգային գնահատումների խորհուրդ (ԱԳԽ, *Board of National Estimates):* Այն ձեռնամուխ եղավ պետական մասշտաբով արտաքին վտանգների և միջազգային զարգացման միտումների միջնաժամկետ և երկարաժամկետ գնահատականներով՝ ԿՀՎ ներքո գործող հատուկ ստեղծված Ազգային գնահատումների բաժնում (ԱԳԲ, *Office of National Estimates, ONE):* Մինչև իր կազմալուծումը՝ 1973թ. նոյեմբերին, ԱԳԲ-ն կազմել էր ավելի քան 1500 ԱՀԳ-ներ, այդ թվում նույն 1950թ. առաջին ԱՀԳ-ն՝ նվիրված Ֆիլիպիններում խորհրդային ռազմական գործողությունների հավանականությանը *(NIE 1)*[2]:

Ռ.Նիքսոնի նախագահության ժամանակ և հիմնականում այդ ժամանակվա Կենտրոնական հետախուզության տնօրեն Ու.Կոլբիի ջանքերով էականորեն վերափոխվեցին ԱՀԳ-ների կազմման փիլիսոփայությունը և գործընթացը: Ու.Կոլբին գտնում էր, որ ԱԳԽ-ն դարձել էր իրականությունից կտրված, մեկուսի և ավելի շատ ներքին քաղաքական կոնյունկտուրային հետևող «իմաստունների ժողով»: Նա ցանկանում էր էականորեն բարձրացնել ՀտՀ ներքո հետախուզական տեղեկատվության տարածման և վերլուծման մակարդակը, ավելի լայն ներգրավել ՀտՀ տարբեր օղակներին ԱՀԳ-ների կազմման գործում և շեշտակի բարձրացնել խորհրդի աշխատանքի արդյունավետու-

[1] Որպես այս ամենի շարժառիթ *NIC* պաշտոնական կայքը *(www.dni.gov/nic/NIC_history.html)* նշում է Փերլ Հարբորի վրա ճապոնական անակնկալ հարձակման մասին ցավագին հիշողությունները: Սակայն կասկածից վեր է, որ *DCI* պաշտոնի ներմուծումը և 1947թ. ԱՄՆ Ազգային անվտանգության օրենքի ընդունումը առնվազն նույնքանով պայմանավորված էր ԱՄՆ, և ընդհանրապես Արևմուտքի (Կանադա, ՄԹ, Ֆրանսիա, Ավստրալիա և այլն) իշխանական կառույցներում կոմունիստական գործակալների անհավատալի չափերի հասնող ներթափանցման նույնքան ցավագին գիտակցմամբ: Գիտակցում, որը սկսվեց Երկրորդ աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո, Կանադայում՝ ԽՍՀՄ Գլխավոր հետախուզական վարչության *(ГРУ)* գաղտնագրող Ի.Գուզենկոյի փախուստով, ԱՄՆ-ում՝ Է.Բենթլիի և Ու.Չամբերսի ապշեցուցիչ խոստովանություններով, և ավարտվեց 1995-97թթ. ԱՄՆ ԱԱԳ *«Վենոնա»* ծրագրի 1943-55թթ. վերաբերող մոտ 3000 հույժ գաղտնի փաստաթղթերի գաղտնազերծմամբ ու հրապարակումով՝ արդեն հիշատակված ՏԱՄՕ շրջանակներում (տե՛ս *www.nsa.gov/venona/index.cfm):*

[2] Իր գործունեության ընթացքում ԱԳԽ-ում աշխատում էին 5-12 ավագ փորձագետներ, որոնց օժանդակում էին 25-30 տարածաշրջանային և ֆունկցիոնալ (տիրույթային) մասնագետները և օժանդակ կազմը: ԱՀԳ-ների պատրաստումը տևում էր 6-8 շաբաթ: Դրանք կարող էին պատվիրվել ԱՄՆ նախագահի, Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ, *NSC)* որոշ անդամների, ԱՄՆ Հետախուզական խորհրդի *(USIB)* յուրաքանչյուր անդամի և հենց ԱԳԲ ղեկավարության կողմից: ԱՀԳ-ների վերջնական տարբերակները տարածվում էին ԱԳԲ-ի կողմից մոտ 100-300 հասցեներով՝ կախված կոնկրետ ԱՀԳ բովանդակության, ուղղվածության և գաղտնիության աստիճանից: Տարածումից հետո լրամշակման գործընթացը սովորաբար շարունակվում էր դեռ մի որոշ ժամանակ:

թյունն ու ԱՄՆ իշխանական օղակների հարցումների նկատմամբ պատասխանատվության մակարդակը: Ուստի, 1973թ. նոյեմբերին նա ցրում է «իմաստունների ժողովը» (և ընդհանրապես ԱԳԲ-ն)՝ փոխարինելով այն տարածաշրջանային ու ֆունկցիոնալ առումով տարանջատված մասնագետներով՝ Ազգային հետախուզական սպաներով (ԱՀՍ, *National Intelligence Officers, NIOs):* ԱՀԳ-ների նախնական տարբերակների կազմումը դառնում է ԱՀՍ անմիջական պարտականությունը: Վերջապես, 1979թ. ԱՀՍ-ները վերանվանվեցին Ազգային հետախուզական խորհուրդ, որն այդ ժամանակ անմիջականորեն հաշվետու էր Կենտրոնական հետախուզության տնօրենին:

Հետախուզական համակարգի ռեֆորմների և ահաբեկչության կանխարգելման ԱՄՆ 2004թ. օրենքը ձևավորեց Հտհ և մասնավորապես ՀԱԽ ներկայիս կարգավիճակը: Նախ, հաջորդ տարում ներմուծվեց ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրենի (ԱՀՏ, *DNI)* պաշտոնը: ԱՀՏ թեկնածությունը առաջարկվում է նախագահի կողմից և հաստատվում ԱՄՆ Սենատում: ԱՀՏ-ն չպետք է ղեկավարի Հտհ 16 գործակալություններից և ոչ մեկը, այլ պետք է ձևակերպի ողջ Հտհ առջև դրվող խնդիրներն ու դրանց առաջնայնությունները, ղեկավարի ազգային հետախուզական տեղեկատվության հավաքման, վերլուծման և տարածման գործունեությունը: Նույն օրենքով նախատեսված է ԱՀՏ գրասենյակի հիմնումը (ԱՀՏԳ, *Office of the Director of National Intelligence, ODNI):* Այսուհետ ԱՀՏ-ն ԱՄՆ նախագահի և Ազգային անվտանգության խորհրդի առջև ստանձնում է հետախուզական խնդիրներով հիմնական և պաշտոնական խորհրդատուի պարտականությունը՝ փոխարինելով այս դերում ԿՀՎ տնօրենին [2, Ch. 3, pp. 153-157]: Իր 2007թ. ծրագրային հոդվածում ԱՄՆ 2-րդ ԱՀՏ Մ.Մաքկոնելը նշում էր, որ ԱՀՏԳ-ն իր գործունեությունում պետք է որդեգրի 80-ականների Գոլդուոթեր-Նիքոլսի ռազմական ռեֆորմի «միացյալ հրամանատարության գործելակերպի» *(joint military command)* փիլիսոփայությունը [3, p. 53-54]: ՀԱԽ-ը անմիջականորեն հաշվետու է ԱՀՏ-ի առջև ու ներկայացնում է Հտհ համակարգված և ընդհանրական տեսակետը այս կամ այն հարցի շուրջ: Սույն հոդվածի *Հավելված Ա-ում* բերում ենք ՀԱԽ առաքելության նկարագիրը՝ թարգմանված ՀԱԽ պաշտոնական կայքից[1]: Ինչպես տեսնում ենք բերվող ձևակերպումներից, ՀԱԽ-ի կողմից կազմվող ԱՀԳ-ները այսօր, ինչպես և անցյալում, Ազգային հետախուզության տնօրենի և ԱՄՆ իշխանական համակարգի բարձրագույն օղակների համար շարունակում են մնալ որպես ազգային անվտանգության հարցերի ամենահեղինակավոր գրավոր աղբյուր[2]:

[1] www.dni.gov/nic/NIC

[2] Հոդվածի պատրաստման պահին հայտնի դարձան ԱՄՆ նորընտիր նախագահ Բ.Օբամայի կողմից առաջարկված ԱՀՏ *(DNI)* և ԿՀՎ *(CIA)* տնօրենի թեկնածուները՝ ԱՄՆ Խաղաղօվկիանոսյան նավատորմի նախկին գլխավոր հրամանատար (1999-2002թթ.), 68-ամյա պաշտոնաթող ծովակալ Դ.Բլեյերը և նախագահ Բ.Քլինթոնի աշխատակազմի նախկին ղեկավար (1994-1997թթ.), 70-ամյա Լ.Պանետան համապատասխանաբար:

Որպեսզի լավ պատկերացնենք, թե ինչպես է ՀԱԽ-ը տեսնում մեր ապագան, արժե, որ պատկերացնենք, թե ինչպես էր ՀԱԽ-ը տեսնում մեր անցյալը: Ուստի, ավելացնենք, որ ներկայումս (2009թ. հունվար) ՏԱՄՕ շրջանակներում ՀԱԽ կայքում հասանելի են 1946-91թթ. ժամանակաշրջանի ընդհանուր 13.4 հազար էջ ծավալով մասնակի կամ լրիվ գաղտնազերծված 544 ՀԳԲ-ներ և ԱՀԳ-ներ՝ նվիրված ԽՍՀՄ-ին և միջազգային կոմունիզմին: 544 հաշվետվություններից 26-ը այս կամ այն կերպ վերաբերում են Հայաստանին: *Հավելված Բ-ում* բերում ենք դրանց ամբողջական ցանկը՝ դասակարգված ըստ հետընթաց ժամանակագրության: Չափազանց ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանին վերաբերող վերլուծական նյութերի այս ցանկը սկսվում է Հաթայի երկրամասին (Ալեքսանդրեթի սանջակ) վերաբերող 1947թ. փաստաթղթով *(The HATAY question. ORE 15):* Ինչպես կարելի է տեսնել *Հավելված Բ-ից,* այս ցանկում են թե՛ 1950թ. հայտնի 3-րդ ԱՀԳ-ն *(Soviet Capabilities and Intentios. NIE 3)*, թե՛ 2000թ. ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2015» ծրագրային հաշվետվությունը: Նման հարևանությունը, կարծում ենք, ինքնին խոսուն է[1]:

2. ՀԱԽ 2010, 2015, 2020 և 2025 ծրագրային աշխատությունները

Կներեք, որ ամեն անգամ հանրության առջև մեր արտաքին իրադրության
մասին խոսելիս ես ստիպված եմ խորամուխ լինել տեխնիկական
մանրամասների մեջ: Բայց ես կարծում եմ՝ չափազանց կարևոր է,
որ մեր ժաղովուրդը հասնի իրական բարդությունների ընդհանրական
ըմբռնմանը, այլ ոչ թե գործի կրքերի, նախապաշարմունքների
կամ պահի թելադրանքով:
Ջորջ Ք. Մարշալ, 5 հունիսի, 1947թ.

Ստորև, թարգմանաբար և առանց մեկնաբանությունների[2], շարադրում ենք ՀԱԽ 2010, 2015, 2020 և 2025 ծրագրային աշխատությունների հիմնական հետևությունները: Թարգմանության ժամանակ խստագույնս հետևել ենք բնագրերին: Բոլոր օգտագործված նյութերը բաց են և մեջբերումների թույլատրման համար հարցման ենթակա չեն: Բերվում են նաև ՀԱԽ այս աշխատությունների պատրաստման գործընթացի և օգտագործված մեթոդաբանությունների մասին հակիրճ տեղեկություններ:

[1] 2009թ. հունվարի դրությամբ ՏԱՄՕ շրջանակներում ԿՀՎ հետախուզական ընդհանուր բնույթի տեղեկատվության էլեկտրոնային գրադարանում որոնողական ծառայությունը բերում էր Հայաստանին վերաբերող 1944-2004թթ. համար 231 փաստաթուղթ (Ադրբեջանի համար՝ 165, Վրաստանի համար՝ 240): Այս ցանկը հատկանշականորեն բացվում է 1944թ. «Դաշնակները շրջվում են դեպի Սովետները» նյութով *(The TASHNAGs turn to soviet Russia):* Դրանց թվում են նաև հիշատակված 26 ԱՀԳ-ները: Բացի վերջիններից, այստեղ կարելի է գտնել Հայաստանի էներգետիկ, քիմիական արդյունաբերության, ատոմային էներգետիկայի, գիտության և տեխնոլոգիայի ոլորտների զարգացման գնահատականներ, Երկրորդ աշխարհամարտում գերմանական կողմում կռվող հայկական ուժերի մասին նյութեր, հակակոմունիստական գործունեության ներուժի և սոցիալական բնույթի գնահատականներ, նույնիսկ «Հայկական ռադիոյի» անեկդոտների որոշ նմուշներ և այլն (տե՛ս *www.foia.cia.gov):*

[2] Որոշ մեկնաբանություններ կատարվում են միայն տողատակում:

2.1. ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2010»

Գործընթաց և մեթոդաբանություն: 1996թ. աշնանը ԱՄՆ Ազգային պաշտպանության համալսարանում ՀԱԽ-ը՝ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի *(INSS)* հետ համատեղ, իրականացրեց համաժողովների ու առանձին սեմինարների մի շարք, որին իրենց մասնակցությունը բերեցին ԱՄՆ ՀտՀ փորձագետները և ակադեմիական շրջանակների որոշ մասնագետներ, բոլորը՝ ԱՄՆ քաղաքացիներ: Այս ամենի ընդհանրական արդյունքները հանդիսացան ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2010» հաշվետվության հիմքը, որը հրապարակվեց հաջորդ տարվա սկզբին և, համարյա մեկ տարի տևած լրամշակումներից ու քննարկումներից հետո, վերահրատարակվեց 1997թ. նոյեմբերին: Ներկայումս ՀԱԽ կայքում հասանելի է ՀԱԽ 2010 ուսումնասիրության միայն 15 էջ ծավալով հիմնական արդյունքների համառոտագիրը [4]:

Մեթոդաբանության տեսանկյունից [4]-ի հիմքում ընկած էր ապագայի այսպես կոչված «գծային» կանխատեսում/մոդելավորումը: Այլ խոսքերով՝ հիմնական շեշտը դրվում էր ոչ թե «անակնկալ» երևույթների կանխատեսման և ոչ այնքան զարգացման տարբեր սցենարների մշակման և դրանց հավանականությունների գնահատման վրա, այլ, հիմնվելով 1996-97թթ. գործող և ձևավորվող միտումներին՝ դիտարկվում էր ապագայի «էվոլյուցիոն» զարգացումը:

ՀԱԽ 2010 կենտրոնական եզրակացությունը գլոբալ տեսանկյունից կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. *2010թ. մենք ականատեսը կլինենք նոր աշխարհակարգի գալստին*[1] ու հաստատմանը: *Այն վերջ կդնի Երկրորդ աշխարհամարտից հետո հաստատված կարգին՝ խարսխված ազգ-պետությունների և դրանց միջև գործող միջպետական հարաբերությունների վրա:* Համաշխարհային մասշտաբով գալիք 10-15 տարիներին, 1997թ. պնդում էին ՀԱԽ 2010 փորձագետները, ԱՄՆ ազգային անվտանգության քաղաքականության ձևավորման տեսանկյունից էական դերակատարում կունենան հետևյալ 6 հիմնական շարժիչները *(drivers). 1. ժողովրդագրական դինամիկա, 2. տնտեսական զարգացում, 3. պարենային ապահովվածություն, 4. հեռահաղորդակցության զարգացում, 5. էներգետիկա, 6. ռազմական տեխնոլոգիա և դրա տարածում:* Այս շարժիչները կձևավորեն գլոբալ մասշտաբով գործող միտումները, որոնք իրենց հերթին 1997-2010թթ. ժամանակահատվածում կհանգեցնեն որոշիչ հետևյալ երեք փոփոխություններին.

1. *Կոնֆլիկտները և հակամարտությունները* հիմնականում արդեն իսկ ունեն, իսկ ապագայում առավել ևս *կունենան ներպետական*, այլ ոչ թե միջպետական բնույթ: Ազգ-պետությունները ստիպված կլինեն ավելի ու

[1] Այստեղ և ստորև՝ ընդգծումները մերն են – *Ա.Մ.:*

ավելի մեծ ջանքեր թափել այնպիսի ներքին խնդիրների և մարտահրավերների լուծման վրա, որոնք պայմանավորված կլինեն ժողովրդագրական ճնշումով, էներգետիկայի, սննդի և ջրամատակարարման խնդիրների հետ:

2. Որոշ պետություններ *կձախողվեն* իրենց քաղաքացիներին այդ պետության մեջ համախմբող հիմնական գործառույթների իրականացման գործում: Ձախողման առավել ծանր պարագաներում փախստականների գոյացումը կզուգորդվի էթնիկ զտումներով և/կամ քաղաքացիական հակամարտություններով՝ ընդհուպ մինչև տվյալ պետության *փլուզում*՝ հետագա արտաքին ներխուժման հնարավորությամբ:
3. Նույնիսկ այն պետությունները, որոնք *իմուն կլինեն* տնտեսական և քաղաքական *անկայունությունների նկատմամբ,* միևնույն է, կգիտակցեն, որ *կորցնում են ազգային ծրագրերի (national agendas) վրա իրենց վերահսկման զգալի մասը*՝ տնտեսական էքսպանսիայի, գլոբալացման և տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխական զարգացման հետևանքով: Այս առումով, պնդում են ՀԱԽ 2010 փորձագետները, *«Ազգային տնտեսական քաղաքականություն հասկացությունը կդառնա անհեթեթ»:* Տարատեսակ ոչ պետական կազմակերպությունները՝ միջպետական բիզնես ընկերություններից մինչև օգնության *(relief)* վերազգային գործակալությունները, ոչ միայն չեն ամրացնի պետությունների ուժը, այլև կթուլացնեն դրանց: Կթուլանա նաև պետությունների ունակությունը՝ վերահսկել տեղեկատվության, ապրանքների և ծառայությունների հոսքը: Այս իրադրությունից կօգտվեն միջազգային կազմակերպված հանցավոր խմբերը՝ էլ ավելի թուլացնելով ազգ-պետությունների ուժը:

Միևնույն ժամանակ, այս նոր միտումները կգոյատևեն հին աշխարհակարգի հետ: Որոշ երկրներ կպնդեն իրենց ինքնիշխանության վրա, օրինակ՝ *Ռուսաստանը* և *Չինաստանը*, այլ երկրներ, ինչպիսիք են Հ. Կորեան և Կուբան, կպնդեն, որ փոփոխությունների այս նոր ալիքը ամենևին չի վերաբերում իրենց ազգային նպատակներին *(national agendas)* կամ իրենց տարածաշրջանային նկրտումներին, օրինակ՝ *Իրաքի* և *Իրանի* պարագայում: Բոլոր դեպքերում, ոչ մի պետություն չի խուսափի մի կողմից՝ զարգացման, մյուս կողմից՝ այս զարգացումը ղեկավարելու տվյալ պետության ունակության միջև հակասությունների մարտահրավերից: *Այս իրավիճակում, գլոբալ առումով չի գոյանա ոչ մի տերություն, ոչ մի գաղափարախոսություն և ոչ մի շարժում, որն ունակ լինի վտանգել ԱՄՆ շահերը կամ ստեղծել կայուն հակաարևմտյան կոալիցիա:* 2010թ. ԱՄՆ ազգային անվտանգության համակարգին առնչվող

հիմնական հարցն է լինելու *«ո՞ր դեպքերում, ե՞րբ և ինչպե՞ս օգտագործել ԱՄՆ ռազմուժը»:* Այս հարցը երկու խումբ մարտահրավերներ կառաջացնի. նախ՝ տարածաշրջանային մարտահրավերները՝ նետված այն պետությունների կողմից, որոնց նպատակները *(agendas)* հակասում են ԱՄՆ նպատակներին. այս պարագայում պետք է սպասել *ասիմետրիկ զարգացումների:* Օրինակ, *սովորական սպառազինության առումով ԱՄՆ էական գերակշռումը Իրանը կփորձի հավասարակշռել զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) մշակումով և ԱՄՆ բարեկամներին և դաշնակիցներին ահաբեկումով*[1]: Երկրորդ խումբ մարտահրավերները կգոյանան այն երկրներից, որոնք *կձախողվեն* վերը նշված փոփոխություններին համակերպվելու հարցում, և որոնց հասարակական համակարգերը կենթարկվեն էրոզիայի: Այս առումով, պնդում են [4]-ի փորձագետները, *«համաշխարհային պատմությունը կձևավորվի ԱՄՆ մեկուսացվածության կամ ներգրավման համամասնության աստիճանով»*[2]: Ներգրավման դեպքում *հիմնական սահմանափակումները կհանդիսանան ԱՄՆ տնտեսական կենսունակությունը, ռազմական ուժն ու դրա կիրառման վերաբերյալ ներքին համաձայնության (կոնսենսուսի) հնարավորությունները: Այստեղ առաջնային է ԱՄՆ համագործակցությունը ոչ պետական կազմակերպությունների և գործակալությունների հետ:*

Ընդհանուր տնտեսական զարգացման տեսանկյունից ՀԱԽ 2010 փորձագետները 1996-97թթ. պնդում էին, որ գալիք տասնամյակի ընթացքում գլոբալ էկոնոմիկան կշարունակի կայուն զարգանալ, բերվում էր նույնիսկ այդ աճի հետևյալ գնահատումը. մինչև 2010թ. աշխարհի բնակչության մեկ շնչին ընկնող իրական եկամուտը տարեկան կաճի 2%-ով: Ընդ որում՝ բարեկեցության այս աճը կհանգեցնի աննախադեպ բարգավաճման՝ հատկապես Արևմուտքում և Հեռավոր Ասիայում[3]: Աֆրիկան և Միջին Արևելքը էապես հետ կմնան վերջիններիս ցուցանիշներից:

Տարածաշրջանային մակարդակով [4]-ի փորձագետները նշում են, որ 1997-2010թթ. ժամանակահատվածում *Եվրոպան* հիմնականում *զբաղված կլի-*

[1] Խոսքը, հասկանալի է, առաջին հերթին ատոմային զենքի և Իսրայելի մասին է: Բերված պարբերության այլասերված տրամաբանությունը աչքի է զարնում: Իրականում Իրանը *միանգամայն սիմետրիկորեն* պատասխանում է տարածաշրջանում Իսրայելի ատոմային ԶՈԶ և բալիստիկ հրթիռային ու Ս.Արաբիայի բալիստիկ հրթիռային ներուժի հավասարակշռմանը: Իսկ այս ներուժի գոյացմանը առաջին հերթին նպաստել էր հենց ԱՄՆ-ը, ինչպես նաև Ֆրանսիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և Չինաստանը (մանրամասն տե՛ս [14]):

[2] Ըստ էության, [4]-ի փորձագետների կարծիքով՝ ԱՄՆ բացարձակ գերակայությունը գլոբալ առումով հանդիսանում է որպես 7-րդ և, թերևս ամենահիմնական «շարժիչ»: Դա են վկայում նաև ՀԱԽ հաջորդ ծրագրերի նյութերը. տե՛ս ստորև:

[3] ՀԱԽ այս կանխատեսում/գնահատումը, թերևս, ամենաշատն է քննադատվել հետագա վերլուծություններում ու հրապարակումներում: Հիշեցնենք, որ ՀԱԽ 2010 նյութերի հրապարակումից համարյա անմիջապես հետո սկսվեց Ասիական ֆինանսական ճգնաժամը, որն արագորեն գլոբալ մասշտաբի երևույթ դարձավ: Նույնը, մի փոքր ավելի մեղմ (նկատի ունենք կանխատեսումը, այլ ոչ ներկայումս ծավալվող ֆինանսատնտեսական ճգնաժամը), կրկնվեց ՀԱԽ 2025 հրապարակումից հետո:

նի իրենով, իսկ համաշխարհային մասշտաբով կունենա նվազ դերակատարում: Որպես ներքին կարևորագույն մարտահրավերներ Եվրոպայի համար առանձնացվում են հետևյալ երեքը. պետություն-ժողովուրդ «սոցիալական կոնտրակտի» վերաձևակերպում, Եվրոպական գործադիր իշխանական համակարգի ամրապնդում, տարածաշրջանում ԱՄՆ՝ որպես անվտանգության երաշխավորի և ՆԱՏՕ նոր դերակատարությունների որոնում: Եվրոպան զգալիորեն կախյալ կլինի Մագրիբի և Միջին Արևելքի տարածաշրջաններում ընթացող գործընթացներից (գաղթականներ, էներգակիրներ և այլն)[1], իսկ ԱՄՆ-Եվրոպա ռազմավարական ընդհանրությունը կբախվի մի շարք հակասական խնդիրների, այդ թվում՝ Իրանի նկատմամբ վարվող քաղաքականության, Միջին Արևելքում խաղաղության հաստատման գնի և *Թուրքիայի* անդամակցության հարցերին:

Ռուսաստանում կշարունակվի կենտրոնական իշխանության էրոզիան, որին դիմակայելը կդառնա նախագահ Ելցինի իրավահաջորդի առաջնահերթ խնդիրը: Այս առումով, ՀԱԽ փորձագետների գնահատումներով, հավանական հեղինակավոր (*authoritative*) իշխանությունն անպայմանորեն դեռ չի նշանակում իքնակալ (*authoritarian)* իշխանություն: Ուժեղ ղեկավարը կարող է և ամրապնդել դեռևս սաղմնային վիճակում գտնվող ժողովրդավարության ծիլերը, և *լավագույնս արձագանքել ժողովրդի ապատիային:* Մինչև 2010թ. և այդուհետ Ռուսաստանը կմնա տնտեսապես, հետևաբար նաև աշխարհաքաղաքական առումով, թույլ: Եթե անգամ նոր իշխանավորները *փորձեն վերահաստատել Ռուսաստանի վաղեմի կարգավիճակը* կամ վտանգել Արևմուտքի շահերը, *ապա դրա համար տարիներ կպահանջվեն:* Երկրի առջև կանգնած հիմնական մարտահրավերներից է ժողովրդագրական բացասական ճնշումը: Ռուսական ռազմուժը՝ ներկայումս (1997թ.) վատ զինված և վատ կազմակերպված, կանգնած է բարեփոխումների անհրաժեշտության առջև: Արդյունքում՝ *Ռուսաստանը կմնա բավական թույլ, որպեսզի կիրառի իր ռազմուժը անմիջական հարևաններից անդին:*

Միևնույն ժամանակ, կշարունակվեն հավակնոտ ռազմական բնույթի հետազոտությունները, սակայն էականորեն առաջավոր զենքի համակարգերը կհայտնվեն 2010-ից հետո: Մինչև 2005թ. Ռուսաստանը հիմնականում ստիպված կլինի միայն նորացնել եղած զինանոցը և երկարացնել զենքի համակարգերի շահագործման ժամկետները: *Արտաքին քաղաքականության առումով Ռուսաստանը* ամենայն հավանականությամբ *կուժեղացնի իր ազդեցությունը* անմիջական հարևանների վրա՝ *հատկապես Կասպիական էներգետիկ ավազանում:* Այն կձգտի օգտագործել կասպիական էներգետիկ

[1] Հետաքրքրական է, որ այս ցանկում Ռուսաստանը չի հիշատակվում: 2009թ. հունվարի սկզբներին ծավալվող գազային «պատերազմը» մի փոքր այլ իրողությունների վկայությունն է:

պաշարները թե՛ տնտեսական շահի, *թե՛ քաղաքական լծակների ձեռքբերման համար:* Համաշխարհային բեմահարթակում *Ռուսաստանը կշարունակի պնդել իրեն լուրջ վերաբերվելու վրա և հաճախ կգրավի ԱՄՆ-ից տարբեր դիրքորոշում: Այն կշարունակի Իրանի հետ ռազմական համագործակցությունը: Ռուսական լծակները Միջին Արևելքում խաղաղության հաստատման գործընթացում սահմանափակված կլինեն անկանոն, պահի թելադրանքով ենթադրված դիվանագիտական արշավներով*[1]: Ռուսաստանի հարևանները կշարունակեն ամրապնդել իրենց կապերը ՆԱՏՕ-ի, ԵՄ-ի և *OSCE-ի* հետ՝ աշխատելով, սակայն, չշարժել Ռուսաստանի դժգոհությունը:

Միջին Արևելքի տարածաշրջանի համար ՀԱԽ փորձագետներն առանձնացնում են *ժողովրդագրական գործոնը:* 2010թ. պատանյաց բողջը[2] Ս.Արաբիայում կկազմի 50% (մինչև 15 տարեկան), Իրանում՝ 65% (մինչև 25 տարեկան բնակչություն): Տարածաշրջանում «Իսլամի պաշտպանությունը» կմնա որպես քաղաքական գաղափարախոսական գործոն: *Տարածաշրջանը կհանդիսանա ԶՈԶ տեխնոլոգիաների տարածման գոտի:* Քննարկվող ժամանակահատվածում *ԶՈԶ ունակությունների ձեռքբերումն այս տարածաշրջանում կդառնա նորմ:* Բացի այդ, համաձայն [4]-ի, *կբարձրանա* այս *տարածաշրջանի և ընդհանրապես ՆԱԵԿ (OPEC) ռազմավարական դերակատարումը* նավթի արտադրման տեսանկյունից: 2010թ. *Իրանում* իշխանությունը կգտնվի ղեկավարների 2-րդ սերնդի ձեռքերում: Նրանց դեմ կհառնեն իրանական քաղաքականությունում կղերականների ներգրավման հետևանքով առաջացած հասարակական ցինիզմի և տնտեսական սխալ ղեկավարման հիմնախնդիրները: Իրանի հասարակության համար Շահի «հանցագործությունները» կդառնան հեռավոր հուշ, իսկ իսլամական խանդավառությունը կխամրի տնտեսական լճացման, կոռուպցիայի և առաջընթացի համար նվազ հեռանկարների պարագաներում: Իրանը կշարունակի շահագործել Միջին Արևելքի երկրներում առկա դժգոհությունները, օգտագործել ահաբեկչությունը, որպեսզի քայքայի ԱՄՆ դաշնակիցների հավատը ԱՄՆ ռազմական ներկայության հանդեպ, և

[1] Կարդալով այս տողերը՝ դժվար է թոթափել այն զգացումը, որ 1996-97թթ. ՀԱԽ փորձագետները համարժեք պատկերացնում էին թե՛ Ելցինի իրավահաջորդի ով լինելը, թե՛ գալիք պուտինյան ժամանակաշրջանի բնութագրիչ գրեթե բոլոր տարրերը. տարիներ պահանջող ՌԴ հզորացումը (հնարավոր դարձած ՌԴ – Ս.Արաբիա հում նավթի գների մասին 2003թ. սեպտեմբերյան ռազմավարական համաձայնության շնորհիվ [13]), աշխարհում և տարածաշրջանում ՌԴ ավելի ինքնուրույն քաղաքականության վարում, իշխանական համակարգում *դերժավնիկների* գաղափարախոսական հաղթանակը և ընդհուպ մինչև «Բուլավա» տիպի ծովային բալիստիկ հրթիռի դժվարին փորձարկումները, 2008թ. ռուս-վրացական հակամարտությունը, օգոստոսյան վրաց-օսական պատերազմն ու դրա հետևանքները և Գազայի հատված 2008-09թթ. Իսրայելի ներխուժման հետ կապված ռուսական դիվանագիտական անարդյունավետ այցերը:

[2] *Youth bulge*. Մեր ավելի վաղ հոդվածում [1] այս եզրն արդեն թարգմանել էինք որպես «պատանյաց բողջ»՝ բերելով համապատասխան հիմնավորումներ: Սակայն, մեզանից անկախ պատճառներով, հոդվածի վերջնական տարբերակում այն չէր օգտագործվել: Այստեղ մենք պնդում ենք այս եզրի թարգմանության մեր առաջարկը:

կշարունակի մշակել ԶՈԶ: *Իսրայելի և Պաղեստինի* միջև առաջընթացը հարթ չի լինի և պարբերաբար կընդմիջվի բռնություններով: ՀԱԽ փորձագետներն ակնկալում են *Պաղեստինի պետության de facto, եթե ոչ՝ de jure գոյությունը 2010թ.,* թեև այս հանգամանքը չի դադարեցնի ահաբեկչությունները: Ջրօգտագործման շուրջ վեճերը կսրեն լարումը Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի միջև՝ Եփրատի շուրջ, և Եգիպտոսի, Սուդանի և Եթովպիայի միջև՝ Նեղոսի շուրջ: Ավելացնենք, որ [4]-ում Հայաստանը (ինչպես նաև Վրաստանն ու Ադրբեջանը) անմիջականորեն չեն հիշատակվում: Ընդսմին, [4]-ը բացակայում է հոդվածիս *Հավելված Բ* ցանկում և ՀԱԽ կայքի որոնողական ծառայության Հայաստանին վերաբերող ԱՀԳ-ների մասին հարցումների արդյունքներում:

2.2. ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2015»

Գործընթաց և մեթոդաբանություն: ՀԱԽ 2015 ծրագրի սկիզբը թվագրվում է 1999թ. նոյեմբերով: Այն ժամանակ ԱՄՆ ԿՀՎ տնօրեն Ջ.Թենետի ուղերձում նշվում էր, որ «Գլոբալ միտումներ 2015»-ը «փորձ է արտացոլել հետախուզական հանրությունից դուրս գտնվող փորձագետների հետ հտհ ամբողջական ընգրկվածությունը ապագայի մասին կառուցողական երկխոսություն ծավալելու գործում: Ի սկզբանե մենք պատկերացնում էինք այն իբրև ոչ գաղտնի մի գնահատական, որը լայնորեն կմատուցվի հասարակությանը»: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվեցին 13 առանձին գիտաժողովներ (տե՛ս *Հավելված Գ):* Դրանք կրում էին այսպես ասած Ատլանտյան բնույթ. 12-ը՝ ԱՄՆ-ում և մեկը՝ ՄԹ-ում: Մասնակիցները հիմնականում ԱՄՆ հտհ փորձագետներ էին, ԱՄՆ և ՄԹ ակադեմիական շրջանակների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, բոլորը՝ ԱՄՆ ներկայիս կամ նախկին քաղաքացիներ: Այս կոնֆերանսների որոշ նյութեր բաց են և ներկայումս հասանելի:

Մեթոդաբանության տեսանկյունից օգտագործվում էր, այսպես ասած՝ խառը մոտեցում: Ժողովրդագրության, բնական պաշարների և բնապահպանության հետ կապված հարցերում օգտագործվում էր առկա (1998-99թթ.) միտումների գծային ինտերպոլյացիան: Ի հավելումն, գիտության ու տեխնոլոգիայի, տնտեսական զարգացման և հատկապես հակամարտությունների կանխատեսման գնահատումները պարունակում էին «ոչգծայնության» տարրեր, օրինակ՝ անակնկալների, այսպես կոչված «վայրի քարտերի»[1] առանձին դիտարկում զարգացումների 4 հիմնական սցենարային մոդելավորումների ժամանակ: Դրանք են. 1) լավատեսական *«Ընդգրկուն գլոբալացում»,* 2) *«Աղետալի գլոբալացում»*, երբ աշխարհի ազգաբնակչության մեծամասնությունը

[1] *Փոքեր* թղթախաղի հայտնի եզր: Ի սկզբանե գոյացման փոքր հավանականություն ունեցող երևույթներ կամ «դեպքեր», որոնք, սակայն, հայտնվելու դեպքում, էականորեն փոխում են մոդելավորման արդյունքները կամ որակապես փոխում են ապագա զարգացումների կատարվող գնահատումները:

մնում է անմասն գլոբալացման բարիքներից, իսկ տեխնոլոգիական զարգացումը ոչ միայն չի լուծում զարգացող երկրների խնդիրները, այլև ապակայունացնում է ԶՈԶ տարածման վրա հսկողությունը, 3) *«Տարածաշրջանային մրցակցությունը»*, երբ դանդաղում է գլոբալացման տեմպը և աճում է տարածաշրջանային մեկուսացվածությունը, 4) *«Հետբևեռային աշխարհը»*, երբ դանդաղում է ԱՄՆ զարգացումը և այնտեղ գերակշռում են մեկուսացվածության գաղափարները, իսկ արևմտյան կիսագնդի խնդիրները (վտանգավոր անկայունություն Հարավային և Կենտրոնական Ամերիկայում) դուրս են բերում ԱՄՆ-ը Եվրոպայից:

Ծրագրի կարևոր հատկանշական գիծը, որն անհրաժեշտ է դիտարկել որպես դրա մեթոդաբանական առանձնահատկություն, ՀԱԽ ծրագրերի իրականացման սինքրոնացումն է ԱՄՆ նախագահական ընտրությունների հետ: Սկսած ՀԱԽ 2015-ից, որի հիմնական արդյունքը տպագրվեց 2000թ. դեկտեմբերին, ՀԱԽ «Գլոբալ միտումները» այսուհետ կոչված են դառնալու ԱՄՆ նորընտիր նախագահների համար յուրօրինակ պատգամ և հուշատետր [5]:

ՀԱԽ 2015 [5] փորձագետներն առանձնացնում են 2015թ. աշխարհի ապագան ձևավորող հետևյալ 7 հիմնական շարժիչները *1. ժողովրդագրություն, 2. բնական պաշարներ և բնապահպանություն, 3. գիտություն և տեխնոլոգիա, 4. համաշխարհային տնտեսություն և գլոբալացում, 5. ազգային և միջազգային ղեկավարում (governance), 6. ապագա հակամարտություններ, 7. ԱՄՆ համաշխարհային դերակատարում:* Ընդ որում, հիմնական դերակատարում կունենան ոչ այնքան այս շարժիչներից մեկը կամ մյուսը, որքան նրանց *փոխազդումը կամ զուգամիտումը,* դրանց այսպես ասած *սիներգետիկ* ազդեցությունը: Ընդհանուր առմամբ հաստատելով ՀԱԽ 2010 գլոբալ մասշտաբով հիմնական եզրահանգումը՝ [3]-ում ուժեղացվում է գլոբալացման գործոնի գնահատումը՝ մանավանդ տեղեկատվական ու միջ- և վերազգային տնտեսական համագործակցության առումներով: Ընդգծվում է ոչ պետական կառույցների հետ ազգ-պետությունների ղեկավարման *(governance)* ունակության կարևորությունը թե՛ դրական, թե՛ բացասական առումներով: Տեխնոլոգիաների առումով հատուկ առանձնացվում են կենսատեխնոլոգիան ու տեղեկատվական տեխնոլոգիան և հատկապես դրանց միջև *զուգամիտման* կարևորությունը: Ընդգծվում է ԱՄՆ համաշխարհային հեգեմոնիայի կարևորությունը՝ որպես գլոբալ ձևագոյացնող գործոն:

Վերահաստատելով նախորդ ծրագրի հետևությունը՝ [5]-ի փորձագետները գտնում են, որ 1999-2015թթ. ժամանակահատվածում *հակամարտությունները կշարունակեն կրել հիմնականում ներպետական բնույթ:* Հնարա-

վոր միջպետական հակամարտություններում առանձնացվում են այն միտումները, որոնք կգոյանան ռազմարդյունաբերական հզորության աճից՝ *Հնդկաստանի* ու *Չինաստանի* պարագայում, և նվազումից՝ *ՌԴ* ու, հավանաբար, *Ճապոնիայի* պարագայում: *Եվրոպայի* համաշխարհային դերակատարումը կսահմանափակվի հիմնականում տնտեսական դաշտով: *Թուրքիայի* անդամակցության հարցը Եվրոպայի ներքին ու գլոբալ խնդիրների, ինչպես նաև ԱՄՆ-Արևմուտք հարաբերությունների համար կունենա էական նշանակություն: Ներքին դաշտում Թուրքիայում կգերիշխեն ազգային ինքնության, կրոնի դերակատարման, ինչպես նաև էթնիկ լարվածության հարցերը: Տարածաշրջանային առումով Թուրքիայի ազգային անվտանգության քաղաքականությունը խարսխված չի լինի որևէ մեկ հարցի վրա[1], այլ կզբաղվի էներգետիկ ու տնտեսական համագործակցության, ԶՈԶ տարածման, տրանսպորտի և ջրամատակարարման խնդիրներով: Իսկ *թուրքական քաղաքականության ամենակարևոր հարցը կլինի այն, թե ինչ դիրք գրավի ներքին և տարածաշրջանային միջպետական հակամարտությունների ժամանակ*[2]:

2015թ. Ռուսաստանը կշարունակի լինել ԵՄ-ից դուրս, և ենթակա ժողովրդագրական բացասական ճնշման (130 մլն բնակիչ 2015թ.՝ 2000թ. 146 մլն բնակչի դիմաց): Գլոբալ առումով ավելի ակտիվ դերակատարման ցանկությունը կբախվի ՌԴ նվազող տնտեսական հնարավորություններին: *2015թ. «Եվրասիա» հասկացությունը կլինի ընդամենը աշխարհագրական տերմին, զուրկ համախմբող քաղաքական, տնտեսական և մշակութային իրողություններից:* Սակայն հետխորհրդային տարածքում Ռուսաստանը կշարունակի մնալ որպես ամենակարևոր դերակատար: [5]-ի համաձայն, «հաշվի առնելով աշխարհագրական մերձավորությունը և մշակութային կապերը, Կովկասը քաղաքականորեն ավելի մոտ կլինի հարավային և արևմտյան հարևաններին, քան Ռուսաստանին: Այնուամենայնիվ, կպահպանվի կարևոր անկախություն՝ հատկապես էներգետիկայի ոլորտում»[3]:

ՄԱ-ն կշարունակի լինել անկայուն, թեև այստեղ կլինի Պաղեստինի պետությունը: Էական գործոն կհանդիսանա ժողովրդագրական ճնշումը՝ 2015թ. ՄԱ բնակչությունը կաճի 32%-ով: Անկայունության հետևում կանգնած կլինեն Իրաքը (33 մլն բնակչությամբ՝ 2015թ., աճ՝ 47%), Իրանը (79 մլն բնակչությամբ, աճ՝ 21%) և Ս.Արաբիան (25 մլն բնակչությամբ, աճ՝ 56%): Հավանական է ՄԱ–Հնդկաստան-Չինաստան համագործակցությունը էներգետիկ, ՄԱ-ԵՄ առևտրատնտեսական և ՄԱ– Իսրայել–Թուրքիա-Հնդկաստան

[1] Օրինակ՝ պանթուրքիզմի գաղափարախոսության վրա:
[2] Իրաքյան պատերազմ, իսկ ռետրոսպեկտիվորեն՝ վրաց-օսական պատերազմ ու ռուս-վրացական առճակատում:
[3] Այդպես է բնագրում, տե՛ս [5, p. 68]: Սա ՀԱԽ 2015-ի թերևս ամենազավեշտալի պնդումներից է:

ռազմատեխնիկական և անվտանգության (Թուրքիա) ոլորտներում: Կշարունակվի ԶՈԶ տարածաշրջանային մրցավազքը:

Վերջապես, 2015թ. *Հարավային Կովկասը* կմնա անկայուն՝ չլուծված հակամարտությունների և Ռուսաստանի խառնակչության *(meddling)* պատճառով[1]: *Վրաստանը* հավանական է հասնի որոշակի քաղաքական և տնտեսական կայունության՝ մասնակիորեն էներգակիրների տրանզիտի շնորհիվ: Սակայն տարածաշրջանում այն կմնա Ռուսաստանի ուշադրության կենտրոնում: *Հայաստանը,* հավանաբար կմնա հիմնականում մեկուսացված և կշարունկի լինել Ռուսաստանի կամ, հավանական է՝ *Իրանի* հաճախորդը: *Այն կհանդիսանա տարածաշրջանային «վայրի քարտ»:* Քիչ հավանական է, որ *Ադրբեջանի* հաջողություններն էներգետիկ ոլորտի զարգացման գործում հանգեցնեն այս երկրի համատարած բարգավաճմանը: *Ադրբեջանը կհանդիսանա միակողմ տնտեսությամբ երկիր,* հասարակության բոլոր մակարդակներում համատարած կոռուպցիայի մակարդակով: Համաձայն գնահատումների՝ 2015թ. Վրաստանի բնակչությունը կկրճատվի մոտ 300 հազարով, *մոտ 1 մլն-ով կավելանա Ադրբեջանի բնակչությունը (8.67 մլն 2015թ., աճ՝ 9%-ով), իսկ Հայաստանի բնակչությունը կմնա մոտավորապես նույնը՝ մոտ 3.4 մլն* [5, էջ 67]:

2.3. ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2020»

Գործընթաց և մեթոդաբանություն: Քննարկվող շարքում ՀԱԽ 2020-ը թերևս առաջին իրոք միջազգային բնույթի ծրագիրն էր: Բացի ԱՄՆ և ՄԹ ՀտՀ ներկայացուցիչներից, դրան լայնորեն ներգրավված էին մի շարք երկրների ակադեմիական շրջանակների տարբեր ազգության փորձագետներ: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվեցին առնվազն 26 կոնֆերանսներ և առանձին գիտաժողովներ, այդ թվում՝ Հունգարիայում, Սինգապուրում, Չիլիում և այլն (տե՛ս *Հավելված Գ):* Այս կոնֆերանսների նյութերից շատերը բաց են և ներկայումս հասանելի են: Խախտելով ավանդույթը՝ ծրագրի վերջնական հաշվետվությունը կոչվում էր «Քարտեզագրել ապագան: ՀԱԽ 2020», այն հրատարակվեց 2004թ. դեկտեմբերին [6]:

Մեթոդաբանության առումով ՀԱԽ 2020 ծրագիրը նախորդներից առաջին հերթին տարբերվում էր լայնորեն օգտագործված սցենարային խաղերի

[1] 2007թ. ապրիլին գաղտնազերծված և այժմ հասանելի ԱՄՆ ԿՀՎ մի շարք նյութեր, այդ թվում՝ *OTI 99-10031* դասիչը կրող հաշվետվությունը վկայում է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանի համար սցենարային մոդելավորումները ԿՀՎ-ում սկսվել էին ավելի վաղ, քան ՀԱԽ 2015 ծրագրի մեկնարկը՝ առնվազն 1998թ. նոյեմբեր-դեկտեմբերից: Մինչև 2015թ. Կովկաս-կասպյան տարածաշրջանի համար դիտարկվել էին զարգացումների 8 տարբեր սցենարներ, համարյա բոլորը՝ հոռետեսական հետևություններով տարածաշրջանի համար:

իրականացմամբ՝ տարատեսակ «վայրի քարտերի» դիտարկումով: Հատկանշական է նաև ապագայի այս կամ այն տարբերակների *գեղարվեստական նկարագիրը,* օրինակ՝ անձնական օրագրում գրառումների, հուշերի կամ նորությունների երևակայական լրահոսի տեսքով: Ընդ որում, սցենարային խաղերի և համապատասխան վերլուծությունների արդյունքների քանակը այնպիսին էր, որ դարձել էր համարյա անըմբռնելի մեկ ընդհանրական հայացքի համար[1]: Թերևս նաև այս հանգամանքով է բացատրվում ՀԱԽ 2020 վերջնական հաշվետվության անսովոր անունը, որի մասին ասացինք վերը: Ավելի հստակ դա կարելի է տեսնել [6] աշխատության կառուցվածքի օրինակով: Բանն այն է, որ «Գլոբալ միտումների» նախորդ հաշվետվությունների նման [6] կառուցվածքը ըստ գլուխների այլևս չի հիմնվում փորձագետների կողմից որոշված ու ձևակերպված ապագան կերտող հիմնական շարժիչների քննարկման վրա: Դրանք, փաստորեն, առանձնացված այլևս չեն էլ քննարկվում: Փոխարենը, [6]-ում նյութը խմբված է չորս խոսուն վերնագրեր ունեցող բաժիններում. «Գլոբալացման հակասությունները», «Հառնող պետություններ՝ աշխարհաքաղաքական բնապատկերի փոփոխություն», «Ղեկավարման նոր մարտահրավերներ», «Տարածվող անԱվտանգությունը»[2]: Բաժինների հիմքում ընկած են ապագայի 4 երևակայական սցենարներ *(Fictional Scenarios). Դավոսը՝ Չինաստանում*, *Pax Americana*, *Նոր Խալիֆայությունը* և *Վախի շրջանը:*

[1] Ըմբռնելիության եզրին գտնվող ապագայի մոդելավորման այսպիսի բազմազանությունը, եզրակացությունների հստակության կորուստը, մեր կարծիքով, չափազանց բնութագրական է նոր դարասկզբին: Իրոք, մանիպուլյացիաների ենթակա *Իրականության բացահայտման* և *Բազմատարբերակ ապագաների* լեյթմոտիվները դարասկզբին դարձել էին կրկնվող և, եթե կուզեք՝ հիվանդագին: Այս երևույթը կարելի է հստակորեն տեսնել փիլիսոփայությունից *(Multivers versus Univers)* ու ֆիզիկայից (կրկին ուշադրություն Հ.Էվերթ 3-րդի «Բազմաթիվ աշխարհների» հայեցակարգի նկատմամբ) մինչև կինեմատոգրաֆ *(eXistenZ 1997թ., The TRUMAN Show 1998թ., Matrix 1999թ., Dark City* 2000թ.), ազգ-պետություններում անկայունությունների մոդելավորումից (նույն ՀԱԽ կամ *PITF* կազմակերպությունների աշխատանքները) մինչև համաշխարհային տնտեսության վրա հում նավթի գների տատանման ազդեցության մոդելավորում (*Oil Shock-wave* սցենարային խաղեր, տե՛ս ստորև) և այլն: Երևույթի ակունքները կարելի է տանել մինչև Ս.Լեմի «Ֆուտուրոլոգիական կոնգրես» (1983թ.), Ա.Ազիմովի «Հավերժության վերջը» (1956թ.) վիպակները, Օրուելի, Զամյատինի կամ Հաքսլի ուտոպիաները կամ XX դարի 30-ականների քվանտային հեղափոխությունն ու ավելի հեռուն: Սակայն, այս ամենի *աշխարհաքաղաքական կիրառումն* է, որ անհրաժեշտ է դիտարկել որպես նոր, *զուտ դարասկզբի երևույթ*:

[2] *Pervasive Insecurity.* Իհարկե, [6] տվյալ բաժնի վերնագիրը, ուր խոսքը ահաբեկչության տարածման և ներքին կոնֆլիկտների սաստկացման մասին է, միանգամայն համարժեքորեն կարելի էր թարգմանել «Տարածվող վտանգ»: Այստեղ մենք պարզապես ցանկանում ենք ընդգծել, որ արդի և խոսակցական անգլերեն *secure* ուղիղ ձևին արդի և խոսակցական հայերենում համապատասխանում է *անվտանգ* հասկացությունը՝ *վտանգ* ուղիղ ձևի ժխտական մասնիկով: Հայերեն լեզվի, մեր մտածելակերպի և պատմության համար *վտանգը* եղել է միշտ, անմիջական և ուղիղ: Դժվար է գտնել ատլանտյան աշխարհընկալման և մայրցամաքային խաչմերուկում ձևավորված մտածելակերպի միջև տարբերության ավելի *խոսուն* օրինակ՝ *բառիս բուն իմաստով*:

ՀԱԽ 2020: Կրկնելով նոր աշխարհակարգի գալստի մասին ՀԱԽ 2010 աշխատության կենտրոնական եզրակացությունը՝ [6]-ում այն ձեռք է բերում *ավելի տագնապալի* երանգ: «1949-ից հետո, երբ ձևավորվեց Արևմուտքի դաշինքը, դեռ երբևէ միջազգային աշխարհակարգն այսքան անկայուն և դյուրափոփոխ չէր եղել», ասվում է [6] հենց առաջին տողում: Ապագան ձևավորող ամենազորեղ գործոնի՝ *գլոբալացման* առումով ՀԱԽ փորձագետները գտնում են, որ այն՝ *տակավին անշրջելի է, սակայն կորցնում է արևմտյան դիմագծերը:* Հաջորդ զորեղ գործոնը՝ *ԱՄՆ հեգեմոնիան,* տարատեսակ փորձությունների կենթարկվի՝ ասիական երկու հսկաների (Չինաստան, Հնդկաստան) գոյացմամբ, ընդլայնվող հակաամերիկանիզմով, տեխնոլոգիաների և ԶՈԶ տարածումով, տարբեր խնդիրների շուրջ (ուժի կիրառում, կլիմայի փոփոխություն, ողնուղեղային բջիջների օգտագործում, կլոնացում) տարածաշրջանային և քաղաքակրթական էթիկ տարաձայնություններով և այլն: 2004-2020թթ. ժամանակահատվածում զգալի կլինի զարգացած երկրներում (բացի ԱՄՆ-ից) բնակչության ծերացման, ոչ պետական կառույցների ինչպես նաև քաղաքական իսլամի գործոնների ազդեցության զորեղացման, Աֆրիկայից Ասիա ձգվող «անկայունության աղեղի» գործոնները: Հետաքրքրական է, որ ՀԱԽ 2020 փորձագետների կարծիքով՝ նշված ժամանակաշրջանում *առկա էներգետիկ հնարավորությունները* (պաշարներ և արտադրություն) *բավարար կլինեն գլոբալ պահանջարկի համար:*

[6]-ում տարածաշրջանների և առանձին երկրների համար անմիջական գնահատումներ չեն բերվում: Սակայն, ՀԱԽ 2020 հարակից նյութերից մեկում կարելի է գտնել հետևյալ ձևակերպումները[1]: *Հարավային Կովկասը (Ադրբեջան և Վրաստան) կցանկանա Ռուսաստանից իրեն ավելի հեռու պահել, թեև որպես պետություն՝ Վրաստանի կենսունակությունը կմնա տակավին փխրուն: Հայաստանը կշարունակի լինել Ռուսաստանի մոտ և կայուն հարևանը՝ պահպանելով, սակայն, սեփական ինքնությունը:* Եվրասիայում Ռուսաստանը կմնա որպես հիմնական ուժային կենտրոն՝ ԱՊՀ տարածքում պահպանելով իր էական շահերը: Կապերը սլավոնական հանրապետությունների հետ (Ուկրաինա և Բելառուս) կլինեն ավելի սերտ և հավանաբար կինստիտուցիոնալացվեն: Մոդելավորումների ժամանակ Ռուսաստանը չի դիտարկվել իբրև Եվրոպա տարածաշրջանի մաս:

ՄԱ տարածաշրջանի համար բոլոր վաղ ծրագրերում ձևակերպված շարժիչների կրկնությունից զատ, ՀԱԽ 2020 փորձագետներն ավելացնում են նաև իշխողների և իշխվողների միջև «սոցիալական կոնտրակտի» վերանայ-

[1] *NIC 2020 Project: Commonwelth Conference: Scenarios. December 2003.* Նշենք, որ սրա հետևանքով ՀԱԽ 2020-ը բացակայում է *Հավելված Բ* ցանկում և ՀԱԽ կայքի որոնողական ծառայության Հայաստանին վերաբերող ԱՀԳ-ների մասին հարցումների արդյունքներում:

ման խնդիրն այնպիսի երկրներում, ինչպիսիք են *Իրանը* և *Ս.Արաբիան: Իրաքի* համար ԱՄՆ տեսանկյունից ամենանպաստավոր զարգացումը համարվում է «Շվեյցարիան՝ Տիգրիսի ափին» սցենարը[1]: Մինչ 2020թ. չի բացառվում *Իսրայելա-սիրիական լայնածավալ ռազմական կոնֆլիկտի* գոյացումը: Երկչոտ հույսեր են կապվում դիտարկվող ժամանակահատվածում Յ.Արաֆաթի խիստ հավանական մահվան և պաղեստինյան ավելի մեղմ իշխանությունների ի հայտ գալու հետ[2]:

2.4. ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2025»

Գործընթաց և մեթոդաբանություն: 2007թ. մեկնարկած ՀԱԽ 2025-ը շարունակում և խորացնում է նախորդ ծրագրի միջազգային բնույթը: Աշխատանքներին լայնորեն ներգրավված էին ինչպես ՀտՀ, այնպես էլ մի շարք երկրների տարբեր ազգության փորձագետներ և ակադեմիական շրջանակների մասնագետներ: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվեցին բազմաթիվ կոնֆերանսներ և առանձին գիտաժողովներ, սակայն Ծրագրային վերջնական փաստաթղթում՝ հրապարակված 2008թ. դեկտեմբերին, բացակայում է դրանց ցանկը [7]: Ներկայումս հասանելի են ՀԱԽ 2025-ի որոշ հարակից նյութեր (տե՛ս *Հավելված Գ):* Մեթոդաբանության առումով [7]-ում լայնորեն օգտագործված են համակարգչային մոդելավորումներ, «վայրի քարտերի» դիտարկմամբ տարատեսակ մոդելային խաղեր և «Նոր աշխարհի» երևակայական գեղարվեստական սցենարային մշակումներ[3]:

ՀԱԽ 2025 [7]-ի կենտրոնական եզրակացությունը պետք է համարել այն, որ 2025թ. աշխարհը կլինի *բազմաբևեռ,* իսկ *ԱՄՆ-ը, թեև կհանդիսանա ամենահզոր միանձնյա երկիրը, սակայն գլոբալ առումով՝ ոչ հեգեմոն:* Նշենք, որ [7]-ի այս դրույթը դրամատիկորեն տարբերվում է նախորդ ծրագրերի

[1] Իրաքի համար դիտարկված բոլոր այլ 4 սցենարները («Ռադիկալ մահմեդականացում», *«Ուժեղ աշխարհիկ ղեկավար»,* «Քաղաքացիական պատերազմ» և *«Իրաքի մասնատում»)* համարվում են տարածաշրջանում ԱՄՆ նպատակների պարտություն:

[2] Մ.Աբաս և *Ֆաթահ* կուսակցություն:

[3] Դրանք են. 1. «Աշխարհն առանց Արևմուտքի», նկարագրված 2025թ. Շանհայի համագործակցության կազմակերպության ղեկավարի նամակում, ուր պատկերված է մի աշխարհ, որտեղ ԱՄՆ-ը հետ է քաշվել թե՛ Եվրոպայից, թե՛ Միջին Արևելքից ու Աֆղանստանից, իսկ հիմնական ուժային կենտրոններ են Չինաստանը և ՌԴ-ն, որոնց շուրջ համախմբված են Իրանն ու Հնդկաստանը, 2. *«BRIC* զարթոնքը», որում նկարագրված է *Չինաստանի և Հնդկաստանի միջև ծագած հակամարտությունը*՝ էներգակիրների շուրջ, 3. «Աշնանային անակնկալը»՝ պատկերված ԱՄՆ ապագա նախագահի օրագրում, որը նկարագրում է կլիմայի փոփոխության հետ կապված աղետալի իրավիճակը և 4. «Ոչ լոկալ քաղաքականությունը», հոդված *Ֆայնենշլ Թայմս* ամսագրի 2025թ. համարներից մեկում, ուր նկարագրվում է, թե ինչպես տարատեսակ ոչ պետական կազմակերպությունները, կրոնական խմբերը և բիզնեսի ներկայացուցիչները համախմբված ջանքերով ապահովվում են ՄԱԿ նոր նախագահի՝ իրենց թեկնածուի ընտրությունը: Վերջինս, թվային հեռահաղորդակցության, զարգացած և բարեկեցիկ միջին դասի ու վերազգային տնտեսական համակարգերի այս ապագա աշխարհում հաղթականորեն ձեռնամուխ է լինում բնակլիմայական մարտահրավերների լուծմանը (ինչպես չհիշես Ա.Գորին և *"The Day After Tomorrow"* 2004թ. ֆիլմը և «կլիմայական աղետների» թեմաներով վերջին տարիների հոլիվուդյան ու այլ ստուդիաների *բլոքբաստերները*):

հետևություններից: Բացի այդ, ըստ [7]-ի, բարիքների և հարստության շարժը Արևմուտքից Արևելք, այժմ արդեն շոշափելի, 2025թ. կհասնի աննախադեպ աստիճանի: Կմերձենան զարգացած և զարգացող երկրների ազգային հզորությունները[1], կշարունակեն հզորանալ ոչ պետական կազմավորումները և կառույցները: Չինաստանի և Հնդկաստանի հետագա ուժեղացման հետ մեկտեղ այս ամենը կհանգեցնի աշխարհի բազմաբևեռ կառուցվածքի՝ դրան բնորոշ ուժերի հավասարակշռման համակարգի գոյացմամբ, միջպետական լարումների և նույնիսկ կոնֆլիկտների հավանականությամբ, ինչը խիստ հատկանշական էր անցած դարերի համար: Այս իրավիճակը [7] հենց առաջին գլխում պատկերավոր անվանվում է *«հետ՝ դեպի ապագա»:* Մյուս գլոբալ գործոնի՝ ժողովրդագրության կապակցությամբ [7]-ում նշվում է, որ պատանյաց բողջի ալիքը կպարպվի «անկայունության աղեղի» գրեթե բոլոր երկրներում, թեև «արձագանք» ալիքները կարող են շոշափելի դերակատարում ունենալ Աֆղանստանում, Պակիստանում, Նիգերիայում, Եմենում, Գազայի հատվածում և հատկապես *Իրանում,* որը տարածաշրջանում կունենա *զարգացման իր չափազանց ուրույն «ուղեգիծը»:*

Հակառակ նախորդ ՀԱԽ ծրագրերի, [7]-ի փորձագետները գտնում են, որ ապագա հակամարտությունները *հավանականորեն կկրեն միջպետական բնույթ* և ուղղված կլինեն ռեսուրսների վրա գերիշխման հաստատմանը: Տնտեսական զարգացումը, հատկապես՝ Հնդկաչինում, զուգորդված 2025թ. ակնկալվող աշխարհի բնակչության մոտ 1.2 մլրդ ավելացմամբ, շատ տարածաշրջաններում էական լարվածություն կառաջացնի բնական պաշարների (էներգակիրներ, մաքուր ջուր, պարեն) վրա վերահսկման առումով: Ընդհանրապես, էներգակիրների շուրջ լարումները և հակամարտությունները էականորեն կազդեն ընդհանուր քաղաքական կայունության վրա և [7]-ի փորձագետների պնդմամբ՝ *«էներգետիկան կդառնա աշխարհաքաղաքականություն»:* ՀԱԽ ծրագրերի պատմության մեջ առաջին անգամ [7]-ում *վերականգնվող էներգետիկան և էներգախնայողությունը դիտարկվում են որպես ռազմավարական նշանակության գործոններ:* Ի մի բերելով այս ընդհանուր միտումները՝ ՀԱԽ փորձագետները նշում են, որ պատմականորեն բազմաբևեռ աշխարհն ավելի անկայուն է, քան երկբևեռ կամ միաբևեռ աշխարհը, ու «թեև քիչ հավանական է, որ ներկայիս միջազգային համակարգը հիմնահատակ փուլ գա, ինչպես դա պատահեց 1914-18թթ., երբ կանգնեց ընդհանուր գլոբալացման գործընթացը, սակայն զարգացման առաջիկա 20 տարիները լի են վտանգներով… Մենք չենք

[1] *National Power.* ՀԱԽ 2025 ծրագրի շրջանակներում տվյալ երկրի «ազգային հզորությունը» հաշվարկվում է *International Futures (http://www.ifs.du.edu/)* համակարգչային մոդելի օգնությամբ, որի 5-րդ սերնդի տարբերակը օգտագործվել էր դեռ ՀԱԽ 2020 ծրագրի ընթացքում: «Ազգային հզորությունը» տվյալ երկրի ՀՆԱ, ռազմական ծախսերի, ազգաբնակչության և տեխնոլոգիական առաջընթացի որոշակի ցուցիչների միջին կշռված գործակիցն է:

կարող բացառել սպառազինության մրցավազքի, տարածքային էքսպանսիայի, ռազմական հակամարտությունների և հեղաշրջումների XIX դարի սցենարը»: Ընդհանուր առմամբ, գլոբալ մասշտաբի եզրակացություններում [7]-ը թերևս ՀԱԽ բոլոր ծրագրերի մեջ ամենադրամատիկն է[1]:

3. Մտորումներ ՀԱԽ ծրագրային որոշ եզրակացությունների շուրջ

Ինչպես և միշտ, մեզ համար ելակետը պետք է լինի մեր հստակ և ուժեղ *նվիրումը*[2] Իսրայելի անվտանգության խնդրին – տարածաշրջանում մեր այս ամենաուժեղ դաշնակցին և միակ կայացած ժողովրդավարությամբ երկրին: *Նվիրում,* որն առավել կարևոր է, քանի դեռ մենք պայքարում ենք տարածաշրջանի աճող վտանգների հետ. Իրանի հզորացում, քառտիկ Իրաք, ալ-Քաիդայի վերածնունդ, Համասի և Հեզբոլլահի վերակտիվացում…
Ես ցույց կտամ աշխարհին, որ Ամերիկան հավատարիմ է
իր հիմնարար արժեքներին:
Բ.Հ.Օբաման, հուլիս-օգոստոս, 2007թ.

Հանգամանքների բերումով սույն հոդվածը գրվում էր ԱՄՆ 44-րդ նախագահի ընտրությունների տարվա դեկտեմբերից մինչև հաջորդ տարվա հունվար ընկած «անցողիկ գործընթացների» ժամանակահատվածում, որը ԱՄՆ-ում հայտնի է որպես «իշխանության անցում»: Մեր կարծիքով՝ այն պետք է դիտարկել որպես Ֆարլեյի «օրենքով» նկարագրվող ժամանակահատվածի[3] կարևոր հավելում, յուրօրինակ մի վերջնամաս, երբ առավել հստակորեն գործում է այս օրենքի աշխարհաքաղաքական հետևանքների տրամաբանությունը: Ուզում ենք ասել, որ ԱՄՆ նախագահական ընտրությունների տարվա ամռանից սկսած մինչև հաջորդ տարվա սկիզբ, առավել վառ, հաճախ՝ ողբերգական հետևանքներով, ի հայտ են գալիս արդիականության ամենացավոտ խնդիր-

[1] Հոլիվուդը՝ ԱՄՆ հասարակության իրական հայելին, նորից հստակ կանխազգաց հոռետեսական ու էսխատոլոգիական այս տրամադրությունները՝ շատ ավելի շուտ, քան դա արեցին ՀԱԽ 2025 փորձագետները: Բավական է հիշել միայն այնպիսի էպիկական ժապավենների անակնկալ ավարտները, ինչպիսիք էին *"Terminator 3: Rise of the Machines" (2003թ.) և "Star Wars Episode III: Revenge of the Sith" (2005թ.):* Առաջին դեպքում կանխատեսված և, կարծես թե, կանխարգելված ապագա գլոբալ աղետը, այնուամենայնիվ, վրա է հասնում ճիշտ դասական հունական ողբերգությանը բնորոշ անխուսափելիությամբ: Իսկ երկրորդում հանրապետության պահապան ասպետը վերափոխվում է չարիքի կայսրության մութ տիրակալի: Զուգահեռները ԱՄՆ 2002-08թթ. իրողությունների հետ այստեղ միանգամայն թափանցիկ են: Հատկանշական է, որ երկու ժապավեններն էլ, պատմելով ի վերջո ապագայի կանխատեսման մասին, իրենք հենց ժամանակի մեջ յուրօրինակ ճանապարհորդություն են՝ հանդիսատեսին վերադարձնելով ակունք և փակելով այս ժապավենների ստեղծման ավելի քան երկու տասնամյակ տևած պատմական ցիկլը:

[2] «*Commit* – հանձնարարել, ձերբակալել, կրակի մատնել, հողին հանձնել, կատարել ոճիր, վարկաբեկել»: (Մեջբերում «Անգլերեն-հայերեն բառարան»-ից, Հայաստան, Ե. 1984թ., էջ 174): Մենք *commitment* բառը թարգմանել ենք որպես *նվիրում*: Չի բացառվում, որ բառարանն ավելի իրավացի է:

[3] Նախագահ Ֆ.Դ. Ռուզվելտի կուսակից, իսկ հետո՝ հակառակորդ, ընտրարշավների փորձառու կազմակերպիչ Ջ.Ֆարլեյի «դասական» օրենքը պնդում է, որ ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքները հիմնականում ճշգրտորեն կարելի է կանխատեսել սեպտեմբերի վերջին – հոկտեմբերի սկզբին:

ները, սրվում են հակասությունները, բացահայտվում ու մերկանում են մինչ այդ մշուշոտ գործընթացները և միտումները: Ընթերցողին, որը չի զլանա անցած դարի կեսերից սկսած համադրել այս հատկանշական ժամանակահատվածում աշխարհում (և հատկապես Միջին Արևելքում) տեղի ունեցածը, սպասում են բազում «լուսավորիչ» պահեր:

Իհարկե, հակառակ բնագիտական օրենքների, քաղաքական «օրենքներին» պետք չէ շատ լուրջ վերաբերվել: Բայց փաստը մնում է փաստ՝ ԱՄՆ նորընտիր նախագահ Բ.Օբամայի հաղթարշավի և վեհաշուք երդմնակալության միջոցառումների ֆոնին «Ֆարլեյի ընդլայնված օրենքը» գործեց ողջ ուժով: Խոսքս, իհարկե, 2008թ. ամռանը ռուս-վրացական հարաբերությունների սրման, օգոստոսյան վրաց-օսական պատերազմի ու դրա աշխարհաքաղաքական հետևանքների և ԱՄՆ-ում «իշխանության անցման» ժամանակ ծավալված Գազայի հատված Իսրայելի ներխուժման ու Ռուսաստան-Ուկրաինա-Եվրոպա գազային հակամարտության մասին է[1]: Ուստի, զարմանալի չէ, որ մտորելով ՀԱԽ «Գլոբալ միտումների» հիմնական հետևությունների մասին, մենք ակամայից դրանք դիտարկում էինք ներկայումս տեղի ունեցածի լույսի ներքո: Առավել ևս, որ բոլոր այս երևույթներն անմիջականորեն վերաբերում են մեր տարածաշրջանին և մեզ:

Նախ փորձենք առանձնացնել այն «չոր մնացորդը», որը, կարծում ենք, բնութագրական է ՀԱԽ քննարկված չորս ծրագրերի համար՝ առավել ևս, որ 1996-ին մեկնարկած առաջին ՀԱԽ 2010-ից արդեն անցել է ավելի քան 10 տարի, ինչը մեզ դնում է հարմարավետ կացության մեջ՝ անմիջականորեն համեմատելու կատարված կանխատեսումները դեպքերի իրական զարգացումների հետ: Մենք ամբողջացրել ենք ՀԱԽ հիմնական արդյունքները մեկ ընդհանրական աղյուսակում՝ նշելով ծրագրի անվանումը և ՀԱԽ տվյալ ծրագրի վերջնական արդյունքի հրատարակման տարեթիվը[2]: Նայելով այս աղյուսակին և մտաբերելով ստացված արդյունքները՝ առաջինը, ինչ ակներև կարելի է տեսնել ու զգալ, այն է, որ *աշխարհը դառնում է ավելի բարդ ու խրթին*[3]: Ներքին փոխկապակցվածության հետևանքով բարդանում են ընթա-

[1] Մի պարսիկ և մի հույն լրագրողների դիպուկ ձևակերպմամբ, ԱՄՆ հեռացող վարչախմբի վերջին երկու նվերները Իսրայելին և Ռուսաստանին համապատասխանաբար («Եվրոպական սպառողներին ռուսական գազի երաշխավորված մատակարարման» մոսկովյան միջազգային կոնֆերանս: ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի ասուլիսը Կրեմլում, 17 հունվարի, 2009թ.): Ամենևին չցանկանալով ընկնել կոնսպիրոլոգիայի գիրկը, այնուամենայնիվ, վստահ ենք, որ այս համատեքստում պետք է դիտարկել նաև հում նավթի գնային արտառոց դինամիկան 2008թ. 2-րդ կեսի ողջ ընթացքում և 2008թ. վերջից ծավալվող գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը:

[2] Նկատենք, որ նյութն ի ցույց է դնում անցած տասնամյակում անգլերեն, ռուսերեն և հայերեն վերլուծությունների և հոդվածների մի ստվար զանգվածի աղբյուրը: Բնականաբար, դրանց շարքում առավել գնահատելի են այն սակավաթիվ վերլուծությունները, որոնք ժամանակագրորեն կամ կանխում էին ՀԱԽ համապատասխան համարժեք հետևությունները, կամ կատարվում էին դրանց զուգահեռ ու դրանցից անկախ: Ուրախալի է, որ դրանց շարքում կարելի է նշել և «Նորավանք» ԳԿՀ որոշ հրապարակումներ:

[3] «Տունը այն տեղն է, որտեղից ճանապարհ ես ընկնում: Մենք ծերանում ենք / և աշխարհը դառնում է ավելի անճանաչելի, բարդանում են ռիթմերը / կյանքի ու մահի…»,- կասեր Թ. Ս. Էլիոթը (*Four Quartets*, East Couker, 1943):

ցող գործընթացների զարգացման միտումները, ապագան դառնում է անորոշ, դժվար կանխատեսվող, ենթակա անակնկալ փոփոխությունների տարատեսակ «վայրի քարտերի» շնորհիվ՝ տեխնոլոգիաների զուգամետ զարգացումից մինչև այս կամ այն երկրի վարքի փոփոխություն: ՀԱԽ 2010-ից մինչև 2025 ակներև է իրապես գլոբալ գործոնների գնահատականների ավելի տագնապալի ու մտահոգիչ բնույթը. դանդաղում է գլոբալացման ընթացքը, փոխակերպվում դրա դիմագիծը՝ դառնալով ավելի «արևելյան»: Աշխարհը միաբևեռությունից անցնում է ավելի բազմազան ուժային կենտրոններով կարգավիճակի, փոխվում է հավանական հակամարտությունների բնույթը՝ ներպետականից դառնալով միջպետական: Սաստկանում է պայքարը բնական ռեսուրսների համար՝ էներգակիրներ, ջուր, պարեն, իսկ բնապահպանական խնդիրները, կլիմայի գլոբալ փոփոխումը, ԶՈՁ մրցավազքը, ոչ պետական կազմավորումների և կառույցների աճող զորեղությունը քայքայում է կարծես բնականոն դարձած ազգ-պետությունների գոյատևումը: Այսպիսին են զգացումները, որոշակի առումով այսպիսին է նաև իրողությունը: Բայց մի կողմ դնենք զգացմունքները:

Փաստենք սպեցիֆիկ խնդիրներով (ժողովրդագրություն, պատանյաց բողջ, ռեսուրսների բաշխում, տեխնոլոգիական առաջընթաց և այլն) ՀԱԽ կողմից կուտակված փաստացի նյութերի հարստությունը, անալիտիկ վերլուծությունների և գնահատումների համարժեքությունը, ձևակերպված արդյունքների կարևորությունը: Երկարատև փնտրտուքներից հետո կարծես թե բյուրեղացել է տվյալ երկրի «Ազգային հզորության» գնահատման տիրույթը. այն ներառում է միայն ՀՆԱ, ռազմական ծախսերի, ազգաբնակչության դինամիկայի և տեխնոլոգիական առաջընթացի որոշակի ցուցիչներ[1]: *Հայաստանի համար առանձնացնենք ժողովրդագրական և տեխնոլոգիական զարգացման կարևորագույն մարտահրավերները:*

ՀԱԽ տարածաշրջանային գնահատումներն ընդհանուր առմամբ ճշգրիտ են ու հավասարակշիռ: Այս առումով ընդգծենք, որ ռազմավարական հեռանկարում *Հայաստան-ԵՄ համագործակցությունն աշխարհաքաղաքական և ուժային տեսանկյունից մեզ համար պետք է ունենա, հավանաբար, ավելի նվազ դերակատարում,* քան համագործակցությունը տնտեսական, գիտական, տեխնոլոգիական, մշակութային դաշտում և արժեհամակարգային խնդիրներում:

Միևնույն ժամանակ, առանձին երկրների ՀԱԽ գնահատումներն ունեն մի փոքր պակաս ճշգրտություն, թեև նոր ուժային կենտրոնների գոյացումն ուրվագծված է միանգամայն հստակ: Այս առումով ընդգծենք, որ *աշխարհաքաղաքա-*

[1] Չափազանց ուշագրավ է դրանց ցանկում տվյալ պետության «ժողովրդավարության» կամ «լեգիտիմության» հետ կապված տարատեսակ ցուցիչների բացակայությունը՝ այդքան սիրված ոչ վաղ անցյալում (տե՛ս, օրինակ, [1]):

կան տեսանկյունից Հայաստանի համար առաջին պլան պետք է գան երկկողմ հարաբերությունների հետագա խորացումն ու ընդլայնումը առաջին հերթին Իրանի և Չինաստանի, ինչպես նաև ԱՄՆ-ի, Հնդկաստանի և ՌԴ-ի հետ:

Դատելով ՀԱԽ պաշտոնական արդյունքներից՝ կարելի է եզրակացնել, որ օգտագործված մեթոդաբանությունների շրջանակում գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամերը վատ կամ բոլորովին չեն կանխատեսվում: Իսկ սա նշանակում է, որ *Հայաստանի տնտեսությունը հնարավորինս իմուն պետք է լինի այս անխուսափելի և դժվար կանխատեսվող ցնցումների հանդեպ:*

Սակայն, ՀԱԽ երկու կարևորագույն պնդում հետագա պարզաբանումների կարիք ունի: Դրանք առաջին հերթին «Նոր աշխարհակարգի» գալստյան մասին բոլոր «Գլոբալ միտումների» և ՀԱԽ 2025-ում ակնարկված ԱՄՆ հեգեմոնիայի վտանգման մասին պնդումներն են, ինչպես նաև նույն ՀԱԽ 2025-ի «էներգետիկան կդառնա աշխարհաքաղաքականություն» պնդումն է: Ինչպես կտեսնենք ստորև, այս պնդումներն՝ առաջին հայացքից միմյանցից անկախ, իրականում սնվում են միևնույն ակունքից:

Դեռ 1997թ. «ՀԱԽ 2010»-ից սկսած՝ «նոր աշխարհակարգի» գալստյան ու ազգ-պետությունների անխուսափելի թուլացման մասին կենտրոնական թեզը, իսկ մյուս կողմից՝ «ԱՄՆ հեգեմոնիայի»՝ որպես հիմնական «ձևագոյացնող շարժիչի», կարևոր պնդումը կարմիր թելով անցնում է ՀԱԽ 2015 ու ՀԱԽ 2020 նյութերի միջով՝ մի փոքր թուլանալով միայն ՀԱԽ 2025-ում: Մենք այս թեզերը համադրել ենք իրար, քանի որ կարծում ենք. ՀԱԽ 2010, 2015 ու 2020 հաշվետվություններում դրանց կրկներգ հիշեցնող միաժամանակյա պնդումները հակասում են հետխորհրդային աշխարհի իրողություններին: Եվ ինչպես ամեն հակասություն, այն մատնացույց է անում թաքնված որոշակի գործոնի առկայությունը: Այդ զորեղ գործոնը, մեր կարծիքով, նոր դարասկզբին *ազգայնականության, ազգերի ինքնորոշման, ազգային մտածելակերպի* և, ինչու չասել՝ *ազգ-պետությունների ամրապնդման* գործոնն է՝ հակառակ ՀԱԽ և շատ այլ աղբյուրների գնահատումների: Այս գործոնի հետևողական արհամարհումը կամ քողարկումը ՀԱԽ հիշյալ աշխատություններում (և այլուր), մեր կարծիքով, այնքան արտառոց է ու անտրամաբանական, որ արժանի է մի փոքր մանրամասնման:

Պարզենք այս «կրկներգի» ակունքները, առավել ևս, որ դա դժվար չէ անել: Դրանք ամենևին էլ «Գլոբալ միտումներ 2010»-ի հայտնագործությունը չեն: Հիշենք միայն պարոնայք Ֆ.Ֆուկույամայի, Է.Թոֆլերի և այլոց 80-ականների վերջի տխրահռչակ աշխատությունները[1]: Շատ ավելի խոր ու

[1] Դրանք, ի դեպ, բոլորովին չէին կանխատեսում ոչ ԽՍՀՄ փլուզումը, ոչ տարբեր ազգերի ինքնորոշման կամքի նոր դրսևորումները, ոչ շատ պետություններում, և առաջին հերթին՝ հենց ԱՄՆ-ում, ազգային մտածելակերպի զարթոնքը:

հավասարակշիռ այս թեզերը շարադրված են Հ.Քիսինջերի՝ 1994թ. հրատարակած հիմնարար աշխատության առաջին իսկ գլխում, որը հենց այդպես էլ կոչվում էր՝ *«Նոր աշխարհակարգը»* [8]: Քիսինջերը պնդում է. մեկուսացման և մեսիականության բևեռների միջև ձևավորված ԱՄՆ քաղաքական և ինտելեկտուալ միտքը սովետական կոմունիստական համակարգի փլուզումով հաղթանակ տոնեց: Սակայն, ճակատագրի հեգնանքով, այս հաղթանակը ԱՄՆ-ին կանգնեցրեց մի այնպիսի աշխարհի դեմ հանդիման, որից ԱՄՆ-ը փորձում էր խուսափել գոյության ողջ ընթացքում: Ընդ որում, *ԱՄՆ-ը այլևս չի կարող ոչ մեկուսանալ դրանից, ոչ իշխել այն:* Այս նոր աշխարհում *ազգայնականությունը և ազգ-պետությունները նոր ավյուն ու եռանդ ձեռք բերեցին:* Այս պարագայում միջազգային հարաբերություններն անխուսափելիորեն կկրեն *ուժերի հավասարակշռության համակարգի* բնույթ՝ ճիշտ ինչպես եվրոպական պետությունների պարագայում՝ XVIII-XIX դարերում: Մի բան, որը, ըստ պրն Քիսինջերի, *«չափազանց խորթ է ԱՄՆ-ին և անհարմար»*[1]: Կարծում ենք, որ այս մի քանի տողում խտացված են ՀԱԽ դիտարկված բոլոր ծրագրային ուսումնասիրությունների ողջ բովանդակությունը՝ քննարկվող տեսանկյունից[2]:

Զարմանալի է, բայց փաստ, որ Սպիտակ տան և Պետդեպարտամենտի վետերան Հ.Քիսինջերի [8] այս մտորումներն իրենց հերթին ընդամենը երկխոսության ուշացած փորձ, յուրօրինակ անդրադարձ էին XX դարի իրական մարգարեներից մեկի և ԱՄՆ դիվանագիտական ու աշխարհաքաղաքական *մեյնսթրիմի* «սպիտակ ագռավ», մեծն Ջ.Քենանի 1950-70թթ. մտորումներին: Անդրադրաձ՝ միայն մեկ կարևոր ճշգրտումով. ի տարբերություն պրն Քիսինջերի, Ջ.Քենանը երբեք չի կարծել, թե ԱՄՆ-ը չի կարող վարել *սեփական ազգային շահերի վրա* հիմնված և *ուժերի հավասարակշռության ձևավորվող համակարգին ներդաշնակ ազգային քաղաքականություն:* Քենանը երբեք չի կարծել, թե այսպիսի քաղաքականությունը *«խորթ է ԱՄՆ-ին և անհարմար»:* Հակառակը, նա կարծում էր, որ այդ քաղաքականությունն է, որ կազատի ԱՄՆ-ին և աշխարհը շատ ու շատ աղետներից: Միգուցե նաև այդ պատճառով՝ ի տարբերություն պրն Քիսինջերի, Ջ.Քենանը այդպես էլ չղեկավարեց ԱՄՆ Պետդեպարտամենտը և չդարձավ ԱՄՆ թե՛ դեմոկրատ, թե՛ հանրապետական նախագահների *անվտանգության* գծով խորհրդականը:

Ինչո՞վ բացատրել ՀԱԽ ծրագրերի այս կուրությունը նշյալ, կարծես թե՝ ակներև գործոնի հանդեպ: Բանն ի՞նչ է: Կարծում ենք՝ իսրայելա-արաբական

[1] Ընդգծումները մերն են – *Ա.Մ.:*

[2] 2007թ. *Ֆորին Աֆեյրս*-ի հուլիս/օգոստոսյան համարում, այն ժամանակ նախագահական ընտրությունների դեմոկրատական կուսակցության թեկնածու, Իլինոյս նահանգի կրտսեր սենատոր Բ.Օբաման, իր արտաքին քաղաքականությանը նվիրված ծրագրային հոդվածում գրում էր. «Ամերիկան այլևս չի կարող միայնակ դիմակայել նոր դարի մարտահրավերներին, բայց և աշխարհը չի կարող դիմակայել դրանց՝ առանց Ամերիկայի: Մենք ոչ կարող ենք փախչել աշխարհից, ոչ էլ կարող ենք ծնկի բերել այն» [12, p. 4]:

հակամարտությունում ԱՄՆ միակողմ և ընդգրկուն ներքաշվածությունը: Դեռևս 1956թ. սեպտեմբերի 2-ին ԱՄՆ նախագահ Դ.Էյզենհաուերը Մեծ Բրիտանիայի վարչապետ Է.Իդենին ուղղած նամակում, բացատրելով Միջին Արևելքում, մոտալուտ իսրայելա-արաբական պատերազմում, ԱՄՆ չեզոք դիրքի անհրաժեշտությունը, մասնավորապես նշում էր. «Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի, իսկ որոշ իմաստով՝ նաև ողջ Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդները համախմբվում են ընդդեմ Արևմուտքի այն աստիճան, որ կարծես թե դա չի հաղթահարվելու ոչ ներկա սերնդի կյանքի ընթացքում, ոչ էլ նույնիսկ այս ողջ դարաշրջանում, մանավանդ եթե չմոռանանք ռուսների խառնակչություն սարքելու ունակությունները» [9, p. 667]: Ավաղ, մարգարեական այս բառերն ըստ արժանվույն չգիտակցվեցին, և XX դարի 2-րդ կեսի ողջ պատմությունը զարգացավ իսրայելա-արաբական հակամարտությունում Իսրայելի օգտին ԱՄՆ խիստ միակողմանի ներգրավվածության ներքո: Հանգամանք, որը, ՀԱԽ փորձագետների տերմինաբանությամբ, «ձևագոյացնող գործոն» դարձավ XX դարի 2-րդ կեսի համար: Թե՛ այս միակողմանի ներգրավվածությունը, թե՛ «ողջ Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների» հակաամերիկյան ընդվզումը ամենևին էլ «չհաղթահարվեցին» ոչ դարավերջին, ոչ էլ նոր դարասկզբին, երբ արդեն չկար ԽՍՀՄ-ը, իսկ Միջին Արևելքում «ռուսների խառնակչությունը» մոտ երկու տասնամյակ այլևս համակարգված ու ծավալուն բնույթ չէր կրում: Ավելին, հենց այս ժամանակ է սկսվում «ընդվզման» նոր և դրամատիկ փուլը՝ իր ծայրահեղ ու անմարդկային դրսևորումներով հանդերձ:

Ուշադրություն դարձնենք նաև ՀԱԽ ծրագրերի ժամանակագրությանը: Դրանց սկիզբը՝ 1996-97 ականները, հատկանշական տարիներ էին ԱՄՆ-ի համար: ԽՍՀՄ փլուզումը, ԱՄՆ նախագահ Ռ.Ռեյգանի հաղթական քաղաքական ժառանգությունը, 90-ականների աջակողմյան, կոնսերվատիվ ու ազգային մտածելակերպի զարթոնքը, նույնիսկ արդեն հիշատակված «Վենոնայի» նյութերի հրապարակումը և շատ ու շատ այլ գործոններ էականորեն խաթարեցին ամերիկա-հրեական «լիբերալ-դեմոկրատական» *իսթեբլիշմենթի* ընդհանրական *իմիջը* ԱՄՆ ժողովրդի աչքերում: Սկսվեց այդ վերնախավի առավել շարժուն և ճկուն հատվածի «փախուստը» դեպի ԱՄՆ Հանրապետական կուսակցություն ու կոնսերվատիվ քաղաքական դաշտ[1]: Իրաքի ներխուժումը Քուվեյթ, 2001թ. սեպտեմբերյան ողբերգությունն էլ ավելի ամրապնդեցին այս շարժը: Սկսվեց այն, ինչ 1996թ. ԱՄՆ նախագահական ընտրություններում Հանրապետական կուսակցության թեկնածու Փ.Բյուքենենը, մի փոքր ավելի

[1] Երևույթը հայկական նորագույն քաղաքական պատմության համար նույնպես խորթ չէ: Եվ ընդհանրապես, դարաբաժանին ու անցած տասնամյակին բնորոշ այս շարժը դեպի ազգային և հանրապետական քաղաքական դաշտ խորքային կապեր ունի տարբեր երկրների պարագայում՝ Ֆրանսիա, թե Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, թե Բալթյան երկրներ, Վրաստան թե Հայաստան: Պատահական չէ նաև, որ Զ.Բժեզինսկու հայտնի «շախմատային» գիրքը հրատարակվեց հենց 1997թ.:

ուշ (2004թ.) որակեց որպես «ամերիկա-հրեական *նեոկոնսերվատորների* կողմից ԱՄՆ իշխանության զավթում» [10, Ch. 2]: Այս ողջ ընթացքում «ԱՄՆ որոշիչ հեգեմոնիայի» գործոնը՝ այդքան սիրված և հաճախակի քննարկվող ՀԱԽ առաջին երեք ծրագրերում, պրագմատիկ քաղաքականության տեսանկյունից նշանակում էր ոչ այլ ինչ, եթե ոչ ներխուժում Իրաք, սաստկացող ճնշում Իրանի և Սիրիայի վրա, և ընդհանրապես՝ *Իսրայելի ազգային նպատակներին և աշխարհաքաղաքական ծրագրերին* ԱՄՆ գրեթե անվերապահ[1] պաշտպանություն: Ընդ որում, այս *նվիրումը* հասավ այնպիսի անհավասարակշիռ վիճակի, որ ԱՄՆ կոնսերվատիվ քաղաքական մտքի նվիրյալ Ռ.Քիրկի 1988թ. դիպուկ արտահայտությունը՝ «պարոնայք նեոկոնսերվատորները հաճախ պարզապես շփոթում են ԱՄՆ մայրաքաղաքը Թել Ավիվի հետ», սկսեց լայնորեն մեջբերվել բազմաթիվ ամսագրերում և հասարակական ելույթներում [11][2]:

Նախագահ Բուշ-կրտսերի օրոք հրեական պետության ազգային քաղաքականությունը ԱՄՆ-ում դարձել էր այնքան «ընտանեկան, ներքին խնդիր», որ 2004թ. ԱՄՆ նախագահական ընտրությունների ժամանակ Նաթանյահուն հայտնվում էր ամերիկյան հեռուստաէկրաններին նույնքան հաճախ, որքան որ *CNN, CBS, NBC* կամ *FOX* հեռուստաալիքների քաղաքական մեկնաբանները: Բանը հասավ նրան, որ ԱՄՆ համազգային նշանակության թերթերում պարոնայք Փերլը, Վուլֆենսոնը և այլք բացեիբաց անվանվում էին ամերիկյան «լիքուդցիներ»: Այս իրավիճակը սկսել էր ծաղրվել նույնիսկ հայտնի հեռուստատեսային քաղաքական շոուներում՝ մի բան, որ ԱՄՆ պատմության վերջին 60 տարիների ընթացքում երևակայելն անգամ անհնար էր:

Այսպիսով, ՀԱԽ 2025 ինտոնացիոն փոփոխությունը ԱՄՆ հասարակությունում նեոկոնսերվատորների «ամերիկա-հրեական զավթման» հետևանքների դեմ ընդվզման, իսկ ավելի լայն՝ «ձախերից» դեպի «աջ» քաղաքական «տեկտոնական» շարժի և ԱՄՆ-ում ազգային մտածելակերպի զարթոնքի ընդամենը թույլ արտացոլանքն է:

Եթե մի կողմ դնենք ՀԱԽ հռետորականությունը, ապա սա է «նոր աշխարհակարգի գալստյան», «ազգ-պետությունների թուլացման» և ԱՄՆ

[1] Որքան հիշում եմ, միակ բացառությունը, թերևս, ԱՄՆ մերժումն էր Իսրայելին սպառազինության որոշ տեսակների «յուրային-ախոյան» կոդերի տրամադրման և ԱՄՆ հետախուզական արբանյակների տեղեկատվական հոսքից *on-line* ռեժիմում օգտվելու հարցում:

[2] 1988թ. *Հերիթջ Ֆաունդեյշնում* կարդացած 4-րդ դասախոսությունում Ռ.Քիրկը, բացի վերը բերված բառերից, նշում էր, որ «նեոկոնները» հաճախ խելոք են, բայց իմաստուն՝ հազվագյուտ [11, p. 5]: Լինելով XX դարի մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Թ.Ս. Էլիոթի վաղեմի ընկերն ու նրա պոեզիայի մեծ գիտակը՝ Քիրկը վերջիններիս է ուղղում Էլիոթի հայտնի հարցը. «Ո՞ւր է իմաստնությունը, որը կորցրինք գիտելիքի մեջ/Ո՞ւր է գիտելիքը, որը կորցրինք ինֆորմացիայի մեջ»: Հարց, որը կարելի է ուղղել նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը (իմա՝ գլոբալացումը) աստվածացնող ՀԱԽ ծրագրերի որոշ փորձագետներին: Այն կարելի է ուղղել նաև մեր որոշ պետական այրերին, որոնք, չգիտես ինչու, նույնացնում են «բարձր տեխնոլոգիաները» համակարգչային հմտությունների, իսկ աշխատանքի արդյունավետության աճը՝ *ինտերնետի* արագության հետ:

վտանգված հեգեմոնիայի մասին ՀԱԽ «եղերերգության» մեխը: Իրականում, արդիականության «ձևագոյացնող գործոնը» ոչ թե ԱՄՆ հեգեմոնիան է կամ այդ հեգեմոնիայի թուլացումը, այլ ԱՄՆ ցավագին, երկար ու ոլորապտույտ ճանապարհը դեպի *ազգ-պետություն* և ազգային քաղաքականության մշակում ու իրականացում: Սա է այս սքանչելի երկրի և նրա նորընտիր նախագահի առջև կանգնած իրական խնդիրն ու ամենակարևոր մարտահրավերը: Շատ ավելի կարևոր ու կենսական, քան ֆինանսական ճգնաժամի հաղթահարումը կամ, նույնիսկ, ԶՈԶ մրցավազքը: Կհաջողվի՞ արդյոք նախագահ Օբամային իրապես հաղթահարել այս ճգնաժամը՝ առանձին հարց է[1]: Բայց կասկածից վեր է, որ դա նոր վարչախմբի և ԱՄՆ-ի համար՝ որպես պետություն, թիվ մեկ հարցն է: Օգտվելով ՀԱԽ 2020 փորձագետների Վրաստանին տրված գնահատականից՝ շրջենք այն և նշենք. գալիք տարիներին *ԱՄՆ-ը հավանաբար կփորձի իրեն ավելի հեռու պահել Իսրայելից և կյանքի կոչել պաղեստինահրեական «երկու պետություն» կառուցվածքը, թեև որպես ազգ-պետություն ու հանրապետություն՝ ԱՄՆ կենսունակությունը կմնա տակավին փխրուն:*

Ավելացնենք միայն, որ նորագույն պատմության մեջ Օբաման հզոր տերության առաջին ղեկավարը չէ, որ կանգնած է «ազգային խնդիր» կոչվող մարտահրավերի առաջ: Հնարավոր զարգացումների ամբողջ տիրույթն ընդգծելու համար հստակ զուգահեռ տանենք, օրինակ՝ ԽՍՀՄ պատմության հետ: Հիշենք միայն Վ.Ուլյանովին, Ի.Ջուղաշվիլուն և կամ Մ.Գորբաչովին ու Բ.Ելցինին այս մարտահրավերին նրանց առաջարկած լուծումներն ու դրանց հետևանքները: Դե ինչ, պատմությունը դեռ նոր է սկսվում. վերջին անգամ հիշենք և ընդմիշտ մոռանանք Ֆուկույամային:

Մեզ համար այստեղ կարևորն այն է, որ ինչպիսին էլ լինի ԱՄՆ ընտրությունը, դրա անմիջական աշխարհաքաղաքական հետևանքները գալիք տարիներին *ուղղակիորեն կարտահայտվեն մեր տարածաշրջանում՝ Իսրայել-Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան և ԱՄՆ-Իրան-Ռուսաստան-Ադրբեջան առանցքներով ու անմիջականորեն մեզ մոտ՝ Հայաստանի Հանրապետությունում,* հավանական է՝ *Հայաստան-սփյուռք առանցքով և տարատեսակ գործա-*

[1] Դժվար է այստեղ լավատես լինել. տե՛ս սույն բաժնի բնաբանը: Եվ Իսրայելի նկատմամբ ԱՄՆ *նվիրման* մասին այս մեջբերումը 2007թ. *ՖԱ* էջերում հաջորդաբար ծրագրային հոդվածներով հանդես եկող ԱՄՆ նախագահական բոլոր թեկնածուների համանման արտահայտություններից ամենամեղմն է: Հնարավոր լավատեսության ծիլերը թերևս գտնվում են այլ դաշտում: Դրանք կայանում են, օրինակ, նրանում, որ այս զարմանալի երկրում՝ ԱՄՆ-ում, կարող էր նկարահանվել և ցուցադրվել «Վերջին ընթրիք» *(The Last Super, 1995թ.)* զվարճալի ու ահասարսուռ ֆիլմը՝ ԱՄՆ հասարակության խմորումների այս հայելին, ուր հստակ կանխատեսված էր լիբերալ-դեմոկրատական *իսթեբլիշմենթի* այլասերումը: Ֆիլմում այս վերնախավի հավաքական ներկայացուցիչների կողմից կատարվող սպանությունների մոտիվացիոն հաջորդականությունը համարյա ամբողջովին համընկնում է ֆիլմից 18 տարի հետո հրատարակված ՀԱԽ «Գլոբալ միտումներ 2025» հաշվետվության հատուկ բաժինների ցանկին: Զարմանալի չէ, որ նաև այս ֆիլմի խորքում նորից ընկած են ապագայի կանխատեսման և «ժամանակի մեքենայի» մոտիվները:

կալությունների և ոչ պետական կազմակերպությունների գծով:

Հաջորդ կարևոր հարցը ՀԱԽ 2025 կենտրոնական պնդումներից մեկն է. «Էներգետիկան կդառնա աշխարհաքաղաքականություն»: Առավել ևս արտառոց, եթե այն համեմատելու լինենք ՀԱԽ 2020 կենտրոնական պնդման հետ. «առկա էներգետիկ հնարավորությունները բավարար կլինեն գլոբալ պահանջարկի համար»: Այն, որ աշխարհաքաղաքականության մեջ էներգետիկ բաղադրիչը կարևորագույններից մեկն է, ոչ նորություն է, ոչ էլ ՀԱԽ հայտնագործությունը: Նորություն չէ նաև այն, որ էներգետիկան, ողջ կարևորությամբ հանդերձ, դեռ աշխարհաքաղաքականություն չէ: Մենք արդեն առիթ ունեցել ենք անդրադառնալ այս հարցին [13]: Նորությունը ՀԱԽ 2025 այս պնդման ժամանակագրությունն է՝ 2008թ. դեկտեմբեր, և տեղը՝ ԱՄՆ նորընտիր նախագահին ՀտՀ կողմից յուրօրինակ պատգամ հանդիսացող «Գլոբալ միտումներ 2025» հաշվետվությունը:

Երևույթը, մեր կարծիքով, բացատրվում է, նրանով, որ էապես ձախողվեց Իրաք ներխուժման, Ս.Արաբիայում ԱՄՆ ռազմական ներկայության և Իրանի վրա ուժային ճնշման նեոկոնսերվատորների ու ԱՄՆ նախկին նախագահ Բուշ-կրտսերի վարած քաղաքականությունը (և աշխարհաքաղաքականությունը): Ձախողվեց առաջին հերթին հենց ԱՄՆ հասարակության աչքերում: Դա էր Բ.Օբամայի նախագահական ընտրություններում հաղթանակի հիմնական աշխարհաքաղաքական պատճառը:

Ուստի, ԱՄՆ նշված շրջանակների ***նվիրումը*** *Իսրայելի ազգային քաղաքականությանը,* որը, իհարկե, ամենևին էլ չանհայտացավ ԱՄՆ նոր նախագահի ընտրությամբ, *կարիք ունի նոր հիմնավորման:* Առավել ևս, որ 2002-2008թթ. վարվող «ժողովրդավարության քարոզչության» ԱՄՆ ռազմավարության շրջանակներում Իսրայելի՝ տարածաշրջանում «միակ կայացած դեմոկրատական երկրի» փաստարկն արդեն սարդոնիկ ծիծաղ ու զայրույթ է առաջացնում նույնիսկ եվրոպական շատ երկրներում և ԱՄՆ-ում: 2009թ. դեկտեմբերին Գազայի հատված ներխուժման և քաղաքացիական բնակչության զոհերի շոշափելի ծավալների պարագայում, կարծում ենք, այս զայրույթն էլ ավելի կուժեղանա[1]: Եվ այստեղ է, որ նավթային գործոնը նորից գալիս է առաջին պլան՝ *նորացնելու և վերստին ամրապնդելու ԱՄՆ այս* ***նվիրումը:***

Ինչպես հայտնի է, նորը մոռացված հինն է, և ճիշտ ինչպես անցյալում՝ XX դարի 70-80-ականներին, այնպես էլ այժմ նավթային գործոնի շեշտադրումը ԱՄՆ-ում թույլ կտա Իսրայելին ապահովել Միջին Արևելքի տարածաշրջանում ԱՄՆ ակտիվ ներկայությունը՝ *ի շահ իր ազգային ռազմավարական խնդիրների լուծման:* Առավել ևս, որ այսպիսի վերաշեշտադրումը հնարա-

[1] Սույն տողերը գրվում էին մինչև 2009թ. Դավոսի հունվարյան ֆորումը և Պերես-Էրդողան հրապարակային ընդհարումը:

վորություն է ընձեռում օգտագործել ԱՄՆ և միջազգային նավթային հզոր *լոբբիի* հնարավորությունները: Նավթային գործոնի և ավելի լայն՝ առաջնային էներգակիրներից ԱՄՆ ներկրումային կախվածության իրոք բարդ խնդրի արծարծումը ԱՄՆ որոշ շրջանակների կողմից նոր թափ ստացավ 2005-ից սկսած՝ Բուշ-կրտսերի վերընտրությունից անմիջապես հետո[1]: Նշենք վերջինիս կողմից ԱՄՆ «էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրի» ընդունումը, որը XX դարի 70-ականներից սկսած՝ նման առաջին ծրագիրն էր ԱՄՆ-ում: Ընդգծենք նաև «էներգետիկ անկախության» խնդրի պատկառելի դերը 2008թ. ԱՄՆ նախագահական ընտրությունների *բոլոր* թեկնածուների համար: Սակայն, մեզ հետաքրքրող տեսանկյունից, այստեղ առաջին հերթին նշենք *«Oil Shockwave»* կոչվող մոդելավորումների ու սցենարային խաղերը 2005թ. ամռանը կազմակերպելու փաստը և հետագա զարգացումները[2]: Կարծում ենք, որ առիթ կունենանք այս հարցերին ավելի հանգամանալի անդրադառնալու: Ուստի, ընթացող միտումների ուղղվածությունն ընդգծելու համար, բավարարվենք միայն *«Oil Shockwave»* արդյունքների հիման վրա ձևակերպված և աշխարհաքաղաքական լրջագույն հետևանքներ ունեցող հետևյալ հիմնական դրույթի մեջբերմամբ. *նավթը գլոբալ ապրանք է: Ուստի գոյություն չունի այնպիսի բան, ինչպիսին է «օտարերկրյա նավթը»:*

Սա է, մեր կարծիքով, ՀԱԽ 2025 քննարկվող պնդման ակունքը: Հենց այս համատեքստում է պետք դիտարկել 2008թ. 2-րդ կեսից հում նավթի գնի անկման անբեկանելի ու «անբացատրելի» միտումը, ինչպես նաև ողջ 2008թ. ընթացքում «Գազային ՆԱԵԿ» ստեղծմանը միտված գործընթացները, 2009թ. հունվարից ծավալված ՌԴ-Ուկրաինա-Եվրոպա գազային հակամարտությու-

[1] Հասկանալի է, որ Բուշ-կրտսերը Ֆ.Դ. Ռուզվելտը չէ, և 3-րդ նախագահության մասին խոսք գնալ չէր կարող:

[2] Դրանց, ի թիվս այլոց, մասնակցում էին ԱՄՆ իշխանության բարձրագույն օղակների նախկին պաշտոնյաներ. ԱՄՆ ԿՀՎ նախկին երկու տնօրեն, ԱՄՆ Սպիտակ տան նախկին խոսնակ, ԱՄՆ խաղաղօվկիանոսյան նավատորմի նախկին հրամանատար ու պաշտոնաթող ծովակալ և այլք *(www.oilshockwave.org):* Նավթային գործոնի հետ կապված ԱՄՆ/NATO մոդելավորում/կանխատեսումները վերջին 10-15 տարիներին միշտ էլ ակտիվ վիճակում էին՝ մանավանդ Կասպյան ավազանի և Կենտրոնական Ասիայի համար: Հիշենք միայն «Ռազմավարական հեռանկարներ» վերլուծական ուսումնասիրությունների շարքը, որը կազմակերպված էր ԱՄՆ Հետախուզության տնօրենի կողմից *(DI's Strategic Perspectives Series)* հավանաբար 1997-98թթ. և, հավանական է, կրում էր *«Tier»* դասիչը, կամ 1999թ. «Ժնևյան խաղերը» *(Geneva Game' 99),* որոնք հանդիսանում էին ԱՄՆ Ծովային ռազմուժի քոլեջի «Ռազմական միջազգային խաղեր» ծրագրի *(US Naval War College International Game Series)* բաղկացուցիչ մաս և իրականացվում էին *NATO/Partnership for Peace* ծրագրի 25 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն նշված և այլ նմանատիպ ուսումնասիրությունները *կրում էին գաղտնի բնույթ*՝ դրանց որոշ արդյունքները մասնակիորեն գաղտնազերծվեցին *միայն 2007թ. ապրիլին* (տե՛ս վերը՝ ՀԱԽ 2015): Հակառակ դրան, *«Oil Shockwave»* խաղերը ի սկզբանե կրում էին բաց բնույթ և լայնորեն լուսաբանվում, եթե ոչ՝ քարոզվում էին զանգվածային լրատվամիջոցների կողմից: Այս հանգամանքն է, որ ստիպում է մեզ դիտարկել *«Oil Shockwave»* խաղերը և 1998-2000թթ. գաղտնի մոդելավորումների արդյունքների մասնակի գաղտնազերծումը 2007թ., որպես ԱՄՆ և միջազգային հասարակության առջև վերը նշված *«նոր հիմնավորման»* հիմնավորում: Այս առումով կարելի է պնդել, որ ԱՄՆ 2008թ. նախագահական ընտրարշավն իրականում մեկնարկեց 2007թ. ապրիլին: Ճիշտ այնպես, ինչպես «Վենոնայի» նյութերի գաղտնազերծումը և հրապարակումը 1998թ. նշանավորեցին դեմոկրատական կուսակցության ութամյա նախագահական գերիշխման մոտալուտ ավարտը:

նը կամ գրեթե բոլոր հայերին հայտնի Մ.Բրայզայի վերջին հայտարարությունները (2009թ. հունվար) *Nabucco* ծրագրի կապակցությամբ:

Մեզ համար այստեղ կարևորն այն է, որ այսպես ասած *«ածխաջրածնային իմպերիալիզմի» և «էներգետիկ շանտաժի» նոր դրսևորումները գալիք տասնամյակում ողջ թափով կարտահայտվեն մեզ մոտ և Հարավային Կովկասում՝ թե՛ ԱՄՆ/Իսրայելի, թե՛ ԵՄ/Թուրքիայի, թե՛ Ռուսաստանի, թե՛ Ադրբեջանի և թե՛ Իրանի կողմից:*

Վերջաբան

Կարևորը լավ խաղալը չէ, կարևորն ավելի լավ խաղալն է:
Փատրիկ Բյուքենեն, Where the Rights Went Wrong. 2004 [1]

Մենք գտնվում ենք բարդ, հակասություններով լի տարածաշրջանում, որը գտնվում է համաշխարհային և տարածաշրջանային ուժային կենտրոնների ուշադրության կիզակետում: Մեզ սպասում է փոթորկալից ապագա՝ լի համաշխարհային, տարածաշրջանային ու ներքին մարտահրավերներով: Գլոբալ մասշտաբով գործող ոչ մի շարժիչ, որոնց մասին խոսվում էր վերը, չի շրջանցի մեզ: Ավելին, դրանցից շատերը (ժողովրդագրական ճնշում, ԶՈՉ և ատոմային մրցավազք, էներգակիրներ, ջրային ռեսուրսներ, պարենային ապահովություն) առավել սուր կարտահայտվեն հենց մեր տարածաշրջանում, մեր անմիջական հարևանությամբ և ուղղակի մեզ մոտ:

Մեր հանրապետության տնտեսական համակարգը՝ մեկուսացված նավահանգիստներից և Արևելք-Արևմուտք առանցքով տարածաշրջանային ենթակառուցվածքների ներկա զարգացումներից, արդեն մոտ երկու տասնամյակ շնչահեղձ է լինում շրջափակման մեջ: Սոցիալ-տնտեսական զարգացումը սանձվում է ցածր տեմպերի ժողովրդագրական դինամիկայով, բնակչության առավել աշխատունակ հատվածին բնորոշ շոշափելի արտագաղթով, քաղաքական էլիտայի գոյացման մեխանիզմների աղճատմամբ, օրենքի ուժի անհավասար և թույլ կիրառմամբ, դատական համակարգի թուլությամբ, կոռուպցիայով, հասարակական ու քաղաքական ինստիտուտների թերզարգացածությամբ:

Սա է իրողությունը: Բայց սա ողջ իրողությունը չէ:

Մեզ սահմանված է գտնվել այս խրթին և հակասություններով լի տարածաշրջանում ի վերուստ: Եվ արդեն մեկ անգամ չէ, որ ապացուցել ենք զարգացման առաջատարի մեր հեղինակությունը, դիմակայել մարտահրա-

[1] «Ինչպես նեոկոնսերվատորները խեղաթյուրեցին Ռեյգանի հեղափոխությունը և փախցրին Բուշի նախագահությունը» խորագրով Բյուքենենի այս գրքի անվանման բառախաղը, ցավոք, անհնար է համարժեք թարգմանել հայերեն: Ռուսերենը տալիս է այս հնարավորությունը՝ «Где Правые оказались Неправы»: Բայց, չգիտես ինչու, գիրքը ռուսերեն հրատարակմամբ (М. АСТ, 2006) կոչվել էր «Правые и Неправые»:

վերներին ու փոթորիկներին: Հարավային Կովկասում մեր տնտեսական համակարգն ամենաառողջն է ու կայունը, բանակը՝ ամենամարտունակը, տնտեսական դաշտն ամենաազատականն է ու զարգացածը, հասարակական կյանքը և սոցիալական իրավիճակը՝ ամենակայունն ու անվտանգը: Հիմնականում մոնոէթնիկ Հայաստանը ենթակա չէ պառակտման նույն դյուրինությամբ, ինչ մեր հարևանները, իսկ ազգային ինքնության և ազգը համախմբող գերխնդիրների ներուժը գերազանցում է աշխարհի և տարածաշրջանի շատ ժողովուրդների այս ցուցանիշը: Եվ սա Հայաստանի 3-րդ հանրապետության մեր գնահատականները չեն բնավ, դրանք նույնիսկ մեր բարեկամների գնահատականները չեն[1]:

Բացի այդ, Արևելք-Արևմուտք առանցքով տարածաշրջանային մեկուսացմանը Հայաստանն ի վիճակի է և արդեն իսկ պատասխանում է Հյուսիս-Հարավ առանցքով ենթակառուցվածքների զարգացմամբ: Հանրապետության ապաշրջափակման գործընթացը՝ տակավին դանդաղ ու դժվարին, սկսված է՝ լինի դա ռազմական թե էներգետիկ համագործակցություն, գիտություն, սպորտ թե մշակույթ:

Եվ ամենակարևորը, Հայաստանը՝ տարածաշրջանի այս «վայրի քարտը» (օգտվենք ՀԱԽ 2015 ձևակերպումից), պե՛տք է և կարո՛ղ է շրջել հանգամանքների ու միտումների նժարն իր օգտին: Հայաստանը և Ղարաբաղը տարածաշրջանում ամուր երկրներն են, իսկ հայ ժողովուրդը պահանջատեր ժողովուրդ է՝ լի պատմական առաքելության զգացումով, զարգացման եռանդով, օժտված ցանցային կենսունակությամբ և ազդեցությամբ:

Ի թիվս այլոց, դա են վկայում սույն հոդվածում հիշատակված և/կամ քննարկվող ԱՀԳ-ների ու «Գլոբալ միտումների» նյութերը՝ սկսած դեռ անցած դարի կեսերից:

Ուրեմն՝ պատրաստվենք ապագայի վերադարձին:

Դեկտեմբեր, 2008թ. - հունվար, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան Ա.,* Ուժե՞ղ պետություն է արդյոք Հայաստանի երրորդ Հանրապետությունը, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (21), 2008թ., էջ 74-98:
2. *Alan G. Whittaker, Frederick C. Smith, Elizabeth McKune,* The National Security Policy Proces: The National Security Council and Interagency System. In “Affairs of State: The

[1] Տե՛ս, օրինակ, «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան-Տարածաշրջան-Աշխարհ. թվեր և փաստեր» խորագրի հրատարակումները:

Interagency and National Security". Ed. By Gabriel Marcella. Strategic Studies Institute (SSI), US Army War College, December 2008.
3. *Mike McConnell,* Overhauling Inelligence. *Foreign Affairs*, vol 86, # 4. July/August 2007.
4. Global Trends 2010. Revised Edition. NIC, November 1997.
5. Global Trends 2015: A Dialogue About the Future With Nongovernment Experts. NIC, December 2000.
6. Mapping the Future: Report of the National Intelligence Council's 2020 Project. Based on consultations with nongovernmental experts around the world. NIC, December 2004.
7. Global Trends 2025: A Transformed Worled. NIC, November 2008.
8. *Kissinger H.,* Diplomacy. Simon & Shuster, N.Y. 1994.
9. *Eisenhower D.,* Waging Peace: The White House Years 1956-61. Garden City, N.-Y.: Doubleday, 1965.
10. Patrick Buchanan. Where the Right Went Wrong. Thomas Dunne Books. N.Y. 2004.
11. *Russell Kirk,* The Neoconservatives: An endangered species. The Heritage Foundation. 4th *Heritage Lecture*, October 6, 1988.
12. *Obama B.,* Renewing American Leadership. *Foreign Affairs*, vol 86, # 4. July/August 2007.
13. *Մարջանյան Ա.,* Էներգետիկա և աշխարհաքաղաքականություն, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (1), 2003թ., էջ 13-55:
14. *Մարջանյան Ա.Հ.,* «Բալիստիկ հրթիռային զենքը մեր տարածաշրջանում. Արդի վիճակը և տարածման դինամիկան»: *«Դրօշակ»*, Աթենք, # 11, հունիս 1998թ.: «Բալիստիկ հրթիռային զենքը մեր տարածաշրջանում: Մաս Բ., Երևույթի ակունքները և զարգացման միտումները»: ՅԵ-Կլոր սեղանի նյութեր, Երևան, դեկտեմբեր, 2000:

НАШЕ БУДУЩЕЕ – ГЛАЗАМИ *NIC*

Ара Марджанян

Резюме

Каково будущее мира и наше будущее глазами одной из самых влиятельных организаций разведсообщества США – Национального разведывательного совета (НРС)? Впервые в армяноязычной аналитической литературе обобщены и представлены основные выводы и результаты проектов *NIC* 2010, 2015, 2020 и 2025 в контексте формирования и деятельности самого НРС США. Выявлены некоторые побудительные мотивы двух центральных заключений указанных проектов о «наступлении нового мирового порядка» и «превращении энергетики в геополитику». Обрисованы основные вызовы, стоящие перед Арменией.

Հավելված Ա

ԱՄՆ Հետախուզության ազգային խորհրդի առաքելության և գործառույթների ներկայիս պաշտոնական նկարագիրը

Հետախուզության ազգային խորհուրդը (ՀԱԽ) հանդիսանում է ԱՄՆ ՀտՀ միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական մտածողության կենտրոնը:
ՀԱԽ առաջնային գործառույթներն են.

- Օժանդակել Հետախուզության ազգային տնօրենին՝ ՀտՀ ղեկավարի իր դերում
- Հանդիսանալ ԱՄՆ քաղաքականություն կերտողների *(policymakers)* հարցերին ՀտՀ պատասխանների կազմման կիզակետ
- ՀտՀ տեսակետների ընդլայնման նպատակով համագործակցել ակադեմիական շրջանակների ոչ պետական փորձագետների և մասնավոր հատվածի հետ
- Օժանդակել ՀտՀ ռեսուրսների և ներուժի վերաբաշխմանը՝ ի պատասխան ԱՄՆ քաղաքականություն կերտողների փոփոխվող պահանջների
- Ղեկավարել ՀտՀ ջանքերը Ազգային հետախուզության գնահատականների (ԱՀԳ-ների) և ՀԱԽ այլ արդյունքների պատրաստման գործում:

ԱՀԳ-ները Ազգային հետախուզության տնօրենի համար ազգային անվտանգության հարցերի շուրջ ամենահեղինակավոր գրավոր աղբյուրներն են: Դրանք արտացոլում են ՀտՀ ընդհանրական և համադրված գնահատականները հավանական ապագա զարգացումների մասին:

ՀԱԽ խնդիրն է ԱՄՆ քաղաքականություն կերտողներին տրամադրել հնարավորինս լավագույն, չաղավաղված և ճշգրիտ տեղեկատվություն՝ անկախ այն բանից թե անալիտիկ հետևությունները կարող են հակասել ԱՄՆ [վարվող] քաղաքականությանը:

Հավելված Բ

ՏԱՄՕ շրջանակներում 2009թ. հունվարի դրությամբ հասանելի՝ Հայաստանին վերաբերող ՀԳԲ-ների և ԱՀԳ-ների ցանկը՝ հետընթաց ժամանակագրությամբ՝

1. GLOBAL TRENDS 2015: A DIALOGUE ABOUT THE FUTURE WITH NONGOVERNMENT EXPERTS. Created: 12/1/2000.
2. GLOBAL HUMANITARIAN EMERGENCIES, 1995 VOLUME II: COUNTRY ESTIMATES. Created: 12/28/1994.
3. GLOBAL HUMANITARIAN EMERGENCIES, 1993-94. Created: 10/1/1993.
4. THE KURDS: RISING EXPECTATIONS, OLD FRUSTRATIONS. Created: 9/1/1992.
5. THE REPUBLICS OF THE FORMER USSR: THE OUTLOOK FOR THE NEXT YEAR (SNIE 11-18.2-9). Created: 9/1/1991.
6. IMPLICATIONS OF ALTERNATIVE SOVIET FUTURES (NIE 11-18-91). Created: 6/1/1991.
7. THE DEEPENING CRISIS IN THE USSR: PROSPECTS FOR THE NEXT YEAR. Created: 11/1/1990.
8. THE READINESS OF SOVIET GENERAL PURPOSE FORCES THROUGH THE 1990s. Created: 6/1/1990.
9. UNREST IN THE SOVIET UNION: MEASURING SOCIAL INSTABILITY (SOV 90-10004). Created: 2/1/1990.
10. THE SOVIET SYSTEM IN CRISIS: PROSPECTS FOR THE NEXT TWO YEARS. Created: 11/1/1989.
11. WHITHER GORBACHEV: SOVIET POLICY AND POLITICS IN THE 1990S (NIE 11-18-87). Created: 11/1/1987.
12. SOVIET WARTIME MANAGEMENT: THE ROLE OF CIVIL DEFENSE FOR LEADERSHIP CONTINUITY … Created: 12/1/1983. NARA #: NN3-263-98-002; 11-13-1997.
13. DIMENSIONS OF CIVIL UNREST IN THE SOVIET UNION (NIC M-83-10006). Created: 4/1/1983. NARA #: NN3-263-94-008; 04/04/1994.
14. SOVIET CIVIL DEFENSE: OBJECTIVES, PACE, AND EFFECTIVENESS (NI IIM 81-10001D). Created: 7/1/1981. NARA #: NN3-263-98-002; 11-13-1997.
15. SOVIET SUPPORT FOR INTERNATIONAL TERRORISM AND REVOLUTIONARY VIOLENCE (SNIE 11). Created: 5/27/1981. NARA # : NN3-263-94-008; 4-APR-94.
16. SOVIET CIVIL DEFENSE: OBJECTIVES, PACE, AND EFFECTIVENESS (IIM 77-029). Created: 12/1/1977. NARA #: NN3-263-98-002; 11/13/1997.

---

* Հապավումներ: *ORE* - ԿՀՎ Հետազոտությունների և գնահատումների բաժին (ՀԳԲ, *CIA Office of Research and Estimates)*; *NARA* – ԱՄՆ Ազգային արխիվի դասիչ՝ դասիչի վերջում նշվում է գաղտնազերծման տարեթիվը; *NIE* – Ազգային հետախուզական գնահատական, ԱՀԳ *(National Intelligence Estimates); NIO IIM* – ՀԱԽ Ազգային հետախուզության սպաների կողմից կազմված ԱՀԳ հարակից նյութեր *(National Intelligence Officers', NIOs); NIC* - ՀԱԽ; *SNIE* – Հատուկ ԱՀԳ *(Special National Intelligence Estimates)*.

17. SOVIET CIVIL DEFENSE (NIO IIM 76-041). Created: 11/1/1976. NARA #: NN3-263-98-002; DATE: 13 NOV 1997.
18. THE SOVIET ATOMIC ENERGY PROGRAM. Created: 6/23/1966.
19. ANTI-COMMUNIST RESISTANCE POTENTIAL IN THE USSR AND EASTERN EUROPE (NIE 11-6). Created: 1/27/1966. NARA #NN3-263-00-002, 11/19/99.
20. THE SOVIET ATOMIC ENERGY PROGRAM. Created: 7/2/1963.
21. SOVIET CAPABILITIES AND INTENTIONS (NIE 3). Created: 11/15/1950. NARA #: NN3-263-93-007; 09/22/93
22. THE TUDEH PARTY: VEHICLE OF COMMUNISM IN IRAN (ORE 23-49). Created: 7/18/1949 NARA # NN3-263-92-005; 24-AUG-92.
23. THE KURDISH MINORITY PROBLEM (ORE 71-48). Created: 12/8/1948. NARA # NN3-263-92-005; 24-AUG-92.
24. THE CONSEQUENCES OF THE PARTITION OF PALESTINE (ORE 55). Created: 11/28/1947. NARA # NN3-263-92-005, 24-AUG-92.
25. DEVELOPMENTS IN THE AZERBAIJAN SITUATION (ORE 19). Created: 6/4/1947. NARA # NN3-263-92-005; 24 AUG 92.
26. THE HATAY QUESTION (ORE 15). Created: 2/28/1947. NARA #NN3-263-92-005, 24-AUG-92.

Հավելված Գ

ՀԱԽ 2015 ծրագրի շրջանակներում իրականացված գիտաժողովները և սեմինարները

Արտերկրի ռեակցիան՝ ռազմական գործերում հեղափոխության վրա: Ջորջթաունի համալսարան, ԱՄՆ

Ազգ-պետությունների գնահատում: Մերիլենդի նահանգային համալսարան, ԱՄՆ

Ժողովրդավարացման միտումները: ԿՀՎ, ԱՄՆ

Ամերիկայի տնտեսական հզորությունը: Ամերիկյան տնտեսության և առևտրային ռազմավարության կենտրոն, Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ

Պաշտպանության տնտեսության ձևափոխումը: Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, Լոնդոն, ՄԹ

Պատերազմի և հակամարտությունների այլընտրանքային ապագան: Նյուփորտ և ԿՀՎ, ԱՄՆ

Արկղից դուրս՝ դեպի ապագան. Երկխոսություն գիտնականների և մարտիկների միջև՝ հեռու ապագայի պատերազմների մասին: Պոտոմակ Ինստիտուտ, Արլինգթոն, ԱՄՆ

Ապագայի վտանգավոր տեխնոլոգիաները: MITRE կորպորացիա, ՄակԼին, ԱՄՆ

Տեղեկատվական հեղափոխության գլոբալ ուղին. տեխնոլոգիական միտումներ: RAND կորպորացիա, Սանտա Մոնիկա, ԱՄՆ

Տեղեկատվական հեղափոխության գլոբալ ուղին. քաղաքական, տնտեսական և սոցիալական հետևանքները: RAND կորպորացիա, Սանտա Մոնիկա, ԱՄՆ

Միջին Արևելք. ԶԼՄ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինտերնետ: Ազգային պաշտպանության համալսարան, Ֆորտ ՄակՆիր, ԱՄՆ

Միգրացիայի գլոբալ միտումները և հետևանքները ԱՄՆ-ի համար: Միջազգային խաղաղության համար Քարնեգի հաստատություն, Վաշինգտոն, ԱՄՆ

Այլընտրանքային համաշխարհային ապագաներ՝ 2000-2015: ՊԴ ՀՀԲ/ԿՀՎ, ԱՄՆ

ՀԱԽ 2020 ծրագրի շրջանակներում իրականացված գիտաժողովները և սեմինարները

Ծրագրի միացյալ հայեցակարգի ներկայացում: ՄԹ Պաշտպանության նախարարություն/ ԱՄՆ ԿՀՎ կայանատեղի, ՄԹ, ԱՄՆ, 2003թ. սեպտեմբեր

Հակաամերիկանիզմ: Ուայ պլանացիաներ, ԱՄՆ, 2003թ. հոկտեմբեր

ՀԱԽ 2020 ծրագրի մեկնարկային կոնֆերանս: Վաշինգտոն, ԱՄՆ, 2003թ. նոյեմբեր

Միջազգային հարաբերություններ. պրոֆ. Իկենբերիի կլոր սեղանների շարք: Ջորջթաունի համալսարան, ԱՄՆ, 2003-04թթ. նոյեմբեր

ԱՄՆ և ՄԹ Ազգությունների համագործակցության հետախուզական պաշտոնյաների միացյալ կոնֆերանս: Վաշինգտոն, ԱՄՆ, 2003թ. դեկտեմբեր

Աֆրիկյան փորձագետների կլոր սեղան: Վաշինգտոն, ԱՄՆ, 2004թ. հունվար

ՀԱԽ 2020 Միջին Արևելքի սեմինար: Վաշինգտոն, ԱՄՆ, 2004թ. հունվար

ՀԱԽ 2020. Աֆրիկա: Յոհանեսբուրգ, ՀԱՀ, 2004թ. մարտ

Երկկերպ օգտագործման կենսատեխնոլոգիաների գլոբալ զարգացումը: Վաշինգտոն, ԱՄՆ, 2004թ. մարտ

Ռուսաստան և Եվրասիա. ՀԱԽ 2020 սեմինար: Բուդապեշտ, Հունգարիա, 2004թ. ապրիլ

Եվրոպա. ՀԱԽ 2020 սեմինար: Բուդապեշտ, Հունգարիա, 2004թ. ապրիլ

Գլոբալ ինքնություն. կլոր սեղան: ԱՄՆ ԿՀՎ կայանատեղի, 2004թ. մայիս

Ասիա. ՀԱԽ 2020 սեմինար: Սինգապուր, 2004թ. մայիս

Պատերազմի փոփոխվող բնույթը: Ծովային ռազմուժի վերլուծական կենտրոն, ԱՄՆ 2004թ. մայիս

Լատինական Ամերիկա. ՀԱԽ 2020 սեմինար: Սանտյագո, Չիլի, 2004թ. հունիս

Առաջատար տեխնոլոգիաներ, գլոբալ ուժ, բարիք և հակամարտություններ: Ռազմավարական և Միջազգային հետազոտությունների կենտրոն, ԱՄՆ, 2004թ. հունիս

Կլիմայի փոփոխություն: Մերիլենդի համալսարան, ԱՄՆ, 2004թ. հունիս

Եվրոպայի մահմեդականները. ՀԱԽ 2020 կոնֆերանս: Օքսֆորդ, ՄԹ 2004թ. հուլիս

Կանայք 2020թ.: Վաշինգտոն, ԱՄՆ, 2004թ. օգոստոս

Գործարար լիդերների կլոր սեղան: ԿՀՎ կայանատեղի, ԱՄՆ, 2004թ. սեպտեմբեր

Հնդկաստանը և աշխարհաքաղաքականությունը 2020թ.: ԱՄՆ, 2004թ. սեպտեմբեր

Սցենարային վերլուծություններ. կլոր սեղանների շարք: Սթիմսոնի կենտրոն, Վաշինգտոն, ԱՄՆ, 2004թ. գարուն-ամառ

Տեղեկատվություն և հեռահաղորդակցություն. տեխնոլոգիական ու հասարակական բախում և ազգ-պետությունները: Վաշինգտոն, ԱՄՆ, 2004թ. սեպտեմբեր

ՀԱԽ 2020 ծրագրի եզրափակիչ կոնֆերանս: Վիրջինիա, ԱՄՆ, 2004թ. հոկտեմբեր

ՀԱԽ 2020 եզրափակիչ հաշվետվության նախնական տարբերակի քննարկում ՄԹ և Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի փորձագետների հետ: Լոնդոն, ՄԹ, 2004թ. հոկտեմբեր

2009թ. հունվարի դրությամբ հասանելի ՀԱԽ 2025 ծրագրի հարակից նյութեր

Գլոբալ միտումներ 2025. «Անվտանգության համակարգը 2025-ին»: Սեմինար, հունիսի 9-ը, 2008թ.

Մտահոգիչ քաղաքացիական տեխնոլոգիաներ. մինչ 2025թ. ԱՄՆ շահերի վրա ներազդող 6 տեխնոլոգիաներ: RAND կորպորացիա, Սանտա Մոնիկա, ԱՄՆ:

Գլոբալ միտումներ 2025. Սցենարներ:

	ՀԱԽ 2010 (1997թ.)	ՀԱԽ 2015 (2000թ.)	ՀԱԽ 2020 (2004թ.)	ՀԱԽ 2025 (2008թ.)
Մեթոդաբանություն	ԱՄՆ ՀտՀ փորձագետներ, ԱՄՆ քաղաքացիներ: Մեթոդաբանությունում՝ գծային մոտեցում, ապագայի «Էվոլյուցիոն» մոդելավորում:	ԱՄՆ ՀտՀ փորձագետներ, ԱՄՆ և ՄԹ ակադեմիական շրջանակների մասնագետներ, ԱՄՆ ներկա և նախկին քաղաքացիներ: Ծրագիրը սինքրոնացվում է ԱՄՆ նախագահական ընտրությունների հետ: Խառը մեթոդաբանություն՝ գծային մոդելավորում առանձին «վայրի քարտերի» գնահատումով:	ԱՄՆ և ՄԹ ՀտՀ փորձագետների, ԱՄՆ ակադեմիական շրջանակների, միջազգային փորձագիտական հանրության ներառում: Լայն տիրույթի «վայրի քարտերի» գնահատում, սցենարային վերլուծություն և համակարգչային մոդելավորում: Ապագայի երևակայական գեղարվեստական սցենարների մշակում:	ԱՄՆ և ՄԹ ՀտՀ փորձագետների, ԱՄՆ ակադեմիական շրջանակների, միջազգային փորձագիտական հանրության ներառում: Լայն տիրույթի «վայրի քարտերի» գնահատում, սցենարային վերլուծություն և համակարգչային մոդելավորում: Ապագայի երևակայական գեղարվեստական սցենարների մշակում:
Խոչընդոտներ	**Գլոբալացումը՝ որպես հիմնական ձևագոյացնող գործոն**			
	ԱՄՆ հեգեմոնիա			**Բազմաբևեռ աշխարհ**
	Գլոբալ փոփոխությունների 6 հիմնական շարժիչներ: 7-րդ գործոնը՝ «ԱՄՆ հեգեմոնիան և ուժի կիրառում»: Կոնֆլիկտները կունենան հիմնականում ներպետական բնույթ: Ազգ-պետությունների վախճան:	ԱՄՆ հեգեմոնիան դիտարկվում է գլոբալ փոփոխությունների հիմնական շարժիչների ցանկում որպես դրանց 7-րդ կարևորագույն բաղադրիչ: Տեխնոլոգիական ասպարեզների զուգամիտում: Կոնֆլիկտները կունենան հիմնականում ներպետական բնույթ: Ազգ-պետությունների թուլացում:	Հնարավոր ապագաների գեղարվեստական սցենարներ՝ տագնապի երանգներով: Ի սկզբանե «Արևմտյան» գլոբալացման «արևելականացում»: ԱՄՆ հեգեմոնիայի փորձություն: Առկա էներգետիկ հնարավորությունները բավարար կլինեն գլոբալ պահանջարկի համար:	Ապագայի հոռետեսական սցենարներ: «Էներգետիկան կդառնա աշխարհաքաղաքականություն»: Վերականգնվող էներգետիկան և էներգախնայողությունը դառնում են ռազմավարական գործոն: Հնարավոր են միջպետական կոնֆլիկտներ՝ ռեսուրսների շուրջ: Երկրների «Ազգային հզորությունների» գնահատում:
Տարածաշրջան	Եվրոպան զբաղված կլինի իրենով, Ռուսաստանը կմնա թույլ, ՄԱ-ն՝ ԶՈԶ մրցավազքի գոտի: Իրանում էական են պատանյաց բողջի և ղեկավարների սերնդափոխման գործոնները: Պաղեստինի պետության հավանական *de jure* գոյությունը:	Եվրոպայի համաշխարհային դերակատարումը կսահմանափակվի տնտեսական դաշտով: Կհզորանան Չինաստանը և Հնդկաստանը, կթուլանան ՌԴ-ն և Ճապոնիան: Թուրքիան կորոնի տարածաշրջանում իր դերակատարումը: «Եվրասիականության» մահը Ռուսաստանում, որը կլինի ԵՄ-ից դուրս: Պատանյաց բողջ ՄԱ-ում: Պաղեստինի պետության *de jure* գոյությունը:	ՌԴ-ն կմնա ուժային կենտրոն Եվրասիայում և ԱՊՀ-ում, բայց ԵՄ-ից դուրս: Աֆրիկայից Ասիա ձգվող «Անկայունության աղեղ»: «Սոցիալական կոնտրակտի» վերանայում՝ Իրանում և Ս.Արաբիայում: Իսրայելա-սիրիական հնարավոր կոնֆլիկտ:	Միջուկային և ԶՈԶ մրցավազք Միջին Արևելքում. բարձրանում է դրա կիրառման հավանականությունը: Չինաստան-Հնդկաստան հնարավոր կոնֆլիկտ բնական պաշարների շուրջ: Տարածաշրջանում Իրանի զարգացման «ուրույն ուղեգիծ»:
Մեդ	-	Հարավային Կովկասը՝ անկայուն, ՌԴ «խառնակչության» շնորհիվ: Վրաստանը՝ ՌԴ «ուշադրության» կենտրոնում: Հայաստանը՝ որպես տարածաշրջանային «վայրի քարտ», կմնա հիմնականում մեկուսի՝ հանդիսանալով ՌԴ ու, հավանաբար, Իրանի հաճախորդ: Ժողովրդագրական բացասական ճնշում: Ադրբեջանը՝ միակողմ տնտեսությամբ երկիր:	Ադրբեջանը և Վրաստանն իրենց ՌԴ-ից հեռու կպահեն: Որպես պետություն Վրաստանի կենսունակությունը կմնա փխրուն: Հայաստանը կշարունակի լինել ՌԴ-ի մոտ և կայուն հարևանը՝ պահպանելով սեփական ինքնությունը:	-

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ռիչարդ Գիրագոսյան

Հարավային Կովկասի տարածաշրջանը երկար ժամանակ մրցասպարեզ է հանդիսացել տարածաշրջանային մրցակցող ուժերի համար: Անցած երկու դարերի ընթացքում այն մեծ մասամբ հանդիսացել է տարածաշրջանային շատ ավելի խոշոր ուժերի, մրցակցային հետաքրքրությունների պատանդ, քանի որ հարևան Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը ամեն գնով իշխանության և ազդեցության են ձգտել: Եվ հենց այդ նույն պատմական ուժերը՝ Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, այսօր էլ շարունակում են ազդել որպես տարածաշրջանի գերիշխող դերակատարներ:

Այս մրցակցությունը ոչ միայն շարունակվեց Խորհրդային Միության փլուզումից հետո, այլև խորացավ էներգակիրների հետ կապված նոր շահերի ազդեցությամբ: Տարածաշրջանի երեք երիտասարդ պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համար քաղաքական լեգիտիմության, փխրուն տնտեսությունների և մի քանի չլուծված կամ «սառեցված» հակամարտությունների համակցությունը նրանց հետ պահեց իրենց հարևան, առավել խոշոր տարածաշրջանային ուժերի հզոր ազդեցությանը դիմակայելուց:

Սակայն, ինչն առավել նշանակալից է, պատմական ժառանգության և արդի իրողությունների համակցությունը տարածաշրջանային անվտանգության մեջ կտրուկ փոփոխությունների է հանգեցրել: Անվտանգության ասպարեզում այս փոփոխությունները ոչ միայն ընդհանուր տարրեր են ներառում, որոնք տարածվում են էներգետիկ անվտանգության մարտահրավերներից մինչև չլուծված «սառեցված» հակամարտություններից բխող ճնշումներ, այլ նաև յուրահատուկ միտումներ, ներառյալ վերջին ժամանակներս Ռուսաստանի և Արևմուտքի միջև լարվածության սրման նոր ալիքը:

Հոդվածում հարավկովկասյան տարածաշրջանի իրավիճակային բազմաշերտ ու խոր վերլուծության լուրջ փորձ է արվել՝ Հայաստանի ազգային անվտանգության համատեքստում:

Անվտանգության ասպարեզում դինամիկ փոփոխությունների ֆոնին Հարավային Կովկասի տարածաշրջանի երեք պետություններից յուրաքանչյուրը բախվեց տնտեսական և քաղաքական բարեփոխումների, համակարգային անցման և պետության կառուցման բարդ գործընթացին: Տարածաշրջանը շարունակեց պայքարել նաև խորհրդային իշխանության յոթանասուն տարիներից ժառանգած ճնշումները և դրանցից բխող մարտահրավերները հաղթահարելու համար:

Տարածաշրջանային այս իրողությունների համատեքստում պետություններից յուրաքանչյուրը տարբեր ուղղություններով ընթացավ: Հայաստանը, որը հաստատուն կերպով արմատավորվել է ռուսական ուղեծրում, սատարվում է աշխարհասփյուռ Հայության կողմից: Ադրբեջանն օգտագործում է Կասպիական ռեսուրսները և Թուրքիայի հետ պատմական կապերի լծակները: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա 1990-ականների ավերիչ քաղաքացիական պատերազմի ժառանգությունը, ինչպես նաև՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի կորուստը, հուշեցին Վրաստանին փոխել ռազմավարական կողմնորոշումը, այն է՝ իր հիմնական «տարանցիկ պետության» դերի շահարկումը, երկրի տարածքը և Սևծովյան նավահանգիստները՝ որպես տարածաշրջանային էներգետիկ կենսական շղթա առաջարկելը (ներառյալ Ադրբեջանին ռազմավարական կապեր տրամադրելը ինչպես Սև Ծովի, այնպես էլ Թուրքիայի հետ) և որպես Արևմուտքի դաշնակից հանդես գալը:

Սակայն խոշոր տերությունների միջև վերջերս տեղի ունեցած շահերի բախումը սպառնում է տարածաշրջանը, ավելի քան մյուսները, վերածել առճակատման թատերաբեմի: Դա ակնհայտ դարձավ 2008թ. Վրաստանի և Ռուսաստանի օգոստոսյան հակամարտության ժամանակ, որը, դուրս գալով Հարավային Կովկասի սահմաններից, առճակատման նոր ժամանակաշրջանի խթան հանդիսացավ:

1. Վրաստանյան հակամարտությունը

Չնայած այն հանգամանքին, որ Վրաստանում հակամարտությունն ի սկզբանե կենտրոնացած էր Հարավային Օսիայում, սակայն վրացական ճգնաժամն արագորեն տարածվելով՝ նոր լարվածություն առաջացրեց Մոսկվայի և Վաշինգտոնի միջև և լրջորեն վնասեց Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու երկար փայփայած ձգտումներին: Վրացական հակամարտության կողմնակի արդյունքը հավասարապես լուրջ էր, լի Վրաստանի նոր ձևավորվող արևմտամետ ժողովրդավարական կառավարության նկատմամբ ԱՄՆ նվիրվածության նոր կասկածներով: Սակայն, ինչն էլ ավելի անհանգստացնող է, ճգնաժամը նաև ի հայտ բերեց ռազմավարական առումով մեծ նշանակություն ունեցող Հարավային Կովկասի տարածաշրջանին բնորոշ անվտանգության և կայունության դյուրաբեկությունը:

Չնայած Վրաստանի կարևորությունը զգալիորեն աճեց այսպես կոչված «վարդերի հեղափոխությունից» հետո, որն իշխանության բերեց նոր, արևմտամետ և ժողովրդավարության առումով ռեֆորմիստ կառավարություն, սակայն Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին լուրջ անհաջողություն ունեցավ երկրի անջատողական Հարավային Օսիայի շրջանը* Վրաստանի կենտ-

* Հարավային Օսիան «անջատողական շրջան» որակելը արտահայտում է հեղինակի անձնական մոտեցումը այս խնդրին. 2008թ. օգոստոսյան պատերազմում Հարավային Օսիայի ժողովուրդը վերահաստատեց իր ինքնորոշման իրավունքը: *(Խմբ. ծան)*

րոնական կառավարության վերահսկողության տակ վերադարձնելու խոստումը կատարելու հաշվարկներում: Օգոստոսյան հակամարտության հետևանքները ոչ միայն թուլացրին նրա անձնական իշխանությունը, խարխլեցին երկրի՝ որպես ՆԱՏՕ-ին անդամակցության հիմնական հավակնորդի դիրքերը:

Հայաստանի համար Վրաստանի օգոստոսյան հակամարտության անմիջական հետևանքները լուրջ էին: Երկիրը մոտ $70 մլն-ի տնտեսական վնաս և կորուստներ կրեց: Վրաստանի տրանսպորտային ճանապարհների փակման հետևանքով, հինգ օրվա ընթացքում հանրապետության ամբողջ տարածքում բենզինի պակաս արձանագրվեց: Ինչ վերաբերում է Հայաստանի ազգային անվտանգությանը, հակամարտությունը կրկին հաստատեց Վրաստանից՝ որպես հիմնական առևտրային և տրանսպորտային ուղուց, Հայաստանի կախվածության խոցելիությունը, ինչպես նաև էներգետիկ անվտանգության նոր ռազմավարական քաղաքականության անհրաժեշտությունը: Էներգետիկ անվտանգության առումով բենզինի համապետական մակարդակի ճգնաժամի ակնհայտ և անմիջական ազդեցությունն ընդգծեց Հայաստանի համապատասխան էներգետիկ պաշարներ չունենալու փաստի վտանգավորությունը:

2. Տարածաշրջանային նոր «ձգողականության կենտրոնի» որոնում

Առավել լայն համատեքստում Ռուսաստանի հետ Վրաստանի հակամարտությունն Արևմուտքի համար Վրաստանի տարածաշրջանային «ձգողականության կենտրոն» հանդիսանալու նախկին դերի հանդեպ նոր կասկածների տեղիք տվեց: Նախքան հակամարտությունը Վրաստանը Արևմտյան անվտանգության քաղաքականության կիզակետ հանդիսանալու եզակի առավելություն ուներ: Սահակաշվիլու կառավարության համար Վրաստանի ապագան միանշանակ Արևմուտքի հետ էր՝ արտացոլելով այն ռազմավարական տեսլականը, որը ՆԱՏՕ-ին և Եվրոպական միությանն անդամակցությունը դիտարկում էր որպես հզորացող Ռուսաստանին սահմանակից առաջին գծի պետության արտաքին անվտանգության հիմնական երաշխիք:

Ավելին, ակնհայտ արևմտամետությունը դիտարկվում է որպես պետական ինքնիշխանության և ամբողջականության լուրջ քայքայվածությունը հաղթահարելու և դրան դիմակայելու ամենաարդյունավետ միջոց: Այս նոր կողմնորոշումը կարևոր անմիջական օգուտներ է ստեղծում՝ ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ ռազմական կապերը խորացնելուց սկսած մինչև կապիտալի և ներդրումների ներհոսք, քանի որ վրացական կառավարությունն ազատականացրել է էկոնոմիկան և նոր հակակոռուպցիոն արշավ նախաձեռնել:

Դեպի Արևմուտք այս հանդուգն կողմնորոշումը հնարավորություն ընձեռեց Վրաստանին, հիմնական տարանցիկ պետություն լինելու դերից բացի, հավակնել նաև Հարավային Կովկասում Արևմուտքի նոր «ձգողականության

կենտրոնի» դերին: Այս դերն ամենից ավելի ակնառու երևաց ԱՄՆ-ի կողմից իրականացվող $64 մլն արժողության «Վրաստան. վարժանք և սպառազինում ծրագրում» (ՎՎՍԾ) *(«Georgia Train and Equip Program» - GTEP)* և դրան հաջորդող «Օժանդակության և կայունության գործողությունների ծրագրում» (ՕԿԳԾ) *(«Sustainment and Stability Operations Program» - SSOP),* որոնցից յուրաքանչյուրը Վրաստանը դիտում էր որպես տարածաշրջանում ԱՄՆ ռազմական գործողությունների և շահերի դրոշակակրի (անգամ գերազանցվեցին ԱՄՆ-ի կողմից Կասպից ծովում Ադրբեջանի զինուժի հետ անցկացված վարժանքները): Սակայն այս ամենը նպաստեց նաև այն բանին, որ Վրաստանը չափից ավելի ինքնավստահ դառնա, չնայած այն իրողությանը, որ ԱՄՆ ռազմական ծրագրերից և ոչ մեկը երբևէ նպատակ չէր ունեցել Վրաստանի զինված ուժերին որևէ իրական ռազմական պատրաստականություն կամ հարձակողական կարողություն տրամադրել:

Այսինքն՝ վարժանքի և սպառազինման ծրագիրն իրականում նախագծված էր որպես ճկուն, փուլային ուսուցման նախաձեռնություն, և ընդամենը ուսուցում և հանդերձանք էր տրամադրել երեք հազարից պակաս զորքի՝ նպատակ ունենալով նրանց ապահովել սահմանափակ հակահաբեկչական կարողություններով: Նույն կերպ էլ ԱՄՆ-ի կողմից իրականացվող «Օժանդակության և կայունության գործողությունների ծրագիրը» ընդամենը նպատակ ուներ ընտրված վրացական միավորումները պատրաստել Իրաքում տեղակայելու համար, որպեսզի վերջիններս օգնեն ԱՄՆ «Իրաքի ազատագրման գործողության» (ԻԱԳ) իրականացմանը *(Operation Iraqi Freedom - OIF):*

Սակայն Վրաստանին ապավինելու նոր կասկածները խթանեցին նաև Հարավային Կովկասում տարածաշրջանային «նոր ձգողականության կենտրոն» գտնելու որոնումները: Վրացական ղեկավարության հանդեպ Արևմուտքի դժգոհությունները, թեև դրանց մի մասը սկսվել էր օգոստոսյան հակամարտությունից դեռևս շատ առաջ, գագաթնակետին հասան այն բանից հետո, երբ Վրաստանի ղեկավարներն անտեսեցին Արևմուտքի նախազգուշացումները և անհանգստությունն ու շարունակեցին հակադրվել Ռուսաստանին:

Չնայած Վրաստանի արևմտամետ կողմնորոշումը հայտարարվել էր Արևմուտքի հաջողություն, սակայն գոյություն ունեին որոշակի սահմաններ, թե, այնուամենայնիվ, հատկապես որքան հեռու և որքան արագ կարող է առաջ մղվել Վրաստանը: Այս սահմանները բխում էին ռուսական իշխանության հաստատուն պնդումներին և ազդեցությանը դիմադրելու Վրաստանի սահմանափակ հնարավորություններից, ինչը հատկապես ակնառու երևաց այն ժամանակ, երբ Մոսկվան, դժկամությամբ Վրաստանի տարածքից խորհրդային ժամանակաշրջանի ռազմակայանները դուրս բերելուց հետո, դիմեց էներգետիկ և առևտրային պատժամիջոցների կիրառմանը:

Սակայն Վրաստանի՝ ՆԱՏՕ և ԵՄ անդամ դառնալու հեռահար նպատակի երկրորդ էական սահմանափակումը Վրաստանի հանդեպ Արևմուտքի պարտավորությունների չափն ու շրջանակներն էին: Չնայած վրացական կառավարությանը խոսքերով սատարելու փաստին, Արևմուտքը երկար ժամանակ ձեռնպահ էր մնում Վրաստանի այն գործողությունները քաջալերելուց, որոնք Ռուսաստանի դեմ ուղղակի առճակատման կտանեին, և նույնիսկ առավել անհանգստացած էին Վրաստանի կողմից իր անջատողական շրջաններն ուժով գրավելու վտանգից:

3. Անօգնականության ուռճացում

Այս սահմանափակումների ֆոնին, հասկանալի է, Վրաստանի ղեկավարությունն օգոստոսյան ճգնաժամի նախօրեին լրջորեն սխալվել էր իր հաշվարկներում: Ամառվա ընթացքում մի շարք սադրանքներից հետո (հատուկենտ հրետանային և ականանետային հրետակոծություններ, վրացական անօդաչու ինքնաթիռների կործանում) Վրաստանի ղեկավարությունը զինված հարձակում սկսեց Հարավային Օսիայի անջատողական շրջանի դեմ: Չնայած հակամարտության սկզբի զարգացումներին վերաբերող ստույգ ժամանակագրական տեղեկությունները կասկածելի մնացին, սակայն արդարացի կլինի եզրակացնել, որ Վրաստանի ռազմական ստրատեգիան էականորեն սխալ էր ինչպես ռուսական հակահարվածի վերաբերյալ նախնական սխալ հաշվարկի, այնպես էլ սեփական ռազմական հնարավորությունները գերագնահատելու առումով:

Եվ որ ավելի կարևոր է, եթե Վրաստանի հարձակումը կարող էր արդյունավետ լինել Հարավային Օսիայի փոքրիկ թատերաբեմում, ապա այն ի սկզբանե ձախողման էր դատապարտված Ռուսաստանի ռազմական մեքենայի ողջ ուժին բախվելու պարագայում: Հակամարտության ընթացքում, երբ ռուսաստանյան զինուժը լայնածավալ հակահարված սկսեց ցամաքում, օդում և ջրում, Վրաստանի ղեկավարությունը մեծապես սխալվեց նաև Արևմուտքի կողմից Վրաստանին օժանդակելու համար որպես միջնորդ հանդես գալու կամ գործընթացներին միջամտելու կարողության և պարտավորությունների հարցում:

Եթե քաղաքական տեսանկյունից Հարավային Օսիայի դեմ դուրս գալու որոշումն արտացոլում էր նախագահ Սահակաշվիլու՝ երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու հետևողական սպառնալիքները, ապա ԱՄՆ ուսուցանած և սպառազինած վրացական զորքերի հարձակումն առաջին փորձությունն էր: Այս երկուսն էլ Արևմուտքի համար հին և վատթարագույն սցենարներ էին: Սակայն, առավել լայն առումով, Վրաստանի ոչ ճիշտ հաշվարկները ռազմավարական կոպիտ սխալի վերածողը Ռուսաստանն էր, որը հմտորեն կարողացավ հակամարտությունն օգտագործել որպես Վրաստանի արմատական արևմտամետ կողմնորոշումը ստուգելու և դրան մարտահրավեր նետելու միջոց:

Խորհրդային զորքերի Աֆղանստան ներխուժումից ի վեր Ռուսաստանի սահմաններից դուրս այս առաջին ռազմական գործողությանը ռուսական պատասխանը սրընթաց էր և անդիմակայելի: Ռուսաստանի համար Վրաստանի ռազմավարական կոպիտ սխալը առավել լայն հնարավորություն էր, քան Հարավային Օսիան, քանի որ ռուսական ուժերն արագ շարժվեցին երկրի երկրորդ անջատողական հանրապետությանը՝ Աբխազիային սատարելու և ուժեղացնելու ուղղությամբ: Գերազանց իրականացնելով Հարավային Օսիայի և Աբխազիայի ապահովման նպատակները՝ ռուսական ուժերը հետ մղեցին ու պարտության մատնեցին վրացական զինուժին և Վրաստանի տարածքում անվտանգության արտաքին գոտի ստեղծեցին:

Ռուսաստանի երկրորդ կարևորագույն նպատակը Վրաստանի հիմնական ռազմական կարողությունների ոչնչացումն էր՝ թիրախ դարձնելով որքան հնարավոր է շատ ռազմական սարքավորումներ, ռմբակոծելով վրացական ռազմական կարողություններն ու ռազմահանգրվանները, նույնիսկ նրանք, որոնք մարտական գործողություններում ներգրավված չէին: Երկրի ռազմական ենթակառուցվածքի հաջող ոչնչացումը, բացի Վրաստանի կողմից Աբխազիան և Հարավային Օսիան կորցնելը, ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցելու ռազմավարական ձգտման հետաձգման ամենանշանակալի պատճառը հանդիսացավ:

Վրացական զինված ուժերի քայքայման չափերը, ի հավելումն լուրջ քաղաքական կարծիքների, նոր ֆինանսական արգելք հանդիսացան ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցում: Առավել լայն առումով, հակամարտության հետևանքները նաև լուրջ հարցականի տակ դրեցին Վրաստանի՝ որպես տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների ապահով տարանցիկ երկրի, ինչպես նաև տարածաշրջանային «ձգողականության կենտրոն» լինելու դերն Արևմուտքի համար:

Հայաստանի համար Արևմուտքի նոր առաջապահի կամ «ձգողականության կենտրոնի» որոնման վտանգն այն է, որ առկա է Ադրբեջանի նկատմամբ նոր ուշադրության ավելացում: Ադրբեջանն Արևմուտքի անվտանգության շահերի տարածաշրջանային կենտրոն օգտագործելու այս նոր գնահատականը բխում է երեք հիմնական գործոններից: Առաջին. Իրանին սահմանակից լինելու փաստը շարունակում է գրավել Արևմուտքի ուշադրությունը, հատկապես այն պատճառով, որ Իրանի հետ գործ ունենալու հեռահար նպատակը կարող է որոշակի կետում ներառել ռազմական տարբերակ՝ Ադրբեջանը ցանկացած այսպիսի գործողությունների բեմահարթակ դարձնելով:

Երկրորդ. Արևմուտքի և Ռուսաստանի միջև նոր լարվածությունն առկա է Կասպից ծովում Ադրբեջանի ռազմածովային հնարավորությունները Կասպիական ավազանում օֆշորային էներգետիկ ռեսուրսների պլատֆորմների

ապահովության, Ռուսաստանի և Իրանի ռազմածովային ուժերին դիմակայելու կարողությունը խթանելու պատրվակով:

Երրորդ. առկա է նաև Արևմուտքի կողմից Ադրբեջանը որպես Կենտրոնական Ասիա տանող պլատֆորմ օգտագործելու շահագրգռվածությունը, ինչպես նաև Ադրբեջանի օդային տարածքը որպես Կենտրոնական Ասիայում տեղակայված արևմտյան բազաներին հասնելու օդային միջանցք օգտագործելու շարունակական հույսը, ինչը կենսական է Աֆղանստանում գործողություններ իրականացնելու համար. սա հատկապես կարևոր է Պակիստանը որպես Արևմուտքի ահաբեկչության դեմ գլոբալ պայքարի հիմնական գործընկեր կորցնելուց հետո:

4. Քարտեզի վերաձևավորում

Ռուս-վրացական պատերազմական գործողությունների հետևանքով առաջացած ավերածություններից զատ, օգոստոսյան ճգնաժամի ամենանշանակալի արդյունքը, մեծ հաշվով, տարածաշրջանի վրա ունեցած նրա ազդեցությունն էր: Վրացական ճգնաժամը Ռուսաստանին հնարավորություն ընձեռեց տարածաշրջանում իր իշխանությունը վերահաստատելու և դրա լծակներն օգտագործելու համար: Հնարավորություն, որն ըստ էության նպատակաուղղված էր Հարավային Կովկասի քարտեզը վերաձևավորելուն և տարածաշրջանի ռազմավարական լանդշաֆտի պարամետրերի վերագծմանը:

Ռուսական հեռանկարի տեսանկյունից, տարածաշրջանային նոր իրողությունը նշանավորվում է երեք որոշակի ձեռքբերումներով. առաջին, Հարավային Կովկասում ՆԱՏՕ ընդլայնման ավարտ առնվազն մոտակա ժամանակների համար: Երկրորդ, տարածաշրջանում Արևմուտքի խարսխի դեր կատարելու նկրտումների իրականացման՝ վրացական հնարավորությունների անկում: Եվ երրորդ, ընհանուր առմամբ Արևմուտքի հետ երևան է գալիս հակամարտության լուրջ ազդակ:

Հատկանշական է, որ Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը չի կարող կարևոր ձեռքբերում դիտարկվել, հատկապես ելնելով Ռուսաստանի այն ամուր դիրքորոշումից, թե այս քայլը ոչ մի կերպ չի կարող ենթադրել տարածաշրջանի մյուս «սառեցված» հակամարտության՝ հայաբնակ Լեռնային Ղարաբաղի անկլավի համանման ճանաչում: Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը վերջերս «բարեկամության համաձայնություն» է ստորագրել Աբխազիայի և Հարավային Օսիայի ղեկավարների հետ, որով պաշտոնական հիմքերի վրա է դրվել ռազմական, դիվանագիտական և տնտեսական համագործակցությունը և բառիս բուն իմաստով նոր ռուսական հենակայան է ստեղծվել Վրաստանում:

Ռուսաստանը կարողացավ վերահաստատել նաև Հարավային Կովկա-

սին հատուկ էներգետիկ անպաշտպանվածության կարծիքը՝ ի ցույց դնելով տարածաշրջանի խողովակաշարերի և նավահանգիստների խոցելիությունը և նոր կասկածներ հարուցելով Վրաստանի՝ որպես հիմնական տարանցիկ երկրի, վստահելիության շուրջ: Հետաքրքիր է, որ այս դասը նաև լուրջ անհանգստությունների պատճառ հանդիսացավ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի համար: Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա էներգետիկ շղթայի առումով թուրքերին և ադրբեջանցիներին զայրացրեց այն, որ, ըստ իրենց, Վրաստանի կոպիտ սխալն էր իրենց որպես թույլ և խոցելի ներկայացնելու պատճառը:

Էներգետիկ անապահովության գործոնը կրկին հարցեր հարուցեց ԱՄՆ երկարաժամկետ տարածաշրջանային էներգետիկ ռազմավարության կենսունակության վերաբերյալ, որի համաձայն՝ ԱՄՆ-ը ռուսական խողովակաշարերի ցանցը շրջանցող ուղիներ էր փնտրում՝ միևնույն ժամանակ մեկուսացնելով և բացառելով Իրանին: Իրականում, ճգնաժամի ժամանակ Վրաստանով անցնող խողովակաշարերի փակման հետևանքները հաղթահարելու նպատակով, Ադրբեջանը դիմեց իր նավթը Իրան արտահանելուն՝ օգտագործելով այսպես կոչված «սվափ» համաձայնագրերը, որոնց համաձայն՝ Իրանը նույն չափով նավթ արտահանեց Պարսկական ծոցի իր հզորությունների միջոցով:

5. ԱՄՆ հեռանկարները

Մոսկովյան գագաթաժողովում Ռուսաստանի նախաձեռնությամբ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը կարևոր զարգացում էր, որի հետևանքները շատ ավելի լայն էին, քան պարզապես Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման գործընթացի ամենավերջին փուլ լինելը: Վրաստանում օգոստոսյան հակամարտությունից ի վեր, Մոսկովյան գագաթաժողովը, Ռուսաստանի առաջին նախաձեռնությունն էր, որը ոչ միայն տարածաշրջանում Մոսկվայի կրկին ամրապնդված դիրքի ցուցադրումն էր, այլև կապված էր Ռուսաստանի առավել հեռահար ռազմավարության հետ, որով նա ձգտում է իրեն հարմարեցնել Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային ուժ, թուլացած դիրքերը վերահաստատելու նոր ձգտումը:

Այս համատեքստում, Ռուսաստանը նաև ջանասիրաբար փորձում է Արևմուտքին կրկին համոզել, որ չնայած Վրաստանի պարագայում լարվածության և Ռուսաստանի կողմից անջատողական Աբխազիայի և Հարավային Օսիայի շրջանների ճանաչմանը, Ռուսաստանը կարող է «օգտակար» գործընկեր հանդիսանալ Լեռնային Ղարաբաղում, շրջան, որը հաստատուն կերպով մնում է «սառած հակամարտության» կարգավիճակում:

Սակայն Ռուսաստանի դիվանագիտական օրակարգում ավելի քան շատ բան է նախատեսված, ինչպես երևաց երկրի պաշտպանության նախարարի վերջերս Հայաստան կատարած գաղտնի այցելությունից: Այս այցելության

ժամանակ, որը նախորդեց Ռուսաստանի նախագահի այցին, Մոսկվան բացահայտեց իր առավել հանդուգն առաջարկը, այն է՝ ռուսական խաղաղապահներին տեղակայել Լեռնային Ղարաբաղում: Քայլ, որը ոչ միայն կամրապնդի ռուսական լծակները, այլ նաև նախատեսում է Ռուսաստանի հետագա մուտքը Հարավային Կովկաս՝ որպես գլխավոր դերակատար:

Սակայն, չնայած ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում առկա լարվածությանը, Մոսկվան և Վաշինգտոնը հակված են ԵԱՀԿ Մինսկի խմբին թողնել որպես հակամարտության միջնորդական գործընթացի հիմնական և ամենակարևոր մեխանիզմ: Իրականում և՛ Ռուսաստանը, և՛ ԱՄՆ-ը չեն ցանկանում Ղարաբաղյան հակամարտության հարցում իրենց համագործակցությունը դադարեցնել, քանի որ Մոսկվայի համար «ստատուս քվոն» նախընտրելի է և ամրապնդում է Ռուսաստանի դիրքերը, մինչդեռ Վաշինգտոնի համար գործընթացը կարևորվում է Ղարաբաղի դեմ պատերազմը վերսկսելու Ադրբեջանի ցանկացած գայթակղությունը կանխարգելելու առումով:

Եվ չնայած հոկտեմբերի սկզբներին նախագահ Սարգսյանի և արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանի հետ հանդիպման համար Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի Երևան ժամանելուց հետո «Ռոսիյսկայա գազետան» հոկտեմբերի 7-ի համարում նշեց, որ երեք համանախագահները հակամարտության կարգավորման «բավական իրական հնարավորություն են» տեսնում, ենթադրելով, որ կարելի է համաձայնության հասնել դեռևս չլուծված «երկու կամ երեք» հարցերի շուրջ, այնուամենայնիվ, Ադրբեջանը դեռևս մնում է ցանկացած խաղաղ համաձայնության հիմնական խոչընդոտ: Ադրբեջանն իրեն տարածաշրջանի ապագա ռազմական ուժ է համարում, որն իրականություն կդառնա մոտավորապես 8-10 տարի անց: Բաքուն զգում է, որ ներկայումս լավագույն տարբերակը խաղաղության գործընթացը հետաձգելն է, մինչև առավել ուժեղ դիրքերում կլինի:

Ադրբեջանի դիրքորոշումը հաստատեց նախագահ Իլհամ Ալիևը, որը հռխորտաց, որ իր երկիրը երբեք չի համակերպվի Լեռնային Ղարաբաղի կորստի հետ, սակայն երկրորդ անգամ նախագահական պաշտոնում ընտրվելուց և երդում տալուց կարճ ժամանակ անց դադարեցրեց շրջանը ուժով հետ գրավելու սպառնալիքները: Լրատվական գործակալությունները ներկայացնում են, որ Բաքվում իր երդմնակալության արարողության ժամանակ նա ասել է. «Ղարաբաղը երբեք անկախ չի լինի»: «Ադրբեջանը երբեք չի ճանաչի այն: Ոչ հի՛նգ, ոչ տա՛սը, ոչ քսա՛ն տարի անց: Երբե՛ք»: Սակայն Ալիևն ասել է. «Մենք դեռ հետաքրքրված ենք բանակցությունները շարունակելու մեջ, և մեր հույսերը դեռ չեն մարել» և սպառնացել է, որ Հայաստանը և Ղարաբաղը «իրականում պետք է զիջումների գնան: Իսկ իրականությունն այն է, որ այսօր դժվար է, ես կասեի՝ անհնար է մրցել Ադրբեջանի հետ»:

Հոկտեմբերի 17-ին Երևան կատարած այցի ժամանակ ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդն ասաց, որ մոտակա շաբաթների ընթացքում հակամարտության լուծման գործընթացում «հնարավոր է» առաջխաղացում՝ նշելով, որ «Վրաստանի պատերազմն այս տարածաշրջանում բոլորին հիշեցրեց թե ինչ արհավիրք է պատերազմը», սակայն ավելացրեց, որ «հնարավոր՝ չի նշանակում անխուսափելի, և որ երկու կողմերն էլ պետք է դժվար որոշումներ ընդունեն: Եթե այս հակամարտությունը հեշտ լուծում ունենար, արդեն լուծված կլիներ»:

Սեպտեմբերի 17-ին Երևանում իր մեկնաբանությունների ժամանակ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասյեն ասաց, որ քանի որ Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի 12 անդամներից մեկն է, «Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված նրա ջանքերը բանակցությունների ձևաչափում որևէ փոփոխություն չեն ենթադրում»: Նա ասաց, որ Թուրքիան «միշտ կառուցողական մոտեցում է ցուցաբերել երեք համանախագահների գործողություններին աջակցելիս» և որ «բանակցություններին օժանդակելու նպատակով արված ցանկացած առաջարկություն, հատկապես Թուրքիայի կողմից, ցանկալի է և ողջունելի»: Սակայն առանց Հայաստանի հետ փակ սահմանը բացելու թուրքական կողմի ցանկության, Ղարաբաղյան հակամարտության մեջ Թուրքիայի ցանկացած դերակատարում անօգուտ կլինի և նույնիսկ կարող է հետ գցել խաղաղասիրական բանակցային գործընթացը:

6. Հիմնական միտումների ամրապնդումը

Վրացական ճգնաժամի ազդեցությունը նաև կարագացնի տարածաշրջանում արդեն իսկ ընթացող որոշ միտումներ: Դրանցից մեկը, որը վերաբերում էր Ռուսաստան-Ադրբեջան կապերի բարելավմանը, ակնհայտ դարձավ 2008թ. հուլիսին, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի Բաքու կատարած այցելության ժամանակ, որը նշանավորվեց Ադրբեջանից զգալի ծավալով բնական գազ գնելու Ռուսաստանի ծրագրի շուրջ բանակցությունների նոր առաջընթացով:

Մինչ ադրբեջանական էներգետիկան առաջնորդվում է ԱՄՆ-ի կողմից օժանդակվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նավթագազատար խողովակաշարերի հիմնական բաղադրիչ լինելու առաջնային դերով, Ռուսաստանը ձգտում է զարգացնել ու առաջ քաշել Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարը՝ խաղալով Ադրբեջանի կողմից վրացական ուղիների վրա հիմնվելու կանխազգացումների վրա և խոստանալով գնել Ադրբեջանի օրըստօրե ավելացող գազը, որի ծավալները վերջին երկու տարիների ընթացքում համարյա կրկնապատկվել են՝ հասնելով տարեկան 10.3 մլրդ մ^3-ի:

Ի հավելումն, Ադրբեջանի համար նպաստավոր են նաև Ռուսաստանի

հետ բարելավված հարաբերությունները, որոնք ավանդաբար հետևում են Ադրբեջանի հիմնական հակառակորդ Հայաստանին աջակցող քաղաքականություններին և որոնք կարող են թուլացնել Հայաստանի դիրքերը Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտության խնդրում: Ադրբեջանը կշահի նաև հոկտեմբերին նշանակված նախագահական ընտրություններից, որոնց ժամանակ ավելի թույլ միջազգային հսկողություն կիրականացվի դրանց ցածր ժողովրդավարական մակարդակի նկատմամբ՝ ելնելով վրացական ճգնաժամի հետևանքներից, որոնք միտված են մեղմելու ընտրական գործընթացների անցյալ չափորոշիչները:

Չնայած վրացական հակամարտության հետևանքների ակնհայտ աշխարհաքաղաքական համատեքստին, դրանք քիչ կապ ունեն տարածաշրջանային ընդհանուր անվտանգության կամ նույնիսկ էներգետիկ գործոնների հետ: Ամենատարածված կարծիքն այն էր, որ տեղական քաղաքականությունները և տնտեսական հարցերը շատ ավելի կարևոր են, քան աշխարհաքաղաքականությունը: Շատ առումներով վրացական հակամարտությունը տեղական քաղաքականություններում արտահայտվում է այնքան, որքան և տարածաշրջանային աշխարհաքաղաքականության մեջ: Ինչպես, օրինակ, Հարավային Օսիայի հարցի ռազմական լուծման վերաբերյալ Վրաստանի ղեկավարության որոշումը, Վրաստանի կողմից սեփական ռազմական հնարավորությունների գերագնահատումը, ինչպես նաև Արևմուտքի կարողությունների ու ցանկության հարցի սխալ ընկալումը Վրաստանի ներքին որոշումներն էին:

7. Թուրք-հայկական հարաբերությունները

Երկրորդ ուղղությունը, որի վրա ազդեց վրացական ճգնաժամը, թուրք-հայկական հարաբերությունների նոր գործընթացն էր, որը նշանավորվեց պատմության մեջ առաջին անգամ Թուրքիայի ղեկավարի Հայաստան կատարած այցով: Շվեյցարիայում հայ և թուրք պաշտոնատար անձանց միջև ամիսներ տևած գաղտնի բանակցություններից հետո, թվում էր, թե երկու կողմերն էլ կարծես պատրաստ էին դիվանագիտական հարաբերություններն ընդլայնելու և սահմանները բացելու Թուրքիայի երկարատև մերժումներից հետո պայմանականորեն բաց բանակցություններ սկսել: Սակայն վրացական հակամարտությունն էր, որ արագացրեց բանակցությունները՝ դրանց ավելացնելով առնվազն հայ-թուրքական փակ սահմանները բացելու շարժառիթը և երկու պետություններին էլ, որպես վրացականի երկընտրանք, առաջարկելով հնարավորինս կարևոր նոր տնտեսական և առևտրային ճանապարհի հնարավորություն: Վրացական գործոնից զատ, Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունները սկսելու գործընթացն արագացնելու մեկ այլ կարևոր հանգամանք էր նաև Ռուսաստանի օժանդակությունը:

Մասնավորապես, ռուսական քաղաքականությունը երկար ժամանակ հակադրվում էր Հայաստանի և Թուրքիայի փոխհարաբերություններում որևէ նշանակալի բարելավման հնարավորություններին, միևնույն ժամանակ փակ սահմանը դիտարկվում էր որպես Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցության պահպանման օգտակար միջոց: Այս փաստն ապացուցում է Հայաստանում Ռուսաստանի ռազմակայանների և Հայաստանի սահմաններում ռուս սահմանապահների շարունակվող ներկայությունը: Սակայն ռուսական քաղաքականությունն էականորեն փոխվեց օգոստոսյան ճգնաժամի զարթոնքի ժամանակ, երբ հայ-թուրքական հնարավոր հարաբերությունների հաստատումը միայն նպաստեց Վրաստանի առավել ամբողջական մեկուսացման, մարգինալացման և շրջափակման՝ Ռուսաստանի քաղաքականությանը: Սակայն Ռուսաստանը կշարունակի օժանդակել այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացումները նրա հսկողության տակ կմնան:

Ինչևէ, Ռուսաստանն այս հարցում նաև հավելյալ շահեր ունի, ինչպես, օրինակ, Ռուսաստանին պատկանող հայաստանյան էլեկտրացանցերի էլեկտրաէներգիան Արևելյան Թուրքիային վաճառելը: Մոսկվան նաև դիվանագիտական օգուտ է հետապնդում, որը նրանք կխլեն ամերիկացիներից, քանի որ Հայաստանի նախագահը հրապարակավ Հայաստան հրավիրեց Թուրքիայի իր գործընկերոջը, երբ պաշտոնական այցով գտնվում էր Մոսկվայում, և այդ գործընթացն անմիջականորեն համաձայնեցված էր ռուսական պաշտոնյաների հետ:

Թուրքիայի համար, որը երբեք չի հաշտվել Հարավային Կովկասում և Միջին Ասիայում իր իշխանության և ազդեցության նվազման հետ, ինչը չի համապատասխանել նրա տեսլականին և ձգտումներին, վրացական հակամարտությունը նոր դիվանագիտական նախաձեռնություններ հուշեց: Այսպես կոչված «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմը» նախաձեռնություն է, որը նպատակ ունի ստեղծել հակամարտությունների կանխարգելման, բազմակողմանի անվտանգության և տարածաշրջանային կայունության նոր համատեղ ձեռնարկում, որը հետապնդում է նաև Կասպիական ավազանից Եվրոպա տանող էներգետիկ ռեսուրսների արտահանման ներկայումս խոցելի ուղիների անվտանգությունն ապահովելու նպատակ:

Կայունության և անվտանգության մասին ընդհանուր սկզբունքները կրկնելուց բացի, որոնք, մասնավորապես, ոչ նոր են, ոչ էլ նորարարություն, էներգետիկ հրամայականը նախաձեռնության բանալի է հանդիսանում, քանի որ Վրաստանում տեղի ունեցած թշնամական գործողությունների վերջին բռնկումները նոր կասկածներ հարուցեցին ոչ միայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և

Բաքու-Սուփսա խողովակաշարերի կենսունակության, այլ նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի և ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կողմից օժանդակվող «Նաբուկո» գազատարի նախագծի նկատմամբ: Վերջինս նախատեսում է, 2020թ. գործարկվելուց հետո, լրացուցիչ 31 մլրդ մ^3 բնական գազ մատակարարել Եվրոպա:

8. ԱՄՆ նոր կառավարության ներգրավվածությունը

Սենատոր Բարաք Օբամայի Ամերիկայի նոր նախագահ ընտրվելու հետ կապված՝ ակնկալիքներ կան, որ նա պաշտոնապես կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Սակայն իրականում պաշտոնական ճանաչումը քիչ հավանական է երկու հիմնական պատճառով:

Առաջին. չնայած նախագահական ընտրարշավի ողջ ընթացքում նախագահ ընտրված, բայց դեռևս նախագահական պաշտոնը չստանձնած Օբաման շարունակաբար արտահայտվում էր Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մտադրության մասին, սակայն թեկնածուի կարգավիճակում արած նրա հայտարարություններն անպայմանորեն չեն համապատասխանելու նրա պաշտոնական քաղաքականությանը, երբ Օբաման 2009թ. հունվարին ստանձնի նախագահի պաշտոնը: Պաշտոնն ստանձնելուց հետո նախագահ Օբաման, առավել հավանական է, կխուսափի ցեղասպանությունը ճանաչելուց՝ որոշելով, որ ԱՄՆ ազգային անվտանգության շահերից բխող ԱՄՆ-Թուրքիա փոխհարաբերությունների բարելավման անհրաժեշտությունն առավել կարևոր է ԱՄՆ արտաքին քաղաքականության համար:

Երկրորդ. նախագահ ընտրված, բայց դեռևս նախագահական պաշտոնը չստանձնած Օբաման չի ճանաչի Հայոց ցեղասպանությունն այն պատճառով, որ նրա վարելիք արտաքին քաղաքականության համար առաջնային կլինի ԱՄՆ հիմնական դաշնակիցների, ներառյալ Թուրքիայի հետ հարաբերություններում վստահության վերականգնումը և փոխհարաբերությունների ամրապնդումը: Բացի այդ, Օբամայի կառավարությունը գիտակցում է, որ Իրաքին վերաբերող ցանկացած ծրագիր կամ քաղաքականություն կենթադրի, որ ԱՄՆ-ը ավելի, քան երբևէ մոտ փոխհարաբերությունների կարիք է ունենալու Թուրքիայի հետ: Այսպիսով, չնայած Օբամայի նախագահ ընտրվելը ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ կտրուկ փոփոխությունների կհանգեցնի, ինչը ենթադրում է ԱՄՆ արտաքին քաղաքականության բոլոր բնագավառների լայնածավալ վերանայում, սակայն հավանական չէ, որ այս փոփոխությունները վերաբերեն Հայոց ցեղասպանությանը:

Նման զարգացումը Հայաստանի համար անպայման չէ, որ վատ կամ վնասակար լինի, քանի որ Օբամայի կառավարությունն ուղղակի կարող է հարցը փոխանցել ԱՄՆ Կոնգրես, և նույնիսկ կարող է օգնել՝ օժանդակելով Հայոց ցեղասպանությունը Կոնգրեսի կողմից ճանաչելուն:

Ավելին, Օբամայի՝ Հարավային Կովկասին վերաբերող քաղաքականությունը պետք է նաև հաշվի առնի Ռուսաստանի իշխանության և ազդեցության վերջերս տեղի ունեցած վերահաստատման փաստը, միտում, որը միայն ամրապնդվեց Վրաստանի օգոստոսյան հակամարտության հետևանքով: Իսկ առավել նեղ հեռանկարի առումով, կարող ենք նաև տեսնել Հայաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության մոդիֆիկացիա, որն ավելի շատ հիմնված է ներքին քաղաքական և տնտեսական հարցերի, քան առավել լայն աշխարհաքաղաքական համատեքստի վրա: Մասնավորապես, Օբամայի ապագա կառավարությունը հավանաբար Հայաստանին վերաբերող նոր քաղաքականություն կընդունի, որը նոր մարտահրավեր կառաջադրի Հայաստանի առավել հարձակողական տրամադրված ռազմական պատրաստվածություն ունեցող ղեկավարությանը, որը նույնպես լրջորեն կաշկանդված է իրական ժողովրդավարական բարեփոխումներ ձեռնարկելու և իրավունքի գերակայություն հաստատելու լեգիտիմության պակասով:

Ընտրությունների ավարտին զուգընթաց՝ ԱՄՆ-ի համար նոր հրամայական է դարձել այն, որ ԱՄՆ-ը այլևս չի կարող լռել կամ երկյուղել Հայաստանի կամ նույնիսկ Ադրբեջանի նման երկրների ժողովրդավարության անընդունելի պակասից, հատկապես այն պատճառով, որ այս երկրներում շարունակական կայունություն տանող իսկական բանալին ընկած է նրանց ղեկավարներին իրենց սեփական ժողովրդի առջև ավելի շատ հաշվետու պահելու և միջազգային չափորոշիչներին ու նորմերին համապատասխանելու հիմքում: Եվ չնայած ընտրված, բայց դեռևս նախագահական պաշտոնը չստանձնած Օբաման միայն 2009թ. հունվարին է անցնելու պաշտոնավարության, սակայն ժողովրդավարական փոփոխությունների պահանջը և Հայաստանի «իշխանության գոռոզամտության» դեմ պայքարելու հրամայականը վաղուց արդեն անհրաժեշտ է:

9. Հայաստանի ազգային անվտանգության սցենարներ և խորհուրդներ

Սցենար 1. հայ-թուրքական դիվանագիտական առաջընթա՞ց

Հայաստանի ազգային անվտանգության քննարկվող սցենարներից առաջինը Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների նոր գործընթացի մարտահրավերն է: Թուրքիայի նախագահի պատմական այցը Հայաստան նշանավորվեց Հայաստան-Թուրքիա հարաբերություններում կարևոր շրջադարձային կետով: Ակնհայտ է, որ Թուրքիայի նախագահ Գյուլի՝ որպես ընդհանրապես թուրքական պետության ղեկավարի, առաջին այցը Հայաստան

կարևոր քայլ էր հայկական դիվանագիտության և արտաքին քաղաքականության համար: Սակայն այցելության սկզբից ևեթ հարց էր մնում, թե ինչո՞ւ:

Այցի ժամանակը և հայ-թուրքական հարաբերություններում անսպասելի ձեռքբերումը բխում է երկու կարևոր գործոններից: Առաջին. արտացոլում է այն փաստը, որ ներկայումս Թուրքիան պայքարում է իր ամենախոր և քայքայիչ փոփոխության՝ իր ազգային ինքնության դոկտրինի հիմնավոր վերանայման դեմ, որն առաջ է եկել ներքին բարեփոխումների և արտաքին մարտահրավերների համակցության հետևանքով: Իսկ բոլորովին վերջերս տեղի է ունեցել հավասարապես նշանակալի ռազմավարական վերակողմնորոշում, որը վերաբերում է առավել լայն միջազգային համատեքստում Թուրքիայի տարածաշրջանային դերին և նրա ապագա դիրքին:

Հայ-թուրքական հարաբերություններում ժամանակային առումով երկրորդ կարևոր գործոնն արմատավորված է տարածաշրջանային լանդշաֆտի նոր փոփոխությունների մեջ: Մասնավորապես, Շվեյցարիայում հայ և թուրք պաշտոնատար անձանց միջև մի քանի ամիս տևած զգուշավոր դիվանագիտական հարաբերությունների և գաղտնի բանակցությունների սկզբում Գյուլի այցը Հայաստան հանդես եկավ որպես Թուրքիայի առավել ընդարձակ դիվանագիտական նախաձեռնության անբաժանելի մաս, որը տարածաշրջանում առավել մեծ կայունության էր ձգտում: Այս համատեքստում, վրաստանյան վերջին հակամարտությունը, որը ոչ միայն մատնանշեց Հարավային Կովկասում իրական անվտանգության և կայունության անհրաժեշտությունը, այլ նաև հաստատեց տարածաշրջանում թուրքական քաղաքականության սահմանները, ընդամենը Թուրքիայի այս նախաձեռնությունն արագացնելու խթան հանդիսացավ:

Սակայն բանակցություններն արագացնող հիմնական պատճառը վրացական հակամարտությունն էր՝ գումարած առնվազն հայ-թուրքական փակ սահմանները բացելու շարժառիթը և երկու պետություններին, որպես վրացականի երկընտրանք, հնարավորինս կարևոր նոր տնտեսական և առևտրային ճանապարհի հնարավորության առաջարկը: Վրացական գործոնից զատ, Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ սկսելու գործընթացն արագացնելու մեկ այլ կարևոր հանգամանք էր նաև Ռուսաստանի օժանդակությունը:

Մասնավորապես, ռուսական քաղաքականությունը երկար ժամանակ հակադրվում էր Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններում նշանակալի բարելավման հնարավորություններին, միևնույն ժամանակ փակ սահմանը դիտարկվում էր որպես Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցության պահպանման շահեկան միջոց: Այս փաստի ապացույց են հանդիսանում Ռուսաստանի ռազմակայանների ներկայությունը Հայաստանում, ինչպես

նաև Հայաստանի սահմաններում ռուս սահմանապահների պարեկությունը, Հայաստանի տնտեսության մեջ Ռուսաստանի տնտեսական գերակշիռ դերը: Սակայն ռուսական քաղաքականությունն էականորեն փոխվեց օգոստոսյան ճգնաժամի ժամանակ, երբ հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր հաստատումը միայն նպաստեց Վրաստանն առավել ամբողջականորեն մեկուսացնելու, մարգինալացնելու և շրջափակելու Ռուսաստանի քաղաքականությանը: Սակայն Ռուսաստանը կշարունակի օժանդակել այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացումներն իր հսկողության տակ կմնան:

Ռուսաստանը նաև լրացուցիչ օգուտներ ունի այս հարցում, ինչպես, օրինակ, իրեն պատկանող հայաստանյան էլեկտրացանցերի արտադրանքն Արևելյան Թուրքիային վաճառելու հնարավորությունը: Մոսկվայի համար առկա է նաև դիվանագիտական շահը, որը նրանք կխլեն ամերիկացիներից, քանի որ Հայաստանի նախագահը հրապարակավ Հայաստան հրավիրեց Թուրքիայի իր գործընկերոջը, երբ պաշտոնական այցով գտնվում էր Մոսկվայում, և դա անմիջականորեն համաձայնեցված էր ռուսական պաշտոնյաների հետ: Թուրքիայի համար, որը երբեք չի հաշտվել Հարավային Կովկասում և Միջին Ասիայում իր իշխանության և ազդեցության նվազման հետ, ինչը չի համապատասխանել նրա տեսլականին և ձգտումներին, վրացական հակամարտությունը նոր դիվանագիտական նախաձեռնություններ հուշեց: Այսպես կոչված «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմը» նպատակ ունի ստեղծել հակամարտությունների կանխարգելման, բազմակողմանի անվտանգության և տարածաշրջանային կայունության նոր համատեղ ձեռնարկում, որը նաև էներգետիկ ռեսուրսների արտահանման ուղիների անվտանգությունն ապահովելու նպատակ է հետապնդում:

Սակայն մինչ Թուրքիայի այս նախաձեռնությունը Հայաստանի հետ հարաբերություններում նոր նվաճում է պարունակում, որը ներառում է սահմանի բացում և նոր հարաբերությունների հաստատման փորձ, այն նաև ներգրավվածության առավել լայն նպատակներ է հետապնդում, որոնցում Թուրքիան տարածաշրջանի առաջատարի դերում է: Ելնելով այս հեռանկարից՝ Թուրքիան այսօր Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը դիտարկում է որպես տարածաշրջանային կայունության հիմնական գործոն: Սակայն Ղարաբաղի հարցում Թուրքիայի ռազմավարական տեսակետում չափազանց կարևոր տարբերություն կա: Մասնավորապես, Թուրքիան արդեն չի ձգտում պարզապես Ադրբեջանին օժանդակել Հայաստանի նկատմամբ ճնշում գործադրելով:

Իրականում Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների նոր գործընթացը, որը ձգվում է գաղտնի բանակցություններից մինչև Թուրքիայի

նախագահի բարձր մակարդակի այցելությունը Երևան, փաստորեն արտացոլում է թուրքական քաղաքականության մեջ տեղի ունեցած նշանակալի փոփոխությունը, որը տարբերվում է Ադրբեջանի նկատմամբ նրա ավանդական սերտ օժանդակությունից: Սա բավական պարզորոշ երևաց Հայաստանին Թուրքիայի ընդառաջ շարժվելուն և առավել բաց շփումներ նախաձեռնելուն Ադրբեջանի ղեկավարների ակնհայտ բացասական հակազդեցությունից, քանի որ ներկայումս Ադրբեջանի ղեկավարությունը լրջորեն անհանգստացած և վրդովված է: Ադրբեջանական ղեկավարությունը մտահոգ է, որ Հայաստանի հետ Թուրքիայի նորմալ հարաբերությունների և փակ սահմանների բացման հնարավորությունը կթուլացնի իրենց դիրքերը Լեռնային Ղարաբաղի հարցում:

Սակայն, առավել հետաքրքրական է այն փաստը, որ Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների նոր գործընթացը թուլացնում է նաև հենց իր՝ Թուրքիայի դիրքերը Ղարաբաղյան հարցում: Օրինակ, կարելի է վիճել, որ Հայաստանի հետ հարաբերություններ կառուցելու Թուրքիայի քայլը կարող է նրան առավել ուժեղ լծակներ տրամադրել Ղարաբաղի հարցում, սակայն իրականում այդ քայլն արդեն իսկ լրջորեն թուլացրել և քայքայել է նրա հարաբերություններն Ադրբեջանի հետ:

Հայաստանի մասնակցություն. հետո՞ ինչ. Չնայած նախորդ նախաձեռնությունների սակավությանը, հարաբերությունների նույնիսկ ամենատարրական և սկզբնական ձևերից ակնկալվող հնարավոր օգուտներն ակնհայտ են յուրաքանչյուր երկրի համար: Սակայն կարող ենք հարցնել՝ «հետո՞ ինչ»: Թուրքիայի համար Հայաստանի հետ փակ սահմանների բացումը նոր ռազմավարական հնարավորություն կընձեռի երկրի աղքատ արևելյան շրջաններում տնտեսական գործունեությունը խթանելու համար, ինչը կարող է էական դեր խաղալ արդեն իսկ անհանգիստ քրդաբնակ արևելյան շրջանների տնտեսական կայունացման համար՝ դրանով իսկ բավարարելով ազգային անվտանգության կարևորագույն հրամայականը՝ տնտեսական հնարավորություններով քրդական ահաբեկչության և անջատողականության հիմնական պատճառներին հակադրվելու հնարավորությունը:

Թուրքիայի հետ բաց սահմանը ևս Հայաստանին ոչ միայն իր տարածաշրջանային մեկուսացումը և մարգինալացումը հաղթահարելու ճանապարհ կառաջարկի, այլ նաև դեպի առավել մեծ շուկաներ տանող կամուրջ կտրամադրի, որոնք կենսական են տնտեսական աճի ու զարգացման համար: Ի հավելումն, հայ-թուրքական սահմանի բացման հետևանքով հնարավոր առևտրային և տնտեսական գործունեության աճը կնպաստի երկու երկրների միջև հետագա առևտրային կապերի խորացմանը, որն իր հերթին կտանի դեպի առավել պաշտոնական համագործակցության հաստատում մաքսային և սահմանային

անվտանգության հիմնական ոլորտներում: Իսկ փոխադարձ առևտրային կապերի և միջսահմանային համագործակցության այսպիսի խորացմանը, անկասկած, կհետևի դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:

Այսպիսով, հայ-թուրքական փակ սահմանի բացումը ոչ միայն կարող է բերել առևտրային կապերի և տնտեսական հարաբերությունների խթանման էական հաջողություն, այլ նաև նպաստել հակամարտությունների հակվածություն ունեցող Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանում առավել մեծ կայունության և անվտանգության խթանմանը: Օգոստոսից ի վեր, չնայած Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև ակնհայտ լարվածությանը, որն առավել սրվեց և ակնհայտ դարձավ վրաստանյան ճգնաժամի ժամանակ, Վաշինգտոնը և Մոսկվան ոչ միայն կողմնակից էին ԵԱՀԿ Մինսկի խմբում համատեղ աշխատելուն, այլ նաև համատեղ քայլեր ձեռնարկեցին, որպեսզի կանխեն Ղարաբաղյան «սառեցված» հակամարտության նոր «բորբոքումը» և «թեժացումը», քանի որ երկուսն էլ հավասարապես անհանգստացած են Ադրբեջանի կողմից Ղարաբաղի դեմ թշնամական գործողությունների վերսկսումից և նոր պատերազմի սպառնալիքից:

Մինսկի խումբը որևէ այլ ակնհայտ կենսունակ երկընտրանք չունի: Սակայն խաղաղարար գործընթացին պակասող կարևորագույն գործոններից մեկն այն է, որ Ղարաբաղը բանակցային սեղանի շուրջ տեղ չունի: Խաղաղարար գործընթացի հաջողության իրական բանալին Ռուսաստանի, ԱՄՆ և, իհարկե, Թուրքիայի ներգրավվածությունը չէ: Խաղաղարար գործընթացի առաջընթացի իրական բանալին դրանում Ղարաբաղի ժողովրդավարական ճանապարհով ընտրված ղեկավարության՝ որպես հավասար կողմի, ներգրավումն է, ինչպես նաև Ստեփանակերտին բանակցությունների սեղանի շուրջ հավասար տեղ հատկացնելը: Ղարաբաղը չափազանց երկար ժամանակ է զրկված Երևանի և Բաքվի հետ հավասար կարգավիճակից: Այժմ, արդեն Վրաստանում քաղած դասերից ելնելով, ժամանակն է Ղարաբաղը մասնակից դարձնել խաղաղարար գործընթացին:

Նոր քաղաքական համատեքստ. ապագայի հեռանկարնե՞ր. Առավել լայն համատեքստում, թուրք-հայկական հարաբերություններում գրանցված հաջողություններից բխող հնարավորությունները հին խնդրի նոր սկիզբ են առաջարկում, ինչը բնորոշվում է արտաքին քաղաքականության հաջողությունից բխող խոստումով և լեգիտիմության պակասից բխող ճնշումով, ինչպես նաև ներկայումս առկա կարգին նետվող նոր մարտահրավերով, որը, ըստ էության, մարտահրավերներ է նետում Հայաստանի ներքին «շահագրգռված շրջաններին»: Հայկական քաղաքականության համար, որը ներկայումս աչքի է ընկնում կլանների վրա հիմնված էլիտայով և բնորոշվում «իշխանության գոռոզա-

մտությամբ», նոր հնարավորություն է ընձեռվում այս անցումային կետն օգտագործել փակ քաղաքական և տնտեսական համակարգերի էլ ավելի ամբողջական բարեփոխման համար: Երկար ժամանակ փակ սահմանի բացման հնարավորությունը մասնավորապես սպառնալիք կհանդիսանա փակ տնտեսական համակարգի համար: Սպառնալիքը կզգացվի նաև երկրի նոր, կլանների վրա հիմնված և վերջին տարիներին զգալի քաղաքական իշխանություն ձեռք բերած օլիգարխիական էլիտայի շրջանում:

Թեև ոչ այնքան ակնհայտորեն տեսանելի, ինչպես իշխող էլիտան է, այսպես կոչված «օլիգարխների» նոր և հարուստ քաղաքական ընտրանուն հաջողվել է էական քաղաքական իշխանություն ապահովել: Նրանց պատգամավոր ընտրվելու փաստը ցույց տվեց կորպորատիվ, պետական, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ քրեական շահերի համընկնումը: Ի հավելումն պետական քաղաքականության ձևակերպման և պետական քաղաքականության ուղղվածության զգալի լծակների ուղղությամբ ձեռք բերած լուրջ ազդեցության, այս նոր օլիգարխիական էլիտան եկել է մարմնավորելու գործող իշխանության և կառավարելու պատասխանատվության միջև առկա տարբերությունը:

Նախկին խորհրդային տնտեսական այլ համակարգերում օլիգարխների այս նոր դասակարգը ձգտում էր տնտեսական իշխանության հասնելու նպատակով նախ և առաջ օգտագործել սեփականաշնորհման գործընթացը, սակայն հետագայում նաև քաղաքական իշխանության հասնելու ախորժակ էր ցուցաբերել: Հենց այդ քաղաքական դերն է, որ ըստ էության սպառնում է ժողովրդավարական և քաղաքական բարեփոխումների գործընթացին: Հայաստանում օլիգարխները կարողացան իրենց քաղաքական իշխանության ոչ պաշտոնական ցանցերն ընդլայնել ոչ պաշտոնական կարտելների և ապրանքային կիսամոնոպոլիաների միջոցով, և այսօր հսկայական տնտեսական և քաղաքական իշխանություն են ձեռք բերել:

Օլիգարխների իշխանությունը հաղթահարելու բանալին օլիգարխիական համակարգը կազմող տնտեսական մոնոպոլիաներին և կարտելներին առավել մեծ մրցակցություն առաջարկելն է, ինչպես նաև օրենքի վրա հիմնված հարկադրանքը, կանոնակարգումը և հսկողությունը: Այսպիսի կարտելները և մոնոպոլիաները հիմնականում ծաղկում են «փակ» տնտեսական համակարգերում՝ շրջանցելով թափանցիկությունը և մրցակցությունը, որոնք գերակշռում են առավել բաց շուկաներում: Սակայն, ի հավելումն առավել ընդարձակ հակատրեստային օրենսդրության և մոնոպոլիաների սահմանափակման կամ դրանք դադարեցնելու առավել մեծ լիազորություններով օժտված պետական կարգավորող մարմինների, ծանոթությամբ պաշտոնի նշանակելու «խնամիական» հարաբերությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է օրենքի գերակայություն, ինչպես նաև քաղաքական կամքի դրսևորում:

Այսպիսով, Հայաստանի քաղաքական համակարգի փակ բնույթը, որն օգտագործվում է նոր, երկակի, կլանների վրա հիմնված և օլիգարխիկ էլիտայի կողմից, լրջորեն քայքայել է պետության կարևորագույն արժանիքը՝ լեգիտիմությունը: Սա նաև զուգորդվել է «լավ կառավարումից» *(«good governance»)* հաստատուն շեղումով, ինչպես նաև պետական քաղաքականության ու ազգային անվտանգության ձևակերպման մեջ անձնական շահը պետական շահից վեր դասելու միտումով: Կարելի է միայն հուսալ, որ նոր հնարավորությունների ու մարտահրավերների համակցությունը կարող է «փոփոխության գործոն» ծառայել՝ ստիպելով բացել և վերափոխել լրիվ սահմանափակող ու կոշտ քաղաքական-տնտեսական համակարգերը, որոնք այնքան են արմատացել, որ մերժում են լեգիտիմությունը, քաղաքական կամքը և արդյունավետությունը, ինչն այնքան անհրաժեշտ է երկրի առաջընթացի համար:

Սցենար 2. հայ-իրանական հարաբերություններ

Ելնելով նոր վտանգներից և մարտահրավերներից՝ Հայաստանի ազգային անվտանգությանն օժանդակելու համար քննարկվող երկրորդ սցենարը բխում է Իրանի հետ Հայաստանի հարաբերություններից: Նախկին Խորհրդային Միության երկրների շարքում Հայաստանը հայտնի է որպես գլխավորապես դժվար մարտահրավերների շարքի դիմակայող փոքրիկ պետություն: Դիմակայելով հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից հարկադրված շրջափակմանը, որը քայքայված առևտրային և էներգետիկ կապերից բխող հարաբերական մեկուսացման պատճառ է դարձել, ցամաքային երկիր հանդիսացող և մեկուսացված Հայաստանն ապավինել է ադապտացման ռազմավարությանը:

Հարմարվելու ռազմավարությունն առավել ակներև էր այն ժամանակ երբ բավական առաջադեմ արտաքին քաղաքականություն էր հետապնդում, որը հայտնի է որպես «կոմպլեմենտարություն», ինչն արդյունավետորեն հավասարակշռում էր նրա, ըստ էության, դեպի Արևմուտք դիրքորոշումը Ռուսաստանի հետ ուժեղ միության նախապատվության հետ: Առայժմ այս քաղաքականության երկակի բնույթը բերել է օգուտների սահմանափակության, Հայաստանն առավել զգալի օգուտ է քաղում մրցակցող ռազմավարական շահերի նկատմամբ համանման հավասարակշռող քաղաքականություն վարելուց: Մասնավորապես, առավել երկարաժամկետ այս ռազմավարական շահն արմատավորված է Հայաստանի՝ դեպի Արևմուտք ուղղվածության և նրա Եվրաատլանտյան անվտանգության համակարգում ինտեգրվելու ու Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունները դինամիկ զարգացնելու ուղղությամբ հավասարակշռությունը պահպանելու եզակի կարողության մեջ:

Մեկուսացման հրամայականը. Չնայած Հայաստանի և նրա հարավային հարևան Պարսկաստանի միջև երկարատև սերտ կապերին, Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև փոխադարձ հարաբերությունները բնականոն չեն ընթացել: Ավելի ճիշտ, հայ-իրանական հարաբերությունները պայմանավորված են երկուսի համար էլ բնորոշ հանգամանքով՝ մեկուսացվածության պատճառով համագործակցելու հրամայականով: Ավելին, 1990-ականներից՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության դժվարին փուլի ընթացքում, Իրանը հաստատուն պրագմատիկ ուղղություն է որդեգրել, որի շնորհիվ հակամարտությունը զերծ մնաց կրոնականի վերածվելուց՝ միևնույն ժամանակ ձգտելով նպաստել բանակցությունների միջոցով հակամարտության լուծմանը:

Առավել լայն համատեքստում, Իրանը Հայաստանի բնական դաշնակիցն է՝ երկուսի համար ընդհանուր մեկուսացվածության, շրջափակման և արտաքին ճնշման մարտահրավերներից դրդված: Սակայն, Հայաստանի նկատմամբ Իրանի նկատառումներում նույնպես առկա է հնարավորությունից օգտվելու տարրը: Այս մոտեցումը ներառում է Հայաստանի դերը որպես իրանցիների համար հանգստյան օրերին այցելությունների որոշակի վայր լինելու փաստը, ինչպես նաև այն, որ այսօր ավելի քան 1200 իրանցի ուսանողներ սովորում են Հայաստանի համալսարաններում և այլ կրթական հաստատություններում:

Այսպիսով, Հայաստանի կողմից Իրանի նկատմամբ տարվող քաղաքականությունը մեծապես ձևավորվել է շրջափակման և մեկուսացման հետևանքով, ինչն առավել ակնհայտ է տարածաշրջանային բոլոր էներգետիկ նախագծերում Հայաստանը չընդգրկելու փաստից, իսկ առավել ևս ակնհայտ է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի ծրագրից:

Սակայն Իրանի համար ամենից կարևորը աշխարհաքաղաքական համատեքստն է, հատկապես այն պատճառով, որ Հարավային Կովկասի տարածաշրջանը նորից դարձել է մեծ տերությունների մրցակցող շահերի ասպարեզ: Այս հեռանկարի առումով Իրանը Հայաստանի հետ հարաբերությունները գնահատում է որպես տարածաշրջանում ինչպես Արևմուտքի, այնպես էլ Ռուսաստանի իշխանության և ազդեցության նախագծերի հակակշիռ:

Աշխարհաքաղաքական այս օրակարգը խոր պատմական արմատներ ունի, քանի որ Պարսկաստանը խոցելի է եղել ռուսական, բրիտանական և առավել կարճ ժամանակահատվածում՝ ամերիկյան ճնշման և միջամտության համար: Չնայած Արևելքի և Արևմուտքի ճնշումների հանդեպ պատմական այս խոցելիությունը գագաթնակետին է հասել շահի իշխանության ժամանակ, սակայն նույնիսկ այսօրվա Իրանի առաջնորդները ընդունում են իրենց խոցելիությունը: Այս պատճառով Իրանը բոլորովին վերջերս առավել հաստատուն կերպով ձգտում է նախ և առաջ հակադրվել Թուրքիային՝ որպես

ԱՄՆ-ի կողմից սատարվող տարածաշրջանային ներկայացուցչի, իսկ այնուհետև անմիջապես Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ ելնելով երկու հարևանների՝ Իրաքի և Աֆղանստանի տարածքում ամերիկյան ռազմական ներկայությունից: Տարածաշրջանում և Միջին Ասիայում ԱՄՆ ռազմական ցանցի հենց այս ընդլայնումը և ներկայությունն է, որ Իրանին մղում է Հայաստանի հետ կապերն ամրապնդելուն, Ադրբեջանի հետ կապերը կարգավորելուն և Վրաստանի հետ կապերը խորացնելուն:

Հայաստանը որպես դեպի Իրան տանող կամուրջ. Սակայն, ընդհանուր առմամբ, տարածաշրջանում իրանական շահի առավել լայն հեռանկարների առումով, Իրանի քաղաքականությունը նույնպես բխում է հյուսիս - հարավ տրանսպորտային ցանցն ամրապնդելու ռազմավարությունից: Եվ հենց Հայաստանն է, որ առավել, քան մյուս պետությունները, իր եզակի դերն է առաջարկում՝ որպես դեպի Իրան տանող պոտենցիալ պլատֆորմ կամ կամուրջ:

Առևտրային առումով Հայաստանի հարաբերությունները Իրանի հետ, այնուամենայնիվ, սահմանային են եղել: Չնայած երկկողմանի առևտրի սահմանափակ բնույթին, հայ-իրանական հարաբերությունների իրական կարևորությունը հիմնված է Հայաստանի՝ որպես Իրանի համար ելք և դեպի Իրան կամուրջ հանդիսանալու, եզակի հնարավորության վրա: Այս կարևորության ամենապարզ ապացույցն է էներգետիկ սեկտորը, ինչպես երևում է 2004թ. Իրանի և Հայաստանի միջև սկսված 141 կմ երկարությամբ բնական գազի խողովակաշարի կառուցման ծրագրից: Երկարամյա ձգձգումներից և տևական բանակցություններից հետո խողովակաշարի կառուցումն ավարտվեց 2007թ.:

Ծրագրվում է գազատարով Հայաստանին մատակարարել կոպիտ հաշվարկով մոտ 1.1 մլրդ մ^3 գազ, որը նախատեսվում է հետագա 20 տարիների ընթացքում հասցնել 2.3 մլրդ մ^3-ի: Խողովակաշարը Հայաստանին հնարավորություն կընձեռի գազ ներմուծել նաև Թուրքմենստանից՝ որպես Ռուսաստանից, միակ գազամատակարարից, կախվածությունը թոթափելու երկընտրանք: Հայաստանը, իր հերթին, իրանական գազի դիմաց կվճարի Իրանին էլեկտրաէներգիա մատակարարելով: Սակայն նույնիսկ այս խողովակաշարը երկու երկրների համար սահմանափակ հաջողություն էր, քանի որ Ռուսաստանին հաջողվեց ճնշում գործադրելով կրճատել գազատարի չափը՝ կանխարգելելով հայկական շուկան գազն արտահանելու նպատակով օգտագործելը: Ռուսաստանը շահագրգռված էր խողովակաշարի տրամագիծը փոքրացնելու հարցում, որպեսզի Հայաստանը՝ որպես գազի տարանցիկ տարածք, չդառնա իր մրցակիցը:

Այսպիսով, Հայաստանը ներկայանում է որպես կամուրջ դեպի ներկա վարչակարգի Իրան, ինչպես նաև որպես կամուրջ դեպի նոր Իրան: Սակայն,

ինչպես երևաց Իրան-Հայաստան գազատարի նվազեցված տրամագծից և հնարավորությունից, մոտ ապագայում Ռուսաստանն է հանդիսանալու հայ-իրանական հարաբերություններին խոչընդոտող կամ օժանդակող հիմնական ուժը: Փաստորեն, հայ-իրանական գազատարին վերաբերող վերջին մանրամասները բացահայտեցին տարածաշրջանում ռուսական ազդեցության և իշխանության վերահաստատման փաստը:

Սակայն, Հայաստանի աշխարհագրական առավելությունների հազվադեպ բացառություններից մեկի դեպքում Իրանը, ամենայն հավանականությամբ, կարող է հանդես գալ որպես երկու երկրներում անցումային գործընթացի հիմնական գործընկեր: Եվ հավանաբար, ամենաէականը Հարավային Կովկասի և Միջին Ասիայի երկու տարածաշրջանները (որոնցից յուրաքանչյուրը կանգնած է առավել խոր աշխարհաքաղաքական փոփոխությունների առջև) Իրանի հետ կապելու հնարավորությունն է:

Ի հավելումն, օգտակար կլինի Հայաստանը քննարկել իրանական տեսանկյունից: Իրանը նույնպես առավել լայն աշխարհաքաղաքական մտադրություններ է արտահայտում, քանի որ երկրի հարաբերությունները Հայաստանի հետ դիտարկվում են որպես մարտավարական հակակշիռ արևմտյան կամ ԱՄՆ իշխանության և ազդեցության ծրագրերի դեմ: Սակայն Կովկասում անկախ պետությունների գոյության ժամանակաշրջանի մեծ մասի ընթացքում Իրանը ձգտել է հակադրվել Թուրքիային՝ որպես ԱՄՆ-ի կողմից սատարվող տարածաշրջանային ներկայացուցիչ կամ գործակալ պետության: Սակայն վերջերս, ելնելով ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատացումից և ներկայացուցիչ պետությունների փոխարեն ԱՄՆ անմիջական միջամտությունից, Իրանը փոխել է ռազմավարությունը՝ առավել ուղղակիորեն հակադրվելով ԱՄՆ-ին: Իր ռազմական ներկայության ընդարձակման շնորհիվ Ամերիկայի Միացյալ Նահանգները Իրանը շրջապատել է բոլոր ուղղություններով. արևելքում՝ Իրաքից, հյուսիսում՝ Ադրբեջանից, արևելքում և հյուսիս-արևելքում՝ Կենտրոնական Ասիայից, Պակիստանից և Աֆղանստանից, իսկ հարավում՝ Պարսից ծոցի կողմից: Իրանը հարկադրված է արտաքին կապեր փնտրել Ռուսաստանի և Հայաստանի, ինչպես նաև հարաբերությունները բարելավել Ադրբեջանի հետ:

Այսպիսով, Իրանի հեռանկարից ելնելով՝ Հայաստանը կարևոր է երեք առումներով. 1. ռազմավարական, ելնելով համանման շրջափակումից և մեկուսացումից, 2. աշխարհագրական, որտեղ Հայաստանը համագործակցության է ձգտում՝ ցանկանալով ելք գտնել հակամարտությունից և 3. աշխարհաքաղաքական, քանի որ Հայաստանը Իրանին ԱՄՆ ռազմական բազաների ընդլայնվող ցանցով շրջապատվելը ստուգելու միջանցք է առաջարկում: Եվ վերջապես, առավել լայն հեռանկարի առումով, տարածաշրջանում Իրանի

ազգային շահերն առաջնորդվում են միակ հասանելի հյուսիս-հարավ տրանսպորտային ցանցի միջոցով ելք ունենալու հնարավորության ձգտումով, իսկ Հարավային Կովկասն այդ ծրագրի անբաժանելի մասն է համարվում: Սա նույնպես բխում է իրանական վարչակարգի մեկուսացումից:

Սցենար 3. Ադրբեջանի ռազմական վերելքը

Հայաստանի ազգային անվտանգության համար քննարկվող երրորդ և ամենավճռական սցենարը պատերազմի վերսկսման վտանգն է, քանի որ Ադրբեջանը, թվում է, որոշել է ժամանակակից և հզոր զինուժ ստեղծել՝ հուսալով դառնալ տարածաշրջանի ամենահզոր ռազմական տերությունը: Իսկ Ադրբեջանի ղեկավարների անընդհատ հնչեցրած ռազմաշունչ և սպառնագին հայտարարություններից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ միջին կամ տևական դադարից հետո առկա է տարածաշրջանում Լեռնային Ղարաբաղի պատերազմի վերսկսման վտանգ:

Չնայած ՆԱՏՕ ընդարձակման առնչությամբ վերջերս գրանցված Ռուսաստանի լարվածության աճը կենտրոնացված էր Վրաստանի և Ուկրաինայի ՆԱՏՕ անդամ դառնալու ձգտման շուրջ, ՆԱՏՕ ընդլայնմանն ուղղված առավել արմատական մարտահրավերը բխում է ոչ թե քաղաքական կամ աշխարհաքաղաքական գործոններից, այլ ռազմական բարեփոխումներից: Նախկին խորհրդային հանրապետությունների մեջ ռազմական տեսանկյունից առավել խոշոր ռազմական նկրտումներ ունեցող պետություններից մեկն Ադրբեջանն է: Երկիր, որը բազմիցս հաստատել է սեփական ուժերով ժամանակակից և ինքնաբավ զինուժ ստեղծելու ձգտումը, մերժելով ինչպես ՆԱՏՕ, այնպես էլ Ռուսաստանի հովանավորությունը: Սակայն Ադրբեջանում ռազմական բարեփոխումների գործընթացը վերջին տարիներին մասնավորապես դժվար է եղել, և չնայած նրա տարեկան ռազմական բյուջեի կտրուկ ավելացմանը, որը ֆինանսավորվում է էներգետիկայի բնագավառի ավելցուկի հաշվին, Ադրբեջանի՝ որպես մինչև 2020թ. տարածաշրջանային ուժի, վերելքի հեռանկարը հեռու է իրականությունից:

Ադրբեջանական ռազմական բարեփոխման խոչընդոտները. Չնայած երեք անընդմեջ տարի պաշտպանական բյուջեն եղել է ավելի քան $1 մլրդ, Ադրբեջանը փոքր առաջընթաց է ունեցել ժամանակակից առաջադեմ ռազմական համակարգեր ձեռք բերելու կամ ժամանակակից սպառազինության բնագավառում ներդրումներ կատարելու գործում: Նրա ռազմական երեք ճյուղերից երկուսը՝ բանակը և ռազմաօդային ուժերը, շարունակել են անտեսված մնալ՝ տառապելով պահեստամասերի շարունակական պակասից և պաշարների

աղքատիկ ապահովումից: Միակ բացառությունն Ադրբեջանի ռազմածովային ուժերն են, որոնք զգալիորեն ընդլայնել են իրենց կարողությունները: Սակայն ռազմածովային ուժերի զարգացումն անգամ ընդամենը ԱՄՆ «Կասպիական պաշտպանություն» ծրագրի կողմից ուսուցանվելու և սպառազինվելու արդյունք էր, որը խթանեց ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Ղազախստանի ռազմածովային կարողությունները՝ փորձելով հավասարվել Կասպիական ավազանում Իրանի և Ռուսաստանի ունեցած ռազմածովային հնարավորություններին:

Ադրբեջանական նավատորմի զարգացումը, ներառյալ նոր և տպավորիչ ռազմածովային հատուկ ուժերի ձևավորումը, Ադրբեջանին Կասպից ծովով զինամթերքի անօինական տեղափոխման և, ինչը առավել կարևոր է, թմրանյութերի տեղափոխման ու տարածման դեմ պայքարելու նոր և կարևոր կարողություններ ու հմտություններ է ապահովել: Սակայն, միևնույն ժամանակ, այն ադրբեջանցիներին որևէ հարձակողական հմտություններ չի շնորհել, բացառությամբ մակերևույթի հսկողություն իրականացնող ռադիոտեղորոշիչ վերահսկողության համակարգի նկատմամբ ավելացված հրամանատարական իրավունքի, դրանով իսկ Ադրբեջանին զրկելով նրա համար ամենաարժեքավոր պարգևից՝ իրական ուժային ծրագրեր նախագծելու կարողությունից:

Սակայն առկա են Ադրբեջանի ռազմական գերակշռության իրական սահմանափակումներ, քանի որ նրա ռազմաօդային ուժերը շարունակում են ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի և նույնիսկ ավիացիոն վառելիքի պակաս զգալ, ինչն այս ծառայությունը դարձնում է Ադրբեջանի զինված ուժերի մարտունակության ամենացածր մակարդակ ունեցող մաս: Ադրբեջանական բանակը, որ ավանդաբար համարվում է զինված ուժերի հիմնական բաղադրիչը, նույնպես զուրկ է ուժային ծրագրեր իրականացնելու հնարավորություններից և հեռու է նույնիսկ ռազմական պատրաստականության նվազագույն մակարդակի պահանջները բավարարելուց:

Այնուամենայնիվ, առավել երկար ժամանակահատվածի առումով Ադրբեջանի՝ որպես ռազմական տերության վերելքն ապահովված է թվում, ինչը հիմնված է նավթի (և գազի) քանակի ավելացման արդյունքում ստացված միջոցները նոր, ժամանակակից, ինչպես ուսուցման, այնպես էլ սպառազինության տեսանկյունից բարելավված զինված ուժերը ֆինանսավորելու նպատակով օգտագործելու, ինչպես նաև Բաքվում քաղաքական կամքի առկայությամբ, որը խնդիր է դրել առանց Թուրքիայի կամ նույնիսկ ԱՄՆ հովանավորության, իրականացնել դա՝ հիմնվելով սեփական ազգային հզորության վրա: Այսպիսի ռազմավարությունը ոչ միայն ակնհայտ սպառնալիք է թե՛ Ղարաբաղի, թե՛ Հայաստանի անվտանգության համար, այլև կարող է վտանգավոր փոփոխության առիթ հանդիսանալ Հարավային Կովկասում ստեղծված արդեն իսկ փխրուն «ուժերի հավասարակշռության» առումով:

Ինչպես հաստատեցին վերջին զարգացումները, Ադրբեջանի կառավարությունը հաստատապես վճռել է ռազմատենչ և հանդուգն փորձ իրականացնել, որի նպատակը նոր և հզոր զինուժի ստեղծումն է:

Ադրբեջանը նախ և առաջ ձգտում է զարգացնել սեփական պաշտպանական արդյունաբերությունը: 2005թ. ստեղծված Ադրբեջանի Պաշտպանության արդյունաբերության նախարարությունը, որը գլխավորում է Յավար Ջամալովը, միավորեց Ռազմական արդյունաբերության պետական դեպարտամենտը և Սպառազինության ու ռազմական գիտությունների կենտրոնը, որոնցից յուրաքանչյուրը նախկինում Ադրբեջանի Պաշտպանության նախարարության կազմում առանձին գործակալություններ էին: Այս նոր նախարարությունը, որի տարեկան բյուջեն տատանվում է $60-70 մլն-ի սահմաններում, արդեն սկսել է տեղական պաշտպանական արդյունաբերության հնարավորությունների ստեղծումը, որին օժանդակում են Ուկրաինան և Պակիստանը, ինչպես նաև օգտագործում է Ռուսաստանի որոշակի տեխնիկական փորձագիտական օժանդակությունը:

Երկրորդ զարգացումը Թուրքիայի զինվորականության դերի վերադարձն է: Ադրբեջանի ռազմական հնարավորությունների զարգացման գործում Թուրքիայի դերն այլևս ընդամենը թուրքական զենք ու զինամթերք մատակարարելը կամ զինվորական վարժանքներ անցկացնելը չէ, այլ ռազմավարական տեսանկյունից առավել նշանակալի դեր է ենթադրում ավագ և բարձրաստիճան թուրք ռազմական խորհրդականների համար: Թուրքական դերի մեծացման վերաբերյալ լուրն առաջին անգամ ի հայտ եկավ 2007թ. հունվարին և տեղեկացնում էր, որ թուրքական ավագ զինվորական սպան պաշտոն կզբաղեցնի Ադրբեջանի պաշտպանության նախարարությունում: Այդ ժամանակվա մամուլի հայտարարություններում նշվում էր, որ թուրքական զինվորական բարձրաստիճան հրամանատարներն ընտրել են թուրքական բանակի մի գեներալի, որի անունը չի նշվում, որն Ադրբեջանի պաշտպանության նախարարությունում կստանձնի փոխնախարարի պաշտոնը, օժտված կլինի անսահմանափակ իրավունքներով և իշխանությամբ, ներառյալ ադրբեջանական բանակում ծառայող թուրք ավելի ցածրաստիճան սպաներից կազմված ռազմական հրահանգիչների և խորհրդականների խմբի նկատմամբ ուղղակի և միանձնյա վերահսկողությունը:

Սակայն Ադրբեջանում թուրքական զինվորականության ուղղակի դերին վերաբերող ծրագիրը, որը նախանշում էր Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմական կապերի վերջին տարիների ընթացքում արձանագրված վատթարացման վերջը և, 1995թ. Բաքվից հեռանալուց հետո, թուրք զինվորական խորհրդականների վերադարձը, երբեք չիրականացվեց: Ի զարմանս շատ վերլուծաբանների, Թուրքիան չկարողացավ վերականգնել Ադրբեջանի հետ ավանդա-

կան ռազմական միությունը: Իսկ 2007թ. ընթացքում Բաքուն փաստորեն էլ ավելի հեռացավ՝ պահպանելով ոչ ավելի մոտ հարաբերություններ, քան այն, ինչ առկա էր արևմտյան անվտանգության կառույցների և ՆԱՏՕ-ի հետ:

Սակայն ժամանակակից և հզոր ադրբեջանական զինված ուժեր ստեղծելու ձգտման և մի քանի տարիների ընթացքում նշանակալիորեն մեծ ռազմական բյուջե ունենալու փաստի առկայության դեպքում, ինչո՞ւ Ադրբեջանին չհաջողվեց լուրջ ռազմական բարեփոխումներ ձեռնարկել:

Հետաքրքիր է, որ Ադրբեջանին նոր հզոր ռազմուժ կառուցելու գործում խանգարող հիմնական արգելքը հենց այն մարդն է, որը գլխավորում է Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունը: Ներկայումս Ադրբեջանի պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սաֆար Աբիևն աշխարհում այդ պաշտոնն ամենից երկար զբաղեցրած պաշտպանության նախարարն է: Սակայն նա այդ պաշտոնին մնում է ոչ թե իր ռազմական ունակությունների շնորհիվ, այլ շնորհիվ Ալիևների ընտանիքին իր անձնական հավատարմության: Իսկ նրա, որպես պաշտպանության նախարարի, պաշտոնավարությունը բնորոշվում է որպես Ադրբեջանի զինված ուժերի նկատմամբ երկարատև անուշադրության, անբավարար մատակարարման և մարգինալացման ժամանակաշրջան՝ չխոսելով առաջին գծի զինվորների խղճուկ վիճակի և զինակոչիկների շրջանում մահացությունների անընդունելիորեն բարձր տոկոսի մասին:

Մասնավորապես, հանգուցյալ նախագահ Հեյդար Ալիևը հաստատապես համոզված էր, որ իր իշխանության իրական սպառնալիքներից մեկը բխում է ուժեղ զինվորականությունից, և այդ պատճառով Ադրբեջանի զինուժը պահում էր թույլ, կոռումպացված և անկարող վիճակում: Ավագ Ալիևը նաև մերժում էր զինուժի ուսուցումը, վարժանքը և սպառազինումը, քաղաքականություն, որ իրականացնում է նրա որդին և ժառանգորդը՝ ներկայիս նախագահ Իլհամ Ալիևը: Երկու առաջնորդներն էլ օգտագործում են Ադրբեջանի պաշտպանության նախարարին որպես կոռուպցիայի գլխավոր մեքենայի: Սա ապահովում է այն, որ զինվորականությունը միշտ էլ թույլ և պառակտված լինի, ինչպես նաև քայքայված ներքին կոռուպցիայի քաղցկեղից:

Այսպիսով, Ադրբեջանում ժամանակակից և հզոր բանակ կառուցելու իրական ներուժն ընդամենը զուսպ խոստում է: Եվ նույնիսկ հսկայական պաշտպանական պետական բյուջեի առկայության դեպքում, զենքերի, ուսուցման և ամենաանհրաժեշտ սպառազինման նպատակով համեմատաբար փոքր ծավալի ծախսեր են իրականացվել: Չնայած Ադրբեջանի՝ որպես տարածաշրջանային ռազմական ուժի կենտրոնի, ապագա ճանապարհն ապահովված է, սակայն շատ փորձագետներ հավատացած են, որ կպահանջվեն 5-10 տարվա երկարատև և լուրջ ռազմական բարեփոխումներ, մինչև որ Ադրբեջանն ի վի-

ճակի կլինի բավարարել այդ պոտենցիալի պահանջներին: Իսկ առայժմ առկա են մի քանի կարևոր դասեր, որոնք բացահայտվեցին Ղարաբաղի և Ադրբեջանի զինուժերի միջև վերջին բախումներից հետո: Առաջին. պարզ է, որ Ղարաբաղի (և Հայաստանի) զինված ուժերը դեռևս զգալի գերակշռություն ունեն ադրբեջանական զինուժի նկատմամբ, և այս առավելությունը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի առնվազն մոտակա 5-10 տարիների ընթացքում:

Երկրորդ. Ադրբեջանի առջև պատերազմը վերսկսելուց հետ կանգնելու նոր զսպիչ է հայտնվել: Ադրբեջանի կողմից թշնամական գործողությունները վերսկսելու ցանկացած փորձի դեմ այս նոր զսպամիջոցը գալիս է հենց իր (Ադրբեջանի) բարեկեցության հիմնական աղբյուրից՝ միջազգային էներգետիկ ընկերություններից և Արևմուտքի էներգետիկ ռեսուրսներ գնող հզոր պետություններից: Սա չափազանց կարևոր է և «էներգետիկ նոր զսպամիջոցներ» է առաջարկում. նրանք ամեն ինչ կանեն, որպեսզի նավթի հոսքը չդադարի:

Եվ վերջապես, ինչը հավանաբար առավել կարևոր է. չնայած Ադրբեջանի հարստությանը և ուժին, Հայաստանը և Ղարաբաղը, ըստ էության, առավել կայուն և ապահով են, քան Ադրբեջանը: Կայունության այս արժանիքը նույնպես կարևոր է համաշխարհային և տարածաշրջանային ուժերի դրական կարծիքին արժանանալու համար, քանի որ նրանք այսօր կապեր են փնտրում առավել կայուն գործընկերների, քան Ադրբեջանի նման ռիսկային և ավտորիտար ռեժիմների հետ: Այսպիսով, այն դեպքում, երբ Ղարաբաղի և Հայաստանի համար անվտանգության հեռանկարը ներառում է իր սեփական մարտահրավերները, արդեն իսկ առկա է չափազանց ռիսկային տարածաշրջանում համեմատական կայունության առավելությունը:

Ամփոփում. ազգային անվտանգության գործընթացն ամրապնդելու անհրաժեշտությունը

Չնայած տարածաշրջանային աշխարհաքաղաքականության մեջ որոշակի փոփոխությունների վրա կենտրոնանալուն, շուկայական բարեփոխումների և հակակոռուպցիոն ջանքերի առումով Հարավային Կովկասում տևական անվտանգության և կայունության հիմնական իրական պատճառ են հանդիսանում այնպիսի տեղական քաղաքականությունները, ինչպիսիք են լավ կառավարումը և ժողովրդավարացումը, տեղական տնտեսությունները: Կովկասը, առավել, քան երբեք, «ռիսկային տարածաշրջան է», և հրամայականը պետք է առավել սևեռված լինի տեղական քաղաքականություններին և տնտեսություններին նպաստելու, ավելի քիչ՝ խոշոր աշխարհաքաղաքական ծրագրերի վրա, որպեսզի ստեղծի առավել տևական կայունություն, քան ընդամենը հիմնվելով

առանձին առաջնորդների վրա, անկախ այն հանգամանքից, թե որքան արևմտամետ կամ հարմարվող են նրանք: Այս դեպքում ինստիտուտներն ավելի մեծ նշանակություն ունեն, քան անհատները, իսկ էվոլյուցիոն բարեփոխումները (այլ ոչ թե հեղափոխական փոփոխությունները) կայունության համար ավելի շատ երաշխիքներ են առաջարկում:

Եվ վերջապես, Հայաստանում ազգային անվտանգության գործընթացն ամրապնդելու ակնհայտ կարիք կա: Չնայած Հայաստանի ազգային անվտանգության առավել կատարելագործված և համապարփակ մարտավարության զարգացման համար առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսներն ակնհայտորեն սահմանափակ են, սակայն քննարկման համար մի քանի կարևոր կետեր կան: Հիմնական առաքելությունն ազգային անվտանգության հստակ գործընթացի հաստատումն է: Սա ենթադրում է ինչպես կազմակերպական, այնպես էլ գաղափարական բարեփոխումներ, ներառյալ այն փաստի ճանաչումը, որ Հայաստանի ազգային անվտանգության ներկա ինստիտուտների ամենաակնառու պակասությունը դրանց բացակայությունն է: Նույնիսկ Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի ղեկավարի վերջերս կատարված նշանակումից հետո էլ այս մարմինը հազվադեպ է հանդիպել և համարյա լրիվ մեկուսացված է ազգային անվտանգության որոշումների ընդունման, սահմանման ու քննարկման գործընթացից, քանի որ կարևորագույն որոշումների մեծ մասը կենտրոնացվել է նախագահի աշխատակազմում:

Չնայած գրանցվել է Ազգային ժողովի հանձնաժողովների դերի նշանակալի բարձրացում՝ նրանց վերապահելով պաշտպանության և անվտանգության քաղաքականության նկատմամբ իրավասություն, սակայն գործադիր ճյուղի ակնհայտ գերակշռում ընդհանուր առմամբ և նախագահինը՝ մասնավորապես, ինչպես նաև ազգային անվտանգության գործընթացի ոչ ֆունկցիոնալ բնույթը մնում են անփոփոխ: Հայաստանի ազգային անվտանգության գործընթացը բարելավելու համար հիմնական առաջարկություններից մեկը Ազգային անվտանգության հանձնաժողովի կազմակերպական բարեփոխումն է: Ներկայումս Հայաստանի ազգային անվտանգության խորհուրդը հազվադեպ է հավաքվում որպես ամբողջական խորհրդակցական մարմին, իսկ երբ նույնիսկ գումարվում է, սովորաբար կենտրոնանում է արդեն ընդունված որոշումների իրականացման վրա:

Հոկտեմբեր, 2008թ.

РЕГИОНАЛЬНЫЕ РАЗВИТИЯ И НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ АРМЕНИИ

Ричард Киракосян

Резюме

Кавказ – «рисковый регион», и здесь в большей степени должно акцентироваться содействие местным экономикам и политике, нежели крупные геополитические программы. Для стабильности эволюционных (а не революционных) изменений предлагаются большие гарантии.

В Армении налицо очевидная необходимость укрепления национальной безопасности. Основная миссия заключается в установлении четкого процесса защиты национальной безопасности. Это предполагает как организационные, так и идеологические реформы, включая признание того факта, что самый очевидный недостаток нынешних институтов национальной безопасности Армении – их отсутствие. Даже после недавнего назначения руководителя Совета национальной безопасности Армении этот орган практически не проявляет себя и изолирован от процесса принятия решений по обеспечению национальной безопасности, их вынесения и обсуждения, поскольку большая часть важнейших решений сосредоточена в аппарате президента. Одним из основных предложений, нацеленных на улучшение процесса обеспечения национальной безопасности Армении, является организация Комиссии по национальной безопасности. Существующий Совет национальной безопасности Армении редко собирается как консультационный орган, и даже когда он созывается, то обычно сосредотачивается на осуществлении уже принятых решений. Этот искаженный процесс обусловлен тем, что данный орган подчиняется аппарату президента, что ограничивает возможности долгосрочного стратегического планирования и подготовки. Это для Армении – в свете возникших в последнее время угроз и вызовов национальной безопасности страны – является роковой ошибкой.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՖՈԼՈԳԻԱՆ 2008-Ի ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նվարդ Մելքոնյան

2008թ. նախագահական ընտրություններից հետո բավական հարուստ դաշտ էր ձևավորվել թեկնածուների վերաբերյալ առկա միֆերի ուսումնասիրության համար: Հոդվածում ներկայացվում է Հայաստանում 2008թ. նախագահական ընտրություններին նախագահի թեկնածուներ Սերժ Սարգսյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի կերպարների շուրջ ձևավորված առասպելների դրսևորման առանձնահատկությունների սոցիոլոգիական վերլուծությունը:

Քաղաքական գովազդային հոլովակների, նախագահի թեկնածուների ելույթների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է յուրաքանչյուր քաղաքական գործչի կողմից նպատակայնորեն ձևավորված և շրջանառության մեջ դրված առասպելների էությունը՝ դրանցում կիրառված սիմվոլների բնույթն ու ենթատեքստը, իրականացնելով նաև հիմնական առասպելույթների (միֆոլոգեմների) համեմատական վերլուծություն:

Վերլուծելով հանրապետությունում տիրող իրավիճակը, ընտրողների պատկերացումներն իդեալական նախագահի մասին և համադրելով դրանք ԶԼՄ գործելաոճի հետ՝ հեղինակն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել և առավել մանրամասնորեն է դիտարկել նախընտրական քարոզարշավի ընթացքում հիմնական առասպելույթների՝ *«հերոս», «հակահերոս», «ոսկեդար», «մենք-նրանք»* դրսևորումն ու ակտիվացումը չորս հիմնական մակարդակներում՝ *արտապետական, համապետական, կոնտեքստուալ և անձնային:*

Քաղաքականության աշխարհում ժամանակի հաշվարկման համակարգն ունի իր առանձնահատկությունները: Այստեղ ժամանակը տրոհված է երկու միջակայքի, որոնք բնորոշող հասկացությունները տարբերվում են միայն նախածանցներով՝ «նախ»- և «հետ»- ընտրական: Եվ դժվար է ասել, թե որտեղ են սկսվում և ավարտվում «մինչև ընտրություններ» և «ընտրություններից հետո» միջակայքերը: Ակնթարթ, և հասարակությունը դարձյալ ապրում է նոր ընտրությունների ակնկալիքով:

Հայաստանում վերջին տարվա քաղաքական անցուդարձն ուսումնասիրման բավական հետաքրքիր նյութ է տրամադրում հետազոտողներին՝ ընտրապայքարում հնչած ելույթներ ու կոչեր, թեժացած կրքեր, ձևավորված և ակտիվացված քաղաքական առասպելներ:

Քաղաքական միֆոլոգիան իրականության մասին զգացմունքային պատկերացումն է, որը փոխարինում և դուրս է մղում իրականությունն ու իրական գիտելիքը: Քաղաքականության մեջ առասպելը փոխարինում է օբյեկտիվը դրա սուբյեկտիվ ընկալմամբ, բովանդակայինը՝ արտաքինով ու երևակայականով: Քաղաքական դիցաբանությունը, որի գլխավոր մասը կոնկրետ քաղաքական գործչի կամ կուսակցության մասին առասպելն է, բավարարում է քաղաքականության միստիֆիկացիայի հասարակական պահանջմունքը: Այն կոչված է բարդ և անհասկանալի քաղաքական գործընթացների մասին պարզ և դյուրին ամբողջական պատկերացումներ ներկայացնելու, որոնք հեշտ ընկալելի կլինեն հասարակական գիտակցության համար: Լինելով կոլեկտիվ գիտակցության երևույթ՝ քաղաքական առասպելը ձևավորում է որոշակի աշխարհընկալում, հոգեբանական և գաղափարախոսական դիրքորոշում, որոնք պարուրված են նախապաշարմունքներով: Առասպելն իրական օբյեկտների միջև հորինված պատճառային կապեր է հաստատում, ծնում կեղծ օբյեկտներ (քաղաքական միջակությունների հերոսական կերպարներ), հորինում փառավոր անցյալի մասին լեգենդներ, կապակցում իրականությունը հորինվածի հետ:

Քաղաքական առասպելը հասարակության և քաղաքական առաջնորդների միջև հաղորդակցման մեխանիզմ է: Հասարակության համար այն նախ և առաջ սոցիալ-քաղաքական իրականությանը հարմարվելու միջոց է, իսկ քաղաքականության սուբյեկտների համար՝ այդ հասարակության հետ հաղորդակցության հաստատման ձևն է այն իրականության պայմաններում, որին տվյալ սոցիումը ձգտում է հարմարվել:

Նախագահական ընտրություններից հետո ավելի քան հարուստ դաշտ է ձևավորվել թեկնածուների վերաբերյալ առկա միֆերի ուսումնասիրման համար: Սակայն դեռ քարոզարշավի ընթացքում ակնհայտ էր, որ նախագահի թեկնածուների շարքը կարելի է դիտարկել որպես մեկ շարունակականություն՝ կոնտինուում, որի բևեռներն էին (ընդ որում՝ բևեռներ էին ոչ միայն իրենց քաղաքական դիրքորոշումների, այլ նաև հասարակական ընկալումների և իրականացվող միֆոդիզայնի տեսանկյունից՝ մեկը՝ մյուսի հակապատկերն էր, անտիպոդն էր կյանքի բոլոր տիրույթներում) իշխանական թեկնածու Սերժ Սարգսյանը և ընդդիմության ներկայացուցիչ Լևոն Տեր-Պետրոսյանը: Միֆոդիզայնի տիրույթում այդ հակադրությունը ստացավ հերոս-հակահերոս միֆոլոգեմի տեսքը, ընդ որում՝ հերոսի կամ հակահերոսի կոչմանը նրանք արժանանում էին սեփական լսարանների՝ ընտրազանգվածների աչքերում: Այն ընկալող լսարանի համար, որի պատկերացումներում Սարգսյանը հերոս էր, հակահերոսն անխուսափելիորեն Տեր-Պետրոսյանն էր, Տեր-Պետրոսյանին հերոսացնող հասարակայնության համար էլ հակահերոսը

Սերժ Սարգսյանն էր (նշենք, որ քաղաքական միֆոդիզայնում հերոս լինելը չի ենթադրում որևէ սխրագործություն կամ հերոսական արարք, շատ դեպքերում բավարար է լինել ԶԼՄ և հասարակական կարծիքի ուշադրության կենտրոնում): Քաղաքական *PR-ի* տեսանկյունից երկուսն էլ հերոսներ էին այս միֆոլոգեմին համապատասխան բոլոր սիմվոլիկ ատրիբուտներով, որոնք արդեն առկա էին հասարակական գիտակցությունում և որոնք հետևողականորեն դեռ ստեղծվում և ներմուծվում էին:

Քաղաքականության յուրաքանչյուր սուբյեկտ սեփական դիցաբանության կարիքն ունի: Ելնելով թեկնածուի կենսագրության յուրահատկությունից և ընտրողի պահանջներից՝ ստեղծվում է հերոսի գերագույնս արդյունավետ և միաժամանակ նաև ամենալակոնիկ միֆը: Առանց միֆի հերոս չի լինում: Եվ «հերոսանալու» և դրանում զանգվածներին համոզել կարողանալու համար անհրաժեշտ է, որ քաղաքական գործչի ամբողջական կերպարը ներկայացնի հասարակությանը հուզող և առավել արդիական թեմաներն արտացոլող առասպելների խտացում (այսինքն՝ դրանցում ծավալվեն և բացահայտվեն այդ ոլորտում գործչի փորձը, դերը, դիրքորոշումը և հնարավորությունները):

Քաղաքական միֆի բոլոր հնարավոր թեմաներից կարելի է առանձնացնել 4 հիմնական՝ *«ոսկեդարի», «հերոս փրկչի», «հակահերոսի» և «միասնության»* միֆոլոգեմները: Հատկանշական է, որ քաղաքական իրականության մեջ վերը նշված առասպելներն առավել հաճախ կիրառվում էին տարբեր համադրությունների ձևով:

Վերլուծելով մեր երկրում տիրող իրավիճակը, ընտրողների պատկերացումներն իդեալական նախագահի մասին և համադրելով դրանք մեր ԶԼՄ գործելու ընդունված ձևի և ոճի հետ՝ հնարավոր է նախընտրական քարոզարշավի ընթացքում առկա այս միֆոլոգեմները դիտարկել դրանց ակտիվացման չորս հիմնական մակարդակներում՝ *արտապետական, համապետական, կոնտեքստուալ և անձնային:*

Ելնելով Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքից և առկա դիվանագիտական նպատակներից՝ հայ ընտրողների համար կարևորագույն նախապայման է, թե տվյալ թեկնածուն որքանով է «հաճելի», ընդունելի և համապատասխան մի շարք բարեկամ, ինչպես նաև թշնամի երկրների տեսանկյունից, այսինքն՝ ստացե՞լ է նա արդյոք դրանց «երաշխավորումը» (հիմնականում շեշտվում է Ռուսաստանին «հարմար» լինելու պարագան): Արտապետական առասպելների բովանդակությունը ներառում է այն փաստի իրական կամ ուռճացված և նույնիսկ հորինված հիմնավորումները, թե ով է միջազգային ասպարեզում այս կամ այն ազդեցիկ դերակատարի նախընտրելի թեկնածուն և նույնիսկ դրածոն: Օրինակի համար՝ 2003-ի ընտրություններին Ռ.Քոչարյանին բարձր դիվիդենտներ ապահովեցին ՌԴ նա-

խագահ Պուտինի հետ բարիդրացիական փոխհարաբերությունները: Պակաս ազդեցիկ չէին ընտրազանգվածի համար Քոչարյանի և Ժ.Շիրակի ձեռքսեղմումը և լուսանկարները:

Արտապետական տիրույթում զանգվածային լրատվամիջոցները մեզ ներկայացնում էին մի կողմից «կոմպրոմիսային թեկնածուի», որն ընդունելի է թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Ռուսաստանի համար ի դեմս Սերժ Սարգսյանի, մյուս կողմից՝ վկայակոչում թուրքական և ադրբեջանական մամուլը և անվանում թշնամական պետությունների համար ցանկալի պոտենցիալ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին:

Մրցակից կողմն իր առասպելներն էր ձևավորում և տարածում՝ «հարգված և միջազգային հանրության կողմից ընդունված դիվանագետ քաղաքական գործչի» միֆը, որն առաջինն է հիմք դրել Ռուսաստանի հետ համագործակցության («բոլոր պայմանագրերը ստորագրվել էին նրա օրոք») և որի ընտրվելու դեպքում *«Ռուսաստանը չի ցուցաբերի այնպիսի «միջամտություն», ինչպես Վրաստանում կամ Ուկրաինայում»*[1]:

Այս տիրույթում էին վարվում երկրի վարկանիշի, իմիջի մասին բոլոր խոսակցությունները, և այս տիրույթի առասպելների ամրապնդման նպատակով էին ձեռնարկվում նախընտրական շրջանում այցերը և հանդիպումները միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Տրամաբանական է, որ տվյալ դեպքում ավելի շահեկան դիրքում էին գործող իշխանություններն իրենց պաշտոնական հնարավորությունների տեսանկյունից: Սակայն պակաս խոսուն չէր Տեր-Պետրոսյանի մեկօրյա այցը Մոսկվա, որտեղ նա, առասպելի բովանդակության համաձայն, հանդիպում էր ունեցել ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Համապետական մակարդակում է ակտիվացվում հիմնականում «ոսկեդարի» միֆոլոգեմը, որում դրսևորվում են պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի վերաբերյալ թեկնածուների դիրքորոշումները:

«Ոսկեդարի» առասպելը կամ կոչ է անում վերադառնալ լուսավոր անցյալին, որտեղ սերը, միասնությունն ու համախմբվածությունն էին իշխում, որտեղ աշխարհը հասարակ էր ու հասկանալի, կամ էլ կանչում է դեպի լուսավոր ապագա՝ դիտարկելով անցած ժամանակները որպես «նախապատմություն», որի գոյատևումն արդարացված է միայն այնքանով, որքանով այն նախապատրաստել է այդ առաջարկվող իդեալական ապագան:

Այս միֆոլոգեմի շրջանակներում ևս օգտագործվեցին կոնտրաստի էֆեկտի առանձնահատկությունները. առասպելները ձևավորվում էին բևեռային

[1] Հարցազրույց «Կոմերսանտ» օրաթերթին: *«Коммерсантъ», 06.12.08.*

հակադիր ուղղություններով: Եթե իշխանական թեկնածուն անվերապահորեն կոչ էր անում դեպի ապագա *(«Առա՛ջ, Հայաստան»),* ապա նրա հիմնական մրցակիցն առաջարկում էր *«վերիմաստավորել անցյալը»:*

ՀՀ առաջին նախագահն, ի տարբերություն իր իշխանական մրցակցի, իր «ոսկեդարի» միֆոլոգեմը ներկայացնում էր որպես «կորուսյալ դրախտը... վերագտնելու... երազանք...»[1]: Ըստ նրա ձևակերպումների՝ «չնայած վերջին հարյուր տարիների ընթացքում հայ ժողովրդի կրած բազում տառապանքներին ու փորձություններին՝ եղեռն, գաղթ, հայրենիքի կորուստ, հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, կոլեկտիվացում, սով, ստալինյան տեռոր, համաշխարհային պատերազմ և այլն, այնուամենայնիվ, անժխտելի է, որ այդ ժամանակամիջոցում մեր երկիրն ապրել է նաև ազգային իղձերի իրականացման, ապահովության, խաղաղության և բարօրության երկարատև տարիներ». այստեղ խոսքը խորհրդային անցյալի մասին է: Ի դեպ, Տեր-Պետրոսյանի «ոսկեդարի» միֆոլոգեմում անդրադարձ է կատարվում նաև «անկախացման տարիներին», «շարժման» մասին առասպելներին: Հետաքրքիր է, որ Լևոն Տեր-Պետրոսյանն իբրև *«ոսկեդար»* չի դիտարկում իր իշխանության ողջ ժամանակահատվածը, այլ հիշատակում է միայն 1988թ. ազգային զարթոնքի տարիները: Ավելին, իր իշխանության վերջին տարիները նա համարում է արատավոր և հայցում լսարանի ներողամտությունը՝ համոզելով, որ եկել է նախկին սխալները շտկելու և երկիրը ներկա «վարչախմբից ազատելու ժամանակը»:

Այստեղ իր ակտիվացումն ու զարգացումն է ստանում՝ որպես ընդդիմադիր թեկնածուի «ոսկեդարի» հակամիֆ, «ավազակապետության» առասպելը:

Իշխանություններն «ավազակապետության» միֆին հակադրում էին և ինտենսիվորեն զարգացնում ու շահարկում «մութ ու ցուրտ տարիների» առասպելը՝ իր բոլոր ենթատեքստերով:

Սերժ Սարգսյանի «ոսկեդարը» նույնպես սկսվում էր Ղարաբաղյան շարժումից, ավելի շուտ՝ հաղթանակից, և ծավալվում ու տարածվում մինչև մեր օրերը՝ ընդգրկելով տնտեսական աճը, կենսամակարդակի բարձրացումը, շինարարության աննախադեպ տեմպերը (Երևանը՝ Հյուսիսային պողոտայով, շատրվաններով ու սահադաշտով, աղետի գոտին հետլևոնյան զարգացումներով, մասշտաբային ճանապարհաշինությունը և այլն):

Այստեղ միանշանակորեն կարևորվում է պետության ապագան: Այսպես, Սերժ Սարգսյանի ծրագրային դրույթներում բառացիորեն ասվում է. *«Այսօր առավելապես պետք է կենտրոնանանք ապագայի վրա, ...համագործակցենք ու կառուցողական երկխոսություն ծավալենք այն նպատակների և խնդիրների*

[1] Լևոն Տեր-Պետրոսյան, «Նախընտրական ծրագիր կամ Հանդարտ խոհեր», 6 հունվարի, 2008թ. http://www.levonforpresident.am

շուրջ, որոնք վերաբերում են մեր ազգային-պետական առաջնահերթություն-ներին և միտված են ապագայի կերտմանը», հասնելու այն Հայաստանին, «որին մենք ձգտում ենք և կհասնենք»[1]:

Թեկնածուն փետրվարի 17-ի իր ելույթում լսարանին անմիջականորեն ներկայացնում է իր «ոսկեդարի» միֆոլոգեմը, այն է՝ իր «երազած Հայաստանը» միֆը. «Իմ երազած Հայաստանի, որտեղ լուծված կլինի աշխատատեղերի խնդիրը, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի իր աշխատանքի արդյունքով կկարողանա արժանապատիվ կյանք ապահովել իր ու իր ընտանիքի համար…»[2]:

Միֆերի ակտուալացման արտապետական և համապետական հարթությունների հատման տիրույթում ներմուծվում ու շահարկվում էր մեր հասարակության համար առավել ցավագին կերպով ընկալվող թեմայի վերաբերյալ առասպելների խումբը: Այստեղ քաղաքական միֆոդիզայնը նախ և առաջ վերաբերում էր Ղարաբաղյան հիմնախնդրին: Ընդ որում՝ քաղաքական պայքարում հիմնական թեկնածուների կողմից արդիականացվում էին հաղթանակի առասպելները, բանակցային գործընթացի և փոխզիջումների վերաբերյալ միֆերը, և այս միջոցով էին հենց դրսևորվում «Մենք-Նրանք» առասպելական զույգի կարծրատիպային ընկալումները («Հաղթանակի մենաշնորհը» (մենք կռվում էինք - նրանք խանգարում)», «Խավարի ուժեր – լույսի ուժեր», «Հարցը լուծող - տարածքներ հանձնող», «Ղարաբաղցի - հայաստանցի» և այլն):

Կոնտեքստուալ հարթությունում գործառնող առասպելները հիմնականում վերաբերում են թեկնածուների համատեքստային իմիջներին, այսինքն՝ հանդիսանում են նրանց սատարող քաղաքական ուժերի, կուսակցությունների, կազմակերպությունների, առանձին հասարակական-քաղաքական գործիչների, հայտնի անձանց, ինչպես նաև մերձավոր շրջապատի (օրինակ՝ ընտանիքի անդամների) իմիջների խտացում և թեկնածուների իմիջների հետ դրանց համադրություն:

Այստեղ երկու բևեռներում էլ ավելի քան հետաքրքիր պատկերներ էին ձևավորվում վերը նշված ամեն մի առանձին համատեքստի պարագայում (կուսակցություն, ընտանիք, համախոհներ, ընկերներ):

Թեկնածուների իմիջները նախ և առաջ համադրվում էին այն կուսակցությունների իմիջների հետ, որոնց հետ նրանք նույնացվում էին բնակչության տեսանկյունից: Այս դեպքում ակտիվացվում էին Հայաստանի Հանրապետական կուսակցության առասպելը - Հայոց համազգային շարժման առասպելը: Նախընտրական շրջանում երկու կուսակցություններն էլ առանձնապես չէին

[1] ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի քարոզարշավի եզրափակիչ ելույթը, փետրվարի 17, 2008թ., http://www.serzhsargsyan.am/?l=arm&page=speeches&cat=10&title=10042:

[2] Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիրը, www.serzhsargsyan.am:

վայելում պոտենցիալ ընտրողների համակրանքն ու վստահությունը: Սակայն եթե ՀՀԿ-ն տիրապետում էր վարչական ռեսուրսին, այսինքն՝ խրախուսման և պատժի լծակներին, և, բացի այդ, որոշ զանգվածի համար հանդիսանում էր *status quo* պահպանելու երաշխավորված հնարավորություն, ապա ՀՀՇ-ն զուրկ էր նման լծակներից և կուսակցական իմիջի տեսանկյունից վարկաբեկված էր, ինչի մասին են վկայում 1999–ի և 2003-ի խորհրդարանական ընտրություններին նրա պարտությունը, իսկ 2007-ի ընտրություններին՝ կուսակցության չառաջադրվելու փաստը:

Առասպելաձևավորման տեսանկյունից առավել հետաքրքրական էր կոնտեքստուալ մակարդակում մրցակցի կողմից ընդդիմադիր թեկնածուի իմիջի դիտարկումը և ներկայացումը մասնական կազմակերպությունների համատեքստում, ինչպես նաև ձևավորվել և ակտուալացվել էր «Տեր-Պետրոսյանը՝ ՊԱԿ (ԿԳԲ) գործակալ» առասպելը:

Սերժ Սարգսյանի իմիջը ընկալվում էր այնպիսի կազմակերպության համատեքստում, ինչպիսին բանակն է, և այս զուգորդությունը հիմնականում ուղղված էր դրական երանգավորմամբ առասպելներ ձևավորելուն, այնինչ բացասական առումով հակառակորդի կողմից ակտուալացվում էր քրեական կառույցների՝ մաֆիայի հետ համադրությունը:

Հաջորդ՝ ընտանեկան համատեքստում ձևավորվող և տարածվող առասպելները չշրջանցեցին թեկնածուների ընտանիքների և ոչ մի անդամի: Հիմնականում շահարկվում էին Լևոն Տեր-Պետրոսյանի կնոջ ազգային պատկանելությունը և Սերժ Սարգսյանի դստեր ամուսնու բիզնեսին վերաբերող ասեկոսեները:

«Alter Ego»-ի կամ «Մտերիմ ընկերոջ» առասպելները նույնպես ծավալվում են կոնտեքստուալ մակարդակում: Եվ այստեղ առավել հետաքրքիր է դիտարկել երկուական հակադիր տանդեմներ՝ «Տեր-Պետրոսյան-Սիրադեղյան» և «Սարգսյան-Քոչարյան»: Եթե առաջին դեպքում Տեր-Պետրոսյանն էր գովազդում Սիրադեղյանին (Կողբ գյուղի բնակիչների հետ հանդիպման ժամանակ) և ցուցադրում իր հավատարմությունը ընկերոջը (գրեթե բոլոր հանրահավաքներում մեջ բերելով կուսակցի թևավոր արտահայտությունները), երկրորդ դեպքում՝ Ռ.Քոչարյանն առավել եռանդուն հանդես էր գալիս ավելի շուտ ի հակադրություն Տեր-Պետրոսյանի, քան՝ ի սատարում Սարգսյանի:

«Մտերիմ ընկերոջ» առասպելի շրջանակներում երկու թեկնածուների կողմից էլ փորձ կատարվեց զուգորդվել Վազգեն Սարգսյանի կերպարի հետ. Տեր-Պետրոսյանի դեպքում՝ Արամ Սարգսյանի գործոնը, նրա ելույթները, իսկ Սարգսյանի դեպքում՝ Վազգեն Սարգսյանի ելույթների արխիվային ժապա-

վենների օգտագործումը, որտեղ Վազգեն Սարգսյանը քննադատում է առաջին նախագահին և ցուցադրում իր համակրանքն ու վստահությունը Սերժ Սարգսյանին:

Քաղաքական միֆերի ձևավորման անձնային տիրույթում գործ ունենք թեկնածուների՝ որպես քաղաքական գործիչների, առասպելների, նրանց իմիջային բնութագրիչների հետ: Սրանք կայուն պատկերացումներ են տվյալ քաղաքական գործիչների մասին, որոնք ձևավորվել են հասարակական գիտակցության մեջ և որոնց մերօրյա ակտիվացումը կարող ենք դիտարկել «Մենք-Նրանք» կամ «Հերոս-Հակահերոս» միֆոլոգեմների տեսանկյունից:

«Մենք–Նրանք» միֆոլոգեմը առասպելների ակտուալացման անձնային տիրույթում դրսևորվում էր հետևյալ հակադրություններում՝ «Գործի մարդ» - «Խոսքի մարդ», «Ռազմական առաջնորդ» - «Դիվանագետ առաջնորդ», «Հարցեր լուծող» - «Մտավորական»: Հատկանշական է, որ այս կերպարները գրեթե հավասարազոր էին և լայն ընտրանի էին առաջարկում ընտրողներին:

Քաղաքականության մեջ անտագոնիստական հասկացությունների կիրառումը բավական տարածված տեխնիկա է, քանի որ մարդը մշտապես հակված է գնահատել երևույթները որպես լավ կամ վատ, ինչն էլ առասպելի ակտուալացման հիմք է դառնում: Նման առասպելներում քաղաքական իմիջը կառուցվում է՝ հիմնվելով բնակչության մեծ մասի ցանկությունների ու նախընտրությունների վրա՝ ձգտելով հասնել իմիջը կրող սուբյեկտի և ընտրողի միջև յուրահատուկ համախմբման («Մենք»-ի զգացողության), դա էլ այնուհետև հակադրել մյուս թեկնածուներին («Նրանց»): «Մենք»-«Նրանք»-ի ակտիվ և համոզիչ կիրարկումը նպաստում է հետևյալ զգացմունքների ձևավորմանը և արտահայտմանը. թշնամիներ հայտարարվածների նկատմամբ ցասումնալից ընկալում, ագրեսիա ու դյուրագրգռություն:

Այս տեսանկյունից նման միջոցների նպատակային օգտագործումը բերում է քաղաքական պայքարի տեղափոխմանը հույզերի և կրքերի իռացիոնալ դաշտ, որտեղ ռացիոնալ հիմնավորում ընդսմին չի էլ ենթադրվում, որտեղ «ո՞ւմ և ինչո՞ւ ես ընտրելու» հարցերի ամենատարածված պատասխանը դառնում է՝ «որպեսզի մյուսը չանցնի»-ն:

Մարտ, 2009թ.

ПОЛИТИЧЕСКАЯ МИФОЛОГИЯ В КОНТЕКСТЕ ПРЕЗИДЕНТСКИХ ВЫБОРОВ 2008г. В РА

Нвард Мелконян

Резюме

В статье представлен социологический анализ особенностей проявления политических мифов, сформированных вокруг образов Сержа Саркисяна и Левона Тер-Петросяна, которые являлись основными кандидатами в президенты на президентских выборах 2008г. в Армении.

Анализ политической рекламы и предвыборных выступлений кандидатов позволил выявить, какие мифы конструировались тем или иным политиком в предвыборный период, какие символы и стереотипы использовались при этом, насколько сформированные мифы соответствовали представлениям и ожиданиям избирателей. Особого внимания заслуживает процесс актуализации четырех основных мифологем (о «Герое», «Антигерое», «Золотом веке» и «Единстве») и их проявления на межгосударственном, государственном, контекстуальном и личностном уровнях, измерениях.

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տիգրան Մարտիրոսյան

Հայկական լեռնաշխարհն Առաջավոր Ասիայում հանդիսանալով իբրև Միջնաշխարհ-Հարթլենդ՝ տարածաշրջանում զբաղեցնում է կենտրոնական աշխարհաքաղաքական դիրք: Այս «դիրքի» վերահսկումը աշխարհաքաղաքական դերակատարին կամ կորպորատիվ դերակատարների խմբին գերիշխելու կարողություններ կարող է տալ: Ուստի Հայաստանի[1] և առաջավորասիական պետությունների համար չափազանց կարևոր նշանակություն ունեն այն աշխարհաքաղաքական գործընթացները, որոնք տեղի են ունենում վերջին տասնամյակներում և միտված են աշխարհաքաղաքական հետևանքներով լի քրդական պետականության խնդրի ակտուալացմանը: Այդ իսկ պատճառով ՀՀ և ԼՂՀ տարածաշրջանային ռազմավարության համատեքստում առաջ եկավ քրդական հարցի շուրջ դիրքորոշումների և ռազմավարության մշակման անհրաժեշտություն:

Ներածություն

Հայկական լեռնաշխարհի զգալի մասը կազմող Արևմտյան Հայաստանը ներկա պայմաններում բնակեցված է լազերով, աջարներով, կովկասյան և թյուրքալեզու ժողովուրդների ազգագրական խմբերով, բռնի կերպով մահմեդականացած և «կիսամահմեդականացած»[2] հայերով՝ համշենահայերով, «կեսկեսներով», սակայն մեծավ մասամբ՝ քրդական էթնիկ հանրություններով՝ կուրմանջիներով ու զազաներով: Քրդերի թիվն այստեղ հասնում է 13 մլն, իսկ ըստ որոշ տվյալների՝ 18 մլն մարդու [1, 2]: Քրդերը հոծ խմբերով ապրում են Թուրքիայի 20 վիլայեթներում: Վանի, Աղրիի (Բագրևանդ ու Դարոյնք), Բինգյոլի (Տավրուբերանի հյուսիսարևմտյան հատված), Բիթլիսի (Տավրուբերանի արևելյան հատված), Դիարբեքիրի (Մեծ Ծոփք և Միջագետք Հայոց), Մարդինի (Արուաստան), Հաքյարիի (Կորճայք) նահանգներում նրանք կազմում են բնակչության մեծամասնությունը [1]: Այս ժողովուրդը 20-րդ դարի սկզբներից պայքար է մղում Թուրքիայի Հանրապետության դեմ՝ տիրանալու համար Արևմտյան Հայաստանին: Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության հետևանքով, ի թիվս այլ արևմտահայկական երկրամասերի՝ ժողովրդա-

[1] Հայաստան անվանման տակ սույն հոդվածում նկատի ունենք ՀՀ-ն և ԼՂՀ-ն:

[2] Կիրառվում է նաև «կրիպտոհայեր» (հունարեն «կրիպտո» նշանակում է «թաքնված») անվանման ձևը:

գրական պատկերի փոփոխման հետևանքով, Հայաստանի հարավային տարածքներում (Միջագետք Հայոց, Կոմմագեն, Աղձնիք, Կորճայք, Ծոփք) քրդական բնակչության տոկոսի բարձրացմամբ Սևրի պայմանագրում (1920թ. օգոստոսի 20-ին) սույն տարածքը հորջորջվում էր «քրդական»: Այս ժողովուրդն իր ջանքերն ուղղում է Թուրքիայի արևելքում, Իրանի արևմուտքում և Իրաքի հյուսիսում իր պետականության ստեղծմանը:

Քրդական հարցը բազմիցս օգտագործվել է մեծ ու փոքր երկրների կողմից ի շահ իրենց: Մասնավորապես Հունաստանը և Սիրիան բազմիցս մեղադրվել էին թուրքական կառավարության կողմից Աբդուլահ Օջալանի ապստամբությանն աջակցելու մեջ [3, 4]: Սիրիան իր տարածքում ապաստան էր տվել քուրդ ապստամբների ղեկավարին, և երբ Թուրքիան սպառնաց[1] Հ.Ասադին ռազմական ներխուժմամբ, վերջինս 1998 թվականի հոկտեմբերի 9-ին որոշեց վտարել ՔԱԿ[2] կենտրոնակայանը Սիրիայից [5, 2]:

Տարիներ առաջ արևմտյան քաղաքագետներն իրենց մտահոգությունն էին արտահայտում «Քրդական հարցում» ռուսական/ԽՍՀՄ միջամտության առումով: 1946թ. հուլիսին հրատարակված մի հոդվածում նշվում էր, որ քրդական անկախությանն ուղղված շարժումն ամենամտահոգիչն էր Մերձավոր Արևելքի կոնֆլիկտներից, քանի որ այն աջակցություն էր գտել ի դեմս Խորհրդային Ռուսաստանի, և որ դա քրդերին վերածում էր ռուսական լծակի [6, p. 50]: Մեծ տերությունները, գործի դնելով քարոզչական հզոր մեքենան, բորբոքում էին ազգային և կրոնական տարաձայնությունները՝ իրենց գերակայող դիրքերն ամրապնդելու նպատակով, իսկ բախումներ հրահրելուց հետո օգնում էին թույլ կողմին՝ ուժերի հավասարակշռությունը պահպանելու նկատառումով: Այնուհետև պատնեշվում է պատերազմող կողմերի հաղթանակի ճանապարհը, ինչը ստեղծում է ոչ պատերազմ, ոչ խաղաղություն իրավիճակ, որը լիովին ապահովում է մեծ տերությունից հակամարտող կողմերի տնտեսական, ռազմական և քաղաքական կախվածությունը [7, էջ 1]: Նման քաղաքականություն կիրառվում էր նաև քրդական հարցում:

1. Քրդական շարժման նոր փուլը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում

ՔԱԿ-ը սկսեց իր ակտիվ գործունեությունը յոթանասունականներին՝ իբրև մարքսիստական կազմակերպություն Թուրքիայի արևելյան նահանգների գյուղական շրջաններում: Այն շուտով գլխավորեց քրդերի քաղաքական շարժումը Թուրքիայում և ութսունական թվականների սկզբից ծավալեց աննախա-

[1] Ըստ երևույթին համաձայնության գալով ռուսների հետ «Թուրքիան չի աջակցի չեչեններին, եթե ռուսները չհովանավորեն քրդերին» սկզբունքի շուրջ:
[2] «Քրդստանի աշխատավորական (բանվորական) կուսակցություն»՝ կուրմանջիական ռազմականացված կազմակերպություն Թուրքիայում:

դեպ մի ապստամբություն, որը տևեց մեկ տասնամյակ: Կազմակերպության հիմնական գործողությունները XXդ. 80-90-ական թթ. ծավալվում էին Արևմտյան Հայաստանի տարածքում, որտեղով պետք է անցներ Բաքու-Ջեյհան նավթամուղը: Թուրքիայի կառավարող շրջանները սկսեցին շահարկել այս փաստը, քանի որ քրդական կողմն այս առումով, ոչ առանց Ռուսաստանի ճնշման, բազմիցս նշել էր, որ ձգտելու է խաթարել այս ծրագիրը: Այսպես, 1995թ. օգոստոսին Ահմադ Դերեն, որը ԱՊՀ-ում «Քրդստանի ազգային ազատագրական ճակատի» խոսնակն էր, արտահայտվեց այդ առումով՝ ջուր լցնելով և՛ ռուսական, և՛ թուրքական ջրաղացներին [8]: Ռուսաստանն այսպես բացահայտ թափահարեց քրդական խաղաքարտով Թուրքիայի առջև՝ կանխելու համար վերջինիս աճող ազդեցությունը նախկին ԽՍՀՄ տարածքում և հատկապես Հյուսիսային Կովկասում:

«Քրդստանի կոմիտեի» և «Քրդստանի ազատագրության ճակատի» կողմից Մոսկվայում 1994թ. փետրվարին անցկացվեց գիտաժողով, որը կոչվում էր «Քրդստանի պատմությունը» [9]: Երբ թուրքերը պարզեցին, որ գիտաժողովի համակազմակերպիչներից մեկը Ռուսաստանի Ազգությունների և տարածաշրջանային քաղաքականության նախարարությունն է [10], բողոքի նոտա հղեցին, սակայն ռուսները ժխտում էին իրենց մասնակցությունն այս անցքերին և նշել էին, որ այսուհետ թույլ չեն տա նմանատիպ միջոցառումների անցկացումը, սակայն ակնարկում էին, որ մտահոգված են, որ Թուրքիան չհամագործակցի Չեչենական Հանրապետության Դուդաևի վարչակարգի հետ [11]:

Սակայն 1994թ. հոկտեմբերի 31-ին Մոսկվայում տեղի ունեցավ ԱՊՀ քրդական կազմակերպությունների համաժողով, որը տևեց երեք օր և հայտարարեց «քրդական միության» ստեղծման մասին՝ ընդունելով ՔԱԿ-ը իբրև միջուկ: Թուրքիայի արտգործնախարարի տեղակալ Օզդեմ Սանդբերքը ժամանեց Մոսկվա՝ քննարկելու այս հանգամանքը: Սակայն ռուսներն անընդհատ ժխտում էին ՔԱԿ-ի և համաժողովի կապը: Ավելին, ռուսաստանյան պաշտոնյաները պնդում էին Թուրքիայի դեսպանին, որ ՔԱԿ բյուրոն Մոսկվայում բացվել էր «միայն քրդերի մշակութային գործունեության նպատակով»: 1995թ. սկզբին Անկարայում ռուսական դեսպանը թուրք պաշտոնատարներին ներկայացրեց Թուրքիայից չեչեններին զենքի մատակարարման ապացույցները: Դրանից անմիջապես հետո Թուրքիայի ազգությամբ քուրդ երկու խորհրդարանականներ, որոնք հիմնադրել էին «Քրդստանի խորհրդարանը վտարանդիության մեջ», եկան Մոսկվա՝ «հասնելու իրենց ազգային իդեալներին»: Սակայն ռուսների նպատակների մեջ ամենևին էլ չէր մտնում աջակցել «անջատողական» շարժումներին: ՌԴ արտգործնախարարը խնդիրն օգտագործեց ի շահ իր երկրի. նա մերժեց քրդական պահանջների մեծ մասը՝ ձևականորեն թույլատրելով «Քրդական տուն[1]» ազգային կենտրոնի գործունեությունը Մոսկվայում [12]:

[1] Թուրքական կառավարական աղբյուրները համարում են, որ այս կազմակերպությունը վայելում է ՔԱԿ հովանավորությունը:

Թուրքիան, ընկալելով ռուսների քայլերի վտանգն իրենց երկրի համար, նրանց առաջարկեց համաձայնության գալ: Շուտով Մոսկվայում ստորագրվեց «Ահաբեկչության կանխման մասին արձանագրությունը», որը քրդական ապստամբության համար «սառեցրեց» ռուսական աջակցությունը՝ ամենայն հավանականությամբ ժամանակավորապես, մինչև վայնախական խնդրի լուծումը [13]: Ի պատասխան՝ Թուրքիան պարտավորվեց չխառնվել հյուսիսկովկասյան գործերին և հանձնել բոլոր չեչեն անջատողականներին[1]: 1995թ. հունվարի վերջին ռուսական պաշտոնատարները ժամանեցին Թուրքիա և վերահաստատեցին այս պայմանագրի դրույթները [14, p. 112]: Ապա ռուսները սկսեցին «աղալ» չեչեններին՝ միաժամանակ ՀՀ ԶՈՒ-ի հետ համատեղ զորավարժություններ անցկացնելով Թուրքիայի սահմանի մոտակայքում [15]: Իսկ վերջինս էլ վեցշաբաթյա ռազմական գործողություն ծավալեց Հյուսիսային Իրաքում [16, p. A3]: Թուրքիան և Ռուսաստանը 1995թ. հուլիսի 21-ին վերահաստատեցին, որ չեն աջակցելու այն անջատողական շարժումներին, որ վտանգում են երկու երկրների տարածքային ամբողջականությունը [17, p. A3]: Ավելին, թուրք պաշտոնյաները պնդում էին, որ Թուրքիայի չեչենական կազմակերպություններին չի թույլատրվելու մասնակցել որևէ գործողության ընդդեմ ռուսների [18]: Ալբերտ Չեռնիշովը՝ Անկարայում ՌԴ նախկին դեսպանը, ապա՝ արտգործնախարարի տեղակալը, հայտարարեց, որ Քրդական խնդիրը Թուրքիայի ներքին գործն է [19, p. 23]: 1996թ. մարտին Թուրքիայի փոխարտգործնախարարը, որը Մոսկվայում բանակցություններ էր վարում, հայտարարեց, թե նոր շրջան է բացվում ռուս-թուրքական հարաբերություններում, և նշեց, որ առաջինները կանխելու են իրենց երկրում քրդական ռադիոհաղորդիչ կայանի հիմնումը: Ռուսական պաշտոնատարները հայտարարեցին, որ զոհ են Թուրքիայի դիրքից չեչենական խնդրում, ինչը պայմանավորված էր թուրքերի դիրքորոշումների մեղմացմամբ [20]:

Սակայն Ռուսաստանն ակտիվորեն շարունակում էր շահարկել «քրդական խաղաթուղթը» հօգուտ իր տարածաշրջանային շահերի՝ մերթ համագործակցելով Թուրքիայի, մերթ էլ՝ քրդերի հետ: Այսպես, մեկնաբան Ալեքսանդր Նևզորովը բացեիբաց նշում էր, որ ՔԱԿ պատվիրակության հետ հանդիպման ժամանակ ռուսական պաշտոնատարները հայտարարում էին, որ ՔԱԿ-ն ամենևին էլ ահաբեկչական կազմակերպություն չեն համարում, և որ իրենք պետք է օգտագործեն քրդական հարցը Թուրքիայի վրա ճնշում բանեցնելու

[1] Ըստ երևույթին ռուսները պարտավորվեցին նաև վտարել Օջալանին (քանի որ անմիջապես դրանից հետո ստիպեցին նրան հեռանալ Մոսկվայից), ապա և բացառված չէ նաև՝ օգնել Թուրքիայի հատուկ ծառայություններին ձերբակալելու նրան, ինչն էլ տեղի ունեցավ Քենիայում՝ հրեական հատուկ ծառայությունների կողմից թուրքերին տրամադրված սարքավորումների շնորհիվ: Տե՛ս *Велиев А.,* «Треугольник Израиль-Турция-Азербайджан: реальность и перспективы» // «Центральная Азия и Кавказ», N2 (8), Швеция, с. 109, 2000.

համար [21]: Ապա նորից համաձայնության եզրեր գտնելով Թուրքիայի հետ տարածքային ամբողջականության և «հյուսիսային նավթուղու» դրույթների շուրջ՝ ՌԴ վարչապետը 1996թ. հուլիսին ասել էր Թուրքիայի խորհրդարանի խոսնակին, որ այլևս չունի տեղեկատվություն ՔԱԿ գործունեության մասին Ռուսաստանում և նշել էր, որ հետևելու է այս գործին [22]: Չեռնոմիրդինը 1996թ. կրկնել էր նույն խոստումը Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ: Սակայն, ձեռքի տակ Թուրքիայի դեմ մշտական հաղթաթուղթ ունենալու նպատակով, Մոսկվայում 1997թ. հոկտեմբերին շարունակվում էր առաջին Քրդական ազգային կոնգրեսի նախապատրաստումը, որի կազմակերպիչներից էին «Քրդստանի խորհրդարանը վտարանդիության մեջ», որի մի քանի անդամ նորից Մոսկվայում էին: Ազգային կոնգրեսը նախապատրաստական փուլից հետո պետք է փոխադրվեր Իրաք՝ ինքնավար Քրդստանի տարածք, և նպատակ ուներ միավորել բոլոր քրդական կազմակերպությունները [23]: Այդ ընթացքում Ռուսաստանի Պետդումայի աշխարհաքաղաքականության հարցերով հանձնաժողովի անդամները հանդիպեցին Օջալանի հետ և հանդիպումից հետո հայտարարեցին, որ թեև քրդական հարցը համարում են Թուրքիայի ներքին գործը, այնուամենայնիվ, իրենք կողմ են Թուրքիայի և Քրդստանի դաշնային երկիր վերածվելուն [24]:

Այնուհետև, ռուսները և թուրքերը լեզու գտան, և ամեն ինչ նորից «խաղաղվեց», բայց, իհարկե, ոչ քրդերի համար: Այսպես, 1999թ. ռուսների դրդմամբ Վիեննայից Թուրքիա էին ժամանել խաղաղության քրդական պատվիրակության 5 անդամներ, որոնք հանձնվել էին իշխանություններին՝ իրենց հետ բերելով ՔԱԿ («Քրդստանի աշխատավորական կուսակցության») խաղաղության առաջարկով նամակ: Նամակը մերժվել էր: Հակառակ հաշտության ձգտումներին՝ թուրքական դատարանը բանտարկության դատապարտեց նրանց: Պատվիրակության ղեկավարներից մեկը դատապարտվեց 18 տարի 9 ամիս բանտարկության՝ խմբի պաշտոնական լիազորը լինելու, իսկ մյուս չորսը՝ 12 տարի 6 ամիս բանտարկության՝ ՔԱԿ անդամ լինելու համար: Վերջին 15 տարիների ընթացքում մոտ 37 հազար մարդ, հիմնականում՝ քրդեր (մոտ 35 հազ. մարդ, որից 8.2 հազարը՝ Հյուսիսային Իրաքում 1997թ. օգոստոսից հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում), սպանվել էին քուրդ-թուրքական հակամարտության հետևանքով [25]: Ավելի քան 4000 քրդական գյուղ էր տեղահանվել և փոխադրվել Կենտրոնական Անատոլիա՝ Փոքր Ասիա, որից 1700-ը Դիարբեքիրի և Հաքյարիի իլերից՝ ապստամբների հետ համագործակցելու պատրվակով: Շրջակա երկրների անտարբերության պայմաններում, եթե չհաշվենք Օջալանի ձերբակալությունից հետո հունական հասարակու-

թյան կողմից կառավարության «թեթևակի» պախարակելը[1], քրդական 27-րդ ապստամբությունը շարունակում էր ճնշվել Թուրքիայի կանոնավոր բանակի կողմից [2, c. 33]: Թուրքական ռազմական մեքենայի իրականացրած «Մուրաթ»[2] գործողությունը հանգեցրեց բազմահազար զոհերի և տասնյակ հազարավոր տեղահանվածների քրդերի շրջանում, Արածանի գետի միջին հոսանքի ավազանի բնակավայրերը քրդաթափվեցին: Այսպիսով, եթե հաշվի առնենք, որ Վանա լճի արևմտյան կողմի ափամերձ քաղաքները ներկայումս առավելապես թուրքաբնակ են, հյուսիսում գտնվող կուրմանջիաբնակ տարածքները ազգագրորեն անջատվեցին Հայկական Տավրոսից հարավ գտնվող էթնիկ արեալից[3]: Այս դեպքերին հետևած քրդերի առաջնորդի ձերբակալությանը անդրադառնալով՝ Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթը հայտարարեց, որ սա Քրդական հարցի հանգուցալուծումն էր [2]:

2. Քրդական էթնիկ հանրությունները և նրանց փոխհարաբերությունները

Հանրահայտ է, որ քրդերը ազգագրորեն (հատկապես՝ բարբառախմբային առումով) բաղկացած են հետևյալ երեք հիմնական էթնիկ խմբերից՝ սորանիներ, զազաներ[4], կուրմանջիներ: Իրենց հասարակական կառույցի հիմքում նրանք պահպանում են տոհմացեղային կառուցվածքը. այսպես, խոշորագույն ցեղերն են՝ ռավանդուզ, բոխթան, խերֆի, դաուդյե, սարլը, մուքրի, բիլբաս, շեկքակի, զաֆարանլը, շադուլը և այլն: Այս հանգամանքը թեև թուլացնում էր պետական կառուցվածքները կենտրոնացնելու փորձերը Իրաքի քրդերի շրջանում, սակայն նաև թույլ էր տալիս պատերազմի պարագայում ցեղերի գրեթե ամբողջ արական բնակչությունից ստեղծել մեծաքանակ կուռ բանակ:

Ներկայումս Թուրքիայի Հանրապետությունում կուրմանջիները (հյս. քրդերը) մեծ թիվ են կազմում պատմական Մեծ Հայքի տարածքներում (Կար-

[1] Հույներն այդ օրերին կազմակերպեցին բազմահազարանոց բողոք-ցույցեր ընդդեմ իրենց կառավարության. ցուցարարների պաստառներից մեկի վրա գրված էր. «Քրդեր՝ բարեկամներ, ներեք մեզ»: Հունաստանի կառավարությունը, արտգործնախարար Թեոդորոս Պանգալոսին պաշտոնաթող անելով, փորձում էր կոծկել այն ցասումը, որ առաջ էր եկել ՔԲԿ առաջնորդին թուրքերի կողմից ձերբակալման ժամանակ հույների հանցավոր «անփութության» հետևանքով, իսկ Օջալանի գլխավոր դատապաշտպան Բրիտա Բելերը քրդերի առաջնորդի մեղադրողների համար վերածվել էր իսկական «գլխացավանքի»: Տե՛ս «Итоги» еженедельный журнал вместе с Newsweek, Москва, 2 марта, 1999, էջ 34:

[2] Արածանի գետի թուրքական անվանմամբ կոչված ռազմական օպերատիվ գործողություններ՝ նպատակաուղղված այս գետի հովտում և Դիարբեքիրի իլում քուրդ հայդուկների ոչնչացմանը և խաղաղ բնակչության տեղահանմանը 1998թ. ապրիլի 24-ից մայիսի 16-ը:

[3] Պատմական Մեծ Հայքի Վասպուրականի և Մոկքի ներկայումս լեռնային քրդաբնակ տարածքներն էին միայն մնում իբրև կապող օղակ Տավրոսից հյուսիս ընկած որոշ քրդաբնակ տարածքների հետ:

[4] Որոշ ուսումնասիրողներ կարծիք են հայտնում, որ զազաները միանգամայն այլ ազգ են՝ ոչ քուրդ. մենք ևս հակված ենք այս կարծիքին:

սի, Արդահանի, Սուրմալուի, Էրզրումի, Աղրիի, Վանի, Բիթլիսի, Մուշի, Բինգյոլի, Խարբերդի, Խոզաթի, Դիարբեքիրի, Սղերդի, Հաքյարիի, Մարդինի իլերում), Կոմմագենեում (Մալաթիա, Ղազիայնթեպ) և Օսրոյենեում՝ Ուրֆայի նահանգում, ինչպես նաև Սիրիայի հյուսիս-արևելքում, Իրաքի Դահուկ և Իրանի Արևմտյան Ադրբեջան (Ատրպատական) նահանգներում: Նրանք տարածված են նաև Ատրպատականի մյուս մասերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում (եզդիների դավանանքին պատկանող): Իսկ վերջերս էլ Ադրբեջանի ղեկավարության աջակցությամբ տեղափոխվում են Ղազախ, Նախիջևան և հայ-ադրբեջանական շփման գծի երկայնքով:

Զազաները տարբերվում են մյուսներից ոչ միայն իրենց զազա լեզվով, այլև կրոնով. նրանք ալևի են: Ի տարբերություն կուրմանջիների մեծամասնության, որոնք շաֆիիթական սուննիներ են, «ղզլբաշները» «Ալի-իլլահ աբու Թալեբիի» հետևորդներ են ու իրենց անվանում են դլմիկ և վերջին տասնամյակներում ժխտում են իրենց քուրդ լինելը, ինչպես՝ եզդիները: Թուրքերի համար այս տարրը նախկինում «ամենաանհավատարիմն» էր քրդերի շրջանում: Սակայն այժմ թուրքերը հմտորեն օգտագործում են այս ազգագրական խմբի էթնիկ անջատողականությունը:

1980-90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ծագած քրդերի ապստամբական շարժումը (Ա.Օջալանի գլխավորությամբ), որը տևեց երկու տասնամյակ, ստիպեց Թուրքիային նոր քաղաքականություն որդեգրել քուրդ գերէթնիկ հանրության նկատմամբ: Թուրքական հատուկ ծառայությունները, համաքրդական շարժումը մասնատելու և նրա առավել մարտունակ զորախմբերը չեզոքացնելու նպատակով, ութսունականների վերջին աջակցեցին «զազա ժողովրդի ազատագրական շարժմանը»՝ անջատելով այն Քրդական աշխատավորական կուսակցության կազմակերպած ապստամբական խմբերից, թեև պետք է խոստովանել, որ դրա համար կային վաղուց ձևավորված օբյեկտիվ պայմաններ, որոնց մասին խոսվեց վերը: Այս քաղաքականության հետևանքով կտրուկ բարձրացավ զազաների (ինքնանվանումը՝ դլմիկ) ազգային ինքնագիտակցությունը, փորձ արվեց Արածանի գետի ներքին հոսանքից հյուսիս ու արևմուտք ընկած ամբողջ տարածքը դուրս թողնել ներկայիս համաքրդական էթնիկ արեալից: Քանի որ այստեղ քրդական հանրության ներկայացուցիչների 70%-ը ղզլբաշ էր, իսկ թուրքերն այստեղ բնակչության 15%-ից քիչ ավելի են, ուստի կարելի է ենթադրել, որ դա նպատակաուղղված էր կուրմանջիների և զազաների միջև սեպ խրելուն [1]: Զազաների տարածքային պահանջները, ինչպես նշում է Գառնիկ Ասատրյանը, իրենց բնակության արեալի համեմատ, աննշան էին՝ ընդգրկելով միայն Մնձուր և Բոլոմոր գետերի ավազանները (մոտ 3 հազ. կմ²):

Սորանիները մեծամասնություն են կազմում Իրանի Քուրդիստան, Բախթարան, Համադան[1] ու Իրաքի Սուլեյմանիա, Թամիմ, Էրբիլ նահանգներում, իսկ Նայնավա նահանգում՝ գրեթե բնակչության կեսը: Այստեղ՝ Իրաքի հյուսիսում, նրանք վայելում էին կիսանկախ վիճակ՝ ինքնավարություն (1974թ.), որը, նախնական շրջանում ձևական բնույթ կրելով, «Ծոցի պատերազմից» հետո առավել իրական բնույթ ստացավ՝ ահագին անհանգստությունների տեղիք տալով շրջակա երկրների կառավարություններին: Ինքնավարության զարգացման միտումները պայմանավորված էին ԱՄՆ, Անգլիայի և Իսրայելի քաղաքականությամբ Իրաքի սադամյան վարչակարգի նկատմամբ, սակայն չէին վայելում անգամ նրա տարածաշրջանային ռազմավարական դաշնակից Թուրքիայի աջակցությունն այս հարցում:

Քրդերը կուռ միասնությամբ չեն փայլում: Այսպես, 1997թ. նոյեմբերին սորանիական երկու կուսակցությունների միջև հակասությունները հասան կիզակետին, որի հետևանքով վերսկսվեցին մարտերը Մ.Բարզանիի գլխավորությամբ գործող, որոշ խնդիրներում Թուրքիայի աջակցությունը վայելող և վերջինիս կողմից օգտագործվող «Քրդստանի ժողովրդավարական կուսակցության» և սկզբնական շրջանում Իրանի ու Սիրիայի աջակցությունը վայելող Քրդստանի հայրենասիրական միության զինված ստորաբաժանումների միջև: Ի վերջո, ՔԴԿ-ի ստորաբաժանումները թուրքական կանոնավոր բանակի օգնությամբ ամբողջովին դուրս մղեցին ՔԱԿ-ին ու ՔՀՄ-ին պատմական Ասորեստանից և գրավեցին Էրբիլ մայրաքաղաքը [26]: Սակայն մի քանի տարի անց ՔՀՄ-ին ու ՔԴԿ-ին հաջողվեց համաձայնության գալ համազգային հարցերում և միություն կազմել: Այս համաձայնության հիմքը ամերիկամետության՝ իբրև ուղղորդիչ գաղափարի, ընդունումն էր, որը հետագայում հատկապես վառ արտահայտվեց հակասադամյան ամերիկյան ներխուժման և դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Այն մեծապես պայմանավորված էր ԱՄՆ Կենտրոնական հետախուզական գործակալության և Իսրայելի «Մոսադ»-ի գործունեությամբ՝ հակասադամյան խմբավորման ձևավորման և Իրաքը ներսից քայքայելու, ինչպես նաև հակաարաբական և հակաիրանյան դաշնակիցներ ձեռք բերելու նկատառումներով: Սակայն այս երկու կուսակցություններն այժմ միասին ՔԱԿ-ի դեմ Թուրքիայի պայքարում շատ դեպքերում ընդունում էին չեզոք (իսկ որոշ դեպքերում՝ Թուրքիային ձեռնտու) կեցվածք:

Քրդական երեք խմբերը պահպանում են իրենց էթնիկ զատվածությունը դարեր շարունակ: Ցայսօր կուրմանջիների կազմակերպությունը՝ Քրդստանի աշխատավորական կուսակցությունը, ոչ մի ազդեցություն չունի սորանիների

[1] Տարածված են և բնակչության զգալի թիվ են կազմում նաև Իրանի արևմտյան գրեթե բոլոր նահանգներում, բացի Ատրպատականից, Զենջանից, Գիլյանից, Խուզիստանից, Լուրիստանից ու Էլամից:

մեջ և հակառակը՝ սորանիների կազմակերպությունները չեն կարող ազդել կուրմանջիական ցեղերի վրա, չնայած որ բազմիցս բարձրացվել է համաքրդականության՝ միասնության գաղափարը [27]: Քրդերի մեջ այս էթնիկ զատիչ ինքնագիտակցությունը բավական ուժեղ արմատներ ունի: Այսպես, կուրմանջին անպայման մատնանշում է, որ ինքը քուրդ-կուրմանջի է, այսինքն՝ նշում է, թե որ էթնոխմբավորմանն է պատկանում: Իսկ եզդիների մեծագույն մասն անգամ ընդգծում է, որ քուրդ չէ, այլ՝ եզդի-կուրմանջի: Այս պարագան թուրքերին վաղուց է հայտնի, և նրանք քրդերի դեմ հմտորեն օգտագործում էին «բաժանիր և տիրիր» հայտնի հռոմեական սկզբունքը: Ավելին, նրանք կուրմանջիներին օգտագործում էին հայերի և ռուսների, երբեմն էլ՝ նաև պարսիկների դեմ, իսկ սորանիներին՝ ընդդեմ արաբների, պարսիկների և անգլիացիների: Այս երկու էթնիկ խմբերը հաճախ, թուրքերի դրդումով, բախվում էին: Ասվածի վառ օրինակն է թուրքերի և ՔԴԿ համագործակցությունը կուրմանջիական ՔԱԿ-ի դեմ: Թուրքերի անմիջական ազդեցության հետևանքով, կրոնական մոլեռանդություն տարածելով քուրդ մահմեդականների մեջ, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կազմակերպվեց եզդիների ցեղասպանությունը:

Քրդական գործոնն իրենց շահերի համար օգտագործում էր նաև Իրանը ընդդեմ Թուրքիայի, Իրաքի, քրդական ընդդիմադիր ցեղերի: Իսկ այժմ էլ Իրանը համագործակցում է Թուրքիայի հետ երկու երկրների սահմանամերձ տարածքներում քրդական զինված խմբերը չեզոքացնելու համար: 2006թ. իրականացվել է նման ավելի քան վեց համատեղ օպերացիա:

Քրդերի մեջ առկա այս ներքին հակասությունն էր առաջին աշխարհամարտի և Բաշ-Ապարանի ճակատամարտի ժամանակ եզդիների կողմից հայերին աջակցելու պատճառը, չնայած որ քրդերի հիմնական մասը՝ մահմեդականները, կռվում էին թուրքերի կողմից: Պետականության կայացման նորագույն շրջանում հայերս եզդիների մեջ ունեցանք հավատարիմ դաշնակիցներ և հայկական պետականության նվիրյալներ:

Քրդերի մասնատվածությունը ճկունորեն օգտագործում էր Մեծ Բրիտանիան Միջագետքի սորանիական արեալը Իրաքին կցելու համար (կապված շրջանի նավթաբերության հետ): Սա էր պատճառներից մեկը, որ առայժմ Իրաքի և Թուրքիայի սահմանը մոտավորապես համընկնում է կուրմանջի և սորանի քրդերի արեալների միջև առկա զատող գծին: Այս քաղաքականությունը Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և Իսրայելը կիրառում են նաև հիմա: Անգլիացիները միշտ ձգտում էին փոխել կուրմանջիների և զազաների թուրքամետ կողմնորոշումը՝ ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից: Այսպես, 1919թ. ամռանը նմանատիպ ջանքերն առավել ակտիվացան: Այդ ժամանակ Փարիզի Խաղաղության կոնֆերանսի կողմից Արևմտյան Հայաստանում հայե-

րի և քրդերի քանակի հաշվարկման առաջադրանքով Մալաթիա ժամանեց բրիտանական մայոր Նոելը [28, c. 25]: Նա Բեդիրխանի հռչակավոր տոհմի անդամների և «Քրդստանի վերածննդի ընկերության» օգնությամբ կազմակերպեց ապստամբություն մյութասարիֆ Խալիլ Ռահմի-բեյ Բեդիրխանիի գլխավորությամբ, վերջինս էլ հռչակվեց «Քրդստանի» կառավարիչ:

Այդ շրջանում քրդական ազգային շարժումն այնքան լուրջ գործոն էր, որ անգամ միջազգային ճանաչում ստացավ. Սևրի պայմանագրի 62-րդ հոդվածով նախատեսվում էր Թուրքիայի տարածքում, հիմնականում քրդերով բնակեցված շրջաններում, ինքնավար մարզի հաստատումը: Համաձայն Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչների մշակած նախագծի, Սիրիայի, Հայաստանի և Իրաքի միջև գտնվող անդրեփրատյան տարածքներում պետք է ստեղծվեր ինքնավար Քրդստան [29]: Նույն պայմանագրի 63-րդ հոդվածը պարտավորեցնում էր Թուրքիային 3-ամսյա ժամկետում կյանքի կոչել ինքնավարության նախագիծը, որը կառաջարկվի նրան հանձնաժողովի կողմից [29]: 64-րդ հոդվածը հնարավորություն էր նախատեսում (1 տարուց) քրդերի համար՝ անկախության պահանջով դիմել ազգերի խորհուրդ: Խորհուրդն իրավունք ուներ համաձայնվել այս պահանջի հետ, որն էլ այնուհետև պետք է ճանաչվեր Թուրքիայի կողմից: Այն պետք է ձևակերպվեր իբրև հատուկ համաձայնագիր Թուրքիայի և գլխավոր դաշնակից տերությունների միջև: Հոդվածի վերջին պարբերությունը նշում էր, որ «Քրդստանի» անկախացման դեպքում գլխավոր դաշնակից տերությունները չեն առարկի, եթե առաջինին միանան Մոսուլի վիլայեթի քրդերը [29]:

1919-1921թթ. քրդական ցեղերի և հայերի միջև գոյություն ունեցող հակասություններից ժամանակին ու շատ հմտորեն օգտվեց նաև Մուսթաֆա Քեմալը: Կուրմանջիներին հայկական վտանգով «վախեցնելով» և տարածելով պանիսլամական կոչեր՝ նա կարողացավ Արևմտյան Հայաստանի քուրդ բնակչության մեջ հենարան գտնել Անտանտի, ինչպես նաև նրա դաշնակից Հայաստանի դեմ պատերազմում:

Այնուհետև Քեմալը, «հակաիմպերիալիստական» սիրախաղ նախաձեռնելով Լենինի հետ և ստանալով նրանից մեծ քանակությամբ զենք և դրամ, Անկարայից արևմուտք կանգնեցրեց և ջախջախեց հունական բանակը՝ ի չիք դարձնելով հույների, հայերի և քրդերի՝ Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու ցանկությունը:

Վերջինը «Քրդական հարցը» միջազգային դիվանագիտության խնդրո առարկա դարձրեց՝ փաստորեն մեծ տերությունների համար «փոխարինելով» տվյալ տարածքում «Հայկական հարցին», որն այլևս նման տարածքային ծավալ չէր կարող ընդգրկել 1895-1923թթ. հայերի ցեղասպանությունից հետո,

որին զոհ գնաց մոտ երկու միլիոն հայ: Անգլիայի քաղաքականությունն այս տարածքում հայ դիվանագիտության համար բավական ուսուցողական է՝ հասկանալու գերտերությունների դիվանագիտության ոճն ու գործելակերպը և դասեր քաղելու դրանից: Մեծ տերությունները մինչև այժմ պահպանել են նմանատիպ գործելակերպը, իսկ նրանց հատուկ ծառայություններն իրենց գործունեությունն են ծավալում քրդերի և նրանց ազգային-ազատագրական շարժման շուրջ [28]:

3. Հայեր, թուրքեր, քրդեր՝ աշխարհաքաղաքական միտտելշպիլ

Վաղուց ի վեր թուրքերը քրդերի ձեռքով կրակից շագանակ հանելու քաղաքականություն էին որդեգրել: Այն առավել ծայրահեղ կերպով դրսևորվեց 1915-1923թթ. Մեծ եղեռնի դեպքերի ժամանակ. մինչև 20-րդ դարի 20-ական թթ. նրանց հաջողվեց բնաջնջել հայերին Արևմտյան Հայաստանում՝ մեծ մասամբ «սև գործողություններում» օգտագործելով քրդերին: Քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության իրականացման մեջ քրդերի հրոսակախմբերն ուրույն դեր էին ունեցել, ուստի նրանք Թուրքիայի հետ կրում են պատասխանատվության իրենց բաժինը: Փաստորեն, այս իրադարձությունների ժամանակ Օսմանյան կառավարությունը քրդերին օգտագործեց հայերի դեմ:

Կուրմանջիների շարժման հաջողությունը Թուրքիայում կարող է հանգեցնել պատնեշի ձևավորման Թուրքիայի և ՀՀ-ի միջև: Այս դեպքում քրդերն արգելափակոցի դեր կարող են ստանձնել: Սակայն Թուրքիայում քրդական ինքնավարության ձևավորման և թուրք-քրդական դաշնային պետության ձևավորման դեպքում այն կարող է հանգեցնել նաև միասնական քուրդ-թուրքական դաշինքի ձևավորմանը, ինչն էլ հետագայում, հնարավոր է, Թուրքիայի դեպի այլ քրդաբնակ տարածքներ ծավալվելու հիմք հանդիսանա: Նման գործընթացը, պանթուրքական ծրագրերին զուգահեռ կիրառվելու դեպքում, լի է անդառնալի հետևանքներով ամբողջ տարածաշրջանի համար, հատկապես՝ ՀՀ և Իրանի պարագայում:

Այնուամենայնիվ, Իրաքի հյուսիսում սորանիական կազմակերպությունների պետականության ձևավորումը կարող է, իրոք, քանդել թուրքական գերիշխանության հիմքերը Արևմտյան Հայաստանում, քանզի հակաարաբական և հակաիրանյան դաշինքով շահագրգռված Իսրայելը, Իրաքի հյուսիսի նավթային շրջանների վրա հուսալի վերահսկողության ձգտող ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ուղղակիորեն շահագրգռված են Իրաքի քրդերի քաղաքական և ռազմական հզորացմամբ. դա նաև հզոր զենք է Իրանին և Թուրքիային սանձե-

լու գործում: Թուրքիայում հզորացող իսլամականության պայմաններում հնարավոր է վերջինիս հարաբերությունների վատթարացումը Արևմուտքի հետ, ինչն ուղղակիորեն կարող է քրդերին մղել որոշակի քայլերի Արևմտյան Հայաստանում:

Սակայն հնարավոր է դեպքերի մեկ այլ զարգացում, որը, կարծում ենք, ավելի քիչ հավանական է: Քրդական պետության առաջացումը Թուրքիայում կարող է հանգեցնել Իրանի գործոնի հզորացմանը Միջին Արևելքում և, այսպես կոչված, «Մեծ Թուրանի» տարածաշրջանում: Իրանը խիստ շահագրգռված է դեպքերին նման ընթացք տալու մեջ, քանզի կուրմանջիները նրա տարածքում մեծ էթնիկ արեալ չունեն և հակադիր դիրքորոշում ունեն նրա տարածքի թյուրքախոս ազգաբնակչության և մասնավորապես նրանց անջատողական շարժումների նկատմամբ: Ուրեմն, եթե Իրանին հաջողվի իրականացնել այս ծրագիրը, Թուրքիայի դերը հնարավոր է որ նվազի Արևմուտքի քաղաքականության մեջ՝ կապված Իրանի «տարածաշրջանում իսլամական արժեքների վերահաստատման» գաղափարախոսության և դրան համապատասխան վարվող քաղաքականության հետ: Հնարավոր է, որ այն կտրուկ հզորացնի քրդական գործոնը, որը նման պարագայում խթան կարող է հանդիսանալ համաթյուրքական էթնիկ արեալում:

Իրանի տարածքային ամբողջականության պահպանմամբ և պանթուրքական պետության ստեղծման կանխարգելմամբ շահագրգռված են ԵՄ-ը և ՌԴ-ն: Սակայն Իրանում իրադրության ապակայունացման դեպքում հնարավոր կդառնա կուրմանջիների խաղաքարտի շահարկումը Արևմուտքի կողմից: Ուստի քրդական գործոնը կարևոր գործիք կդառնա՝ կապված ԱՄՆ սպասվող գործողությունների հետ Իրանում վարչակարգը փոխելու և նրա տարածքային ամբողջականությունը պահպանելու կամ էլ երկիրը կազմալուծելու նկատառումով: Այն կօգտագործվի և՛ Իրանի դեմ (սորանիների քաղաքական շարժումները), և՛ Թուրքիան ներսից վերահսկելու կամ մասնատելու համար (կուրմանջիական կուսակցությունները)՝ ԱՄՆ արդի շահերին համապատասխան: Քրդերի շարժումների նկատմամբ ԱՄՆ վերահսկողության փաստն ապացուցվեց ԱՄՆ-ի և Իրաքի երկրորդ պատերազմով: Կարելի է հետևություն անել, որ ԱՄՆ-ը կարող է այս գործոնն օգտագործել նաև Իրանի հյուսիսային թյուրքալեզու տարածքների անջատման վտանգի դեպքում ևս, քանի որ ինչպես Պարսկահայքի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի մեծ մասը քրդաբնակ է, իսկ Վանի նահանգում, Աղրիում և Հայկական պարից հարավ ընկած տարածքներում քրդերը դեռևս մեծամասնություն են կազմում: Սակայն Իրանի վարչակարգի ավելի ճկուն քաղաքականությունը Պաղեստինյան խնդրի շուրջ, ինչպես նաև հրեականության և ԱՄՆ-ի նկատմամբ քաղաքականության վերագնահատումը Իրանին բավական մեծ հնարավորություններ կտա և՛

երկրի միասնականությունը պահպանելու, և՛ քրդական անջատողական նկրտումները զսպելու գործում: Այս դեպքում Իրանը շահագրգռված կլինի նաև հայկական տարածքային աճով դեպի Արևմտյան Հայաստան: Նման միտումներ նկատվեցին Իրանում Իրաքի վերջին օկուպացիայից հետո:

Անվիճելի է, որ իսլամական շարժումը Թուրքիայում աստիճանաբար թափ է հավաքում և սպառնում է տնտեսական ու քաղաքական հեղափոխություններով և ներքին խժդժություններով: Նման պայմաններում ևս իրական կարող է դառնալ «քրդական խցանի» խնդրի կամ հայկական հարցի[1]՝ իբրև միջազգային դիվանագիտության խնդիրների, վերարծարծումը[2]:

Այսպես, ամերիկյան փոխգնդապետ Ռալֆ Փիթերզի *«Armed Forces Journal»-ում* 2006թ. հունիսին հրապարակած հոդվածը՝ իր քարտեզով հանդերձ, և դրա շուրջ տեղի ունեցած քաղաքական անցքերը (մասնավորապես Ք.Ռայսի կողմից այդ ծրագրի տերմինաբանության, հատկապես անվանման լայն կիրառումը)[3] վկայում է, որ ամերիկյան ընտրանին պատրաստվում է Մերձավոր Արևելքի կենտրոնում՝ տարածաշրջանային «Հարթլենդում», ստեղծել քրդական պետություն: Կամ հնարավոր է նաև մեկ այլ սցենար. Իրաքը մեծացնել քրդաբնակ տարածքների հաշվին և արդեն ստեղծված քրդական վերնախավային տարրի միջոցով վերահսկողություն սահմանել Մեծ Իրաքի դաշնային կառավարության նկատմամբ: Վերջին սցենարը բավական ձեռնտու կլիներ Իսրայելին, սակայն, կարծում ենք, ոչ շիաները, ոչ էլ սուննի մահմեդականների քաղաքական ընտրանիները թույլ չեն տա նման սցենարի երկարատև կիրառումը, այլ Իրաքի ապագան կտանեն դեպի «փլուզումային» տարբերակ, որը և կանխատեսված է «Նոր Մերձավոր Արևելքի» ծրագրով: Նման ծրագրային ընթացքին նպաստում են քրդերի գործողությունները Մոսուլն ու Քիրքուքը (Թամիմ նահանգ) վերահսկողության տակ առնելու ուղղությամբ, ինչն արդեն գրեթե հաջողվել է: Նայնավա նահանգի և, մասնավորապես, Մոսուլի իրադարձությունները՝ կապված քրիստոնյաների ջարդերի, արտաքսումների ու վերաբնակեցումների հետ, ցույց են տալիս, որ քրդերը վերահսկում են բավական մեծ տարածք, ունեն ամենահզոր զինված ուժերն Իրաքում և շարունակաբար փոխելով Իրաքի այդ նավթաբեր շրջանների էթնիկ պատկերը՝ հասնելու են դրանց ընդգրկմանը քրդական ինքնավարության, այն է՝ ապագա պետության կազմում: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ քրդական նախնական պետական միավորումը կունենա 100.000 կմ^2 տարածք ու կընդգրկի Իրաքի նախկին Նայնավա, Դահուք, Սուլեյմանիա, Թամիմ, Էրբիլ նահանգներն ամբողջությամբ և Սալահեդդին ու Դիալա նահանգների հյուսիս-արևելյան լեռնային հատվածները՝ մոտ 2000 կմ^2-ով: Թեև վերոհիշյալ ծրագրով

[1] Կապված Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի միջազգային գործընթացի հետ:
[2] Կապված «Քաղաքակրթությունների բախման» ամերիկյան աշխարհառազմավարական տեսության հետ:
[3] Տե՛ս համացանցում տարածված նյութերը. օր.՝ http://www.inosmi.ru/translation/230943.html, http://www.inosmi.ru/text/translation/231223.html, կամ http://www.inosmi.ru/translation/230943.html և այլն:

քրդական պետության հետագա ծավալումը հյուսիսում նախատեսված է մինչև Սև ծով, այնուամենայնիվ, կարծում ենք, Թուրքիայի հզորությունը թույլ չի տա նման արագ առաջխաղացում, ուստի այս շրջանում Թուրքիայի համար կարևոր կլինի քրդերի ոչ տեղաբնիկ լինելու գաղափարի արմատավորումը՝ միջազգային հարաբերությունների ոլորտում իրավազրկելու համար քրդական պահանջները: Այստեղ թուրքական դիվանագիտության համար մեծ դեր կարող է խաղալ Հայկական հարցը: Հնարավոր է՝ այս փուլում Թուրքիայի համար առաջ գա ցեղասպանության ճանաչման հարցը և, բացի երկրի քաղաքական օրակարգում հայտնվելուց, Թուրքիայի նախաձեռնությամբ դառնա նաև միջազգային դիվանագիտության քննարկման առարկա՝ քրդական խնդիրը չեզոքացնելու նկատառումով:

Այդ պարագայում ՀՀ-ն հնարավորություն կունենա քաղաքական առումով բուֆեր դառնալ Ռուսաստանի, Թուրքիայի, Արևմուտքի և Իրանի ազդեցության ոլորտների միջև: Այս կարգավիճակում վերոհիշյալ բոլոր պետական և քաղաքական կազմավորումները պետք է շահագրգռված լինեն Հայաստանի դերով, քանի որ փոքր Հայաստանի վրա ազդելը նրանց համար շատ ավելի հեշտ կլինի, քան այլ դերակատարի, օրինակ՝ թուրքերի կամ քրդերի վրա: Առաջ կգա նաև Թուրքիայի համար «ընդունելի» փոխհատուցման խնդիրը, ուստի ամենևին պատահական չէ, որ Ռալֆ Փիթերզի քարտեզում ՀՀ սահմանը մոտ 30-40 կմ տեղափոխված է դեպի արևմուտք [30]: Վերը հիշատակված քարտեզում Արարատ լեռան, Չլդըր (Արփի) լճի ու Անի մայրաքաղաքի շրջակայքը պետք է անցնի Հայաստանին: Ուստի, կարելի է եզրակացնել, որ ամերիկյան վարչակազմը և մտավոր կենտրոնները չեն բացառում նաև Հայաստանի տարածքային ծավալումը դեպի արևմուտք Նոր Մերձավոր Արևելքի ծրագրի իրականացման ընթացքում: Հայաստանը պետք է պատրաստ լինի դրան, հատկապես Թուրքիայի հետ հարաբերություններում իր համար հնարավոր առավելագույնը շահելու և ձեռք բերելու նպատակով:

4. Պանթուրքիզմն այսօր

Որոշ ուսումնասիրողներ պնդում են, թե Թուրքիան այլևս չի վարում պանթուրքիզմի քաղաքականություն: Ինչո՞վ, ուրեմն, բացատրել համաթուրքական «Թյուրքսոյ» կազմակերպության գործունեությունը [23], ԹՀ Գլխավոր շտաբի պետի այցը Ադրբեջան 2001թ. օգոստոսին և նրա հայտարարությունները [31], Ադրբեջանի և Թուրքիայի հետագա կապերի խորացումը, ադրբեջանական բանակի սպաների նախապատրաստումը թուրքերի կողմից, ՆԱՏՕ չափանիշներին համապատասխան և թուրքական բանակի նմանությամբ ադրբեջանական բանակի կառուցվածքային վերափոխումը, հայ-թուրքական հարաբերությունների պայմանավորումը հայ-ադրբեջանականով, թուրքական

զինված ուժերի հարձակողական զինատեսակների քանակական և որակական շեշտակի աճը[1]: Օրինակ, արդեն 1997-ից Սև ծովում ՌԴ նավատորմը զիջում էր թուրքականին չորս անգամ[2]: Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարությունը մշակել էր բանակի զարգացման շուրջ $150 մլրդ արժողության նախագծեր: Նմանատիպ տեմպերն առկա են նաև Ադրբեջանի պարագայում [32]: Ուստի, հայերի ազատագրված հողերի որևէ օտարացում հարմար աշխարհագրական սահմանների կորուստ է գալիք հնարավոր բախումից առաջ, ի վնաս մեր սերունդների: Հետևապես, Արցախի հարցի միակ և ճիշտ լուծում կարող է համարվել «դե ֆակտո» իրավիճակի պահպանումը մինչև ավելի հարմար քաղաքական իրադրության ձևավորումը, ԼՂՀ անկախության միջազգային ճանաչումը կամ ՀՀ-ի հետ վերամիավորումը:

Թուրքական նկրտումներին հակազդելու համար Հայաստանը ճկուն արտաքին քաղաքական գիծ է բռնել. Իրանի, Հունաստանի, Սիրիայի, Վրաստանի, Կիպրոսի հետ դաշնակցային հարաբերությունները, «բոլորի հետ բարեկամ» սկզբունքի լայն կիրառումը, մասնակցությունը «գլոբալացման» քաղաքական և տնտեսական գործընթացներին, «փոխլրացման քաղաքականության» սկզբունքի կիրառման կարևորումը հայոց ազգային իդեաների իրականացման տեսանկյունից չափազանց էական են՝ կապված Ռուսաստանի բազմազգ դաշնային երկիր լինելու և այդ երկրի բնակչության շրջանում բնական աճի բացակայության հանգամանքների հետ[3]:

Այնուամենայնիվ, կապված *Նախիջևանի*, «արևմտյան» և «բնական սահմանների» արտաքին քաղաքական խնդիրների հետ՝ Հայաստանի համար կարևորագույնը պետք է հանդիսանա Հայկական հարցը, որն ուղղակիորեն պետք է բխի Հայ դատի պահանջատիրությունից: Այս հարցի լուծումը կարող է ՀՀ-ն դուրս բերել քաղաքաաշխարհագրական մեկուսացումից: Դրանում կարող է դեր խաղալ քրդական գործոնը:

Հնարավոր է, որ Արևմուտքի և Թուրքիայի համար ձեռնտու լինի մի սցենար, երբ որոշ տարածքների վերադարձը ՀՀ-ին ավելի ձեռնտու լինի, քան դրանց տրամադրումը քրդերին: Այստեղ ՀՀ դիվանագիտության համար առանցքային պետք է հանդիսանա առավելագույնը Սևրի պայմանագրով նախատեսված (գրեթե անհնար տարբերակ)՝ մինչև 1914թ. սահմանների ձեռքբերման

[1] Արդեն 2004թ. Թուրքիան ուներ մոտ 600 (400-ը՝ ՌՕՌԻ-ում, 200-ը՝ բանակային ավիացիայում) մարտական ինքնաթիռ, 560 մարտական, բազմանպատակ ու փոխադրական ուղղաթիռ, 4500 տանկ (որից 1500-ը՝ հնացած), այս երկրում մոդեռնիզացվում են M-60 տանկերը և այլն:

[2] Թուրքերը Սև ծովում ունեն 200 մարտանավ, որից 6-ը՝ «Մեկո 200» դասի հածանավ, 8-ը՝ «Նոքս» դասի, 10 հրթիռային նավակ՝ «Դոգան» դասի, 17 սուզանավ և այլն: Տե՛ս Голос Армении, Ереван, 15 ноября, 1997:

[3] Չէ՞ որ յուրաքանչյուր ազգային ինքնավարություն, պատմության պրոգրեսի օրենքի համաձայն կարող է անկախանալ կամ՝ առնվազն ապստամբել, իսկ դա բավական հեղհեղուկ է դարձնում նման պետությունների վիճակը՝ ուժեղ առաջնորդի բացակայության պայմաններում:

դրույթը: Հայ ազգային գործիչները ձգտում են վերացնել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ռեժիմը, և սա պետք է լինի նաև ապագայի գլխավոր խնդիրը:

Բացի այդ, «քրդական գործոնի» օգտագործման բազմաթիվ ջատագովներ կան աշխարհի քաղաքական վերնախավերում: Այսպես, ՌԴ Պետդումայի աշխարհաքաղաքականության հարցերի կոմիտեի նախագահ Ալեքսեյ Միտրոֆանովն ակտիվորեն իրականացնում էր քրդական շահերի լոբբինգը [23]: Նա կարծում էր, թե 21-րդ դարի սկզբին «հենց Քրդստանի շուրջ են տեղի ունենալու հիմնական համաշխարհային իրադարձությունները, այդ պատճառով Ռուսաստանը (ինչպես երկրի ղեկավարությունը, այնպես էլ ԶԼՄ-ն) պետք է ակտիվ մասնակցություն ունենա քրդական հարցի դրական լուծմանը» [23]: Ա.Միտրոֆանովը 1997թ. սկզբին Մոսկվայում կայացած «Ռուս և քուրդ ժողովուրդների համագործակցության հեռանկարները» գիտաժողովի կազմակերպիչներից է, որի աշխատանքներին մասնակցեցին ԱՊՀ երկրների քրդական համայնքների առաջնորդները [23]: Եվ դա ամենևին էլ պատահական չէր… Բոլոր այն պետությունները, որոնք որոշակի շահեր ունեն Առաջավոր Ասիայի տարածաշրջանում, ակտիվորեն օգտագործում են քրդական գործոնն իրենց շահերին հասնելու համար:

5. Քրդական պետականության առաջացման և քաղաքական զարգացումների հնարավոր սցենարները

Միջազգային ասպարեզում օրակարգի հարց է դարձել Իրաքի հյուսիսում քրդական պետականության առաջացման խնդիրը: Այն պայմանավորված է ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրաքի, արաբական աշխարհի ու Իրանի թուլացմանն ուղղված քաղաքականությամբ, իսկ արևմտյան մյուս տերությունները փորձում են այս միջոցով Թուրքիայի ու Իրանի վրա ազդելու նոր լծակներ ձեռք բերել:

Սորանիական պետության առաջացումը կարող է նպաստել այն բանին, որ Թուրքիան հետագայում կորցնի վերահսկողությունը հարավարևելյան տարածքների նկատմամբ: Այդ իսկ պատճառով այդ երկիրը խիստ կարծր դիրքորոշում է որդեգրել այս հարցում՝ իր համաձայնությունը չտալով ամերիկյան ռազմական գործողություններին երկրորդ ամերիկա-իրաքյան պատերազմում ու ձգտելով արգելակել Իրաքի մասնատումը: Միաժամանակ նա արծարծում է Մոսուլի թուրքմենների խնդիրը, որպեսզի մասնատման դեպքում առիթ ունենա միջամտելու և զավթելու այս տարածքները՝ կիպրոսյան տարբերակով:

Քրդական պետականության առաջացումը ձեռնտու չէ տարածաշրջանի մյուս տերություններին ևս[1]՝ կապված Սիրիայում ու Իրանում քրդական մեծաքանակ բնակչության առկայության հետ: Եվ եթե իրադրությունն այնքան

[1] Թերևս բացառությամբ Իսրայելի:

լարվի, որ իրոք դրվի քրդերի անկախության հարցը, թուրքերի տարբերակն իրագործվելու շատ մեծ հնարավորություն է ստանում: Այդ իսկ պատճառով նկատվում է սորանիական հակամարտ երկու կուսակցությունների մերձեցում: Սորանիական ղեկավարների հայտարարությունները, թե իբր կողմ են միայն լայն ինքնավարության Իրաքի կազմում և չեն ձգտում անկախության, ուղղված են շրջակա պետությունների կողմից հարձակման ենթարկվելու հնարավորության չեզոքացմանը: Այնուամենայնիվ, Իրաքի հյուսիսում ու նրա շուրջ նկատվում են խոշոր ռազմական ուժերի կուտակումներ: Թուրքիան, բացի 2-րդ դաշտային բանակից, այստեղ կենտրոնացնում է նորանոր ուժեր, այդ թվում՝ 3-րդ բանակի ու ժանդարմերիայի հատուկ ու ստացիոնար ստորաբաժանումներ և վաղ տեղեկացման ռադիոլոկացիոն հակահրթիռային ու հակաօդային կայաններ: Իրենց հերթին՝ քրդերը ևս տենդագին նախապատրաստվում են. 50 հազ. մարտիկ ընդգրկված է փեշվարդայի՝ Իրաքում քրդական ինքնավարության ազգային գվարդիայի մեջ: Արդեն ստեղծվել է համաքրդական միացյալ խորհրդարանը: Քրդական առաջնորդների պնդումներով՝ Ծոցի պատերազմից հետո, վաճառելով իրենց երկրում առկա նավթը, ինչպես նաև ունենալով անգլո-սաքսոնյան աշխարհի և Իսրայելի աջակցությունը, կուտակել են մեծ քանակությամբ զենք և զինամթերք ու պատերազմի դեպքում կարող են դուրս բերել շուրջ 150 հազ. լավ զինված մարտիկ: Սրան նպաստել էին իրենք՝ թուրք պաշտոնյաները, խախտելով Իրաքի դեմ պատժամիջոցները և խոշոր կաշառքների դիմաց թույլատրելով իրենց տարածքով տեղափոխել վաճառքի համար արդյունահանված էժան քրդական նավթը: Այդ իսկ պատճառով ՀՀ-ը, լավ հարաբերություններ պահպանելով Իրաքի հետ ու ճանաչելով նրա տարածքային ամբողջականությունը, ուշադիր հետևում է տարածաշրջանային գործընթացներին և որևէ քայլ չի ձեռնարկում, որը կսրեր հարաբերությունները քրդերի կամ էլ արաբների հետ:

Պետք է հաշվի առնել հետևյալ սցենարը. թուրքական հնարավոր նոր ագրեսիան, որն ուղղված կլինի սորանիների ինքնավարության դեմ, կհանգեցնի հակաթուրքական պայքարի նոր ալիքի և՛ տարածաշրջանում, և՛ աշխարհում՝ ի վերջո ահռելի վնասներ բերելով Թուրքիային և Իրաքին: Միևնույն ժամանակ հնարավոր է, որ այն հակազդեցություն ստանա ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից. այն կարող է բավական կոշտ լինել, քանի որ կվտանգի այդ երկու երկրների տարածաշրջանային ռազմավարությունը: Ուստի, նման պատերազմը Թուրքիայի համար հղի է ծանր հետևանքներով, և հնարավոր է, որ արտաքին գերակայությունների առումով վերակողմնորոշի թուրքական զինվորականությանը: Ինքնավարությունները ձգտում են անկախության: Ուստի, այդ գործընթացը մշտական գլխացավանքի և հսկայական գումարների վատնման աղբյուր է լինելու Թուրքիայի համար:

Քրդական պետության առաջացումը Իրաքի տարածքում վտանգավոր է նաև Իրանի համար: ԻԻՀ-ում կարող են ուժեղանալ քրդական անջատողական ուժերը, եթե սրանք համագործակցեն Արևմուտքի հետ: Հնարավոր է նաև թյուրքերի անջատողական միտումների ուժեղացում: Այս ամենը կարող է հանգեցնել Իրանի քայքայմանը և Թուրքիայի կամ Ադրբեջանի Հանրապետության ձգտմանը՝ վերահսկել այս տարածքները: Ինչը կարող է խորացնել թուրք-քրդական հակամարտությունը՝ կապված Իրանի ներկայիս «Արևմտյան Ադրբեջան» (պատմական Մեծ Հայքի Վասպուրականի արևելյան հատված և Պարսկահայք՝ Մակու, Խոյ և այլն) նահանգում քրդերի գերակշռող մեծամասնություն լինելու, Թուրքիայի և Իրանի «Կենտրոնական Ադրբեջան» (պատմական Ատրպատական առանց Արտավետի և նրա շրջակայքի) նահանգի միջև նրա սեպային դիրքի հետ, որն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել նոր տարածաշրջանային դաշինքների ձևավորմանը: Մանավանդ որ, հաշվի առնելով Թուրքիայի հետևողական վերադարձը իսլամին՝ Իսրայելն արաբների դեմ դաշնակից ունենալու համար արդեն նախընտրությունը կտա քրդերին, այլ ոչ թե թուրքերին: Իրադարձությունների նման ընթացքի դեպքում այս դաշինքի մեջ ժամանակի ընթացքում կներառվեն նաև պարսիկները՝ հակաարաբական ու հակապանթուրքական անջատողականության դեմ պայքարի հողի վրա, ինչպես նաև հայերը՝ հակապանթուրքականության հիման վրա: Եթե Իրանի վերնախավը ժամանակին փոխի վերաբերմունքը Իսրայելի հանդեպ, ապա միանգամայն հնարավոր է, որ Արևմուտքը շահագրգռվի Իրանի տարածքային ամբողջականության պահպանմամբ:

ՔԲԿ և Իրանում ձևավորված նրա մասնաճյուղի՝ ՓՋԱԿ-ի[1] գործունեությունը 2007-2008թթ., ինչպես նաև ԱՄՆ և նրա դաշնակից իրաքյան քրդերի կուսակցությունների՝ Հյուսիսային Իրաքում ՔԲԿ/ՓՋԱԿ գործունեությանը լոյալ վերաբերմունքը ցույց են տալիս, որ տարածաշրջանում, բացի ուղղակիորեն աջակցություն ստացող իրաքյան քրդերից, գոյություն ունեն նաև ԱՄՆ-ի կողմից անուղղակիորեն աջակցվող քրդական ուժեր, որոնք գործում են Իրանի դեմ [33]: Ուստի, քրդական հարցն, այնուամենայնիվ, գտնվում է ԱՄՆ արտաքին քաղաքականության և Նոր Մերձավոր Արևելքի քաղաքականության օրակարգում և դրա կիզակետն է համարվում, քանի որ աշխարհաքաղաքական դիրքի առումով միջնաշխարհային, այսինքն՝ գերիշխող է: Դրա վկայությունն է նաև արդեն հիշատակված ամերիկյան բարձրաստիճան սպա Ռալֆ Փիթերզի հրապարակած հոդվածն ու քարտեզը և նրանում նշմարվող այսպես կոչված ապագա «Քրդստանի» տեղն ու դերը:

Փետրվար, 2009թ.

[1] «Ազատ կյանք Քուրդիստանում» կուսակցություն, անգլերեն հապավումը՝ *PJAK*:

Աղբյուրներ և գրականություն

1. *Гасратян М.А.,* Курдская проблема в Турции, Москва, стр. 5, 2001.
2. «Итоги», еженедельный журнал вместе с Newsweek, Москва, 2 марта, стр. 34, 1999.
3. Голос Армении, Ереван, 14 октября, 1997, #115(18177).
4. *Beylerian O.,* Emerging Alliances and Alignments in the Middle East, volume 1, March 22 - April 26, 1999, Amr. Un. Arm, p. 106.
5. The Wall Street Journal, october 5, 1998, vol.CCXXXII, no.67, EE/WO, p. A1.
6. *William Linn Westermann,* "Kurdish Independence and Russian Expansion", Foreign Affairs, v.70, Summer 1991.
7. *Բեզիջանյան Է.,* Իրանի աշխարհաքաղաքական դիրքը և Հայաստանը,, ՌԱՀՀԿ, Երևան, 1995թ.:
8. "Polisy on Turkish Kurds Seen as Inconsistent", FBIS-SOV, August 12, 1995:
9. Reuters, 23 February, 1994:
10. Turkish Daily News, March 17, 1994:
11. *Ellizabeth Fuller,* "Turkish-Russian relations, 1992-1994", RFE/RL Research Report, vol. 3, no. 18, 6 May, p. 9, 1994; տես նաև՝ Ozgur Ulke, Istanbul, 18 July, p. 4, 1994:
12. *Robert Olson,* "The Kurdish Question and Chechnya: Turkish and Russian Foreign Policies Since the Gulf War", Middle East Policy, vol. IV, No.3, March 1996, էջ 111; տե՛ս նաև "West Softer on Turks in Kurdistan than Russians in Chechnya", FBIS-SOV, 29 March, 1995:
13. Hurriyet, 25 January, 1995:
14. *Robert Olson,* "The Kurdish Question and Chechnya: Turkish and Russian Foreign Policies Since the Gulf War", Middle East Policy, vol. IV, No.3, March 1996.
15. "Russian-Armenian War Games Scored", FBIS-SOV, 8 April, 1995:
16. "Kurdish Problem Seen as International", Turkish Daily News, 1 May, 1995:
17. "Turkish Daily News", 22 July, 1995:
18. Hurriyet, 25 July, 1995:
19. Irina Grudinina, "Ex Officio: Moscow Won't Let Kurdish Organizations Build Nests in Russia", Current Digest of the Post Soviet Press, 30 August, 1995, v.47, n.31:
20. "Turkish Daily News", 27 March, 1996.
21. "Russia: Turkey Questions 'Official Support' for PKK", FBIS-SOV, 22 May, 1996; տե՛ս նաև Cumhurriet, 21 May, 1996:
22. "Russia: Turkish Assembly Speaker on Talks with Chernomyrdyn", FBIS-SOV, 18 July, 1996:
23. Голос Армении, Ереван, 11 октября, 1997, #114(18176).
24. Голос Армении, Ереван, 21 ноября, 1997.
25. «Ազգ», 16 հունիս 2001:
26. Голос Армении, Ереван, 15 ноября, 1997.
27. "Statement From Kurdistan Workers Party (PKK) Leader Abdullah Ocalan", from broadcast of MED-TV, December 13, 1998:
28. *Гасратян М.А.,* "Курды Турции в новейшее время", Ереван, 1990:

29. “Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне”, Москва, 1927, стр. 24-25.
30. "Кровавые границы": карта "Нового Ближнего Востока" - до и после, http://www.regnum.ru/news/776025.html.
31. Նոյան տապան, 24 օգոստոսի, 2001:
32. “The Security of the Caspian Sea Region”, Edited by Gennady Chufrin, SIPRI 2001, Oxford University Press, Solna, Sweden. pp. 79, 84, 85, 86, 91, 92, 93, 185, 275, 276.
33. *Сажин В.И.,* “К вопросу об обострении курдской проблемы”, http://www.iimes.ru/rus/stat/2007/02-07-07b.htm

КУРДСКИЙ ФАКТОР И ПРОБЛЕМЫ РЕГИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Тигран Мартиросян

Резюме

Вопрос установления курдской государственности в регионе в увязке с геополитическими реалиями современной эпохи является наиболее слабо изученным в Республике Армения (РА) особенно в плане воздействия на ее безопасность. Проблема разработки стратегии Армении в курдском вопросе, особенно в аспекте армяно-турецко-курдских отношений и их отображения в нынешних геополитических условиях, стремительно актуализируется. Это связано с новыми программами США в регионе, такими как Большой Ближний Восток и Новый Ближний Восток, а также с усиленным проведением Израилем политики создания подконтрольной курдской государственности в геополитическом Хартленде региона, населенного курдами и разделенного между странами региона, и попытками противодействия региональных держав политике США и Израиля. Рассматриваются вопросы русско-курдско-турецкой геополитической игры и ее перспективы. В статье анализируется этно-политическая структура курдов, ее три этнические составляющие и их политические партии, представляется несколько сценариев развития в соответствии с парадигмой курдской государственности в стратегии ведущих глобальных и региональных держав. В работе спрогнозирована возможная роль РА, выделены возможные основополагающие концепты стратегии Армении по этой проблеме в будущем.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով):
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 14.04.2009թ.
Թիվ 2 (24), 2009թ.
Տպաքանակը՝ 300։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 15 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում